


ԷԶՄԻԱԾԻՆ



Ա
2007



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ

Յ ու ն ու ա ռ

2007

ՀՐԱՄԱՆԱԻ

S. S. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԸ
ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ
ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ**

(Սուրբ Էջմիածին, 6 Յունուարի 2007 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

«Եթէ մէկը Քրիստոսի մէջ է, նա նոր արարած է»:

(Բ. Կորնթ. Ե. 17)

Սիրելի բարեպաշտ հաւատացեալներ,

Այսօր տօն է Սուրբ Ծննդեան, տօն է Աստուածայայտնութեան մեր Տիրոջ եւ Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի: Մեծ ու սքանչելի է խորհուրդը, որը մենք վերստին ապրում ենք այսօր: Նոր Արքայ ծնունդ Բեթղեհէմում՝ յանուն նորոգ մարդու եւ նոր աշխարհի, քանզի «Եթէ մէկը Քրիստոսի մէջ է, նա նոր արարած է»:

Հայոց Բեթղեհէմից, լոյս խորանից Սուրբ Էջմիածնի, հոգեւորոգ զգացումներով եւ բերկրանօք բերում ենք ձեզ մեծ աւետիսը, որը շուրջ երկու հազար տարիներ առաջ հովիւներին տուեցին հրեշտակները. «Այսօր Դաւթի քաղաքում ձեզ համար ծնունդ մի Փրկիչ, որ օծեալ Տէրն է» (Ղուկ. Բ. 11):

Հովիւները պարզ ու մաքուր սրտով Բեթղեհէմի մտւորում ճանաչեցին ու երկրպագեցին Մանուկ Փրկչին, իմաստուն մոզերը ընծաներ մատուցեցին՝ ծնրադրելով Նրա Աստուածութեանը, Թագաւորութեանն ու Քահանայութեանը:

Փրկչի գալուստը՝ նախապէս վկայուած մարգարէների միջոցով, աւետուեց բոլորին, բայց բոլոր սրտերում չէ, որ Աշխարհի Փրկչի, Նոր Արքայի ծնունդը ցնծութեամբ ընդունուեց: Մանուկ Յիսուսին սպանելու նպատակով Հերովդէսը կոտորել տուեց Բեթղեհէմի մանուկներին: Այո, սիրելիներ, Աստուածորդու մարդեղացումն ու ծնունդը նոյնիսկ ուղեկցուեց աստուածաշտութեան եւ սպանութեան, խաղաղութեան ու պատերազմի իրողութիւններով, որոնք Աբելից եւ Կայենից սկսած զուգահեռ ընթացքով դրսեւորուում են մարդկութեան պատմութեան մէջ: Բեթղեհէմի մտւորում ծնուած Մանուկը եկաւ փոխելու աշխարհի այդ ընթացքը Նոր Ուխտի հաստատումով եւ Իր արեան յեղումով. «Այս է Նոր Ուխտի Իմ արիւնը, որ կը թափուի շատերի համար» (Մարկ. ԺԴ. 24),– ասաց Քրիստոս: Փրկիչը եկաւ ազատելու մարդուն չարի որոգայթներից, մեղքի ու մահուան կապանքներից եւ աստուածային Իր զօրութեամբ վերականգնելու նրան դրախտային երանական իր փառքի մէջ: Քրիստոս նոր կեանք բերեց աշխարհին՝ վերածնուած, նորոգուած հոգու կեանքը, որով մարդկութիւնը պիտի ընթանար դէպի Աստուած: «Հազէ՛ք նոր մարդը,– պատ-

գամեց առաքեալը,– նոր մարդը, որ ստեղծուած է ըստ Աստծու՝ արդարութեամբ եւ ճշմարիտ սրբութեամբ» (Եփս. Դ. 24):

Մարդկութեանն ուղղուած նորոգուելու եւ կատարելագործուելու կոչը, սակայն, ամբողջապէս վերջ չդրեց հին մարդու, հին հասկացութիւնների գոյութեանը, եւ չվերացաւ չարիքն աշխարհից: Այսօր էլ յաճախ նոր մարդու կերպարի ներքոյ գործում է հին մարդը, Քրիստոսին երկրպագող հովիւների եւ մոզերի բարեպաշտութեան կողքին տեղ է գտնում նաեւ Հերովդէսի չարագործութիւնը: Կեանքի առաջագնաց պայմաններով, հնարաւորութիւններով ու կարողութիւններով յատկանշուող արդի աշխարհը դեռ ամոքուած չէ թշուառութիւններից, արհաւիրքներից ու պատերազմներից, ամոքուած չէ կեղծիքից, նախանձից ու ատելութիւնից: Մարդը բարձրացաւ տիեզերք, բայց որքա՞ն է բարձրացել իր ներաշխարհի տիեզերքում: Գիտական մտքի զարգացումը նպաստել է կեանքի բարօրութեանը, բայց որքա՞ն կատարելագործել է նաեւ պատերազմի զենքերը: Արդարեւ, գիտատեխնիկական արդի նուաճումները, ժողովրդավարութիւնը, անհատի եւ ազգի իրաւունքներն ու ազատութիւնները, գերակայ արժէքներ հռչակած գաղափարախօսութիւնները անբաւարար եղան պատասխաններ տալու մարդկութեան առջեւ ծառացող խնդիրներին ու մարտահրաւերներին եւ անբաւարար պիտի լինեն, եթէ Աստուած չի բնակուում մեր մէջ, եթէ Աստուած չի գործում մեր կեանքում, եթէ չի կարելորդում հոգեւորը, հաւատքն ու սրբութիւնը, այլ, նոյնիսկ, ծաղրուում է: Ունայն պիտի լինեն խաղաղութեանը, արդարութեանն ու մարդասիրութեանը ուղղուած ջանքերը, եթէ նախ Աստուծոյ բարերար Կամբը եւ Փրկութեան Շնորհը չենք հայցում, միմեանց սիրելու աստուածադիր պատուիրանը չենք կատարում:

«Սէրը երբեք չի անհետանում, թէ մարգարէութիւններ են, պիտի չքանան, թէ լեզուներ, պիտի լռեն, թէ գիտութիւն, պիտի անցնի, քանզի շատից քիչը գիտենք եւ շատից քիչն ենք մարգարէանում» (Ա. Կորնթ. ԺԳ. 8-9),– ասում է առաքեալը: Մարդկային ամեն գիտութիւն շատից քիչն է եւ ժամանակի մէջ փոխուել ու փոխուելու է, բայց սէրն է, որ երբեք չի անհետանում, սէրը միշտ նոյնն է՝ կատարեալ, «չար բան չի խորհում, անիրաւութեան վրայ չի ուրախանում, այլ ուրախանում է ճշմարտութեան վրայ»: Մենք բոլորս՝ ազգեր եւ ժողովուրդներ, մէկ սուրբ եւ կենարար ժառանգութիւն ունենք՝ Աստուծոյ սէրը արարածներիս հանդէպ: Աստուած սիրում է մեզ բոլորիս անկախ որեւէ պատկանելութիւնից, անկախ ազգութիւնից, համոզմունքից, սեռից ու տարիքից: Կատարեալ այդ սիրոյ վկայութիւնը Փրկչի Յայտնութիւնն է աշխարհում: Սիրոյ նոյն ոգով առաջնորդուելով միայն մարդկութիւնը պիտի կարողանայ նոր լինել՝ նորացնելով նաեւ աշխարհը: Մենք՝ քրիստոնէաներս, խոստումն ու հաւատն ունենք, «եթէ մէկը Քրիստոսի մէջ է, նա նոր արարած է»:

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ հայոց, ուրախութեամբ ու երախտագիտութեամբ ընդունենք մեր փրկութեան պարգէլը՝ Մարդացեալ Աստուածորդուն: Նրան ապաւինած, որպէս նոր մարդ, արդարութեամբ ու եղբայրսիրութեամբ կառուցենք նոր կեանքը Հայաստանի եւ Արցախի, հայրենաշունչ, ամուր ու յոյսով լեցուն պահենք ազգային կեանքը Սփիւռքում: Փրկչի հետ չպիտի երկնչենք դժուարութիւններից ու

խոչընդոտներից, եւ մեր ջանքերը իզուր չպիտի լինեն, այլ քաղցրահամ արդիւնքներ պիտի բերեն մեր Հայրենիքին եւ վերագարթօնք ապրող Սփիւռքին: Համազգային միասնութեամբ մեր Տիրոջ ազատարար սիրով պիտի պաշտպանենք Արցախի մեր ժողովրդի ազատ ապրելու արդար իրաւունքը եւ նորոգեալ հաւատով պիտի մարմնաւորենք եւ կեանքի կոչենք մեր բոլոր իղձերը, գալիքի մեր յոյսերը: Արդ, անաղարտ պահենք առաքելական սուրբ հաւատքը մեր հայրերի եւ նրանց օրինակով ստեղծենք մնայուն ու յարատեւը:

Մեր Տիրոջ եւ Փրկչի Սուրբ Ծննդեան տօնի հոգեւորոգ առիթով Քրիստոսաւանդ սիրով եղբայրական ողջոյն ենք յղում քոյր Եկեղեցիների հոգեւոր պետերին, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նուիրապետական Աթոռների Գահակալներին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Երուսաղէմի հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆեանին: Հայրապետական Մեր օրհնութիւնն ու սերն ենք բերում մեր Եկեղեցու ուխտապահ հոգեւոր դասին եւ ի սփիւռս աշխարհի համայն մեր ժողովրդին:

Սուրբ Ծննդեան աւետիսով Մեր ողջոյնն ենք բերում Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Տիար Ռոբերտ Քոչարեանին, Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան Նախագահ Տիար Արկաղի Ղուկասեանին, Հայոց պետական ողջ աւագանուն, Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների ղեկավարներին ու ներկայացուցիչներին:

Միեւնի բարեպաշտ ժողովուրդ, աղօթենք Նորածին Փրկչի սնարի առջեւ, որ Իր ամենառատ շնորհներով նորոգուեն մարդկային հոգիները եւ ողորմութեան, խաղաղութեան, արդարութեան ու ճշմարիտ եղբայրսիրութեան ճանապարհներով ուղղորդուի ժողովուրդների կեանքը:

Հայցենք, որ Փրկիչ մեր Տէրը հաւատով զօրացեալ պահպանի մեր ժողովրդին եւ օրհնի մեր գործերն ու ջանքերը՝ ի փառս Իր Սուրբ Անուան, ի սեր եւ ի բարօրութիւն հայրենի մեր երկրի ու աշխարհասփիւռ ազգիս եւ ի պայծառութիւն մեր Սուրբ Եկեղեցու. Ամեն:

**Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ
Ձեզ եւ մեզ մեծ աւետիս**

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԻԹՈՎ

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջունում ենք ձեզ ի Հայրենիս և ի Սփյուռս և բերում ամենքիդ Հայրապետական Մեր սերն ու օրհնությունը:

Նոր տարվա շեմին ենք, երբ նորի, ավելի լավի սպասումով անդրադառնում ենք և՛ անցնող տարվան, և՛ հատկապես՝ ապագայի մեր ծրագրերին ու հույսերին:

Այս պահին գոհության աղոթք ենք բարձրացնում երկինք, որ Տերը պարզեց մեզ խաղաղության մեջ մեր կյանքը կառուցելու, դեպի ձեռքբերումներ ընթանալու, հնարավորություն՝ բարիք ստեղծելու, բարին գործելու և բարու մեջ հաստատվելու՝ յուրաքանչյուրս առանձին և բոլորս՝ իբրև քրիստոնյա ժողովուրդ՝ Հայ Եկեղեցի, Հայոց պետություն:

2006 թվականն էլ ապրեցինք մեր Հայրենիքի ու համայն մեր ժողովրդի միացյալ ու լուսավոր գալիքի հանդեպ հավատով: Աստծո օգնությամբ նեղությունների ու դժվարությունների առջև չտկարացանք, մեծ ու փոքր փորձություններ հաղթահարեցինք, ձեռքբերումներ ունեցանք և դեռ ճանապարհ պիտի անցնենք դեպի մեր ժողովրդի ցանկալի բարեկեցություն, դեպի մեր բոլոր հույսերի մարմնավորում:

Մեր հաջողությունները, ինչ որ ունեցանք Հայրենիքում և Սփյուռքում, հնարավոր եղան միայն մեր ժողովրդի համատեղ ջանքերով ու միասնական տեսիլքով, առ Հայրենին ունեցած սիրով ու նվիրումով: Այսպես, այս ոգով 2006 թվականին տոնեցինք Հայաստանի և Արցախի անկախության 15-րդ տարեդարձը: Մայր Հայրենիքում գումարվեց «Հայաստան-Սփյուռք» համաժողովը, Ռուսաստանում և Ֆրանսիայում անցկացվեցին Հայաստանի տարվան նվիրված միջոցառումները, կյանքի կոչվեցին հայրենաշեն ծրագրեր ու նախաձեռնություններ: Արցախի մեր ժողովուրդը իր ազատ, նոր կյանքը կառուցելու հավատով ու վստահությամբ ընդունեց Սահմանադրությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության:

2006 թվականը հիշարժան ձեռքբերումներով նշանավորվեց նաև եկեղեցական մեր կյանքում: Հայրենիքում և Սփյուռքում իրենց դռները բացեցին վերանորոգված ու նորակառույց եկեղեցիներ, հռչակվեց Ֆրանսիայի հայոց թեմը, ծառայության կոչվեցին բազմաթիվ եկեղեցականներ, և անսկզբ եղավ ջանքը՝ հոգալու հոգևոր կարիքները մեր ժողովրդի և արթուն ու գորացյալ պահելու հավատը մեր կյանքում: Արդյունավոր եղավ նաև համագործակցությունը քույր Եկեղեցիների հետ՝ ի սեր ժողովուրդների բարի հարաբերությունների և աշխարհում խաղաղության հաստատման:

Փառք Երկնավորին, որ պարզեց մեզ նորոգված հույս ու հավատ:

Նոր տարի է սկիզբ առնում, «ուրեմն,- ինչպես առաքյալն է ասում,- քննեք լավը, և թե ինչ է Աստծո կամքը՝ բարին և հաճելին և կատարյալը» (Հռոմ. ԺԲ 2), և քայլենք Աստծո Կամքով, բարին ընտրելով՝ կատարյալին ձգտելով, և Աստված պիտի օրհնի

մեր ջանքերը՝ ստեղծելու և կառուցելու, բարօր ու շեն դարձնելու հայրենի մեր երկիրը, մեր հայրերի ժառանգությամբ, գիտությամբ ու մշակույթով պայծառ ազգ մնալու և հարատևելու:

Տարեմուտի խորախորհուրդ այս պահին աղոթք ենք բարձրացնում երկինք աշխարհասփյուռ մեր ժողովրդի զավակների համար: Աղոթում ենք Հայոց բանակի քաջարի զինվորների ու սպաների համար, ովքեր այս պահին մեր երկրի սահմանների պաշտպանության դիրքերում են, բոլոր նրանց համար, ովքեր նոր տարին դիմավորում են իրենց ծառայության մեջ: Աղոթում ենք հիվանդների, նեղյալների ու կարիքավորների համար և հայցում Բարձրյալի օրհնությունը, ամենառատ շնորհն ու գորակցությունը մեր կյանքին:

Միբելի հավատավոր զավակներ մեր, թող հաստատուն ու գորեղ լինի հավատը մեր սրտերում, և մեր գործերը հաջողությամբ կյանքի կոչվեն ի սեր Աստծո, ի սեր մեր Հայրենիքի ու մեր Սուրբ Եկեղեցու:

Թող Տերը խաղաղության մեջ պահպանի աշխարհը և մեր Հայրենին, պարգևի շնորհով, բարիքով և ուրախությամբ լեցուն օրհնյալ տարի:

Շնորհավոր Նոր տարի:

Ս. Էջմիածին,

31 դեկտեմբերի 2006 թ.

Ս. ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Հունվարի 6-ին աշխարհասփյուռ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի Ս. Ծննդյան և Աստվածհայտնության հրաշափառ տոները:

Նախորդ օրը, հունվարի 5-ին, հավարտ երեկոյան ժամերգության, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի և մասնակցությամբ Մայր Աթոռի միաբանության ու բարեպաշտ հայորդիների, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մատուցվեց Ճրագալույցի Ս. Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Տ. Ներսես արքեպիսկոպոս Պողոսյանը: Պատարագից հետո կատարվեց նախատոնակ, հավարտ որի Նորին Սրբությունն ավետեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծնունդն ու Աստվածհայտնությունը: Արարողության ավարտից հետո Մայր Տաճարի շրջափակը ողողվեց հարյուրավոր մոմերի լույսերով, որ հավատացյալները տանում էին իրենց հետ՝ լուսավորելու սեփական հարկերը Տիրոջ Սուրբ Ծննդյան կենարար լույսով:

Հունվարի 6-ին մեծ էր տոնական խանդավառությունը համայն հայ ժողովրդի հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում: Միաձնաէջ Մայր Տաճարում Հայրապետական Ս. Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Խաչերով ու խաչվառներով զարդարուն հայրապետական թափորը ☐Խորհուրդ խորին☐ շարականի երգեցողությամբ և ամպհովանու ներքո Ամենայն Հայոց Հայրապետին առաջնորդեց դեպի Մայր Տաճար՝ Սուրբ Պատարագ մատուցելու և տոնի առիթով իր պատգամը հղելու համայն հայությանը (տե՛ս էջ 3):

Հավարտ Ս. Պատարագի Նորին Սրբությունը կատարեց Ջրօրհնեքի արարողություն՝ որպես Քրիստոսի Մկրտության խորհրդանիշ: Այս տարի Ջրօրհնեքի Խաչի կնքահայրն էր ճանաչված երգահան Տիգրան Մանսուրյանը:

Ս. Պատարագին և Ջրօրհնեքի արարողությանը ներկա էին ՀՀ ԱԺ նախագահ Տիգրան Թորոսյանը, ՀՀ նախարարներ, պետական այլ բարձրաստիճան պաշտոնյաներ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դիվանագետներ, գիտության ու մշակույթի գործիչներ:

Սրբազան Պատարագից հետո Վեհարանում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

**ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ
ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ՈՒ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ
ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ԳԱՀԱԿԱԼՆԵՐԻ,
ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՋԵՎ
ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔՆԵՐԻ
ՆԱՄԱԿՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱԳՐԵՐԸ**

Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն
ԲԵՆԵԴԻԿՏ ԺԶ ՊԱՊ (Հռոմ)

Կոստանդնուպոլսի Հունաց Տիեզերական Պատրիարք,
Նորին Ամենասրբություն
ԲԱՐՆՈՒՂԻՄԵՈՍ Ա (Ստամբուլ)

Մոսկվայի և Համայն Ռուսիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԼԵՔՍԻ Բ (Մոսկվա)

Համայն Վրաց Պատրիարք ☐ Կաթողիկոս, Նորին Սրբություն
ԻԼԻԱ Բ (Թբիլիսի)

Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԱՄԲԱ ՇԵՆՈՒՂԱ Գ (Կահիրե)

Անտիոքի և Համայն Արևելքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք,
Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԶԱՔՔԱ Ա ԻՎԱՍ (Դամասկոս)

Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԲԲԱ ՊԱՌԻԼՈՍ (Ադիս Աբեբա)

Հնդկաստանի Ասորի Մալանկարա Ուղղափառ Եկեղեցու պետ, Նորին Սրբություն
ԲԱՍԻԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՍԱ ԴԻԴԻՍՈՍ Ա (Դելի)

Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի Պապ և Պատրիարք,
Նորին Գերաշնորհություն
ԹԵՈԴՈՐՈՍ Բ (Ալեքսանդրիա)

Անտիոքի և Համայն Արևելքի Հույն Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք,
Նորին Գերաշնորհություն
ԻԳՆԱՏԻՈՍ ՀԱԶԻՄ Դ (Դամասկոս)

Քենթրբերիի Արքեպիսկոպոս, Համայն Անգլիայի Եպիսկոպոսապետ և
Միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն
ՌՈՈՒԱՆ ՎԻՅԱՄՍ (Լոնդոն)

Երուսաղեմի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Գերաշնորհություն
ԹԵՈՖԻԼՈՍ Գ (Երուսաղեմ)

Ռումին Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԹԵՈԿՏԻՍ (Բուխարեստ)

Սերբիայի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ՊԱՎԼԵ (Բելգրադ)

Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Գերաշնորհություն
ՄԱՔՍԻՄ (Սոֆիա)

Կիպրոսի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ԽՐԻՍՈՍՏՈՍՈՍ (Կիպրոս)

Աթենքի և Համայն Հունաց Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ԽՐԻՍՏՈՂՈՒԼՈՍ (Աթենք)

Վարչապալայի և Համայն Լեհաստանի Միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն
ՍԱՎՎԱ (Վարչապալա)

Մինսկի և Սլուցկի Միտրոպոլիտ, Համայն Բելառուսի Պատրիարքական փոխանորդ,
Նորին Գերաշնորհություն
ՖԻԼԱՐԵՏ (Մինսկ)

Ֆինլանդիայի և Տուրկուի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ՅՈՒԿԿԱ ՊԱԱՐՄԱ (Հելսինկի)

Եվրոպայի Կաթոլիկ Եպիսկոպոսների Խորհուրդների Միության Նախագահ
ԵՊԻՄՈՂՈՍ ԱՍԱԴԵՅ ԳՐԱԲ (Պրահա)

Տանն Կիլիկիո Կաթողիկե Հայոց Կաթողիկոս՝ Պատրիարք
ՆԵՐՍԵՍ՝ ՊԵՏՐՈՍ ԺԹ (Բեյրութ)

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻՑ

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն

ԱՐԱՄ Ա (Անթիլիաս)

Երուսաղեմի հայոց Պատրիարք, Նորին Ամենապատվություն

ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՂԻՍԿՈՂՈՍ (Երուսաղեմ)

Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք, Նորին Ամենապատվություն

ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՂԻՍԿՈՂՈՍ (Ստամբուլ)

Հայոց Եկեղեցու Թեմակալ առաջնորդներից և Թեմական Խորհուրդներից ու համայնքներից:

Եկեղեցական պետերից բացի, բազմաթիվ նամակներ և հեռագրեր են ստացվել նաև քույր Եկեղեցիների հոգևոր հայրերից՝ կարդինալներից, միտրոպոլիտներից և մյուս առաջնորդներից ու հոգևոր սպասավորներից, էկումենիկ կազմակերպությունների ներկայացուցիչներից:

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻՑ

Հայաստանի Հանրապետության Նախագահի վսեմաշուք

ՌՈՐԵՆՏ ՔՈՉԱՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի մեծահարգ

ԱՐԹՈՒՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վարչապետի մեծահարգ

ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Սահմանադրական Դատարանի նախագահի մեծահարգ

ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի վսեմաշուք

ԱՐԿԱՂԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի մեծահարգ

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հայաստանի Հանրապետության նախարարներից, մարզպետներից, քաղաքապետներից, ակադեմիական և համալսարանական հաստատություններից, գիտության, մշակույթի ու տարբեր բնագավառների բազմաթիվ գործիչներից և առանձին անհատներից, Հայաստանում գործող քաղաքական կուսակցություններից, հասարակական կազմակերպություններից և ստեղծագործական միություններից, Միջազգային Կարմիր Խաչի կենտրոնից, ինչպես նաև միջազգային տարբեր կազմակերպությունների Հայաստանյան գրասենյակներից, «ՀԱՅԱՍՏԱՆ» Համահայկական Հիմնադրամից, ՀԲԸՄ-ից, Հայկական Համագումարից, ՀՕՄ-ից, Կյուլպենկյան հաստատությունից, Կարազյոզյան հիմնարկությունից, սփյուռքահայ մի շարք այլ կառույցներից և հաստատություններից, PRO ORIENTE կազմակերպությունից (Ավստրիա), Իրանի Ազգային Մշակութային Միությունից:

Շնորհավորականներ են ուղարկել Հայաստանում գործող դիվանագիտական հաստատությունների ներկայացուցիչները, արտասահմանյան երկրներում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանները, Սփյուռքում գործող հասարակական և համայնքային կազմակերպությունները:



**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՎՍՏՅԱՆ
ԹԵՄԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՈՒԹՍՈՒՆԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՎՍՏԵԱՆ ՏԻՐԱԽՆԱՄ ԹԵՄՆ,
ՈՐ Ի ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՍ ԱՄԵՐԻԿԱՅԻ**

Հայրական սիրով եւ ուրախութեամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի բարեջան առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանին, հոգեւոր դասին, թեմական ու Ծխական խորհուրդների պատուարժան անդամներին, Միացեալ Նահանգների արեւմտեան ափի բարեպաշտ Մեր զաւակներին եւ շնորհաւորում ամենքիդ թեմի հիմնադրման 80-րդ տարեդարձի առիթով:

Ութ տասնամեակներ առաջ բարեյիշատակ Գէորգ Ե. Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայրապետական Կոնդակով հաստատեց Ամերիկայի հայոց Արեւմտեան թեմը՝ հայրական յորդոր կարդալով թեմի հոգեւոր դասին ու հաւատացեալ հայորդիներին միշտ զօրաւոր պահպանել ազգային եւ հոգեւոր կեանքը Տիրախնամ թեմում՝ խարսխուած Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Քրիստոսակերտ հաւատի անխախտ վեմի վրայ:

Հոգու խնդութիւն է Մեզ համար անդրադառնալ, որ հիմնադրման օրից ի վեր թեմի պատմութիւնը յարաճուն ընթացք է դէպի բարգաւաճում ու զօրացում: Մեր Սուրբ Եկեղեցու հովանու ներքոյ Միացեալ Նահանգների արեւմտեան ափերում բնակուող հայորդիք, քաջութեամբ յաղթահարելով բոլոր դժուարութիւնները, կազմակերպեցին իրենց համայնքային կեանքը՝ վառ պահելով հայրենանուիրումի ու եկեղեցասիրութեան ոգին: Եռանդաշատ առաջնորդների ու հովիւների ջանքերով եւ Թեմական խորհրդի պատուարժան անդամների նախանձախնդիր աշխատանքով հայութեան

թուի մեծացմանը զուգընթաց ստեղծուեցին նոր ծուխեր, կառուցուեցին նոր եկեղեցիներ, հիմնուեցին ազգային միություններ ու կրթական հաստատություններ, հաստատուեցին հրատարակչություններ, որոնք սնեցին հայ կեանքը տիրախնամ թեմում: Արեւմտեան թեմ կատարած Հովուապետական Մեր վերջին այցելութեան ընթացքին զոհունակութեամբ ականատես եղանք նոր արթնութիւն ապրող հայորդեաց հաւատքին, թեմում ազգային, հոգեւոր եւ մշակութային կեանքի պայծառութեանը եւ առ Աստուած փառաբանութեամբ կատարեցինք թեմի Առաջնորդանիստ եկեղեցու հիմնարկեքի արարողութիւնը, որի կառուցումն, անտարակոյս, մխիթարութիւն պիտի պարգեւի հաւատաւոր հայորդիներին եւ նոր աշխուժութիւն՝ թեմական կեանքին:

Գոհունակութեամբ ենք արձանագրում, որ ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմը նշանակալի ծառայութիւն է մատուցում նաեւ համազգային եւ հայրենական մեր կեանքին: Այսօր Խաղաղականի ավերում բնակութիւն հաստատած հայորդիք կարելոր աջակցութիւն են բերում Հայաստանի ու Արցախի հեռաւոր ու սահմանամերձ շրջաններում սոցիալական խնդիրների լուծմանն ու հայրենաշէն բազմաթիւ այլ նախաձեռնութիւնների իրականացմանը, որոնք կոչուած են ծառայելու մեր Հայրենիքի առաջընթացին: Արեւմտեան թեմը նաեւ աշխոյժ մասնակցութիւն է բերում Հայաստանում իրականացուող եկեղեցաշէն տարբեր միջոցառումներին, մեծապէս օժանդակում Սուրբ Էջմիածնի պայծառութեանն ու հայաստանեան թեմերի զօրացմանը, Մայր Հայրենիքում հոգեւոր կեանքի վերազարթօնքին:

Սիրելի զաւակներ Մեր, Հայրապետիս յորդորն է Ձեզ, որ բազմապատկէք Ձեր ջանքերը՝ 80-ամեայ յոբելեանը Տիրախնամ Ձեր թեմում դարձնելու հոգեւոր նորոգութեան եւ ազգային միասնականութեան ամրապնդման առիթ: «Հաստատուն կացէք ի հաւատս, ժրացարուք, զօրացարուք, ամենայն ինչ ձեր սիրով լիցի» (Ա. Կորնթ. ԺԶ. 13): Ամուր մնացէք մեր Հայրենիքի, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդէպ Ձեր սիրոյ մէջ:

Թեմի հիմնադրման 80-րդ տարեդարձի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարձր գնահատանքն ենք բերում ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի բարեջան առաջնորդին՝ Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանին, ծառայութեան մէջ դրսեւորած աննուազ եռանդի ու արդիւնաշատ գործունէութեան եւ Սուրբ Էջմիածնի նկատմամբ մշտապէս տածած որդիական անխախտ սիրոյ ու հաւատարմութեան համար:

Մեր օրհնութիւնն ենք բերում նաեւ թեմի նախկին առաջնորդ, մեր Եկեղեցու վաստակաշատ սպասաւոր Գերաշնորհ Տ. Վաչէ արքեպիսկոպոս Յովսէփեանին, ինչպէս եւ վաստակեալ հանգստի կոչուած հոգեւոր հովիւներին: Հայրական Մեր սէրն ենք յղում ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի Թեմական ու Ծխական խորհուրդների յարգարժան անդամներին, եկեղեցականաց եւ դպրաց դասերին, Աստուածասէր ու ազգանուէր բարերարներին, Ազգային կրթօջախների, Հայրենակցական ու Մշակութային միութիւնների պատասխանատուներին, ովքեր նախանձախնդիր ծառայութեամբ իրենց աւանդն են բերում Արեւմտեան թեմի շինութեանն ու պայծառութեանը: Հայրապետիս ի խորոց սրտի հայցն է, որպէսզի Բարձրեալն Աստուած Իր օրհնութեան ներ-

քոյ բարօրութեան մէջ պահպանի Արեւմտեան թեմի սիրեցեալ Մեր բոլոր զաւակներին՝ պարգեւելով քաջատողջ արեւշատութիւն եւ ազգաշէն ու եկեղեցանուէր գործերի յարանորոգ յաջողութիւններ:

Թող Տէրն Ամենակալ միշտ հաստատուն պահի Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ անսասան՝ ԱՄՆ հայոց Արեւմտեան Տիրախնամ թեմը, եւ ամենակեցոյց Իր շնորհներով առատապէս օրհնի Իր Սուրբ Անուանը միշտ հաւատարիմ մեր ժողովրդի զաւակներին ի սփիւռս աշխարհի:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 25-ն Յունուարի
Յամի Տեառն 2007 եւ ի թուին Հայոց ՌՆԾԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 715

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ Տ. ՎԱԶԵ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ
ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ 40-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱՌՈՐՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՎԱԶԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅՈՎՍԷՓԵԱՆ,
ՈՐ Ի ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ, ԱՄՆ**

Համազգային մեր նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում Ձեզ եւ շնորհաւորում Ձեր եպիսկոպոսական օծման 40-րդ տարեդարձի առիթով:

Սիրելի Սրբազան, Տիրոջ օրհնութեամբ հոգեւոր կրթութիւն ստանալով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դպրեվանքում, Դուք արժանացաք կուսակրօն քահանայութեան աստիճանի՝ ի սպասաւորութիւն հաւատաւոր մեր ժողովրդի: Այսօր, Ձեր ձեռնադրութիւնից աւելի քան կէս դար անց, Մեզ համար գոհունակութիւն է հաստատել, որ մեր Եկեղեցու անդաստանում Ձեր ծառայութիւնը պսակել էք եկեղեցաշէն հարուստ վաստակով, սպասաւորութեան ողջ ընթացքին անխախտ պահելով Ձեր ուխտն առ Աստուած եւ հաւատարմութիւնը առ Հայոց Եկեղեցին եւ նրա հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Արդարեւ, գնահատարժան է Ձեր հովուական գործունէութիւնը: Միացեալ Նահանգների Արեւելեան թեմում նախանձախնդիր ու մշտաբեր սպասաւորութեամբ Դուք բարի աւանդ բերեցիք Ձեր հոգեւոր ինամքին հանձնուած հայորդեաց ազգային-եկեղեցական կեանքի պայծառութեանը՝ զօրացնելով նրանց հաւատքը, եկեղեցաւեր ու ազգասէր ոգին: Նախանձախնդիր ծառայութեամբ Դուք արժանացաք Վազգէն Ա. Ամենայն Հայոց Հայրապետի գնահատանքին, ով Եպիսկոպոսութեան բարձր աստիճանին կոչեց Ձեզ՝ հաստատելով Կանադայի հայոց թեմի առաջնորդական փոխանորդի պատասխանատու պաշտօնում:

Ձեր ջանքերը առաւելաբար արդիւնաւորուել են ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմում, ուր, որպէս առաջնորդ, պաշտօնավարեցիք աւելի քան երեք տասնամեակ: Մենք առիթ ունեցել ենք Ձեր առաջնորդութեան տարիներին Հովուապետական այցով լինելու ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմում՝ ականատես դառնալով Ձեր գործունէութեան բարի արգասիքներին: Տասնամեակների ընթացքին Ձեր քաջալերանքով եւ Ձեր նախաձեռնութեամբ թեմում կառուցուեցին նոր եկեղեցիներ, եկեղեցիների շուրջ հաստատուեցին Տիկնանց ու Երիտասարդաց Միութիւններ եւ հարակից այլ մարմիններ, հիմնուեցին ազգային կրթական հաստատութիւններ, իրագործուեցին բազում եկեղեցաշէն ու ազգանուէր ծրագրեր՝ շինութիւն յաւելելով ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմին եւ Քրիստոսահիմն մեր Սուրբ Եկեղեցուն: Առաջնորդական պարտականութեանց

զուգընթաց Դուք կարելուր աջակցություն բերեցիք նաեւ մեր Հայրենիքի շինութեանն ու զօրացմանը, յատկապէս Հայաստանի անկախութեան առաջին տարիներին արդիւնաւորապէս ծառայելով ի նպաստ կարիքաւոր հայորդեաց առջեւ ծառացած դժուարութիւնների յաղթահարման ու Հայրենիք-Սփիւռք կապերի զօրացման: Ուրախ ենք, որ այսօր եւս, երբ կոչուած էք վաստակեալ հանգստի, շարունակում էք Ձեր կարելին ներդնել թեմի պայծառութեանը՝ աջակից լինելով թեմակալ բարեջան առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանին եւ հոգեւոր դասին:

Սիրելի Սրբազան, արդիւնաշատ ու գնահատելի է նաեւ տարիների Ձեր գործունէութիւնը Գերագոյն Հոգեւոր Խորհրդի կազմում: Նախանձախնդրութեամբ մասնակցելով Խորհրդի աշխատանքներին եւ պատասխանատուութիւններ ստանձնելով տարբեր յանձնախմբերի կազմում, Դուք Ձեր հարուստ փորձն ու կարողութիւններն էք ներդրել ի նպաստ եկեղեցական մեր կեանքի առաւել արդիւնաւոր կազմակերպման:

Ձեր եպիսկոպոսական օծման քառասնամեայ յոբելեանի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Մեր սէրն ու գնահատանքը՝ ի խորոց սրտի աղօթքով հայցելով, որ Բարձրեալն Աստուած Իր օրհնութեան ներքոյ պահպանի Ձեզ՝ պարգեւելով քաջառողջ արեւշատութիւն եւ եկեղեցաշէն գործերի նորանոր յաջողութիւններ:

Թող Տէրն Ամենակալ անսասան պահի Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին եւ Ամենայն Հայոց Աստուածակառոյց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ընդ ամենեւեան. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 24-ն Յունուարի
Յամի Տեառն 2007 եւ ի թուին հայոց ՌՆԾԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 685

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՀԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆՅԱՆԻՆ
ԸՍ. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊԸ ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՅԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱԽԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՅԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆԵԱՆ,
ՈՐ Ի ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ, ԱՄՆ**

Հայոց հոգեւոր նուիրական կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հոգու բերկրանքով ջերմօրէն ողջունում ենք Ձեզ եւ բերում Հայրապետական Մեր օրհնութիւնն ու գնահատանքը Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր զաւակիդ:

Գոհունակութիւն է Հայրապետիս համար հաստատել, որ Դուք տարիներ ի վեր Բարձրեալի օրհնութեամբ ազնիւ նուիրումով, անխոնջ աշխատանքով ծառայում էք մեր ժողովրդին՝ բարի արգասիքներով պսակելով Ձեր ազգանպաստ գործունէութիւնը: Մեր սրբազան արժէքների պահպանման, մեր ժողովրդի արդար իրաւունքների պաշտպանութեան գործին բերած Ձեր զգալի ներդրումը վառ վկայութիւնն են ազնիւ հայրդողւոյ ջերմ հայրենասիրութեան ու ազգանուիրումի: Այս ոգով ու գիտակցութեամբ է, որ Դուք աւելի քան երկու տասնամեակ գլխաւորում էք «Տը Գալիֆորնիա Քուրիըր» շաբաթաթերթը, որն արժանի նպաստ է բերում Նահանգներում հայոց ազգային կեանքի զօրացմանը եւ հայրենասէր ոգու կրթմանը:

Մեծարգոյ պրն Սասունեան, անձամբ ճանաչում ենք Ձեզ եւ գիտենք, որ Ձեր հոգում աննուազ է նաեւ Հայրենիքին աջակցութիւն բերելու սէրն ու եռանդը: Տարիներ առաջ երկրաշարժից տուժած, շրջափակման ու պատերազմական դժուարութիւնները կրող հայրենի մեր երկրին ու հայրենաբնակ մեր ժողովրդին Ձեր նախագահութեամբ մեծ օժանդակութիւն բերեց Միացեալ Հայկական Ֆոնդը, որն այսօր նոյն հետեւողականութեամբ շարունակում է ազգանպաստ իր առաքելութիւնը: Ներկայիս Դուք նոր ձեռնարկումներով կարելոր մասնակցութիւն էք բերում վերագարթօնքի շնչով ապրող հայրենի մեր երկրի բարգաւաճմանը, Հայրենիք-Սփիւռք եւ Հայաստան-Միացեալ Նահանգներ յարաբերութիւնների ամրապնդմանն ու առաւել արգասաւորմանը: Ձեր նախանձախնդիր ղեկավարութեամբ է գործում նաեւ «Լինսի» հիմնադրամը՝ իրականացնելով Հայաստանի մշակութային, կրթական հաստատութիւնների եւ ճանապարհների վերանորոգման, Գիւմրիում բնակարանների կառուցման կարելոր աշխատանքները:

Մեծապես գնահատելի է, որ այդ գործունեության հետ մեկտեղ Դուք Ձեր հետևողական ու նախանձաւոր ջանքերն էք ներդնում՝ ի խնդիր Հայոց Ցեղասպանության միջազգայնորէն ճանաչման ու դատապարտման, յանուն որի գովելի գործունեութիւն էք իրականացրել նաեւ Միացեալ Ազգերի Կազմակերպութիւնում: Հայոց արդար դատի պաշտպանութեանն է կոչուած Ձեր վերջին գիրքը՝ «Հայոց Ցեղասպանութիւնը՝ աշխարհը կիսօսի, 1915–2005, վաւերագրեր եւ յայտարարութիւններ» վերնագրով՝ նուիրուած Մեծ Եղեռնի 90-ամեակին: Ուրախ ենք, որ գիրքը պիտի թարգմանուի մի շարք լեզուներով՝ միջազգայնորէն առաւել ճանաչելի դարձնելու Մեծ Եղեռնի պատմական իրողութիւնը:

Բարձր գնահատելով երախտարժան Ձեր վաստակը ազգային մեր կեանքում, Ձեր բազում ծառայութիւնները մեր ժողովրդին, որոնք շարունակում էք մատուցել նոյն եռանդով ու նուիրումով, եւ, սիրով ընդառաջ ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանի խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

Ս Ո Ւ Ր Բ Ս Ա Հ Ա Կ - Ս Ո Ւ Ր Բ Մ Ե Ս Ր Ո Պ

պատուոյ բարձր շքանշանը:

Հայրապետիս աղօթքն է, որ Բարձրեալ Տէրը Իր օրհնութեան ներքոյ շնորհազարդ ու քաջատոյջ պահպանի Ձեզ եւ պարգեւի կենաց բազում օրեր, ազգաշէն ու եկեղեցաշէն գործոց մշտանորոգ յաջողութիւններ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 11-ն Յունուարի
յամի Տեառն 2007 եւ ի թուին հայոց ՌՆԾԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 380

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԵՆՅԱՆԻՆ
«Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊԻՈՒ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱԽԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՑ ՏԻԱՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՄԷՆԵԱՆ,
ՈՐ ՅԵՐԵԻԱՆ**

Ամենայն Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր ու նուիրեալ զաւակիդ, ում կեանքն ու գործը հատկանշուում է գիտամանկավարժական ու հասարակական բեղուն գործունէութեամբ:

Յարգարժան պրն Արմէնեան,

Տասնամեակներ շարունակ Դուք անխոնջ նուիրումով ծառայել էք առողջապահութեան բնագավառում՝ բազում պատասխանատու պաշտօններ յանձն առնելով Լիբանանի, Հայաստանի, Օմանի, Գերմանիայի, Իրաքի եւ այլ երկրների բժշկական հաստատութիւններում ու կրթօջախներում: Ձեր հեղինակած բազմաթիւ գիտական աշխատութիւններ՝ նուիրած առողջապահական հրատապ խնդիրների ուսումնասիրութեանը, մեծ ընդունելութեան ու գնահատանքի են արժանացել մասնագէտների կողմից եւ հրատարակուել տարբեր երկրներում: Ձեր բարձր հեղինակութեան վկայութիւններն են Ձեր մասնակցութիւնը բազմաթիւ գիտաժողովներին, անդամակցութիւնը բժշկական ասպարեզի միջազգային հեղինակաւոր կազմակերպութիւններին, հայրենական եւ միջազգային բարձր պարգէները, կոչումներն ու ակադեմիական մրցանակները, որոնք արժանիի մատուցումն են Ձեր գիտական արդիւնաշատ գործունէութեանը: Անյոգնաբեկ ու նուիրեալ աշխատանքով արձանագրուած Ձեր յաջողութիւնները ճանաչում են բերում նաեւ Հայրենի մեր երկրին ու բարեպաշտ ժողովրդին:

Գիտական ու մանկավարժական գործունէութեանը զուգընթաց Դուք նաեւ անխոնջ նուիրեալն էք գեղանկարչութեան արուեստի: Ձեր ինքնատիպ, պայծառ ու լուսաւոր պատկերները ուրախ ու ջերմ զգացումներ են պարգեւում դիտողներին՝ նրանց հոգիներում յաւելելով յոյսն ու լաւատեսութիւնը:

Յարգարժան պրն Արմէնեան, այս տարի իր գործունէութեան 15-ամեակն է բոլորում Հայաստանի Ամերիկեան Համալսարանը: Իբրեւ Համալսարանի նախագահ, Դուք աննուազ եռանդով ներդնում էք Ձեր հարուստ փորձառութիւնն ու կարողութիւնները:

րը, որպեսզի համալսարանը շարունակի կրթել ու պատրաստել բարձրակարգ մասնագետներ, ովքեր իրենց հոգու եւ մտքի արարումներով կարենոր մասնակցություն պիտի բերեն մեր Հայրենիքի շենացմանն ու բարգավաճմանը՝ բարձր պահելով հայ գիտության վարկն ու համարումը: Ձեր գործունեությունը բարի օրինակ է կրթօջախի ուսանողության համար՝ անդուլ ու անյոգնաբեկ աշխատանքով ձգտելու յաջողությունների եւ ծառայելու մեր Երկրում գիտության առաջընթացին:

Բազում անգամներ Մենք առիթ ունեցել ենք նաեւ դրսևորուած տեսնել Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդէպ Ձեր սերն ու անխախտ հաւատարմությունը, որ կրում էք Ձեր հոգում՝ իբրեւ արժանի զաւակ լիբանանահայ համայնքի:

Միբեցեալ մեր ժողովրդին մատուցած Ձեր ծառայությանց բարձր գնահատանքով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Ս Ո Ւ Ր Բ Ս Ա Հ Ա Կ - Ս Ո Ւ Ր Բ Մ Ե Ս Ր Ո Պ

պատուոյ բարձր շքանշանը:

Ուրախալի այս առիթով Մեր աղօթքն է, որ Բարին Աստուած պարգեւի Ձեզ քաջառողջություն, նոր եռանդով ու ներշնչումներով լեցուն կեանքի երկար օրեր եւ Իր ամենագոր օրհնութեամբ առաջնորդի Ձեր գիտական, մանկավարժական ու հասարակական գործունեությունը՝ ի շինություն եւ ի զօրացումն մեր երկրի եւ ի բարօրություն հաւատաւոր ժողովրդի:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 15-ն Յունուարի
յամի Տեառն 2007 եւ ի թուին հայոց ՌՆԾԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 399

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակով հունվար ամսին

«Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրվել են.

Միքայել Հարությունյան (Արարատյան Հայրապետական թեմ)

Մելքան Օհանյան (Արցախի թեմ)

Եղիա Տաղլյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Հակոբ Մխայան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Նշան Բլիկյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

Օրհնության գիր է տրվել.

Կանադայի հայոց թեմին

Միրարփի Աճեմյան (Կանադայի հայոց թեմ)

Մորիս սարկավազ Տեմիրճյան (Դամասկոսի հայոց թեմ)

Սվետլանա Հակոբյան (Գեղարքունյաց թեմ)

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ
ԽՈՍՔԸ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԵՎ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ
15-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ**

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում և շնորհավորում Հայոց բանակի զորավարներին ու զինվորներին և ի սփյուռս աշխարհի համայն մեր ժողովրդին՝ Բանակի օրվա և Հայոց բանակի 15-րդ տարեդարձի առիթով:

Հայրենիքի համար մղված հերոսամարտերում ծնունդ առավ և կազմավորվեց մեր բանակը՝ իր քաջարի և աննկուն ոգով ձեռք բերելով հաղթանակներ, որոնցով ազատագրվեց Արցախը, և խաղաղություն հաստատվեց Հայաստանի սահմաններում:

Գոհություն Աստծուն, առավել համալրված ու զորացած՝ մեր բանակը շարունակում է իր մշտաբեր ծառայությունը Հայրենիքին՝ իբրև ավանդ սերունդներին փոխանցելով հայրենասիրության ու նվիրումի, հավատավոր հոգու արիության այն օրինակները, որոնցով տասնհինգ տարիներ առաջ հերոսական նոր էջեր գրվեցին մեր պատմության մեջ: Բարձր մարտունակությամբ ու լավագույն պատրաստականությամբ ճանաչված Հայոց բանակն այսօր իր գնահատելի մասնակցությունն է բերում նաև միջազգային զորախմբերի խաղաղապահ առաքելություններին:

Տոնական և հիշարժան այս առիթով աղոթում ենք հայ քաջորդիների հոգիների համար, ովքեր իրենց կյանքը զոհաբերեցին ի սեր մեր Հայրենիքի, ի սեր ազատության ու խաղաղության: Հայցում ենք Բարձրյալից, որ Իր շնորհի և օրհնության ներքո պահպանի մեր բանակի հրամանատարներին ու մարտիկներին՝ պարգևելով կյանքի երջանիկ ու երկար օրեր և հաջողություններ մեր Հայրենիքին ծառայության մեջ: Թող Տերը խաղաղություն պարգևի համայն աշխարհին, խաղաղ ու ապահով պահպանի Հայաստան ու Արցախ հայրենի մեր երկիրը և աշխարհասփյուռ մեր ժողովրդին:

Թող միշտ ապրեն պանծալի հիշատակները և հավատավոր ոգին Հայոց բանակի:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
27 հունվարի 2007 թ.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ ՀՐԱՆՏ ԴԻՆՔԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ՊԱՇՏՈՆ ԲՈԼՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ

Հունվարի 19-ին, Ստամբուլում տեղի ունեցած Կ. Պոլսի «Ակօս» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր և ճանաչված լրագրող Հրանտ Դինքի սպանության ողբերգական առիթով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեզին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցական գիր է հղել Կ.Պոլսի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մուրաֆյանին՝ հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության և Գերագույն Հոգևոր Խորհրդի իր վշտակցությունը հայտնելով Մեսրոպ Պատրիարքին, պոլսահայ համայնքին, Դինքի սգացյալ ընտանիքին և հարազատներին, «Ակօս» շաբաթաթերթի խմբագրակազմին:

Նորին Սրբության ցավակցականում մասնավորապես ասվում է. *«Խորը ցավով լսեցինք «Ակօս» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի սպանության մասին: Նրա անժամանակ և եղերական մահը ցնցել է բոլորիս: Սգում ենք մեր ողջ ժողովրդի հետ կորուստը ևս մեկ մտավորական անմեղ զոհի: Խորին վրդովմունքով դատապարտում ենք դավադիր այս սպանությունը, որը մեր ժողովրդից խլեց շնորհալի, քաջասիրտ իր զավակին, ով իր գրիչը հավատով ծառայեցնում էր ի սեր արդար ու ազատ, խաղաղ կյանքի և ավելի լավ աշխարհի:*

Մենք նույնպես ակնկալում ենք, որ Թուրքիոյ իշխանությունները պիտի բացահայտեն և օրենքի խստությամբ պատժեն հանցագործներին»:

Հայրապետական մասնավոր տնօրինությամբ, հունվարի 21-ին Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու աշխարհասփյուռ բոլոր թեմերում Սուրբ և Անմահ Պատարագի ավարտին կատարվեց հոգեհանգստյան մասնավոր պաշտոն բարեհիշատակ Հրանտ Դինքի հոգու խաղաղության համար:

«Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

**ԿԱՐԳԱԼՈՒՅԾ Է ՀՌՉԱԿՎԵԼ
Տ. ԽՈՐԵՆ ԱԲԵՂԱ ԶԱՔԱՐՅԱՆԸ**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հունվար 12 թվակիր Հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Տ. Խորեն աբեղա Զաքարյանը՝ հոգևոր ծառայությունը թողնելու պատճառով:

Կարգալույծ հռչակված հոգևորականը այսուհետ կդասվի աշխարհականների շարքը և կկոչվի ավագանի անունով՝ Արտավազդ Զաքարյան:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Հունվարի 21-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, հընթացս Սուրբ և Անմահ Պատարագի կատարվեց հոգեհանգստյան արարողություն «Ակօս» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի հոգու խաղաղության համար, ով դավադրաբար սպանվել էր հունվարի 19-ին Ստամբուլում:

Սուրբ Պատարագի ընթացքին քարոզեց Գևորգյան Հոգևոր Ճեմարանի փոխտեսուչ Տ. Սահակ վարդապետ Մաշայանը: Հայր Սուրբը խոսեց ճշմարտության և արդարության արժեքների մասին՝ անդրադառնալով Հրանտ Դինքի կյանքին և գործունեությանը:

Պատարագի սրբազան արարողությանը և հոգեհանգստյան պաշտոնին ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, ՀՀ Արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը, պոլսահայ համայնքի ներկայացուցիչներ, բազում հավատավոր հայորդիներ:

Հրանտ Դինքի հուղարկավորության արարողությունները կատարվելու են Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքության Ս. Մարիամ Աստվածածին պատրիարքանիստ եկեղեցում: Նորին Սրբություն Գարեգին Բ-ի Հայրապետական տնօրինությամբ արարողություններին հանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսության և Մայր Աթոռի միաբանության կմասնակցի ԱՄՆ հայոց Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

**ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ 15-
ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԻԹՈՎ**

Հունվարի 28-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Բանակի օրվա և Հայոց բանակի 15-րդ տարեդարձի առիթով, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Գերաշնորհ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը:

Սրբազան արարողությանը ներկա էին Հայոց Եկեղեցու հայաստանյան թեմերի առաջնորդները, ՀՀ բանակի բարձրագույն սպայական կազմը՝ գլխավորությամբ ՀՀ պաշտպանության նախարար Մերժ Սարգսյանի, զինվորներ և բարեպաշտ հավատացյալներ:

Հընթացս Սուրբ Պատարագի կատարվեց Հանրապետական մաղթանք՝ Հայաստանի Հանրապետության անասանության ու պայծառության և Հայոց բանակի առավել զորացման համար:

Մասնավոր այս աղոթքի արարողությունից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Գերաշնորհ Արարատ Սրբազանը՝ մասնավորապես նշելով. «Հետադարձ հայացք նետենք և շուրջ քսան տարիներ հետ գնալով՝ փորձենք այդ պահի մեջ մտածել մի բանակի մասին, որ պիտի կոչվեր Հայկական բանակ: Մեզ առնվազն կանվանեին խենթեր և երազապաշտներ...: Այսօր, սակայն, այդ «խենթերը» ցնծում են և ուրախանում, որովհետև ստեղծվեց Հայոց բանակը, ծնունդ առավ տասնհինգ տարիներ առաջ և իր մասնով հասակից իսկ վաստակեց այնպիսի հերոսական համբավ, որ ճշմարտացիորեն այն կարելի է անվանել «Րաֆֆու խենթերի բանակ» (տե՛ս էջ 28):

Հավարտ Սուրբ Պատարագի Հայոց բանակի բոլոր հրամանատարներին ու զինվորներին հայրապետական իր օրհնությունն ու շնորհավորանքը բերեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ մաղթելով, որ նրանք առավել զորանան և կարողանան իրենց ծառայությունը փառքով ու պատվով կատարել Հայրենիքի ու մեր ժողովրդի նկատմամբ: Այս առիթով Վեհափառ Հայրապետը նաև կոչ արեց բարեպաշտ հայորդիներին իրենց աղոթքը հանապազ առ Աստված բարձրացնելու՝ հայցելով Հայոց երկրին խաղաղություն, բանակին՝ զորություն ու ամրություն, և համայն հայ ժողովրդին՝ Աստծո անսպառ օրհնություն:

Ս. Պատարագից հետո Հայրապետական թափորը և բանակի սպայական կազմը ուղղվեցին դեպի Վեհարան, ուր տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն: Ընդունելության ընթացքին Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու «Սուրբ Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշաններ շնորհեց ՀՀ ԶՈՒ Գլխավոր շտաբի պետ գեներալ-գնդապետ Միքայել Հարությունյանին և ԼՂՀ Պաշտպանության նախարար գեներալ-լեյտենանտ Սեյրան Օհանյանին:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

ՔԱՐՈՉԽՈՍԱԿԱՆ

Տ. ԱՐԱՐԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼԹԱԳՃՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ (28 հունվարի 2007 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

*«Տէր, եթէ զշրթոնս իմ բանաս, բերան իմ
երգեսցէ զօրհնութիւնս Բո»:*

(Սաղմ. Ծ 17)

Սիրելի բարեպաշտ հավատացյալներ.

Թե՛ն տարօրինակ պիտի թվան, թե՛ ինչու այս բառերը կվերցնենք որպէս բնաբան, որովհետեւ այսօր Հայաստանի Հանրապետության բանակի ստեղծման 15-ամյակի տոնակատարությունն է, և այս տոնն ու բնաբանը եթե կողք կողքի դնենք, արտաքինապէս պիտի թվա, որ իրար հետ կապ չունեն: Մեկը զուտ աստվածաշնորհական է, իսկ մյուսը՝ զինվորական:

Եկե՛ք, սիրելիներ, միասնաբար մտածենք և խորհրդակցենք վերը նշված երկու գաղափարներու մասին: Այսօր ողջ Հայաստան աշխարհը և ամեն մեկ հայորդի հպարտությամբ և ամենայն հրճվանքով կմեկտեղվին՝ տոնախմբելու մեր Հայրենիքի հաղթական բանակի ստեղծման 15-ամյակը: Հայկական բանակի ստեղծումը երկար ժամանակ երազանք էր ամեն մեկուս համար, երևույթ մը, որ գրեթե անհնարին ու անկարելի կթվար ըլլալ մեզմէ յուրաքանչյուրին:

Հետադարձ ակնարկ մը նետենք և երթանք շուրջ քսան տարիներ ետ և այդ պահուն մեջ մտածենք բանակի մը մասին, որ պիտի կոչվեր Հայկական բանակ: Առնվազն մեզի պիտի անվանեին խենթեր և երազապաշտներ, որոնք կսիրեն իրենց դրյակները կառուցել ամպերուն վրա: Այսօր, սակայն, այդ խենթերը կցնծան և կուրախանան, որովհետեւ ստեղծվեցաւ հայոց բանակը, ծնունդ առաւ 15 տարիներ առաջ և իր մանուկ հասակէն իսկ վաստակեց այնպիսի հերոսական համբավ, որ ճշմարտացիորեն այն կարելի է անվանել «Րաֆֆիի խենթերու բանակ»:

Այսօր, երբ նայինք անցյալին, ամենայն հպարտությամբ կզանք հայտարարել, որ մեր բանակը իր սխրագործություններով, նահատակներով, մարտիրոսներով, ֆիդայիներով, ականջալուր եղաւ Ավարայրի քաջամարտիկ զորավար Վարդան Մամիկոնյանին և հետևեցաւ անոր պատգամին, թե «Ով իմ քաջ նիզակակիցներ. մեր քաջության հետ վատություն և վախկոտություն չխառնեք»:

Այսօր 15 տարեկան է հայոց բանակը և հայոց բանակը այսօր կտրուկ փոփոխության ենթարկեց հայու պարտված, թշվառ ու անտեր հոգեբանությունը և զայն վերածեց հաղթանակած կյանքի ապահովություն ունեցող հոգեբանության մը: Բան

մը, որուն կարոտն ուներ ամեն մեկ հայ անկախ այն իրականութենէն, թէ ան Հայաստանին մեջ կամ աշխարհով մեկ սփռված կյանք մը կապեր: Անցնող 15 տարիներու ընթացքին հայոց բանակը այս մեկը ընծայեց մեզի, մեզի և մեզմէ յուրաքանչ-յուրին: Ինչպիսի երանություն, իդէալն ինչպիսի իրականացում:

Միքէլիներ, այսօր, երբ կթերթենք Հայաստանյայց Եկեղեցւոյ օրացույցը, այնտեղ կտեսնենք, որ այսօրվա դիմաց նշված է. «Բարեկենդան Առաջավորաց պահոց»: Ինչպիսի գուգադիպություն է այս. Հայաստանյայց Եկեղեցին կսահմանէ հնգօրյա պահքի շրջան մը: Պիտի մտածենք, թէ Առաջավորաց պահքը ինչ կապ ունի այսօրվա տոնակատարության հետ: Մեկը բանակի հիմնադրման 15-ամյակն է, իսկ մյուս՝ խիստ պահոց հնգօրյա շրջան: Ի՞նչ է կապը այս երկուքին: Թերթենք հոգեւույս Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի՝ Պոլսոյ մեծանուն Պատրիարքի Ծիսական բառարանը և պիտի գտնենք Առաջավորաց պահքի բացատրությունը: Օրմանյան Պատրիարք կգրէ. «Շնորհալին կմեկնէ Առաջավոր անունը իբրև առաջին պահք, որովհետև Սուրբ Գրիգոր Լուսավորչէն հրամայված առաջին պահքի հիշատակությունն է: Գրիգոր Լուսավորիչ Խոր Վիրապէն ելնելէն ետք, երբ սկսավ ավետարանել, հնգօրյա շարունակական պահքով պատրաստեց հայ ժողովուրդը բժշկություն ու լուսավորություն ընդունելու համար»:

Այս պահուս մեզմէ շատերը պիտի մտածեն, թէ իսկապէս ինչ է կապը Առաջավորաց պահքի և բանակի ստեղծման 15-ամյակին: Օրմանյան Պատրիարք շատ հստակ ձևով կըսէ. «Լուսավորություն ստանալու համար է, որ ան կսահմանէ պահքը»: Անշուշտ, խոսքը 301 թվականի մասին է, երբ հայ ժողովուրդը ամբողջությամբ ընդունեց քրիստոնեությունը: Բոլորս պատմութենէն գիտենք, Գրիգոր Լուսավորիչ, երբ բժշկեց Տրդատ Երրորդ թագավորը, ամբողջ թագավորական ընտանիքն ու ավագանին մկրտվեցավ և ընդունեց քրիստոնեությունը: Բոլորս գիտենք նաև, որ անցյալին թագավորը բանակի բարձրագույն զինվորական հրամանատարն էր, ուստի Առաջավորաց հնգօրյա պահքէն ետք բանակն իր առաջնորդներով Սուրբ Մկրտությամբ մը ընդունեց քրիստոնեությունը՝ ուխտելով հավատարիմ մնալ Քրիստոսին և Անոր հիմնած Սուրբ Եկեղեցւոյն:

Այսպիսով, բանակի հավատարմությունը չսահմանափակվեցավ պաշտպանելու միմիայն Հայրենիքը, այլ իր նոր հավատքը ևս, որուն որպէս փայլուն օրինակ եղավ 150 տարի ետք, երբ տեղի ունեցավ հայության համար ճակատագրական մեծ ճակատամարտը՝ Ավարայրը, որուն հիշատակությունը պիտի տոնենք շուտով: Ահա կապը այսօրվա տոնակատարության և Առաջավորաց պահքի բարեկենդանին: Պատահականություն չէ սա և ոչ ալ գուգադիպություն, այլ պարզապէս մեր Արարիչ Աստուծոյ նախախնամությունը, որպէսզի մեկ անգամ ևս բանակի յուրաքանչյուր զինվոր, անկախ իր աստիճանէն, գիտնա, վերհիշի անցյալից եկած, Աստուծոյ կողմէն շնորհած այն պարգևը, զոր որպէս հայորդիք իրենք ստացան Սուրբ Մկրտությամբ: Այս բոլորի համար է, որ այսօր որպէս քարոզի բնաբան ընտրած ենք հոգևորականին օրվան առաջին պատգամը, որ կըսէ. «Ով Տէր, եթէ իմ շրթունքները բանաս, թող անոնք Քո օրհնությունը հյուսեն»:

Այսօր, սիրելիներ, երբ նայենք մեր ժողովրդի պատմության անցյալին, պիտի տեսնենք, թե ոչ մեկ բան փոխված է: Ամեն վայրկյան կրնանք անակնկալներու առաջ գտնվիլ և սարսափիլ անոնցմե: Բան մը, որ այսօրվա մեր ունեցած անդորրն ու խաղաղությունը կրնա խախտել և խուճապի մատնել մեզի բոլորիս: Այսօր մեր հաղթանակած բանակը իր քաջարի զորավարներով, սպաներով և շարքային զինվորներով կրնա մեզի պարզնել խաղաղություն և երկրին՝ Հայաստանին, անսասանություն ու անդորրություն:

Սիրելի հավատացյալներ, սիրելի քաջարի սպաներ և զինվորներ, հիշենք քաջարի սպարապետի պատգամը, որ ուղղված էր ոչ միայն իր զինակիցներուն 451 թվականին, այլ այն անժամանակ է և ուղղված է մեզմե յուրաքանչյուրին, որ կբարբառե բարձրադադակ՝ ըսելով. «Ով իմ քաջ նիզակակիցներս, կաղաչենք ձեզի, որ մեր քաջության հետ վատություն և վախկոտություն չխառնեք»: Մեր խոսքի ավարտին կուգանք փոխ առնել մեր Եկեղեցու Սրբազան Հայրապետներու կողմեն առ Աստված մաղթանք-աղոթքը, որ կըսե. «Ով Տեր, Քու Սուրբ և պատվական Խաչիդ նշանովը մեր սահմաններեն և տուներեն դուրս վանիր երևելի և աներևոյթ թշնամիները. Ամեն»:

Թող մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի շնորհը, սերը և խաղաղությունը մեզի բոլորիս հետ ըլլա. Ամեն:

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԺՈՐԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ՆՈՐԱՀԱՅՏ ՄՈՆՈԻՄԵՆՏԱԼ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱՇԱՏԻՑ*

Արտաշատի հնագիտական արշավախումբը 2005 թվականին շարունակեց աշխատանքները քաղաքի հարավ-արևմտյան մասում, բլրակի հարևանությամբ բացված երկրորդ հարթակի (I-II դդ.) արևելյան հատվածում՝ նպատակ ունենալով պարզել դեպի հյուսիս գնացող սալերով ու զանգվածեղ ծանր քարերով շարված ուղղահայաց կանոնավոր շարվածքով ավարտվող հենապատի ուղղությունը: Արաքսի վարարումից պեղավայր լցված հողը մաքրելիս, 2004 թ. հարավ-արևելյան անկյունից հայտնաբերված երկու դրամների հատվածում, որոնցից միայն մեկի վրա հաջողվեց ընթերցել «Ներվա» բառը (կայսր է եղել 96-98 թթ., Տրոյանոսի նախորդը), գտնվեց ևս մի դրամ, որի դիմերեսին Ներոնի դիմանկարն է, աջ դարձերեսին SC հապավումը (Senatus Consultum), որը բնորոշ է Անտիոքի թողարկումներին¹:

Ստուգումները ցույց տվեցին, որ պատը թեքվում է դեպի հարավ, այսինքն՝ երկրորդ հենապատի արևելյան թևն է: Բացվեց վերջինիս 26,50 սմ հատվածը, որը դեռևս շարունակվում է: Այս հենապատը նույնպես կառուցված է սալ և զանգվածեղ կրաքարերով: Պահպանվել է դրա մի շարքը միայն, այն էլ՝ ոչ լրիվ: Բացված առաջին երկու քարերը վերցված են հելլենիստական հենապատերից, ունեն ռուստիկում մշակում և խնամքով արված ծիծեռնակապոչ կապերի փոսիկներ, որոնք լայն են ու խորը: Այնուհետև պատը շարունակվում է մաքուր, հարթ մակերես ունեցող կրաքարերով, որոնք իրար հետ ծիծեռնակապոչ փոսիկների միջոցով կապված չեն: Պատի առանձին հատվածներում հանդիպում են նաև ռուստիկում մշակումով քարեր, որոնց կողքի քարերը հաճախ փոսիկներ չունեն: Կարելի է ենթադրել, որ նոր հենապատի համար օգտագործվել են և՛ հելլենիստական հենապատի, և՛ հարթակի վրա կառուցված համալիրի քարերը: Դրանք մաքուր տաշած կրաքարերի խոշոր զանգվածներ են, (երբեմն՝ 1,50 մ երկարության) կա՛մ ավելի նեղ ու երկար մշակված քարեր, կա՛մ 19-24 սմ հաստության սալեր: Եթե առաջինները պատերի շարվածքի քարեր են, ապա երկրորդը՝ աստիճանի, իսկ երրորդը՝ սալահատակի:

Երկրորդ հարթակի կրաքարե միաշար արևելյան պատի հետևում, ի տարբերություն հելլենիստականի, երկայնքով 1,20 մ լայնությամբ սև մարմարի և բազալտի խոշոր զանգվածեղ քարերով կառուցված է հզոր պատ՝ կրաքարե շարվածքի վրա հարթակի ճնշումը փոքրացնելու համար: Վերջինիս հետ միասին պատի ընդհանուր լայնությունը 1,80 -2 մ է:


Կրաքարե հենապատի որոշ հատվածներ հետազայում, միջնադարում, քանդել և օգտագործել են բնակարաններ կառուցելու համար: Միջնադարյան կառույցների

¹ Դրամները որոշել է դրամագետ Ռ. Վարդանյանը:

մնացորդները նստած են անտիկ շրջանի շինությունների վրա: Դրանք պատկանում են V-XVI դդ.: Տարբեր մակարդակներում եղած վառված փայտածուխի և մոխրի հաստ շերտերը ցույց են տալիս, որ դրանք հաճախ են հրդեհվել ու ավերվել: Այդ են վկայում նաև այդ պատերի հիմքերի, կավե և կրաշաղախե հատակների զանազան խորության վրա լինելը: Միջնադարյան պատերը շարված են կավե շաղախի օգնությամբ²:

2006 թ. վերացվեցին միջնադարյան պատերի մնացորդները, որոնք խանգարում էին անտիկ համալիրների ամբողջացմանը:

Հարթակին կից շինությունների պատերը կառուցված են խնամքով, տարբեր երկարության և բարձրության սրբատաշ կրաքարերով, անտիկ շինարարական արվեստին բնորոշ եղանակով (չափերը 5,70x4,40 մ): Հարավային պատը հարթակին չհասած, 2 մ հեռավորությունից, թեքվում է դեպի հարավ (2 մ): Դրա հիմքերը շատ ավելի խորն են և մտնում են սենյակի պատի տակ: Այսինքն, այն կապ չունի շինության հետ և հավանաբար



պատկանում է հելլենիստական շրջանի հենապատին: Այն լցված էր տարբեր մեծության ու ձևերի քարերով, ուստի ենթադրվեց, որ այն որպես բնակելի սենյակ չի ծառայել, այլ հնարավոր է, եղել է աշտարակ: Արևելյան կողմից աշտարակաձև շինությանը հենված պատերով, քարերով լցված կառույցի արևելյան կողմում բացված, ամբողջ երկայնքով կառուցված վեց աստիճանները (երկ.՝ 4.80 մ, լայն.՝ 1.30 մ), սակայն, հստակեցնում են ենթադրյալ աշտարակաձև կառույցի նշանակությունը: Դրանք անմիջական կապ ունեն աշտարակաձև շինության հետ: Աստիճաններով բարձրացել են դեպի վեր և աշտարակի վրա եղած մուտքով մտել տաճարական համալիրի բակ: Գրավոր աղբյուրներն³ ու պեղումներով հայտնաբերված նյութերը⁴ վկայում են, որ հեթանոսական տաճարներն ունեին ներքին բակեր, որոնք հաճախ եղել են պարսպապատ: Աստիճանների լայնությունը 25-30 սմ է, բարձր.՝ 22-25 սմ:

² Միջնադարյան նյութերը հրատարակվում են առանձին հոդվածով:

³ Ագաթանգեղոս Պատմություն Հայոց, «778, 786 (Քննական բնագիրը՝ Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի), Երևան, 1983:

⁴ **С. А. Есаян**, Астхи-блурский могильник, Вестник общественных наук; АН Арм.ССР, 1986, N 6, табл. IX, с. 95-96; Նույնի, Бронзовые модели культовых площадок древней Армении, Советская Археология, 1971, N 1, Նույնի, Древняя культура племен северо-восточной Армении, (III-I тыс. до н.э.), Ереван, 1976, с. 233-235, табл. 150.

Պահպանված վեց աստիճանների չափերի հիման վրա կատարված վերակազմությունը թույլ է տալիս որոշել հրապարակի այդ հատվածի բարձրությունը: Մինչև աշտարակի մուտքը 23 աստիճան է, ընդհանուր բարձրությունը՝ 5,50 մ⁵: Թեև բլրակին հարող սրբազան հրապարակ կարելի էր մուտք գործել ավելի մատչելի, սահուն անցումով հարավարևմտյան և հյուսիսարևմտյան լանջերից, սակայն, հարթավայրից ամենաբարձր արևելյան կողմում կառուցել են աստիճաններ: Սրբազան հրապարակ տանող այդ աստիճանները հանդիսավորություն և խորհրդավորություն էին հաղորդում:

Հայտնի է, որ աստիճանները կապում են վերին և ներքին աշխարհները⁶: Խեթական ծիսական և դիցաբանական որոշ տեքստերում աստիճանը հանդես է գալիս համաշխարհային ծառի դերում: Արևը երեկոյան աստիճաններով իջնում է ներքին (ստորերկրյա) աշխարհ, առավոտյան բարձրանում է վերին (երկնային) աշխարհ: Այս առումով ուշագրավ է խեթական մի պատկերացրություն, որտեղ բարձրաքանդակում⁷ մարդը աստիճաններով բարձրանում է դեպի վեր: Աստիճաններ են պատկերված Արմավիրի պաշտամունքային քարերի վրա⁸, Ժայռապատկերներում և Հայաստանի այլ հուշարձաններում⁹, որոնք վկայում են, որ երկու աշխարհները միացնող աստիճանների դիցաբանական պատկերացումները դեռևս վաղնջական ժամանակներից տարածված են եղել նաև Հայաստանում: Հնարավոր է, մեր աստիճանները լինեն այդ գաղափարի շարունակության վկայությունը:

Աստիճանների հարավային կողմում պահպանված առաջին և երկրորդ, երրորդ ու չորրորդ աստիճանները կտրված են մի քարից, հյուսիսային կողմում պահպանվել է միայն միասին կտրված առաջին և երկրորդ աստիճանը: Հավանաբար, բոլոր աստիճաններն էլ նույն ձևով են պատրաստված եղել: Պահպանված երրորդ-հինգերորդ աստիճանների կենտրոնական հատվածը ավերված է եղել և վաղ միջնադարում վերականգնվել կարմիր տուֆով: Տուֆե մի զանգվածեղ քար էլ կա աստիճանի տակի հարավային պատի երկրորդ շարքում: Այսինքն, վերականգնվել են նաև այդ պատերը:

Այդ առումով ուշագրավ է հյուսիսային կողմի առաջին և երկրորդ աստիճանի միջև արված փոքրիկ խաչը: Շարունակվեցին նաև արևելյան հենապատի մաքրման աշխատանքները: Արևելյան հենապատի բացված հատվածի երկարությունը կազմեց 36,20 մ: Այն դեռևս շարունակվում է դեպի հարավ: Հյուսիսային պատից մինչև աշտարակ 16,25 մ է: Եթե ընդունենք, որ աստիճանները կառուցված են հարթակի պատի կենտրոնական մասում, ապա աշտարակից դեպի հարավ բացվել է 14,30 մ, ուրեմն մինչև պատի թեքվելը արևմուտք մնում է մոտ 2 մ:

Անակնկալ էր աշտարակի հարավային կողմում (հեռ.՝ 2 մ) բաղնիքի (թերմա¹⁰)

⁵ Չափագրությունները կատարել է արշավախմբի ճարտարապետ Ամինա Կանեցյանը:

⁶ Мифы народов Мира, т. II, Москва, 1988, с. 50-51.

⁷ В. Г. Ардзинба, Ритуалы и мифы древней Анатолии, Москва, 1982, с. 126-127, рис. 7, G. Jobes, Dictionary of Mythology, Folklore and symbols, vol. 2, New York, 1962, p. 961, 1483-1494.

⁸ И. Карапетян, Ж. Хачатрян, А. Канемян, Доурартский Армавир (III-начало I тыс. до н.э.), Историко-филологический журнал, 2004, N 2, с. 263-264, рис. 4,6.

⁹ Հ. Մարտիրոսյան, Գիտությունն սկսվում է նախնադարում, Երևան, 1978, էջ 90, Աղ. X; И. Карапетян, Ж. Хачатрян, А. Канемян, Ук. соч., с. 264.

ցած մակերեսը, փայտածուխի շերտերը:

Խճանկարը պահպանվել է դռների շեմերին և պատերի երկայնքով հատակի տարբեր լայնության շերտերին, որոնք հիմնականում թեքված են ներքև: Հաստ հատակի կոտրատված զանազան մեծության կտորներն ընկած են այլևայլ դիրքով ու խորության վրա: Երկար ժամանակ գտնվելով խոնավ վիճակում, կրակի տեղերում խճանկարի որոշ մասերի հատիկները պոկվել են: Խճանկարը պատրաստված է ֆիլզիտ քարի հատիկներով (0,7-1 սմ): Ընդհանուր ֆոնը սպիտակն է: Կենտրոնական, արևելյան և հատկապես հարավային պատերի հարևանությամբ ընկած բեկորներին նկատելի են սև հատիկներով արված ուղղանկյուն շրջանակի անկյունը և մի երկար հատված (լայն.՝ 8 սմ, պահպանված երկարությունը՝ 144 սմ): Երևում են նաև ինչ-որ ոլորուն զարդերի մասեր:

Զնգմայում հայտնաբերված խճանկարներից մեկը նույնպես սպիտակ հատիկներից է պատրաստված, սև ուղղանկյուն շրջանակի մեջ, սպիտակ ֆոնի վրա սևով պատկերված է Սիլենի գլուխը: Հնարավոր է՝ նման մի հորինվածքով է հարդարված եղել նաև Արտաշատի խճանկարը¹¹: Մեր խճանկարում, բացի սպիտակից և սևից, կան նաև կարմրավուն և դեղնավուն հատիկներ: Դրանք նույն ֆիլզիտի ներկված հատիկներն են:

Հարավային և հյուսիսային պատերի մոտ, ինչպես նաև մյուս սենյակներում հայտնաբերվեցին ուղղանկյուն և քառակուսի, անկյուններին կոնաձև ելուստներով (բարձր.՝ 6-10 սմ) աղյուսներ: Դրանք ծայրերով ամրացվել են պատերին և ծածկվել սվաղով, որպեսզի տաք ծուխը թափանցի դատարկ տաքածություն և սենյակները տաքացվեն նաև պատերի միջոցով: Այսինքն, տաքացվում էր ոչ թե օդը, այլ պատերը, որը նշանակալիորեն ավելի հաճելի էր ու առողջարար: Այդ նպատակին են ծառայել նաև կիսած ուղղանկյուն հենասյուները: Նման ելուստներով աղյուսներ հայտնաբերվել են Արտաշատի VIII բլրի բաղնիքից (II դ.), Գառնիի բաղնիքից (II դ.), Վրաստանի անտիկ բաղնիքներից¹²: Քառակուսի ելուստներով և ուղղանկյուն ոտքերով աղյուսներ նույն նպատակով օգտագործվել են հռոմեական բաղնիքներում¹³:

Ուշագրավ է հյուսիս-արևմտյան պատից ոչ հեռու բացված ուղղահայաց դիրքով, չորս գլանաձև միջանցիկ անցքերով քառակուսի կրաքարը (բարձր.՝ 75 սմ, լայն՝ 50x50 սմ, անցքերի տրամագիծը՝ 14 սմ): Քարի մի երեսը սվաղված է: Հայտնաբերվեցին նման կոտրատված գլանաձև անցքերով մի շարք այլ բեկորներ, որոնք տարբեր քարերի են պատկանում: Դրանք, ամենայն հավանականությամբ, ծառայել են որպես հիպոկաուստի հենասյուներ: Ամբողջական քարի բարձրությունը 75 սմ է, այնքան, որքան մեծ սենյակում պահպանված 13 աղյուսով հենասյան բարձրությունը (76 սմ): Դրանց վրա եթե ավելացնենք քառակուսի աղյուսը և հատակի հաս-

¹¹ http://www.pbs.org/wgbh/nova/zeugma/mosa_08.html.

¹² **Ал. Быхочадзе**, Настакиси, Саркине, Дзалиси-города Иберии античной эпохи; Краткие сообщения, Москва, 1977, N 151, с. 97; (Չափերը 40x36x2 սմ, ելուստները՝ 5-9 սմ); **М. Дзиеладзе**, Изучение керамических строительных материалов древней Грузии, Международная научная конференция, Археология, этнология, фольклористика Кавказа, Тбилиси, 2004, с. 65, рис 11.

¹³ **Josef Durm**, Die Baustile historische und technische Entwicklung des handbuches der architektur, Band 2., Stuttgart 1905, Fig. 194.

տությունը, կստացվի 1 մ, իսկ լայնությունը՝ 50 սմ, որը հավասար է աղյուսե հենասյունների առանցքից առանցք լայնությանը: Բավական էր, որ այդ քարերը դրված լինեին 5 կամ 10 սմ բարձրության աղյուսների կամ քարերի վրա, որպեսզի տաք ծուխը անարգել մուտք գործեր քարերի անցքերի մեջ: Նման հենասյուներ այլ հուշարձաններից մեզ հայտնի չեն: Երեք-չորս այդպիսի սյուները ամրություն, կայունություն են հաղորդել հատակին: Կրաքարե հենակները դրվել են հատակին եղած սառը ջրի ավազանի տակ:

Սենյակի հարավային պատից 60 սմ հեռավորության վրա, դեպի կենտրոն, բացվեցին տասը հենասյան մնացորդներ (in situ), քառակուսի աղյուսի վրա դրված մեկ, երկու սկավառակաձև աղյուսներով, իսկ հարավ-արևմտյան անկյունում՝ պատին կպած, կողերին զլանաձև անցքերով մի հենասյուն: Այն դրված էր քառակուսի աղյուսի վրա և ներքին կեսը կրաշաղախ էր լցված՝ ամրություն հաղորդելու համար: Վաղարշապատի Բաղնիքի հիպոկաուստի զլանաձև խողովակներից բաղկացած հենակները նույն եղանակով են ամրացված¹⁴:

Բաղնիքի տարածքից հայտնաբերվել են նաև ուղղանկյուն խողովակներ, որոնք նույնպես օգտագործվել են որպես հիպոկաուստի սյուներ:

Այսպիսով, առկա է հիպոկաուստի հինգ տիպի հենասյուն, քառակուսի և սկավառակաձև աղյուսներ, զլանաձև և ուղղանկյուն կավե խողովակներ՝ կրաքարե չորս զլանաձև անցքով, որը նորություն է: Արտաշատի VIII բլրի առաջին փողոցի բաղնիքում հիպոկաուստի սյուներ են ծառայել ուղղանկյուն նեղ կողերին բացվածքներով խողովակները¹⁵, VIII բլրի երկրորդ բաղնիքի լողասենյակում բացվեցին հինգ տեսակի հենասյուներ, կրաքարե, որոնք, ըստ երևույթին ամենահինն են, քանի որ դրանք տարածում չեն ստանում: Կավե թրծած քառակուսի աղյուսներ, զլանաձև խողովակներ՝ եռանկյունաձև բացվածքներով, քառանկյուն խողովակներ՝ նեղ եզրերին ուղղանկյուն բացվածքներով¹⁶, վերոհիշյալ VIII բլրի առաջին բաղնիքի հենասյուների նման, որոնցից հայտնաբերվել է նաև Գառնիի բաղնիքի սառը ջրի ավազանի հատակի տակ¹⁷, կավե հուս խոշոր աղյուսներ (40x40x10): Դրանք ցույց են տալիս, որ բաղնիքի հիպոկաուստի վերին հատակը քանիցս ենթարկվել է վերանորոգման, և հենասյուն են դրել այն, ինչ որ հնարավոր է եղել: Հում աղյուսով սյուները առաջին անգամ են հանդիպում որպես հիպոկաուստի սյուն և, ամենայն հավանականությամբ, վերաբերում են IV դ. երկրորդ կեսին:

Խճանկարով սենյակի հատակը հյուսիսային մուտքից դեպի հարավ-արևմտյան փոքր դռան բացվածքը 5 սմ թեքություն ունի, որտեղ լայնքով առվակ կա (լայն.՝ 12, խոր.՝ 12 սմ): Այն մտնում է հարավային պատի տակ և թեքվում դեպի արևմուտք: Ըստ երևույթին, այստեղ լողացել են, և ջուրը առվակով հոսել է դուրս: 2001-2002 թթ. պարզվեց, որ տաքացվել է նաև Գառնիի բաղնիքի խճանկարով հանդերձարանը,

¹⁴ **Г. А. Тирацян**, К вопросу о градостроительной структуре и топографии древнего Валаршапита, Историко-филологический журнал, 1977, N 2, л. 87, рис. 1.

¹⁵ **Ժ. Ն. Խաչատրյան, Ա. Գ. Կանեցյան**, Արտաշատի VIII բլրի շերտագրությունը, ԼՀԳ, 1974, N 9, էջ 58-87, նկ. 4; **Б. Аракелян**, Заметки о водоснабжении и банях городов древней Армении, ВОН, 1979, N 10, с. 86, рис. 7; **Ա. Կանեցյան**, Հին Հայաստանի բաղնիքները, Գիտություն և տեխնիկա, 1980, N 4, էջ 46, նկ. 4, 6:

¹⁶ **Ժ. Ն. Խաչատրյան**, Դարձյալ Գառնի ամրոցի բաղնիքի մասին, Հին Հայաստանի մշակույթը, XII, Հանրապետական գիտական նստաշրջան, Զեկուցումների հիմնադրություններ, Երևան, 2002, էջ 48-51:

¹⁷ Նույն տեղում:

որտեղ նույնպես լողացել են ավագանի սառը ջրով¹⁸:

Մեծ սենյակի (9x7,80 մ) գլխավոր ճակատն ուղղված է դեպի արևելք: Արևելյան կողմում աբսիդ (exedrium) ունի (խորշի խորությունը՝ 1,30 մ, լայնությունը՝ 4,10 մ), սենյակի ընդհանուր մակերեսը մոտ 75 մ² է: Այն ամենատաք սենյակն է, լողասենյակը (caldarium): Բացի հանդերձարանի մուտքից, հարավ-արևմտյան անկյունում ունի ևս մի դռան բացվածք, որը հանդերձարանի արևմտյան կողմի միջանցքով կապվում է դիմացի մուտքի հետ: Վերջինս, բացված չլինելու պատճառով, առայժմ դժվար է ասել, այն ուր է տանում: Մեծ սենյակի առաջին (ստորին) հատակը պատրաստված է կրաշաղախե ամուր սվաղով:

Մեծ սենյակի արևմտյան կեսում հիպոկատուսի սյուներ քիչ են պահպանվել: Հարավային պատի երկայնքով բացվեցին միայն արևմուտք-արևելք երկու շարքի ստորին քառակուսի (լայն.՝ 21-22 սմ) կամ, լավագույն դեպքում, դրանց վրա շարված սկավառակաձև 21-22 սմ տրամագծով, 4-5 սմ հաստության թրծած աղյուսով սյուներ, որոնք շարված են կրաշաղախով:

Արևելյան կեսում սյուներն ավելի լավ էին պահպանված: Այստեղ բացվել են քառակուսի աղյուսի վրա շարված 2-13 սկավառակաձև աղյուսներով սյուներ: Վերջինիս բարձրությունը 76 սմ է: Ի հայտ է բերվել վեց շարք: Արևելյան մասում, ներառյալ աբսիդը, հորիզոնական և թեքված վիճակում պահպանվել են երկրորդ, վերին հատակի մեծ մասը (հաստ.՝ 20 սմ): Այն շատ կարծր է: Դրանց տակից երևում են հիպոկատուսի սյուները: Կրկնակի (վերին) հատակը բաղկացած է ուղղանկյուն 4 և 5-6 սմ հաստության աղյուսով անջրաթափանցիկ կրաշաղախով:

Ստորին հատակից երկրորդ հատակի բարձրությունը 1 մ է: Մեծ սենյակի հարավ-արևելյան պատի երկրորդ հատակից ներքև թրծած քառակուսի աղյուսներով (44x44 սմ, հաստությունը՝ 5 սմ) կառուցված է կամարաձև մեծ բացվածք (90x70 սմ), որի արևելյան կողմում, պատին կպած, պահպանվել է քառակուսի աղյուսներով մի սյուն, վրան երկրորդ հատակի մի մասով:

Հարավ-արևելյան սենյակի արևելյան պատը բացված չէ և մինչև հատակ մաքրված չէ: Այս սենյակի արևմտյան պատին, ինչպես վերը նշեցինք, նույնպես տաք ծխի համար մի բացվածք կա (լայն.՝ 70 սմ), որի վերին մակարդակն ավելի ցածր է (35 սմ), քան մեծ սենյակի պատի բացվածքինը¹⁹:

Վառարանը, կաթսայատունը պետք է լինի հարավ-արևելյան սենյակին կից, որպեսզի մեծ սենյակը և խճանկարով սենյակները տաքացվեն: Միջանցքի արևմտյան պատի ետևի մասում հայտնաբերվեց ծխնելույզի կավե թրծած քառանկյուն խողովակի բեկոր, ինչպիսիք հայտնաբերվել էին վեցերորդ բլրից (բարձր.՝ 30 սմ):

Բաղնիքը ամբողջովին բաց անելուց և մաքրելուց հետո միայն հնարավոր կլինի ճշգրտել սենյակների դասավորությունն ու նշանակությունը: Համաձայն Վիտրուվիոսի²⁰ և Պալադիի²¹, ոչ միայն տաճարի տեղի ընտրությունն էր շատ կարևոր, այլև հասարակական մյուս կառույցների, այդ թվում՝ բաղնիքի: Վերջինիս տեղը հնա-

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ **Ճ. Ղ. Խաչատրյան**, Դարձյալ Գառնի ամրոցի բաղնիքի մասին, Հին Հայաստանի մշակույթը, XII, Հանրապետական գիտական նստաշրջան, Զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 2002, էջ 48-51:

²⁰ **Витрувий**, Десять книг об архитектуре, I (перевод Ф.А.Петровского), Москва, 1936, V, X, 1-5.

²¹ **Паладий**, О сельском хозяйстве, I. 40-41, Архитектура античного мира (составители **В. П. Зубов и Ф. А. Петровский**, Москва, 1940, с. 213-214).

րավորին չափ պետք է տաք լիներ, քամիներից պաշտպանված: Արտաշատում նոր բացվող բաղնիքի տեղը միանգամայն համապատասխանում էր այդ պահանջին: Բնչպես վերը նշեցինք, բաղնիքը գլխավոր ճակատով ուղղված է դեպի արևելք: Արևմտյան կողմից այն պաշտպանված է հարթակի պատով, իսկ հյուսիսից փակված է աստիճաններով և աշտարակով: Վիտրովիոսը ասում է, որ բաղնիքի տղամարդկանց և կանանց լողասենյակները պետք է նույն հատվածում լինեն, որպեսզի տաքացվեն մեկ վառարանով (կաթսայատնով): Ստորին հատակը պետք է թեքություն ունենա դեպի վառարանը: Համալիրի և բաղնիքի ջրամատակարարման հարցը լուծվել է Արաքս գետի օգնությամբ, խողովակների միջոցով:

Բաղնիքի տարածքից հայտնաբերված ուշ անտիկ շրջանի նյութերի մեջ մեծ թիվ է կազմում շինարարական խեցեղենը, կղմինդրի (սոլենի) և կիսակլոր կալիպտերի բեկորները: Սոլեններից մեկի վրա պահպանվել է սկյութական IV լեգեոնի դրոշմի նման մի փոսիկ, սակայն արձանագրությունը չի երևում. ըստ երևույթին կավը կարծրացած է եղել²²:

Այսինքն, բաղնիքը ծածկված է եղել կղմինդրներով: Ներքին սենյակները լուսավորվել են առաստաղից²³: Այդպիսին է խճանկարով սենյակը: Բաղնիքից հայտնաբերվել են մեծ քանակությամբ հարթ ապակու բեկորներ, որը վկայում է լուսամուտների ապակեպատ լինելու մասին: Գտնվել են նաև զանազան ապակե օձանելիքի սրվակների բեկորներ (մ. թ. II դ.), բրոնզե թիակիկ՝ օձանելիք հանելու համար, երկաթյա նետասլաք, դաշույնների բեկորներ:

Հայտնաբերվել են լայն ու հաստ խեցիով կիսախողովակների մասեր, որոնք, հավանաբար, ծառայել են ջրահեռացման համար, բաղնիքի երկրորդ (վերին) հատակը թրծած ուղղանկյուն մեծ աղյուսի (հաստ.՝ 5,5 սմ, երկար.՝ 62 սմ, լայն.՝ 40,5 սմ) կտորներ, կրաշաղախի հաստ շերտերով (2 սմ), կարմիր, դեղնավուն, միագույն և երկգույն ներկած որմնանկարի և անջրաթափանցիկ եռաշերտ սվաղի բեկորներ և այլն:

Այդպիսով, սա Արտաշատում բացված երրորդ բաղնիքն է: Այն պատկանում է II դ. վերջ – III դ. առաջին քարոդին: Այդ թվագրության օգտին են խոսում բաղնիքից հայտնաբերված հարթ ապակու բեկորները, խեցեղենը, շինարարական տեխնիկան և Սեպտիմոս Սևերոսի (193-211 թթ.) Պոնտոսի՝ Ամասիայում 206/7 թ. թողարկված բրոնզե դրամը: Դիմերեսին Սեպտիմոս Սևերոսի կիսանդրին է, աջ դարձերեսին քառաձի ռազմակառքի վրա կանգնած Հելիոսն է՝ դիմացից պատկերված, իսկ պատվանդանի ձախ կողմում ծառ է պատկերված:

Դիմ. AV.[K.L.] сеп. сев. ceovHPOC

Դարձ. A(P. [ceY] ANT. AM ACI [MHT.] Ne. пP. пO

- сT. CH.

Եթե VIII բլրում բացված բաղնիքները (2) փոքր էին²⁴, ապա նոր բացված բաղ-

²² Ժ. Ղ. Խաչատրյան, Արտաշատից հայտնաբերված լատիներեն արձանագրությամբ դրոշմված կղմինդրներ և աղյուսներ, ՊԲՀ, 2006, N 1, էջ 230-235, նկ. 6:

²³ Огюст Шуази, с/ 477.

²⁴ Б. Аракелян, Заметки о водоснабжении и банях городов древней Армении, БОН, 1979, N 10, с. 86, рис. 7; У. Чанкеджян, Հին Հայաստանի բաղնիքները, Գիտություն և տեխնիկա, 1980, N 4, էջ 46, նկ. 4,6, նկ. 3-6; Žores D. Khachatrian, Artaxata capitale dell' Armenia Antica (II sec. A.C.- IV sec. D.C.), Ai piedi dell'Ararat Artaxata e l'Armenia.Ellenistico –Romana, a cura di Antonio Invernizzi, Torino, 1998, Fig. 16-19.

նիքը, ինչպես տեսանք, խոշոր (թերմա) է: Ինչպես նշել ենք, բաղնիք պետք է լինի նաև հարթակի հյուսիսային կողմում, ըստ որում՝ նույնպես խճանկար հատակով²⁵: Արտաշատում 1979-1980 թթ. քաղաքի տարածքի հարթեցման ժամանակ VIII բլրի դիմաց բացվել էր բաղնիքի կրկնակի հատակ, սկավառակաձև աղյուսե հենասյուններով:

Հայաստանում, համենայն դեպս՝ II դարից, ծանոթ էին հունա-հռոմեական աշխարհում լայն տարածում ստացած բաղնիքների շինարարական սկզբունքներին, և այժմ կարելի է ասել, որ կառուցել են ոչ միայն փոքր չափերի մասնավոր բաղնիքներ (Գառնի, Վաղարշապատ, Արտաշատի VIII բլուր), այլև խոշոր հասարակական թերմեր:

Այս առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում Մովսես Խորենացու վկայությունները քաղաքների կոմունալ տնտեսության վերաբերյալ, քաղաքները խմելու և ոռոգելու ջրով ապահովելու, բաղնիքների առկայության մասին: Նա հիշատակում է, օրինակ, Վանի չքնաղ և զարմանքի արժանի բաղնիքները՝ համապատասխան քաղաքի դիրքին և կարիքներին²⁶:

Այսինքն, Արտաշատն ունեցել է բաղնիքների լայն ցանց, որը վկայում է քաղաքաշինության, քաղաքային կոմունալ տնտեսության, բնակչության կուլտուր-կենցաղային բարձր մակարդակի մասին:

Աստիճանի հյուսիսային կողմում մանր քարերով, կավե շաղախի միջոցով շարված կանոնավոր հատակագծով բնակարանները հենվում են հարթակի պատին, ամենայն հավանականությամբ դրանք հարթակի վրա կառուցված համալիրին սպասարկող անձնակազմի բնակարաններն են: Այդ պատերի ճակատների շարվածքի միջից գտնվեցին կրաքարե կորնթոսյան խոյակի շատ հետաքրքիր զարդաքանդակներ, նրբագեղ ոլորուն արծվագլուխ հիշեցնող քանդակով ականթի տերևների մասեր, որոնք շատ բնորոշ են անտիկ կառույցներին, հատկապես տաճարներին: Գառնիի տաճարի քանդակներում, օրինակ, զգալի տեղ են զբաղեցնում ականթի տերևները, առանձին կամ այլ զարդերի հետ միասին: Զարդաքանդակներում ականթի տերևների և դրանց մշակման տարբերակներն այլ զարդերի հետ բնորոշ են հելլենիստական մշակույթի գրեթե բոլոր կենտրոններին: Կորնթոսյան սյուների (օրդերի) բնորոշ հատկանիշը հանդիսանում է կողովի տեսքով տերևներով խոյակը, որը հույների մոտ համարվում էր սոսկ հոնիական սյունաշարի (օրդերի) շքեղ տարատեսակը²⁷: Այն հոնիականի համեմատ ավելի թեթև ու գեղեցիկ տեսք ունի: Սյուները, շնորհիվ խոյակի, ավելի բարձր են ու սլացիկ:

Հռոմեական ճարտարապետության մեջ, սակայն, այն լայն տարածում է ստանում: Հաճախ նույնիսկ ձուլվում, խառնվում են հոնիական և կորնթոսյան խոյակներ:

²⁵ **Z. D. Khachatryan**, *Archaeological Research in Artaxata, Parthca incontri di culture nel mondo antico*, Pisa. Roma, 2005, N 7, p. 20-21, Fig. 5; Նույնի մոնումենտալ կառույցի մնացորդներ և ուշագրավ ծեսով բաղնիք Արտաշատից (ՊԲՀ), 2005, N 2, էջ 222, 231, նկ. 15,16:

²⁶ **Մովսես Խորենացի**, Պատմութիւն հայոց, քննական բնագիրը և ներածությունը **Մ. Մբեղեանի և Մ. Տարուխիսեանի**, Եր., 1991, I, 16:

²⁷ **Огюст Шюазан**, *История Архитектуры*, Т. I, Москва, 1935, с. 280-281, рис. 221-224, 324; **Н. И. Брунов**, *Очерки по истории Архитектуры*, Т. II, Греция, Рим, Византия, Москва-Ленинград, 1935, рис. 77.

րի հատկանիշները²⁸: Վիտրուվիոսն ասում էր, որ կորնթոսյան սյուները, բացառությամբ խոյակների, իրենց բոլոր մյուս համաչափություններով նման են հունիականին, բայց վերջիններիս խոյակների բարձրությունը դրանց տալիս է համապատասխանաբար ավելի ձգված և գեղեցիկ²⁹ տեսք: Ըստ Վիտրուվիոսի, կորնթոսյան խոյակի միտքը ծագել է հետևյալ կերպ: Համաձայն առասպելի, կորնթացի մի աղջկա գերեզմանին դայակի կողմից տարված նվերներով զամբյուղը պատահաբար դրվել է ականթի արմատի վրա և կղմինդրներով ծածկվել: Գարնանը ականթի տերևներն ու ցողունները գրկել են զամբյուղը, իսկ ծանրության տակ դրանց ծայրերը ոլորվել են³⁰:

Կորնթոսյան օրդերի խոյակները տարբեր մանրամասներով ականթի տերևների զանազան ռճավորումով, հելլենիստական և հատկապես մ. թ. առաջին դարերում լայնորեն տարածված էին ամբողջ Արևելքում³¹, Բակտրիայում, Այ-Խանումում³², Եփրատի ափի Սելևկիայում/Ջևգմայում³³, Տիգրիսի վրայի Սելևկիայում, Պալմիրայում³⁴, Պարթևստանում և այլն: Պարթևստանում այն կիրառվել է ոչ միայն հասարակական կառույցներում, այլև հարուստ քաղաքացիների շքեղ սրահներում³⁵:

Արտաշատի գյուտերը վկայում են, որ կորնթոսյան խոյակները (և օրդերը) տարածված են եղել նաև Հայաստանում: Կորնթոսյան խոյակներ հայտնի են նաև Բագարանի միանեֆ եկեղեցուց (624-631 թթ.), որոնք երկրորդ օգտագործմամբ են: Ըստ Ն. Կ. Տոկարսկու³⁶, դրանք վերցված են նախաքրիստոնեական շրջանի մի շինությունից:

Ըստ Մովսես Խորենացու³⁷, Երվանդ վերջինը Արեգ-Միհր-Ապոլոնի, Լուսին-Անահիտ-Արտեմիսի և նախնիների արձանները տեղափոխեց Բագարան: Կարելի է համոզված ասել, որ այդ խոյակները վերցված են հեթանոսական տաճարից: Դա ընդունված սովորություն էր, երբ հեթանոսական կառույցի քարերը և քանդակները օգտագործվում էին նոր կրոնին նվիրված տաճարներում:

Արտաշատից հայտնաբերվել է նաև փոքր չափերի բրոնզե մի քանդակ, որտեղ աստիճանաձև պատվանդանի վրա, ատտիկյան խարիսխով ատամնավոր սյան

²⁸ *Огюст Шуази*, Ук. соч., рис. 330.

²⁹ *Витрувий*, Десять книг об архитектуре, I, (Перевод Ф.А.Петровского), Москва, 1936, IV, I, 1

³⁰ Նույն տեղում, IV, I, 9.

³¹ *Г. А. Кошеленко*, Родина Парфян, Москва, 1977, с. 48, рис. 16; Всеобщая История Архитектуры в 12 томах, Архитектура древнего мира, N 1, Москва, 1970, с. 351, рис. 5 (Бактрия, а-в. Кей-Кобад-шах, б-в Термезе).

³² *Даниель Шлюмберже*, Эллинизированный Восток, Москва, 1985, рис. 14, 136, Ай-Ханум, 109, (Хатра) и др.

³³ *Jörg Wagner*, Seleukeia am Euphrat / Zeugma, Wiesbaden, 1976, p. 116-117, Taf. 14 d.

³⁴ *Antonio Invernizzi*, Capitell smaltati dal teatro di Seleucia sul Tian, Mesopotamia, XXIX, Firenze, 1994, p. 107-146, Fig. 1-8, 10-15, 29-37; *Antonio Invernizzi*, Corinthian terracotta Assembled capitals in Hellenized Asia, In the land of the Gryphons Papers on Central Asian archaeology in antiquity, p. 3-12, Pl. I, 1-5; II, 1-5; P. Bernard "Chapiteau corinthiens hellénistiques d'Asie Centrale découverts a Aï-Khanoum", Syria, 45 (1968, 111-151).

³⁵ *Г. А. Кошеленко*, ук. соч., с. 47-48.

³⁶ *Н. М. Токарский*, Архитектура древней Армении, Ереван, 1964, с. 36-37.

³⁷ *Մովսես Խորենացի*, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածությունը Մ. Աբեղեանի և Մ. Յարութիւնեանի, Երևան, 1991, II, 40 :

կորնթոսյան խոյակին, հաղթական դիրքով կանգնած է արծիվ³⁸: Այս առումով ուշագրավ է Արտաշատի վերոհիշյալ համալիրից հայտնաբերված արծվի գլխով կրաքարե քանդակը: Այստեղ թռչունը ներկայացված է ռեալիստորեն: Արծվի փորագիր աչքը վերցված է շրջանաձև կարմիր ժապավենի մեջ: Վիզը և կոկորդի հատվածը նույնպես ներկված են կարմիր: Դրանով շեշտվել է նրա արևային աստծու հետ ունեցած կապը և հզորությունը: Չախակողմյան կոտրվածքից կարելի է ենթադրել, որ այն բարձրաքանդակի մաս է, հնարավոր է, եղել է կորնթոսյան խոյակի քանդակներից մեկը:

Ուշագրավ է նաև հարթակի արևելյան պատի հարավային մասում հայտնաբերված կրաքարե հոնիական խոյակի բեկորը: Պահպանվել է դրա միջվոյուտային տարածքի մեջ արված երեք գորելեֆ իոնիկներով հատվածը:

Հոնիական օրդերով խոյակներ ունի Գառնիի տաճարը (Ող. երրորդ քառորդ): Ա. Սահինյանը գտնում է, որ «Գառնիի տաճարում կիրառված հոնիական օրդերի համակարգը հիմնականում ունի փոքրասիական ծագում»³⁹: Նման մի խոյակ հայտնաբերվել է Վրաստանում, Սարկինեից⁴⁰: Այդ տեսակի խոյակները Վիտրուվիոսն անվանում է հոնիական⁴¹, պատճառաբանելով, որ նրանք առաջինն են օգտագործել: Նա ասում է. «... խոյակների վրա տեղավորեցին ոլորագարդեր, որոնք զանգրացրած խոպոպների նման կախվում էին աջից և ձախից, նրանց առջևի մասերը զարդարեցին կիմատիներով և պտղաշղթաներով, իսկ ողջ բնի վրայով անցկացրեցին ամուսնացած կնոջ զգեստի ծալքերի նման վայր իջնող ամվակոսներ»⁴²: Կ. Վ. Տրևերը նշում է, որ դրանք Արևելքում ավելի վաղ էին հայտնի, քան հույների մոտ, և վկայակոչում է Ե. Հերցֆելդի կողմից հրատարակված Մարաստանում գտնվող Da-ս-dukhtar-ի (մայր և աղջիկ) Ն. Ք. VII դ. դամբարանը⁴³, որի ճակատի չորս սյուների խոյակները հարդարված են պարուրաձև ոլորագարդերով: Դրանք Հերցֆելդն անվանում է «նախահոնիական»: Կ. Վ. Տրևերը դա հիմնավորում է նաև նրանով, որ Հայաստանում, հին Մարաստանում (իրանական Քուրդիստանում և Լուրիստանում) նման խոյակները ավանդաբար պահպանվում են նաև հետագայում:

Միջնադարյան ճարտարապետներից Ալբերդին ոլորագարդի ծագումը կապում է ծառի կեղևի հետ⁴⁴:

Հելլենիստական աշխարհը, այդ թվում նաև հոնիացիները, սերտ կապերի մեջ էին արևելյան ժողովուրդների հետ և ենթարկվել են նրանց մշակույթի ազդեցությանը, ծանոթացել շինարարական արվեստի նվաճումներին: Ըստ Հարտմանի՝ դրա

³⁸ **Ճ. Դ. Խաչատրյան**, Արծվի տարբեր հորինվածքներով կնքադրոշմներ, գեմաներ և քանդակներ, ՊԲՀ, 2003, № 2, էջ 165, աղ. III, 1,2 :

³⁹ **Ա. Ա. Սահինյան**, Գառնիի անտիկ կառույցների ճարտարապետությունը, Երևան, 1983, էջ 166, տախտ. IX:

⁴⁰ **Ա. Ապաքիձե**, Города древней Грузии, Тбилиси, 1968, с. 50, рис. 11, Табл. XXI, 2.

⁴¹ **Витрувий**, IV, I,7.

⁴² **Витрувий**, IV, I,8.

⁴³ **Е. Herzfeld**, Iran in the ancient East, Oxford, 1941, p. 207, pl. XXXV-XXXVIII; **К. В. Тревер**, Очерки по истории культуры Древней Армении (II в. до н. э. - IV в. н. э.), Москва-Ленинград, 1953, с. 74-75, рис. 18; Всеобщая история архитектуры в 12 томах. Т I, Москва 1970, с. 310, рис. 21.

⁴⁴ **Альберти**, VII, VI, (չ3 223).

արդյունքն է հանդիսանում խարսխի հատուկ ձևի ստեղծումը «... և այնուհետև խոյակներում ոլորագարդեր (խխունջներ, պարույրներ) մտցնելը, որ հայտնաբերվում է խեթերի և ասորեստանցիների մոտ: Ատտիկական հողի վրա տեղափոխված հոնիական ոճը հասնում է իր ամենակատարյալ արտահայտությանը և միաժամանակ առանձին ճարտարապետական մասերի յուրահատուկ ձևավորմանը»⁴⁵:

Հոնիական օրդերի արմատները Արևելքում են տեսնում նաև Շուազին և ուրիշներ⁴⁶: Շուազին ասում է. «Բավական է հայացք ձգել ասիական ճարտարապետական հուշարձանների վրա՝ համոզվելու համար, որ հոնիական օրդերը նրանց հետ ընդհանուր աղբյուր ունի: Հոնիական սյան բոլոր դետալները, դրա իոնիկներով խոյակները, առվակոսները, խարիսխները զարմանալի ճշտությամբ վերարտադրված են Պտերայի խեթական քանդակներում, այսինքն Եփեսոսի տաճարի կառուցումից շատ առաջ»⁴⁷:

Մ. Գրիգորյանը այն կարծիքին է, որ «խոյակը» իր ստեղծման օրից ունեցել է խոյի եղջյուրներից ընդօրինակված պարույրաձև ոլորագարդեր, եթե հայերեն «խոյակ» բառը ծագում է «խոյ» բառից, որ վերջինս սկզբնապես վերաբերել է ոլորագարդով խոյակին: Հետագայում այն տարածվել է նաև առանց ոլորագարդի խոյակների վրա⁴⁸: Հավանաբար պատահական չէ, որ Գառնիի տաճարին նախորդել են նման տաճարական կառուցվածքներ, նույնպես ոլորագարդ խոյակներով: Հնարավոր է, որ Գառնիի տաճարի կառուցումից հետո, կառուցվել են նաև հոնիական օրդերով այլ տաճարներ⁴⁹: Դրա օգտին են խոսում վաղմիջնադարյան գալարվող ոլորագարդեր ունեցող հուշարձանները՝ Զվարթնոցը, Արուճը, Պտղնին, Ջրվեժը և այլն: Այսինքն՝ ոլորագարդով խոյակները Հայաստանում կիրառվել են անհիշելի ժամանակներից⁵⁰:

Արտաշատում 2006 թ. կրկին հայտնաբերվեցին ատամնավոր սյան բեկորներ, տորաձև խարիսխ (կոտրված), ատտիկյան խարսխի բեկորներ, կրաքարե ռելիեֆ, հարդարանքի այլ մասեր: Այսինքն, մենք ունենք երկու տեսակի՝ տորաձև և ատտիկյան խարիսխ, երկու տեսակի ատամնավոր և հարթ մշակումով գլանի բեկորներ և երկու տեսակի կորնթոսյան ու հոնիական խոյակի բեկորներ:

Հետաքրքիր է արխիտրավի եռաստիճան անցումով լավ մշակված բեկորը, որը խոյակների վրա դրվող քարն է: Այս բոլորը և նախորդ երեք տարիների ճարտարապետական մանրամասները⁵¹ հաստատում են հարթակի վրայի համալիրի շքեղ տաճար լինելու մասին մեր ենթադրությունը: Կրաքարե արխիտրավի մի բեկոր էլ գտնվել է միջնաբերդի (II բլուր) հյուսիսային պարսպի տակ, քանդակագարդ

⁴⁵ **Гартман**, История архитектуры, Москва, 1936, с. 42.

⁴⁶ **И. А. Паргянев, В. Н. Патажкова**, Очерки истории архитектурных стилей, М., 1983, с. 26.

⁴⁷ **Шуази**, История архитектуры Т. I, Москва, 1935, с. 254-253.

⁴⁸ **Մ. Վ. Գրիգորյան**, Ոլորագարդով խոյակները հայ ճարտարապետության մեջ, ՊԲՀ, 1959, № 2-3, էջ 259-263:

⁴⁹ Նույն տեղում:

⁵⁰ Նույն տեղում:

⁵¹ **Ժ. Ղ. Խաչատրյան**, Մոնումենտալ կառույցի մնացորդներ և ուշագրավ ծեսով թաղում Արտաշատից, ՊԲՀ, 2005, № 2, էջ 218-232, նկ. 8-14

այլ բեկորների հետ, որոնք վերաբերում են գազաթի պալատական համալիրին⁵²:

Ուսումնասիրված տարածքից գտնված կենցաղային խեցեղենից հետաքրքիր են անտիկ շրջանի փակ և բաց ջնարակած անոթների կանթերը, հատակները և պսակները, գունազարդ և կարմիր փայլեցրած սկուտեղների, ափսենների, թասերի մեծ ու փոքր մասերը, ներմուծված կարմիր լաքով սկուտեղի, օծանելիքի նրբախեցի փոքրիկ անոթի բեկորները, կարմրավուն ռելիեֆ զարդերով, երկզվան կանթով ճրագը, բաց ֆոնի վրա կարմիր ներկով արված հայերեն «լ» տառը հիշեցնող զարդերով փայլեցրած թասի մասը (Ն. Ք. I դ.) և այլն:

Հայտնաբերված նյութերի մեջ աչքի է ընկնում բրոնզե դրամների գանձը: 56 դրամից բաղկացած գանձը գտնվել է I սենյակի հյուսիսային պատին զուգահեռ, 145 սմ հեռավորությամբ անցնող, մանր քարերով ցածր պատի արևմտյան անկյունում պահպանված հենապատից 65 սմ խորության վրա:

Մաքրված է դրամներից միայն քսանը, մնացածը գտնվում է մաքրման գործընթացում: Առայժմ որոշված է դրանցից մեկը, որը Կորնթոսում թողարկված Անտոնինոս Պիոսի դրամն է (138-161 թթ.): Դիմերեսին նրա դիմանկարն է, դարձերեսին՝ Պեկասը: Մյուս դրամները Անտիոքի պղնձե թողարկումների կոպիտ ընդօրինակություններ են՝ ձուլման եղանակով պատրաստված: Դրանք նույնպես դարձերեսին կրում են SC գրությունը, բայց որոշ օրինակների վրա S տառը շրջված դիրքով է **SC**: Հավանաբար, վերջինիս կաղապարը պատրաստող վարպետը լեզուն չի իմացել: Դժվար է ասել, այս դրամներն ընդօրինակված են տեղում, թե՞ ներմուծված են:

⁵² Žores D.Khachatrian, Artaxata capitale..., fig. 14.

ՀԱՅԿ ԲԱԼԱՍՏԱՆՅԱՆ

Ասպիրանտ

ՊԱՀԼԱՎՈՒՆԻՒՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԿԱՄՍԱՐԱԿԱՆՆԵՐԻ
ՀԵՏՆՈՐԴՆԵՐ

X-XI դարերում Պահլավունիների ավատական տոհմը հսկայական դեր ուներ Բագրատունիների թագավորության կառավարման ոլորտում: Նրանք էին վարում իշխանաց իշխանի և սպարապետության պաշտոնը Բագրատունյաց արքունիքում: Սակայն մինչ օրս գիտական ուսումնասիրության ենթարկված որոշ իշխանական տների (Վաչուտյանների, Պոռշյանների, Օրբելյանների) կողքին դեռևս թերի է ուսումնասիրված Պահլավունիների տոհմաբանությունը և նրանց շինարարական գործունեությունը:

Պահլավունիների ազգաբանությանը նվիրված առաջին ուսումնասիրությունը պատկանում է ականավոր գիտնական Ղ. Ալիշանին: Մեծանուն հեղինակն իր «Շնորհալի եւ պարագայ իւր»¹ աշխատության մեջ, համադրելով գրավոր աղբյուրների և վիմագիր արձանագրությունների տվյալները, նախ շարադրում է Պահլավունիների նախապատմությունը, այնուհետև ներկայացնում Պահլավունյաց տասը սերնդի պատմությունը:

Պահլավունիների վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ են պահպանվել նաև Կ. Կոստանյանցի կողմից լույս ընծայած «Գրիգոր Մագիստրոսի Թղթերը»² աշխատության մեջ: Սակայն պետք է նշենք, որ Կ. Կոստանյանցի կողմից գրված համառոտ առաջաբանում հեղինակը նպատակ չի ունեցել ամբողջովին վեր հանել և ամբողջացնել Պահլավունիների ազգաբանությունը, այդ իսկ պատճառով աշխատությունից դուրս են մնացել բավականին կարևոր իրադարձություններ և փաստեր:

Պահլավունիների վաղնջական պատմությունն արտացոլված է նաև Ս. Կոզյանի «Կամսարականները «Տեարք Շիրակայ և Արշարունեաց»» աշխատության³ մեջ, որտեղ հեղինակը ամբողջացնում է Կամսարականների III -VIII դարերի պատմությունը:

Պահլավունիների տոհմաբանության և ամբողջական պատմության լուսաբանման գործում անգնահատելի է տաղանդաշատ գիտնական Ն. Ակինյանի վաստակը:

Ն. Ակինյանի «Ներսես Լամբրոնացի»⁴ աշխատության մեջ իրենց լուսաբանումն են ստացել այնպիսի խնդիրներ, որոնք ժամանակին վրիպել են նախկին ուսումնասիրողների ուշադրությունից: Վաստակաշատ գիտնականը մանրակրկիտ կերպով շարադրել է Կամսարականների պատմությունը, այնուհետև ներկայացրել այն

¹ Ղ. Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873:

² Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, բնագիրն յառաջաբանով եւ ծանոթութիւններով առաջին անգամ ի լոյս ընծայեց Կ. Կոստանեանց, Աղեքսանդրապոլ, 1910:

³ Ս. Կոզեան, Կամսարականները «Տեարք Շիրակայ եւ Արշարունեաց», Վիեննա, 1926:

⁴ Ն. Ակինեան, Ներսես Լամբրոնացի, Վիեննա, 1956:

դրդապատճառները, որոնք ստիպեցին Կամսարականներին մոռացության մատնել իրենց տոհմանունը:

2003 թ. հրատարակվեց Լևոն Սողոմոնյանի «Հայ նշանավոր գերդաստաններ»⁵ աշխատությունը, որտեղ հեղինակը այլ գերդաստանների կողքին բավականին համառոտ ներկայացնում է նաև Պահլավունիների գերդաստանի պատմությունը:

Սույն աշխատանքի նպատակն է ամբողջացնել միջնադարյան Հայաստանի ավատական ընտանիքներից մեկի՝ Պահլավունիների ծագումնաբանությունը, ցույց տալ Կամսարական և Պահլավունի ընտանիքների նույնությունը և ճշտել Պահլավունիների Հայաստան գալու ժամանակը:

* * *

X դարի երկրորդ կեսին Բագրատունյաց Հայաստանում պատմական ասպարեզ իջավ Պահլավունյաց փառապանծ տոհմը: Հայ մատենագիրներից առաջինը Ստեփաննոս Ասողիկն է իր Պատմության մեջ անդրադառնում Պահլավունիներին: Պատմիչը հաղորդում է, որ 998 թ. Ատրպատականի Ռովդա ամիրայի թոռ Մամլանի դեմ պատերազմելու համար Գագիկ Առաջինը վեցհազարանոց մի զունդ է դուրս բերում, որի հրամանատարությունը հանձնում է «իշխանաց իշխանին Վահրամայ, որդւյ Գրիգորյ Պահլաւունւյ, որ զՄարմաշէն և զԲրգներն շինեաց, և Սմբատայ մաժիստոռսի, որդւյ Վահրամայ»⁶:

Պահլավունի իշխանական տոհմի ծագումնաբանությունը մասնակիորեն լուսաբանված է իրենց իսկ թողած արձանագրություններում և այդ տոհմին պատկանող հայտնի հեղինակների աշխատություններում: Օրինակ՝ հայտնի գորահրամանատար և քաղաքական գործիչ Վահրամ Պահլավունին իր իսկ կողմից կառուցած Մարմաշենի եկեղեցու արձանագրություններից մեկում ինքն իրեն հետևյալ կերպ է ներկայացնում. «Ես Վահրամ իշխանաց իշխան եւ անթիպատ պատրիկ որդի Գրիգորի իշխանի Հայոց Մեծացի ցեղէն Պահլաւունի եւ ի զարմից Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչին...»⁷:

Չնայած Վահրամ Պահլավունին վերոհիշյալ արձանագրության մեջ Պահլավունի ցեղը համարում է Գրիգոր Լուսավորչի շառավիղ, այնուամենայնիվ հայ մատենագրության մեջ այդ տոհմանունը մինչև X դարի վերջը չի հիշատակվում: Ավելի ուշ ժամանակաշրջանի պատմիչները, հետևելով իրենց նախորդներին, Պահլավունյաց տոհմին վերագրում էին պարթևական ծագում: Օրինակ՝ Ստեփաննոս Օրբելյանը հաղորդում է, որ Պահլավունյաց տոհմը ոչ թե սոսկ հայկազուն է, այլ խառնված է Պահլավիկ և Արշակունի թագավորական ցեղին. «և յայսմհետէ իմասցիս զսոսա ճետ Արշակունի և զաւակ Պահլաւունի. և այնքան բարձր և փառաւոր գոյ, զի հաւասարէին խնամութեամբ ընդ Պարսից թագաւորութեանն և ընդ Հայոց»⁸:

Գրիգոր Մագիստրոսը իր հորեղբոր՝ Վահրամ Պահլավունու մահը ողբալով, նրան է ձոնում հետևյալ տողերը. «Բազմեսցիս ի զոգս ի մեծին Գրիգորի եւ ի հաւուն

⁵ Լ. Սողոմոնյան, Հայ նշանավոր գերդաստաններ, հտ. II, Լոս Անջելես, 2003:

⁶ Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 270:

⁷ Ի. Օրբելյան, Надписи Мармашена, Петроград, 1914, стр. 1:

⁸ Ստեփաննոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 52:

քո Աբուղամրի եւ Կամսարեանն Արտակայ. քանզի ազգ սեփական եւ որդիք Աբրահամու յազգէն քետուրական, ի գաւառէն Պարթեւաց, ի քաղաքէ Պահլաւ, ի ցեղէ Արշակունի, շառաւիղ մերոյն Լուսավորչին»⁹: Պահլավունի հեղինակներն իրենց ազգաբանության մեջ տեղ գտած բացը փորձում էին լրացնել իրենց իսկ կողմից ստեղծված ավանդությունների օգնությամբ: Դրա վառ ապացույցը Ներսես Շնորհալու հետևյալ տողերն են¹⁰.

Ի Սահակայ Սրբոյ սկսեալ
Մինչեւ առ մեզ ոչ վըճարեալ.
Ի յաշխարհէ ծնընդեան ելեալ
Ի հայրենեաց տարամերժեալ...
Սակայն բնութիւն ազգին պահեալ
Որ Պահլաւիկըն կոչեցեալ,
Թէեւ թագուն իմն ամփոփեալ
Յռամիկ ազանց միջի ծածկեալ
Միայն ինքեանց ներհուն եղեալ
Որ յայնմ ազգէ գոլով սերեալ,
Որդի զհայր փոխանակեալ
Մինչեւ առ մեզրս հասուցեալ,
Ի նախնական հօրէ սկսեալ
Ի Պարթեւէն Լուսավորեալ,
Մինչ ի Վասակ Քաջըն հասեալ,
Այն որ արեամբ նահատակեալ:

Գրիգոր Լուսավորչի արական գիծը Ս. Սահակով ավարտվում է. «Եւ վասն զի ոչ գոյր իւր արու որդի, բայց միայն դուստր մի, գոր էր տուեալ կնութեան Համագասպայ տեառն Մամիկոնէից և Հայոց սպարապետի, որ ծնաւ ի Համագասպայ երիս արու որդիս գտորբն Վարդան և գտորբն Հմայեակ և գերանելին Համագասպեան»¹¹:

Այսպիսով, Գրիգոր Լուսավորչի շառավիղը Ս. Սահակի դուստր Սահականույշի միջոցով փոխանցվեց Մամիկոնյան տոհմին, իսկ որոշ ժամանակ անց Մամիկոնյանների միջնորդությամբ այդ տոհմի հետ ձուլվելու պատիվը բաժին ընկավ Կամսարականներին, որովհետև Արշավիր Կամսարականը «էր եւ փեսայ զօրավարին Հայոց սրբոյն Վարդանայ տեառնն Մամիկոնէից, ունելով զդուստր նորա ի կնութեան»¹²:

Արշավիր Կամսարականի կնոջ անունն էր Վարդանույշ¹³: Այս երկու նախարարական տոհմերը իրավական տեսանկյունից հանդիսանում էին Ս. Լուսավորչի տան իրավահաջորդներ: Առաջնությունը պատկանում էր Մամիկոնյաններին, սակայն այդ իշխանական տան ներկայացուցիչները հետագայում էլ շարունակեցին

⁹ Գրիգոր Սագիստրոս, նշվ. աշխ., էջ 40:

¹⁰ Ներսես Շնորհալի, Վիպասանութիւն, Երևան, 1981, էջ 106-108:

¹¹ Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց եւ թուրք առ Վահան Մամիկոնեան, Թիֆլիս, 1907, էջ 76:

¹² Նույն տեղում, էջ 138:

¹³ Վ. Կիլիկեցեան, Եղիշէ, Վիեննա, 1909, էջ 384-385:

կրել Մամիկոնյան տոհմանունը՝ երբևիցե չփորձելով իրենց վերագրել պարթևական ծագում: Քանի դեռ Մամիկոնյանները պահպանում էին իրենց ուժն ու հզորությունը, Կամսարականները չէին շտապում պարծենալ Ս. Լուսավորչի տան հետ իրենց ունեցած ազգակցությամբ:

748-750 թթ. և 774-775 թթ. Մամիկոնյանների գլխավորությամբ Հայաստանում տեղի ունեցած հակաարաբական համազգային ապստամբությունների պարտությունից հետո երկրի կառավարման դեկը իրենց ձեռքը վերցրեցին Բագրատունիները: Փաստորեն, Մամիկոնյան և Բագրատունի տոհմերի միջև իշխանության համար ընթացող երկարատև մրցակցությունն ավարտվեց Բագրատունիների հաղթանակով: Արաբական խալիֆայության համար անցանկալի տարր հանդիսացող Մամիկոնյանները դուրս մղվեցին քաղաքական ասպարեզից: Քիչ անց նույն ճակատագրին արժանացան նաև Կամսարականները, որոնք հանդիսանում էին Մամիկոնյանների գաղափարակիցն ու զինակիցը:

Արաբների որդեգրած տոհմաջինջ քաղաքականության վերաբերյալ որոշակի փաստեր են պահպանվել Ղևոնդ պատմիչի մոտ: Պատմիչը հաղորդում է, որ Օթման ոստիկանը Հայոց նախարարների զորքը տանում է Աղվանից երկիր, Կասպից դռների մոտ՝ օգնության կանչելով «զՏաճատ իշխանն և զսպարապետն Բագարատ և զՆերսես Կամսարական և զայլսն ի նախարարացն Հայոց յաւուրս. տապախառն ծագման Հեփեստեայ հրագագաթան. և հարկանէ զբանակ իւր ի դաշտին որ կոչէր Քերան, ի դժնդակ և յանհանդուրժելի ջերմութեան տապոյ խորշակին: Եւ զբովանդակ աւուրս ամարայնոյ անցուցանէր ի հնոցաձև ապառաժին դաշտի: Որում ոչ կարացեալ հանդուրժել նախարարացն Հայոց՝ վախճանէին ի տապախառն օդոյն, որ վտանգեալ բառնայր ի կենաց աշխարհիս. և վախճանի իշխանն Տաճատ և սպարապետն Բագարատ և Ներսեսն Կամսարական և այլք ի զօրացն»¹⁴:

Կարծում ենք, որ երեք հայ նախարարների և այլ զորականների մահվան պատճառը ոչ թե եղել է տապախառն օդը, այլ արաբ ոստիկանը, որն այդ քայլով ցանկացել է երկիրը ռազմական ուժից զրկել: Արաբների վարած դաժան քաղաքականության հետևանքով անպաշտպան մնացած բնակչությունը բռնեց արտագաղթի ճամփան. «Իսկ ապա իբրև այնպէս թափուրք ի ստացուածոց մնային, մերկք և բոկք և սովամահք, և ոչ գտանէին ապրուստ անձանց՝ դէմ եղեալ տարադեմ գնացին փախստեայ յաշխարհն Յունաց. զորոց ասեն լինել զթիւ մարդկանն աւելի քան ԺԲՈ/12.000/ արանց հանդերձ կանամբք և մանկըտեաւ, որոց առաջնորդք Շապուհ ի տոհմէ Ամատունեաց և Համամ որդի նորա և այլք ի նախարարաց Հայոց և նոցին հեծելոց»¹⁵:

Չնայած Ղևոնդը այս տարագիրների թվում չի հիշատակում Կամսարականներին, այնուամենայնիվ նրանց մեջ անտարակույս եղել են նաև Կամսարական ազատներ¹⁶: Նման ենթադրության համար կան հիմնավոր պատճառներ. Վարդան Արևելցին հաղորդում է, որ Մուշեղ Մամիկոնյանի չորս դուստրերից մեկը «ետ զինքն յամուսնութիւն Ջահապի ումեմն Իսմայելացոյ», որի արդյունքում Ջահապը «յափշտակեալ էր մասն ինչ յԱրշարունեաց, եւ խորհէր տիրել 'ի ձեռն կնոջն բոլոր

¹⁴ Ղևոնդ, Պատմութիւն, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 161:

¹⁵ Նույն տեղում, էջ 168:

¹⁶ Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 5:

աշխարհին...»¹⁷:

Այսպիսով տեսնում ենք, որ Ներսէի Կամսարականի մահից հետո Կամսարականների տոհմը ի վիճակի չէր պաշտպանել սեփական տիրույթների անվտանգությունն արաբների անակնկալ հարձակումներից: Այս վկայությունը թույլ է տալիս ենթադրել, որ արաբների խարդավանքի զոհ դարձած Ներսէի Կամսարականը եղել է Շիրակի և Արշարունիքի տերը: Կամսարականներին օգնության են հասնում Սմբատ Բագրատունու որդիներ Աշոտը և Շապուհը, որոնք «ելեալք զկողմամբքն Շիրակայ՝ հարին զգօրսն Իսմայելի՝ որ անդ, և գրաւեցին յինքեանս զՇիրակ և զԱշոցք, և զգաւառն Տայոց»¹⁸:

Կամսարականները նախընտրեցին իրենց կալվածքները վաճառել Բագրատունիներին, որոնք արաբների դեմ մղած պայքարում ավելի կենսունակ գտնվեցին: Ստեփանոս Տարոնեցին հաղորդում է, որ Աշոտ Մսակերը «զանձագին արար զգաւառն Արշարունեաց յազգէն Կամսարականաց, և զարքունիսն ի Կոգովտէ յԱրշարունիս փոխեաց»¹⁹: Խալիֆայության որդեգրած տոհմաջինջ քաղաքականությունը չորջանցեց Կամսարականներին, և կործանման եզրին գտնվող այս հեռատես տոհմը ստիպված էր իր անվտանգությունը փնտրել հայրենիքից դուրս:

784 թ. հետո Կամսարականները հեռացան Հայաստանից և «Յայսմ յետէ ոչ եւս գտանի ի գիրս անուն տանն Կամսարականաց եւ Տերանց Շիրակայ. որք ի հակիրճ յիշատակէ աստի մերոյ ճանաչին արք մեծարգոյք, ոչ միայն քաջութեամբ եւ բարեպաշտութեամբ, այլ եւ իմաստասիրութեամբ եւ աշխարհասիրութեամբ. և թուի վասն այն խուսելով յաղմկէ և ի բռնութենէ Արաբացոց»²⁰:

Ն. Ալիխյանի կարծիքով՝ անհայտության մատնված Կամսարականները օտարության մեջ մնացին շուրջ մեկ դար, որից հետո բյուզանդական կայսր Վասիլ Առաջինի միջնորդությամբ Աշոտ Բագրատունին նրանց հնարավորություն ընձեռնեց վերադառնալ հայրենիք²¹: Չի բացառվում, որ իրեն «Արշակունի» համարող հայազգի կայսրը, որն Աշոտ Բագրատունուց թագ խնդրելու նպատակով 876 թ. հատուկ պատգամավորություն էր ուղարկել Հայաստան, իր դեսպաններին հանձնարարած լինել նաև Աշոտ Բագրատունու առջև բարձրացնել Կամսարականների՝ հայրենիք վերադառնալու հարցը: Մակայն կարծում ենք, որ վտարանդիության մեջ գտնվող Կամսարականների առաջին քարավանը Պառլավունիների նախահայր Արտակ Կամսարյանի գլխավորությամբ հայրենիք է վերադառնում ոչ թե Աշոտ 1-ինի²², այլ Աշոտ 2-րդի կամ նրա եղբայր Աբասի օրոք: Նման ենթադրության համար կան հիմնավոր պատճառներ. Գրիգոր Մագիստրոսը իրեն համարում է Պառլավունյաց հինգերորդ սերունդ և հիշատակում է իրենից առաջ ապրած չորս սերնդի ներկայացուցիչներին՝ Արտակ Կամսարյան, Աբուդամբ, Գրիգոր և Վահրամ Պառլավունի²³: Առաջին երկուսի մասին չեն պահպանվել կենսագրական այլ տեղեկություններ:

¹⁷ Վարդան Արեւելցի, Տիեզերական պատմություն, Երևան, 2001, էջ 83:

¹⁸ Նույն տեղում, էջ 83:

¹⁹ Ստեփանոս Տարոնեցի, նշվ. աշխ., էջ 106:

²⁰ Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 5:

²¹ Ն. Ալիքեան, նշվ. աշխ., էջ 332:

²² Նույն տեղում, էջ 337:

²³ Գրիգոր Մագիստրոս, նշվ. աշխ., էջ 40:

Արտակ իշխանի թոռ և Աբուղամրի որդի Գրիգորը (Գրիգոր Համգե), որպես Հայոց սպարապետ, հիշատակվում է 981 թ. Կուաշի (Կոշի) արձանագրության մեջ. «ՆԼ թուականին ի կաթողիկոսութեան Տեառն Խաչկայ եւ ի թագաւորութեանն Սմբատայ եւ ի յասպարապետութեան Գրիգարի յիշխանութեան Աշոտոյ...»²⁴: Ղ. Ալիշանի կարծիքով՝ Գրիգորը ծնվել է 941 թ.²⁵: Մենք չգիտենք, թե որքան է Գրիգորը 981 թ. հետո ապրել, սակայն գիտենք, որ նա. «Քառասնից եղեալ ամաց...», երբ վախճանվեց²⁶: Այս վկայությունը թույլ է տալիս մեզ Գրիգորի ծննդյան տարեթիվը նշանակել ոչ ավելի վաղ, քան 941 թվականը: Վահրամ Պահլավունին ծնվել է 967 թ.²⁷, իսկ Գրիգոր Մագիստրոսը՝ 990 թ.²⁸: Այսպիսով, տեսնում ենք, որ այս սերունդների միջև տարիքային տարբերությունը կազմում է 23-26 տարի: Եթե առաջնորդվենք այս տրամաբանությամբ և ընդունենք, որ յուրաքանչյուր սերնդի միջև ընկած ժամանակահատվածի տարբերությունը կազմում է 25-30 տարի, ուրեմն Աբուղամրը պետք է ծնված լիներ շուրջ 911-916 թթ., իսկ Արտակ Կամսարյանը՝ 881- 886 թթ.: Ավելին, ժամանակի հայտնի կաթողիկոս և պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցին, որն իր պատմությունը հասցնում է մինչև 924 թվականը, չի խոսում Կամսարականների՝ հայրենիք վերադառնալու մասին²⁹: Դա նշանակում է, որ Կամսարականների վերադարձը տեղի է ունեցել 924 թվականից հետո, թե երբ, հայտնի չէ: Հայտնի է միայն այն, որ Կամսարականները, գալով հայրենիք, վերափոխվեցին և դարձան Պահլավունիներ: Ն. Ակինյանը գտնում է, որ Արտակ Կամսարյանը նախապես է հրաժարվում իր տոհմանունից և իր նախնիների իրավունքից՝ փոխարենը խոստում ստանալով թագավորից, թե պիտի ստանա կալվածք և բարձ³⁰:

Կարծում ենք, որ Մագիստրոսի նախնիները խորապես ըմբռնում էին, որ Պահլավունի տոհմանունը, ի տարբերություն Կամսարականի, ի գործ է նրանց ավելի ազդեցիկ դիրքի հասցնել, որովհետև նոր տոհմանունը մատնացույց էր անում, որ նրա կրողները սերել են ոչ միայն Կարենյան, այլև Սուրենյան Պահլավից: Հետևաբար, ապագայում նրանք կարող էին պարծենալ, որ Արշակունիներին ազգակից լինելուց բացի, հանդիսանում են նաև Ս. Լուսավորչի սերունդներ: Հետաքրքիր է, որ Գրիգոր Մագիստրոսի վերոհիշյալ վկայությունից բացի (եթե հաշվի առնենք, որ Մագիստրոսի Կամսարյանը հավասարագոր է Կամսարականին), չի պահպանվել այնպիսի հիշատակություն, որտեղ Պահլավունիներն իրենք իրենց Կամսարական կոչեն: Ն. Ակինյանը Պահլավունիների նման դիրքորոշումը բացատրում է հետևյալով. «Քանի գոյություն ունեւ Բագրատունի թագաւորութիւնը՝ Պահլաւունիք հաւատարիմ գտնուեցան իրենց խոստումին, չկիրարկել Կամսարական տոհմանունը»³¹:

Այս բավականին հետաքրքիր տեսակետը քննություն չի կարող բռնել, որովհետև Պահլավունյաց տոհմի ներկայացուցիչները շարունակեցին այդ տոհմանունը գոր-

²⁴ Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 145-146:

²⁵ Ղ. Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 12:

²⁶ Գրիգոր Մագիստրոս, նշվ. աշխ., էջ 42-43:

²⁷ Հ. Միքայել Յովհաննէսեան, Հայաստանի Պահլաւունիները. Բագմավեպ, 1973, N 3-4, էջ 406:

²⁸ Լ. Սողոմոնյան, նշվ. աշխ., էջ 254:

²⁹ Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցույ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912:

³⁰ Ն. Ակինեան, նշվ. աշխ., էջ 337:

³¹ Նույն տեղում, էջ 338-339:

ծածել նաև Բագրատունյաց թագավորության անկումից հետո: Չպետք է մոռանանք, որ Կամսարականները հայրենիքից հեռացան ոչ թե Բագրատունիների, այլ խալիֆայության վարած տոհմաջինջ քաղաքականության հետևանքով, հետևաբար, Բագրատունիները Կամսարականների վերադարձի ժամանակ նման նախապայման չէին կարող դնել: Կամսարականներն իրենց հոժար կամքով ընդունեցին Պահլավունի տոհմանունը, որպեսզի հանրությանը ցույց տան Լուսավորչի տոհմի հետ իրենց ունեցած ազգակցությունը:

Պահլավունիները մոռացության մատնեցին իրենց Կամսարական արմատները, որպեսզի շրջանցեն նաև միջնորդ Մամիկոնյաններին: Իսկ եթե նրանք Ս. Լուսավորչի հետ իրենց ազգակցությունը ցույց տային Կամսարականների միջոցով, անհրաժեշտություն կառաջանար իրենց տոհմածառում ավելացնել նաև միջնորդ Մամիկոնյանների անունը:

Որպեսզի կարողանանք վեր հանել և ուսումնասիրել Պահլավունիների ազգաբանությունն ու նրանց ծագումնաբանությունը, անհրաժեշտ է, որպեսզի հասկանանք, թե ովքե՞ր էին Կամսարականները, ե՞րբ և որտեղի՞ց էին եկել Հայաստան: Վաղ միջնադարյան մեր պատմիչներից միայն Մովսես Խորենացին է մանրամասն պատասխանում վերոհիշյալ հարցերին: Ըստ Պատմահոր՝ Կամսարականները, որոնք ազգակից էին Արշակունիներին և ցեղակից Գրիգոր Լուսավորչին, սերել են Կարենյան Պահլավից: Այդ առթիվ նա հաղորդում է հետևյալը. «Արդ՝ թեպետ և ոչ է կարգ պատմութեանս ի ժամանակի, և ոչ ըստ կարգի զոր ասելս ձեռնարկեցաք, այլ քանզի սերունդք Արշարի թագաւորին են որք Հայոց ազինս հաւատոց եղեն առիթ, և հարազատութիւն Արտաշիսի որդւոյ նորա՝ սկիզբն արասցուք յաղագս պատուականութեան մարդկանն, նախակարգեալ ի գիրսս առնթեր Արտաշիսի. զի իմասցին որք ընթեռնունն, եթէ համազգիք քաջին են: Իսկ զկնի ապա նշանակեսցուք և զժամանակ գալստեան հարցն նոցա ի Հայս, որք են Կարենեանք և Սուրենեանք, յորմէ Սուրբն Գրիգոր, և յորմէ Կամսարականք, յորժամ ի շարի կարգին հասանիցեմք ի ժամանակս թագաւորին որ զնոսա ընկալաւ»³²:

Կարենյան Պահլավից սերած իշխանական տոհմը, ըստ Մովսես Խորենացու, Հայաստան է գալիս Տրդատ 3-րդ Արշակունու օրոք: Ահա թե ինչ է հաղորդում պատմահայրն այս կապակցությամբ. «Իսկ Կամսարայ դժուարին վարկուցեալ ի մէջ երկուց հզօր թագաւորաց բնակել թշնամութեամբ, մանաւանդ զի և եղբարքն ոչ միաբանեցան ընդ նմա՝ խաղացեալ ամենայն ընտանեօք իւրովք և աղխիւ գայ առ Տրդատ մեր թագաւոր, եղբարց նորա առ Շապուհ երթալով: Այս Կամսար ահագին քաջութեամբ նահատակեալ առ հարբն ի պատերազմունս, ի շահատակելն իւրում հարկանի յումեմնէ սակերք զգլուխն. և վերացուցեալ մասն ինչ յոսկերէ սկաւառակին, բժշկեալ ի դեղոց, պակաս գոլով բոլորութիւն գազաթանն՝ անուանեցաւ Կամսար այնր աղագաւ»³³:

Սահակ Կոզմանի կարծիքով՝ Պահլավ Կամսարականները Հայաստան են գալիս 3-րդ դարի առաջին քառորդին՝ Պարթև Արշակունիների կործանումից հետո³⁴: Այս տեսակետը ավելի մոտ է իրականությանը, որովհետև Պարթևական պետության

³² Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, Տիֆլիս. 1913, Բ, ԻԷ:

³³ Նույն տեղում, Բ, ՁԷ:

³⁴ Ս. Կոզեան, նշվ. աշխ., էջ14:

վերջին գահակալ Արտավան 5-րդի սպանությունից հետո Մասանի թոռ Արտաշիր Մասանյանը հրաման է արձակում կոտորել գահի այն հավանական թեկնածուներին, որոնք ազգակից էին Պարթև Արշակունիներին և չէին ընդունում իր գերիշխանությունը: Այդ կոտորածների արդյունքում ոչնչացվում է ամբողջ Կարենյան Պաշտիկի ցեղը, սակայն Բուրզի շնորհիվ փրկվում է մանուկ Պերոզամատը՝ Կամսարականների ցեղի նախնին³⁵:

Կամսարականների և պարթևական ծագում ունեցող հայ Արշակունիների ազգակցական կապի օգտին է խոսում նաև այն փաստը, որ նորեկ տոհմի տանուտերին՝ Պերոզամատի որդի Կամսարին, ժառանգության իրավունքով շնորհվում են իրենց բերրիությամբ հայտնի լավագույն հողատարածքները. «Յայնմ ժամու և ազգային նոցա Կամսար մկրտի իւրայովքն հանդերձ ի ձեռն մեծին Գրիգորի. արքայի ընդունելով ի ջրոյն՝ տայ նմա ժառանգութիւն զմեծ դաստակերտն Արտաշիսի, որ այժմ ասի Դրասխանակերտ, և զգաւառն Շիրակ, որպէս ազգականի իւրում և մտերիմ հարազատի: Այլ նա ոչ աւելի բաւեալ քան զեօթն աւուրս յետ մկրտութեանն, վախճանի: Բայց թագաւորին Տրդատայ մխիթարեալ զգլովս որդւոցն Կամսարայ զԱրշաւիր՝ զինքն փոխանակ ծնողին սահմանելով, ազգ զնա սերէ յանուն հօրն, և կարգէ ի թիւ նախարարութեանց»³⁶:

Այս վկայություններն ուղղակիորեն ցուցում են, որ Կամսարականներն ազգակից էին Արշակունիներին և նախարարական աստիճանի հասան տիրող արքայատոհմի հոգաձության շնորհիվ:

Այսպիսով, կարող ենք նշել, որ Մասանյանների կողմից Պարսկաստանում իշխանությունը զավթելուց հետո, Կամսարականների տոհմը, խուսափելով արյունահեղությունից, հարկադրված է լինում իր անվտանգությունը փնտրել Հայաստանում: Նոր հայրենիքում Կամսարականները ջերմ ընդունելություն են գտնում և որոշ ժամանակ անց նախարարական աստիճանի են հասնում տիրող ազգակից արքայատոհմի (Պարթև Արշակունիներին ազգակից հայ Արշակունիների) հոգաձության շնորհիվ:

5-րդ դարում Մամիկոնյանների միջոցով Գրիգոր Լուսավորչից ժառանգության շառավիղը փոխանցվում է Կամսարականների իշխանական տոհմին, որի արդյունքում միաձուլվում են Կարենյան և Սուրենյան տոհմերը:

748-750 թթ. և 774-775 թթ. հակաարաբական ապստամբությունների անհաջող վախճանը կանխորոշեց երկու զինակից տոհմերի՝ Մամիկոնյանների և Կամսարականների հետագա ճակատագիրը: Խալիֆայության համար անցանկալի տարր հանդիսացող Մամիկոնյան և Կամսարական տոհմերը անգոր գտնվեցին դիմակայել տոհմաջինջ քաղաքականություն որդեգրած արաբական պետական մեքենային և ստիպված հեռացան երկրից:

924 թ. հետո, երբ Հայաստանում աստիճանաբար սկսեց ամրապնդվել Բագրատունիների կենտրոնական իշխանությունը, օտարության մեջ գտնվող Կամսարականներն Արտակ Կամսարյանի գլխավորությամբ կրկին վերադարձան հայրենիք:

Կամսարականները, գալով հայրենիք, մոռացության մատնեցին իրենց տոհմանունը և հանրությանը ներկայացան որպես Պահլավունիներ: Նոր տոհմանունը ակ-

³⁵ Մովսես Խորենացի, նշվ. աշխ., Բ, 2Է:

³⁶ Նույն տեղում, Բ, Դ:

նարկում էր, որ նրա կրողները սերել են ոչ միայն Կարենյան, այլև Սուրենյան Պահլավից: Հետևաբար, ապագայում նրանք կարող էին պարծենալ, որ Արշակունիներին ազգակից լինելուց բացի, հանդիսանում են նաև Ս. Լուսավորչի սերունդներ:

Պահլավունիների նույնությունը Կամսարականների հետ առկա է նաև շինարարության և ճարտարապետության բնագավառում. «Որովհետև գեղարվեստական ճաշակով և շինարարական մեծագործությամբ միննույն արդյունքն է տվեր ճարտարապետության պատմության համար 10-րդ դարեն հետո, ինչ որ մինչև 7-րդ դարու վերջը գոյություն ունեցող Կամսարականներու ցեղը»³⁷:

³⁷ Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան, MCMXLII, էջ 263:

ԳՐԻԳՈՐ ԲՐՈՒՏԵԱՆ

Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԿԱԽԱԳԻ ԽԱՌՆԱԽՈՐԱՆՈՒՄ ԱՌԿԱՅ ՕՐԱՅՈՒՑԱՅԻՆ ՈՐՈՇ ՄԱԿԱՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ

Սարկաազի անուամբ մեզ հասած Խառնախորանների մեջ առկայ սինակներից որոշները տակալին բացատրուած չեն: Այդ Խառնախորանի առաջին հրատարակող Ա2. Աբրահամեանը իր հրատարակած բնագրի բացատրական մասում այդ սինակները միայն նկարագրել է. չի տուել դրանց բովանդակութեան ու կիրառութեան ուեւ բացատրութիւն¹: Այդ չբացատրուածներն են «Վերադիրք Հոռոմոց», «Կիսակը Լուսնի» «Է.երեկը Հոռոմոց», «Շաբաթագիր», «Այբութենք արեգականն», «Աստիճանք արեգականն», «Հոլովք արեգականն» եւ «Ասպարեզք արեգականն» վերտառութեամբ սինակները:

Այս ութ սինակների բացատրութիւններն ունենալը կարելոք է՝ առաւել լրիւ հասկանալու համար Խառնախորանի կազմողի եւ, ընդհանրապէս, նրա ժամանակուայ օրացուցային (ու նաեւ տիեզերական) պատկերացումները: Նկատի ունենալով ամսագրային յօդուածի հնարաւորութիւնները, առայժմ կը սահմանափակուենք այս ութ սինակներից միայն առաջին չորսի քննութեամբ, մնացեալ չորսը թողնելով այլ առիթի: Ինչպէս ստորեւ կը տեսնենք, այս չորս սինակների պարունակութիւնը ունի զուտ օրացուցային իմաստ եւ վերաբերուոմ է տարուայ իւրաքանչիւր օրուայ համար աւուր պատկերը (շաբաթուայ օրը) եւ Լուսնի փուլը գտնելուն:

Նախ խնդրոյ առարկայ նիւթը պատկերացնելու եւ այստեղ մատչելի դարձնելու համար համառօտ աղիւսակով քաղուածաբար տանք Խառնախորանի Յունուար – Մարտ ամիսների համար վերոնշեալ սինակների բովանդակութիւնը:

Աղիւսակը² բաժանուած է երեք մասի. ձախ մասում Յունուար ամսի տուեալներն են, միջին մասում՝ Փետրուար ամսինը, իսկ աջ մասում՝ Մարտինը: Իւրաքանչիւր մասի ձախ սինակում տրուած են Հոռոմեական ամսաթուերը «Հոռոմոց եւ իւրոց» վերտառութեամբ:

Արդ փորձենք բացատրել այս սինակների բովանդակութիւնը եւ գտնենք դրանց մեջ ներկայացուած օրացուցային մակաչափերի կիրառման կերպը: Սկսենք ամենապարզից: Ամենապարզը «Շաբաթագիր» վերտառութեամբ սինակն է: Այստեղ վերից վար անընդհատ աճման կարգով դասաւորուած են 1-ից 7-ը բնական թուեր: Այսպէս. տարուայ առաջին օրուայ տողում Յունուարի 1-ի դիմաց «Շաբաթագիր» սինակում ունենք Ա(1), ապա Բ(2), Գ(3), ..., մինչ Է(7)՝ Յունուարի 7-ի դիմաց: Սրանից յետոյ վերստին գալիս է Ա(1), Բ(2), Գ(3), ..., մինչեւ տարուայ վերջ՝ Դեկտեմբերի 31-ի դիմաց Ա(1): Այս սինակների պարունակութիւնը ամբողջովին համընկնում է Անանիա Շիրակունու Խառնախորանում «Աւուրք շաբաթու» վերտառութեամբ սին-

¹ Ա2. Աբրահամեան, Յովհաննէս Իմաստասերի մատենագրութիւնը, Երեւանի Համալսարանի հրատ., Երեւան. 1956, էջ 67 - 81:

² Աղիւսակի տուեալները վերցուած են Սարկաազի Խառնախորանի հրատարակուած օրինակից. Ա2. Աբրահամեան, Յովհաննէս Իմաստասերի մատենագր., էջ 160 – 183:

նակաների պարունակությունը³:

Յունուար					Փետրուար					Մարտ				
Հոռոնց եւ իւ- րոց	Վերադիրք հոռո- ւոց	Կիսակր լուս- նի	Էրեւակ հոռո- ւոց	Շաբաթագիր	Հոռոնց եւ իւ- րոց	Վերադիրք հոռո- ւոց	Կիսակր լուս- նի	Էրեւակ հոռո- ւոց	Շաբաթագիր	Հոռոնց եւ իւ- րոց	Վերադիրք հոռո- ւոց	Կիսակր լուս- նի	Էրեւակ հոռո- ւոց	Շաբաթագիր
ա		ա	է	ա	ա	իը		դ	դ	ա	լ	ա	դ	դ
բ	իը		զ	բ	բ	իէ		զ	է	բ	իը		զ	է
գ	իէ		է	զ	գ		բ	բ	զ	գ	իէ		բ	զ
դ		բ	դ	դ	դ	իէ		ա	է	դ		բ	ա	է
է	իէ		զ	է	է	իդ		է	ա	է	իէ		է	ա
զ	իդ		բ	զ	զ		զ	զ	բ	զ	իդ		զ	բ
է		զ	ա	է	է	իբ		է	զ	է		զ	է	զ
ը	իբ		է	ա	ը	իա		դ	դ	ը	իբ		դ	դ
թ	իա		զ	բ	թ		դ	զ	է	թ	իա		զ	է
ժ		դ	է	զ	ժ	ժթ		բ	զ	ժ		դ	բ	զ
ժա	ժթ		դ	դ	ժա			ա	է	ժա	ժթ		ա	է
ժբ			զ	է	ժբ	ժէ	է	է	ա	ժբ			է	ա
ժզ	ժէ	է	բ	զ	ժզ	ժզ		զ	բ	ժզ	ժէ	է	զ	բ
ժդ	ժզ		ա	է	ժդ			է	զ	ժդ	ժզ		է	զ
ժէ			է	ա	ժէ	ժդ	զ	դ	դ	ժէ			դ	դ
ժզ	ժդ	զ	զ	բ	ժզ	ժզ		զ	է	ժզ	ժդ	զ	զ	է
ժէ	ժզ		է	զ	ժէ			բ	զ	ժէ	ժզ		բ	զ
ժը			դ	դ	ժը	ժա	է	ա	է	ժը			ա	է
ժթ	ժա	է	զ	է	ժթ			է	ա	ժթ	ժա	է	է	ա
ի			բ	զ	ի	թ		զ	բ	ի			զ	բ
իա	թ		ա	է	իա	ը	ը	է	զ	իա	թ		է	զ
իբ	ը	ը	է	ա	իբ			դ	դ	իբ	ը	ը	դ	դ
իզ			զ	բ	իզ	զ		զ	է	իզ			զ	է
իդ	զ		է	զ	իդ	է	թ	բ	զ	իդ	զ		բ	զ
իէ	է	թ	դ	դ	իէ			ա	է	իէ	է	թ	ա	է
իզ			զ	է	իզ	զ		է	ա	իզ			է	ա
իէ	զ		բ	զ	իէ	բ	ժ	զ	բ	իէ	զ		զ	բ
իը	բ	ժ	ա	է	իը			է	զ	իը	բ	ժ	է	զ
իթ			է	ա						իթ			դ	դ
լ	լ		զ	բ						լ	լ		զ	է
լա		ա	է	զ						լա		ա	բ	զ

Այս՝ «Շաբաթագիր» սինակի բացատրությունն ու կիրառությունը բաւական պարզ է ու հասկանալի: Այստեղ, ըստ էության, տարուայ օրերը յաջորդական կարգով պարբերացուած են 7-ական, այսինքն՝ ըստ 7-օրեայ կարգի: Իւրաքանչիւր ամսաթո-

³ Գրիգոր Բրուտեան, Անանիա Շիրակացու «Խառնախորանը», Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1998, էջ 12 – 14, 20, 36, 86 – 109:

ւի դիմաց գրուած թիւը ցոյց է տալիս, թէ տարուայ օրերի հերթական կարգում տուեալ օրը շաբաթուայ ինչ օր կը լինէր, եթէ տարին սկսուէր Ա(1) – միաշաբաթ – կիրակիով: Կամ, այլ կերպ ասած՝ իւրաքանչիւր օրուայ շաբաթագիրը մի թիւ է, որ ստացուել է հետեւեալ կերպ. տարուայ սկզբից մինչ այդ օրն եղած օրերի քանակից հանուած է 7 այնքան անգամ, մինչեւ մնացել է 7-ից ոչ մեծ թիւ: Այս սինակի թուերը հնարաւոր են դարձնում արագ որոշել տարուայ իւրաքանչիւր օրուայ աւուր պատկերը, եթէ յայտնի է տարուայ եօթներեակը: Այսպէս, գիտենք, որ **եօթներեակը** մէկից եօթ արժէքներ ընդունող մի մակաչափ է, որ բնութագրում է տարին եւ **թուապէս հաւասար է տարեմուտի նախորդ օրուայ աւուր պատկերին**⁴: Սա նշանակում է, որ իւրաքանչիւր օրուայ շաբաթագիրին եթէ յաւելենք տարուայ եօթներեակը, ապա կը ստանանք տուեալ օրուայ աւուր պատկերը⁵: Իրօք, եթէ, ասենք, տարուայ եօթներեակը 2(Բ) է, եւ ուզում ենք որոշել, ասենք, Յունուարի 10-ի աւուր պատկերը, ապա Յունուարի 10-ի դիմաց «Շաբաթագիր» սինակում եղած Գ(3)-ին կը գումարենք 2 եօթներեակը եւ կը ստանանք $3 + 2 = 5$: Այսինքն, մեր որոնած Յունուարի 10-ը եղել է հինգշաբթի: Եւ, իրօք, եթէ եօթներեակը 2 է, ուրեմն Յունուարի 1-ը պիտի լինի դրանից 1-ով աւելի, այսինքն՝ երեքշաբթի: Եւ, եթէ հաշուենք Յունուարի 1-ը երեքշաբթիով, ապա Յունուարի 10-ը կը լինի անպայման հինգշաբթի:

Մի այլ օրինակ էլ նայենք: Որոշենք Հին տոմարով 1955 թ. Յունիսի 15-ի աւուր պատկերը: Փ. 1955 թ. եօթներեակը Հին տոմարի համար Ե(5) է, իսկ Յունիսի 15-ի տողում էլ Խառնախորանի «Շաբաթագիր» սինակում գրուած է Ե(5): $5 + 5 = 10$: Ստացուած գումարը 7-ից մեծ է⁶, ուստի սրանից հանում ենք 7 եւ կը ստանանք $10 - 7 = 3$: Այսինքն, Փ. 1955 թ. Յունիսի 15-ը Հին տոմարով երեքշաբթի է, որ իրօք, համապատասխանում է իրականութեանը: Այս նոյնը կարելի է ստուգել տարուայ կամայական օրուայ համար⁷:

Յաջորդը «*Է. երեկը Հոռոմոց*» վերտառութեամբ սինակն է: Անշուշտ, սա նշանակում է «*Եօթներեակը Հոռոմոց*»: Այս սինակում վերից վար անընդհատ նուազման կարգով դասաւորուած են 1-ից 7-ը բնական թուեր: Այստեղ, ի տարբերութիւն «Շաբաթագիր» սինակի, թուերը իրար յաջորդում են ոչ թէ աճման, այլ նուազման կարգով, ընդ որում՝ դարձեալ՝ անընդհատ յաջորդականութեամբ: Սկսում է սինակը Յունուարի 1-ի դիմաց Է(7)-ով: Ապա ամսաթուի աճմանը զուգընթաց՝ այս սինակի թուերը փոփոխւում են Զ(6), Ե(5), Դ(4), ..., մինչեւ Ա(1), որից յետոյ՝ վերստին՝ Է(7), Զ(6) եւ այսպէս՝ շարունակ: Այս յաջորդական կարգը չի ընդհատուում ամիսը փոխուելիս, այլ շարունակւում է յաջորդ ամսի մէջ նոյն ընթացքով: Այսպէս. Յունուարի էջում վերջին տողում ամսի 31-ի դիմաց այս սինակում Ե(5) է, իսկ յաջորդ էջում

⁴ Սա ճիշդ է միայն Հռոմէական Հին տոմարի (նաեւ հայկական միջնադարեան օրացոյցների) համար: Նոր տոմարի պարագայում, քանի որ փոխուած է եօթներեակի կիրառութեան կանոնը, ըստ այդմ փոխուած է նաեւ եօթներեակի բուն իմաստը: Սակայն միեւնոյնն է, Նոր տոմարում եւս եօթներեակը էլի մնում է տարուայ օրերի աւուր պատկերը որոշելու համար կոչուած մակաչափ:

⁵ Բնականաբար, եթէ գումարը 7-ից մեծ ստացուի, հարկ է այդ գումարից հանել 7, եւ այդ պարագայում ստացուած տարբերութիւնը ցոյց կը տայ որոնելի աւուր պատկերը:

⁶ Քանի որ աւուր պատկերը պարբերական փոփոխուող մակաչափ է, եւ դրա պարբերութիւնն էլ 7 է, ապա միշտ կարելի է դրա արժէքին գումարել, կամ դրանից հանել 7, կամ 7-ի պատիկ թիւ, այնպէս, որ ստացուի 7-ից ոչ մեծ արժէք:

⁷ Չմոռանանք, որ սա ճիշդ է միայն Յուլեան օրացոյցի՝ Հին տոմարի եւ հայկական միջնադարեան օրացոյցների համար. Նոր տոմարի համար սա սխալ կը լինի:

Փետրուարի 1-ի դիմաց Դ(4) է, Փետրուարի 28-ի դիմաց Ե(5) է, իսկ յաջորդ էջում Մարտի 1-ի դիմաց Դ(4) է, եւ այսպէս՝ շարունակ: Այս ընթացքը չի փոխում նաեւ նահանջի օրուայ տեղում՝ Հռոմէական Փետրուարի վերջում, կամ Հայոց Մեհեկանի վերջում: Աւարտում է այս սինակը Դեկտեմբերի 31-ի դիմաց Է(7) արժէքով: Բնական է մտածել, որ այս սինակի թուերը ինչ-որ կերպ պիտի կապուած լինեն շաբաթուայ օրերի, այսինքն՝ աւուր պատկերի հետ: Ուրեմն, Խառնախորանում դրանք պիտի դրուած լինեն օրերի աւուր պատկերը որոշելու համար:

Արդ փորձենք հասկանալ «Եօթներեակք Հոռոմոց» սինակի թուրի իմաստն ու կիրառման կերպը: Ինչպէս վերը նշուեց, այս սինակի թուերը վերից վար դասաւորուած են **նուագման կարգով**: Միեւնոյն ժամանակ, շաբաթուայ օրերը, ամսաթուերին զուգընթաց, փոփոխում են **աճման կարգով**: Այստեղից հետեւում է, որ, եթէ այս նուագող շաբթի թուերը կիրառենք աւուր պատկերները գտնելու համար, ապա **հարկ է կատարել հանման գործողութիւն**: Քանի որ այս կտրուածքով տարին բնութագրող միակ մակաչափն էլ եօթներեակն է, ուրեմն այդ գործողութիւնը պիտի լինի «Եօթներեակք Հոռոմոց» սինակի թուի եւ տարուայ եօթներեակի միջեւ: Սկզբունքօրէն չկայ ոչ մի տարբերութիւն՝ ինչից ինչը կը հանենք: Հանելիի եւ նուագելիի տեղերի փոփոխութիւնը կարող է փոխել տարբերութեան միայն նշանը (ասենք՝ դրականի փոխարէն բացասական եւ կամ հակառակը): Պարզութեան համար համարենք, որ նուագելին տարուայ եօթներեակն է, այսինքն՝ հանում ենք եօթներեակից:

Նախքան առաջ անցնելը նշենք հետեւեալը. քանի որ եւ եօթներեակները, եւ էլ «Եօթներեակք Հոռոմոց» սինակի թուերը ընդունում են 1-ից 7-ը արժէքներ, ապա կարող է պատահել այնպէս, որ տարուայ եօթներեակը լինի «Եօթներեակք Հոռոմոց» սինակի համապատասխան թուից փոքր: Որպէսզի բացասական թուերի հետ գործ չունենանք, հարկ է այսպիսի դէպքերում տարուայ եօթներեակին նախօրօք գումարել 7 եւ ապա միայն կատարել հանում⁸: Այս դէպքում ստացուած տարբերութիւնը միշտ կը լինի դրական:

Արդ, եթէ տարուայ եօթներեակից հանենք «Եօթներեակք Հոռոմոց» սինակի համապատասխան թիւը, կը ստանանք պէտք եղած աւուր պատկերից մէկով փոքր թիւ: Նշանակում է, հարկ է եօթներեակին նախապէս գումարել 1 եւ ապա միայն կատարել մնացեալ գործողութիւնները: Այս կերպ գտնում ենք «Եօթներեակք Հոռոմոց» սինակի թուերի իմաստն ու կիրառման կերպը: **«Եօթներեակք Հոռոմոց» սինակի թուերը խառնախորանում ծառայում են տարուայ եօթներեակով կամայական օրուայ աւուր պատկերը գտնելուն**: «Եօթներեակք Հոռոմոց» սինակի թուերով որոնելի օրուայ աւուր պատկերը գտնելու համար հարկ է եօթներեակին գումարել մէկ, ապա ստացուած գումարից հանել «Եօթներեակք Հոռոմոց» սինակի համապատասխան տողի թիւը (եթէ հանման արդիւնքը բացասական է ստացում, կամ զրո է, հարկ է նախապէս եօթներեակին յաւելել 7 եւ ապա միայն կատարել հանումը): Ստացուած թիւը հէնց կը լինի որոնելի աւուր պատկերը: Նախքան սա օրինակներով:

Որոշենք Հին տոմարով 1988 թ. Դեկտեմբերի 28-ի աւուր պատկերը: Փ. 1988 թ.

⁸ Տարուայ եօթներեակին կարող ենք միշտ գումարել 7, քանի որ եօթներեակների կրկնման պարբերութիւնը հէնց 7 է, եւ, ըստ այդմ, դրան 7 յաւելելը դրա արժէքը չի փոխում:

եօթներեակը 5(Ե) է⁹: Դեկտեմբերի 28-ի տողում էլ Խառնախորանի «Եօթներեակը Հոռոմոց» սինակում գրուած է Գ(3): 5-ին գումարենք 1, կը ստանանք $5 + 1 = 6$: 6-ից եթէ հանենք 3, կը ստանանք երեք՝ $6 - 3 = 3$: Այսպէս ստացուեց որոնելի աւուր պատկերը՝ 3: Ուրեմն, Հին տոմարով 1988 թ. Դեկտեմբերի 28-ը եղել է երեքշաբթի:

Որոշենք Հին տոմարով 1955 թ. Յունիսի 15-ի աւուր պատկերը: Հին տոմարով Փ. 1955 թ. եօթներեակը Ե(5) է, իսկ «Եօթներեակը Հոռոմոց» սինակում էլ Յունիսի 15-ի տողում գրուած է Գ(3): $5 + 1 = 6$: Սրանից հանենք «Եօթներեակը Հոռոմոց» սինակի թիւը, կը ստանանք $6 - 3 = 3$: Այսինքն, Փ. 1955 թ. Յունիսի 15-ը Հին տոմարով եղել է երեքշաբթի, որ եւ ճիշդ է:

Այսպիսով, պարզուեց խառնախորանի «Շաբաթագիր» եւ «Եօթներեակը Հոռոմոց» սինակների իմաստն ու կիրառման կերպը: Փաստօրէն, «Եօթներեակը Հոռոմոց» սինակի թուերով աւուր պատկերը գտնելիս չեն կիրառուում «Շաբաթագիր» սինակի թուերը եւ հակառակը՝ «Շաբաթագիր» սինակի թուերով աւուր պատկերը որոշելիս չեն կիրառուում «Եօթներեակը Հոռոմոց» սինակի թուերը: Ստացում է, որ այս երկու սինակների թուերը Խառնախորանում դրուած են միեւնոյն նպատակով, սակայն դրանք կիրառուում են իրարից անկախ. դրանցից իւրաքանչիւրը կիրառուում է առանց միւսն օգտագործելու:

Աւելին. այս սինակների առկայութիւնը Խառնախորանում ցոյց է տալիս, որ սոյն Խառնախորանում շաբաթագիր եւ եօթներեակ օրացուցային եզրերը, որ որոշակի առումով հոմանիշներ են, կիրառուած են իրարից տարբեր կերպով: Բացի այդ, այստեղ նաեւ տարուայ իւրաքանչիւր օրը օժտուած է առանձին շաբաթագրով ու եօթներեակով: Այսինքն, եօթներեակն ու շաբաթագիրը, որ, ընդհանրապէս, տարի՛ն բնութագրող մակաչափեր են, այստեղ հանդէս են գալիս նաեւ իբրեւ ամեն մի օրը բնութագրող մակաչափեր:

Միեւնոյն նպատակին ծառայող երկու տարբեր սինակների առկայութիւնը Խառնախորանում մտածել է տալիս, որ հաւանաբար, այս սինակներից գոնէ մէկը («Եօթներեակը Հոռոմոց»-ը) կարող էր նախատեսուած լինել մի այլ՝ օժանդակ աղիւսակի հետ կիրառուելու համար՝ զանց առնելով հանման գործողութիւնը: Այսպիսի կիրառման օրինակ մենք ունենք Անանիա Շիրակունու կազմած Խառնախորանում¹⁰:

Արդ փորձենք հասկանալ «Վերադիրք Հոռոմոց» եւ «Կիսակը Լուսնի» սինակների թուերի իմաստն ու կիրառման կերպը:

«Կիսակը Լուսնի» վերտառութեամբ սինակում վերից վար աճման կարգով դասաւորուած են 1-ից 10-ը թուեր (Ա - Ժ): Ընդ որում, այստեղ թուերը դասաւորուած են ոչ թէ անընդհատ յաջորդականութեամբ, այլ երկուս ընդ մէջ: Այսպէս, Յունուարի 1-ի դիմաց Ա(1) է, ապա ամսի 2-ի եւ 3-ի դիմաց պարապ է, եւ Յունուարի 4-ի դիմաց այս սինակում Բ(2) է: Յաջորդ թիւը՝ Գ(3) Յունուարի 7-ի դիմաց է, ... եւ Ժ(10)-ը Յունուարի 28-ի դիմաց է: Իսկ նոյն ամսի 31-ի դիմաց այս սինակում դարձեալ Ա(1) է:

⁹ Փրկչ. 1988 թիւը նահանջ տարի է եւ, ըստ այդմ, ունի երկու եօթներեակ: Ըստ Հին տոմարի այդ տարուայ եօթներեակներն են ԴԵ, այսինքն՝ 4 եւ 5: Այս երկու եօթներեակներից առաջինը, ըստ եօթներեակների կանոնի, Յունուար եւ Փետրուար ամիսների համար է, իսկ երկրորդ եօթներեակը՝ մնացեալ 10 ամիսների: Քանի որ մեր որոնած օրը Դեկտեմբեր ամսում է, ուստի մենք վերցնում ենք եօթներեակներից երկրորդը, որ է 5:

¹⁰ Տե՛ս **Գրիգոր Բրուտեան**, Անանիա Շիրակացու «Խառնախորանը», Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1998:

Յաջորդ թիւը՝ $F(2)$ -ը արդէն Փետրուարի 3-ի դիմաց է: Այս սինակի պարունակութիւնը նոյնութեամբ հանընկնում է Անանիայի Խառնախորանի «Աւուրք լուսնի» վերտառութեամբ սինակի պարունակութեանը¹¹: Ըստ այսմ, սպասելի է, որ այս սինակի թուերի կիրառութեան կերպն էլ լինի նոյնը, ինչ Անանիայի Խառնախորանի համապատասխան սինակի թուերին: Սակայն Անանիայի Խառնախորանը իր 12 հիմնական աղիւսակներից գատ ունի նաեւ 4 օժանդակ աղիւսակներ, որոնցից մէկը կոչուած է տարուայ վերադիրը գտնելուն, իսկ միւսը՝ այդ վերադիրը ու հիմնական աղիւսակի համապատասխան թուով կամայական օրուա Լուսնի փուլը գտնելուն: Մարկաւագի Խառնախորանում (գոնէ հրատարակուած տարբերակում) օժանդակ աղիւսակներ չկան: Հնարաւոր է, եթէ բնօրինակում այդպիսիք եղել են, հրատարակողը դրանք զանց է առել՝ չընկալելով որպէս մէկ ամբողջութիւն հիմնական աղիւսակների հետ:

Ամեն պարագայում այս սինակի թուերը **անմիջականօրէն կիրառելի չեն** Լուսնի փուլը գտնելու համար: Այս թուերը կիրառելու համար **անհրաժեշտ է ունենալ մի միջանկեալ (օժանդակ) աղիւսակ եւս**: Բանն այն է, որ այս աղիւսակում թուերը իրար յաջորդում են երկուս ընդ մէջ (տե՛ս աղիւսակը), իսկ Լուսնի փուլերը փոփոխում են օրական մէկական աւելանալով: Այս երկուս ընդ մէջ աճող թուաշարքից յաջորդաբար աճող թուերի շարքի անցնել, կատարելով միայն գումարման եւ (կամ) հանման գործողութիւններ, անհնար է: Այսինքն, այս սինակում տրուած թուերից Լուսնի փուլերին անցնելու համար հարկ է կիրառել եւս մի աղիւսակ, որ այստեղ տրուած չէ: Ամենայն հաւանականութեամբ, պիտի լինէր այս Խառնախորանին կից մի օժանդակ աղիւսակ՝ նման Անանիայի Խառնախորանի երրորդ օժանդակ աղիւսակին:

Արդ նայենք մեր քննութեան վերջին առարկան՝ «Վերադիրք Հոռոմոց» սինակը: Այս սինակում վերից վար նուազման կարգով շարուած են յաջորդական թուեր: Առաջինը Յունուարի Ա(1)-ի դիմաց գրուած է ԻԹ(29)¹², ապա մէկական նուազելով, այս սինակում լինում է Ա(1) Յունուարի ԻԹ(29)-ի դիմաց¹³: Սրանից յետոյ Լ(30) է Յունուարի Լ(30)-ի դիմաց եւ ապա՝ ԻԹ(29)¹⁴ է Յունուարի ԼԱ(31)-ի դիմաց: Սրանից յետոյ Խառնախորանի յաջորդ էջին Փետրուարի Ա(1)-ի դիմաց ԻԸ(28) է, ապա դարձեալ նուազման կարգով թուերը յաջորդում են իրար մինչեւ Ա(1) Փետրուարի ԻԸ(28)-ի դիմաց: Յաջորդ էջում Մարտի Ա(1)-ի դիմաց Լ(30) է, ապա նուազման կարգով թուերն իրար յաջորդում են մինչեւ Ա(1)՝ Մարտի ԻԹ(29)-ի դիմաց: Մարտի ԼԱ(31)-ին համապատասխան արժէքը ԻԹ(29) է, Ապրիլի Ա(1)-ին՝ ԻԸ(28): Եւ այսպէս շարունակուում է մինչ Դեկտեմբերի վերջը. Դեկտեմբերի ԼԱ(31)-ի տողում «Վերադիրք Հոռոմոց» սինակում գրուած է ԺԹ(19):

Այսինքն, տեսնում ենք, որ այս սինակում թուերը նուազման կարգով դասաւո-

¹¹ Տե՛ս **Գր. Բրուտեան**, նշ. աշխ., էջ 12 – 14, 20, 36, 86 – 109:

¹² Հրատարակուած բնագրում այդ տեղում ունի թիւ գրուած չէ, եւ ընդհանրապէս՝ այս սինակի թուերը լրացուած են ոչ լրիւ, այլ արանքներում (միջինում՝ երկուս ընդ մէջ) բացթողումներով: Միեւնոյն ժամանակ, սակայն, թուերի ընդհանուր յաջորդականութիւնից ակնյայտ է, որ նշուած տեղում պէտք է լինէր հէնց 29(ԻԹ):

¹³ Տե՛ս նախորդ ծանօթագրութիւնը. այս տեղում եւս բնագրում բացթողում է, սակայն դրա նախորդ եւ յաջորդ տեղերում թուերն առկայ են, որոնցով եւ հասկանալի է, թէ ինչ պիտի լինէր տոյն տեղում:

¹⁴ Դարձեալ այս թիւը չի լրացուած: Տե՛ս նախորդ ծանօթագրութիւնը. այսուհետ այս կարգի նշումները զանց կ'առնենք:

րուած են 30-ից մինչեւ 1 անընդհատ կրկնուող յաջորդականութիւններով: Միայն երկու տեղ այս սինակում շարքերը ոչ թէ 30-ից, այլ 29-ից են սկսում: Առաջինը Յունուարի 1-ով սկսուող շարքն է, երկրորդը Հոկտեմբերի 23-ին սկսուող շարքն է, որ ոչ թէ 30-ով, այլ 29-ով է սկսում¹⁵: Առայժմ յայտնի չէ, ընդհանուր օրինաչափութիւնից այս շեղումները արդիւնք են գրչական կամ այլ վրիպակի՞, թէ՞ արուած են յատուկ միտումով: Ամեն պարագայում, այսպէս է Խառնախորանիս մի քանի գրչագրերում (Մ.Մ. թիւ 817, 2106):

Քանի որ ունենք 30-օրեայ պարբերութեամբ փոփոխուող թուեր, բնական է մտածել, որ սրանք պիտի ինչ-որ կերպ առնչուեն Լուսնի փուլերին: Այս սինակի թուերի եւ Լուսնի փուլերի առնչութեան մասին է յուշում նաեւ սինակի վերտառութիւնը՝ «Վերադիրք Հոռոմոց»: Գիտենք, որ վերադիրք տարին բնութագրող օրացուցային մակաչափ է, որ կոչուած է տարուայ իւրաքանչիւր օրուայ Լուսնի փուլը գտնելուն: Յուլեան օրացոյցում եւ Հայոց միջնադարեան օրացոյցում վերադիրքն ունի տարեմուտին նախորդող օրուայ Լուսնի փուլի իմաստը: Այսինքն, օրինակ, Յուլեան տոմարում ռեւէ տարուայ վերադիրքը թուապէս հաւասար է նախորդ տարուայ Դեկտ. 31-ի Լուսնի փուլին: Նոյն կերպ՝ Հայոց միջնադարեան օրացոյցում էլ իւրաքանչիւր տարուայ վերադիրքը հաւասար է դրա նախորդ տարուայ աւելեաց վերջին՝ 5-րդ օրուայ Լուսնի փուլին:

Արդ, նայենք, թէ ի՞նչ կերպ է հնարաւոր այս սինակի թուերի միջոցով գտնել Լուսնի փուլը տարբեր օրերի համար: Քանի որ, ինչպէս նշուեց, այս սինակի թուերը դասաւորուած են վերից վար **նուազման կարգով**, իսկ Լուսնի փուլերն էլ, ինչպէս գիտենք, իրար յաջորդում են **աճման կարգով**, ապա բնական է, որ այս սինակի թուերով Լուսնի փուլը գտնելու համար հարկ է կատարել **հանման** գործողութիւն: Բնականաբար, հարկ է իբրեւ ելակէտ ունենալ տարուայ **վերադիրքը**, որ Լուսնի փուլերի առումով տարին բնութագրող հիմնական մակաչափն է: Եւ, քանի որ հարկ է կատարել հանում, ապա, բնականաբար, գործողութեան նուազելին պիտի լինի տարուայ վերադիրքը, իսկ հանելին՝ «Վերադիրք Հոռոմոց» սինակի համապատասխան թիւը: Բնականաբար, կարող է լինել այնպէս, որ նուազելին լինի հանելիից փոքր: Այլապիսի դէպքերում, որպէսզի տարբերութիւնը բացասական թիւ չլինի, նախապէս նուազելիին (այսինքն՝ տարուայ վերադիրքին) կը գումարենք վերադիրքների պարբերութիւնը՝ 30 եւ ապա միայն կը կատարենք հանումը:

Յունուարի 1-ի դիմաց Խառնախորանի «Վերադիրք Հոռոմոց» սինակում գրուած է 29(իթ)¹⁶: Արդ, եթէ նշանակենք տարուայ վերադիրքը Վ-ով, ապա $\text{Վ} - 29 + 30 = \text{Վ} + 1$: (Այստեղ $\text{Վ} - 29$ տարբերութեանը յաւելում ենք 30, որպէսզի գործողութեան արդիւնքը բացասական չլինի): Սա նշանակում է, որ Յունուարի 1-ի Լուսնի փուլի համար ստացում է տարուայ վերադիրքից 1-ով մեծ արժէք: Իսկ սա էլ հէնց համապատասխանում է տարուայ վերադիրքի իմաստին: Այսինքն, այս կերպ գտնում ենք «Վե-

¹⁵ Միայլ է Խառնախորանի հրատարակողը, որ գրում է, թէ այս սինակի թուերը մի ամսի համար 30 օրով են, միւս ամսի համար՝ 29 օրով. «Յունուար ամսի համար 30-ով, Փետրուարի՝ 29-ով, Մարտի՝ 30-ով, Ապրիլի՝ 29-ով եւ այլն», Աշ. Աբրահամեան, նշ աշխ., էջ 79: Գոնէ հրատարակուած օրինակում նման բան չկայ:

¹⁶ Իրականում այստեղ թիւը բաց է թողնուած, սինակն սկսում է երկրորդ տողից 28(իթ) թուով: Սակայն ի նկատի առնելով թուերի շարքի ամբողջ դասաւորութիւնը, վստահաբար կարելի է վերականգնել բաց թողնուած տեղերի թուերը: Ըստ այդմ, Յունուարի 1-ի տողում պիտի լինի 29(իա):

րադիրք Հոռոմոց» սինակի թուերի կիրառման եղանակը: Փորձենք սա ունի այլ ամսաթուի համար: Որոշենք այս կերպ, ասենք, Մարտի 21-ի Լուսնի փուլը, եթե տարուայ վերադիրքը 25 է: Մեր Խառնախորանում Մարտի 21-ի դիմաց «Վերադիրք Հոռոմոց» սինակում գրուած է թ(9): $25 - 9 = 16$: (Այստեղ Վ – 9 տարբերութեանը չենք յաւելում 30, քանի որ գործողութեան արդիւնքը բացասական չէ): Այսինքն, 25 վերադիրքով տարուայ Մարտի 21-ին Լուսինը պիտի լինի 16 օրական: Ստուգենք սա այլ կերպ: Լուսնի փուլը հաւասար է տարուայ վերադիրքի, ամսի կիսակի եւ ամսաթուի գումարին (եթե գումարը 30-ից մեծ լինի, հարկ է դրանից հանել 30): Մարտ ամսի կիսակը 0 է: Ուրեմն, գումարենք միայն վերադիրքն ու ամսաթիւը: $25 + 21 = 46$: Գումարը 30-ից մեծ է, ուրեմն, հանենք 30 եւ կը ստանանք $46 - 30 = 16$: Ստացուեց միեւնոյն արդիւնքը: Այս կերպ կարելի է «Վերադիրք Հոռոմոց» սինակում տրուած թուերի միջոցով գտնել կամայական տարուայ կամայական օրուայ Լուսնի փուլը, եթե յայտնի է միայն տարուայ վերադիրքը:

Ուրեմն, «Վերադիրք Հոռոմոց» սինակի թուերի կիրառման կերպն էլ հետեւեալն է: Եթե նշանակենք տարուայ վերադիրքը Վ-ով, իսկ «Վերադիրք Հոռոմոց» սինակի մեզ հետաքրքրող օրուայ տողում գրուած թիւը նշանակենք վ-ով, ապա այդ օրուայ Լուսնի փուլը կը լինի. **Վ – վ (+ 30)**: Սա նշանակում է. **տարուայ վերադիրքից հանում ենք «Վերադիրք Հոռոմոց» սինակում տրուած թիւը եւ, եթե տարբերութիւնը բացասական է, ապա դրան գումարում ենք 30**:

Անշուշտ, հնարաւոր է, որ այս սինակի թուերի կիրառման համար եւս եղած լինի մի օժանդակ աղիւսակ (զանց առնելու համար հանման գործողութիւնը): Այդ պարագայում կը ստացուի, որ Սարկաւազի Խառնախորանը եւս, ինչպէս Անանիայինը, պիտի ունեցած լինի իրեն կից օժանդակ մի քանի աղիւսակներ: Ամեն դէպքում, ա՛յս սինակի թուերը հնարաւոր է դիւրութեամբ կիրառել նաեւ առանց օժանդակ աղիւսակի:

Այս կերպ կարող ենք համարել, որ պարզ է դառնում Սարկաւազի Խառնախորանում առկայ «Վերադիրք Հոռոմոց», «Կիսակը Լուսնի» «Է.երեկը Հոռոմոց» եւ «Շաբաթագիր» վերտառութեամբ սինակներ թուերի կիրառութեան կերպը:

ՍԵՂԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ՀՀԱԱ Պատմության Ինստիտուտ

ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅ ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻՆ

Սիրիայի Հայ Կաթոլիկ Եկեղեցին Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու հետևորդ հայերի (եկեղեցական և աշխարհիկ) հանրությունն է, որը եկեղեցական ու դավանական հաղորդությամբ կապված է Հռոմի Աթոռին և ճանաչում ու ընդունում է Հռոմի Պապի գերագահությունը:

Պարսից և օսմանյան բռնակալության տարիներին հայերի համար ազատագրման հույսերից մեկը եղել է Եվրոպայի օգնությունը, որը նրանք ակնկալում էին ստանալ Հռոմի Պապի միջնորդությամբ, որի համար հայոց կաթողիկոսները փորձել են գնալ տարբեր զիջումների, որը սակայն արդյունք չտվեց, մինչդեռ կաթոլիկ քարոզիչներն այդպիսով կարողացան կազմավորել հայ կաթողիկե համայնքը:

Որպես առանձին կառույց և եկեղեցական նվիրապետություն՝ Հայ Կաթոլիկ Եկեղեցին կազմավորվել է 1740 թվականին՝ Հալեպում, երբ Աբրահամ Արծիվյան եպիսկոպոսն օծվեց հայ կաթոլիկ համայնքի Պատրիարք (Աբրահամ Ա Արծիվյան): 1742 թ. Հռոմի Պապ Բենեդիկտոս XIV-ը վավերացրեց Աբրահամ Ա Արծիվյանի պատրիարքական ընտրությունը: Կարդինալների գրավոր կարծիքն ընդունելուց հետո Ս. Ժողովը կայացրեց իր վերջնական վճիռը, որով խորհուրդ էր տրվում Պապին հաստատելու ստեղծված նոր կառույցը¹:

Սիրիայի տարածքում բնակվող հայ կաթոլիկների մասին առաջին հիշատակությունը պատկանում է 11-րդ դարին, երբ կաթոլիկ շարժումը Խաչակրաց արշավանքի երկդարյա հորձանուտների հոսքով հասավ նաև Կիլիկիո Թագավորություն:

Խաչակրաց արշավանքի ժամանակներից ի վեր Սիրիայում ապրում էին հայ-ֆրանկներ: Պատմությանը հայտնի է, որ դեռևս 1109 թ., թուրք-սելջուկների և խաչակիրների պատերազմի ժամանակ, թուրքերը պարտավոր էին ազատ արձակել գերեվարված ֆրանկ-հայերին: Իսկ 1122 թ. հայ-ֆրանկների օգնությամբ գերությունից ազատվում էին բանտարկյալ խաչակիրները²: Այս ամենը վկայում են այն մասին, որ 12-րդ դարում Սիրիայում իրոք ապրում էին կաթոլիկ հայեր: Թեև հայկական աղբյուրներում չի հիշատակվում 1350-ական թվականներին Հալեպի թեմն առաջնորդող եպիսկոպոսի անունը, սակայն փաստերը ցույց են տալիս, որ քրիստոնյա այլազան դավանություններ ու հարանվանություններ ընդգրկող և կարևոր առևտրական կենտրոն հանդիսացող Հալեպի փոքրաթիվ գաղութն, այսուհանդերձ, ուներ իր առաջնորդը, որը 1438 թ.՝ հիշատակվում է Հովակիմ արքեպիսկոպոս անվամբ և Եվգենեոս Դ Պապի հրավերով մեկնում Ֆլորենցիայի ժողովին:

Ժողովի արձանագրություններում հիշվում է նրա անունը, սակայն զարմանալի է, որ նրա մասին հայտնի չէ որևէ այլ տեղեկություն: Նրա մասնակցությունը վերո-

¹ «Ավետիք», Պեյրուք, 2001, N 1-4, էջ 199:

² Սյուրմեյան, Պատմություն Հալեպի հայոց, 1946, հ. 2, էջ 926:

հիշյալ ժողովին բնավ չէր կրում պաշտոնական բնույթ, այն ավելի քաղաքավարական բնույթի էր՝ ի պատասխան հրավերին:

Պատմական հիշատակագրությունները վկայում են, որ 1238 թ. Հալեպում արդեն հաստատվել էին ֆրանցիսկյան միաբաններ, որոնք մինչև օրս էլ շարունակում են իրենց գործունեությունը կրոնական և ուսումնական ոլորտներում:

Ամենայն հավանականությամբ Հովակիմ եպիսկոպոսը, ինչպես և Հալեպի Առաջնորդական Աթոռի հետագա արքեպիսկոպոսները, որոնք դավանել են կաթոլիկություն, եղել են բնիկ հալեպցի և ֆրանցիսկյան կամ Հիսուսյան: Այլապես, նրանց անունը կամ գործունեությունն անպայման կհիշվեր, ինչպես հայկական աղբյուրներում Կիլիկիայի վանքերի կամ Երուսաղեմի հայոց պատրիարքության հոգևորականներին է հիշվում:

Նույն ժամանակաշրջանում Հալեպի պատմության մեջ հիշվում են ևս երկու հայ քահանաներ³:

1535 թ. Խաչատուր արքեպիսկոպոսի ջանքերով և խոջա Մաքսուդի նյութական հովանավորությամբ կաթոլիկ հայերի համար կառուցվեց փոքր եկեղեցի:

Ավելի քան երկու դար ազգային, եկեղեցական և տնտեսական բարգավաճ ու խաղաղ կյանքով ապրող Հալեպի հայության հանգիստը խաթարվեց, երբ Հռոմը վերստին փորձեր ձեռնարկեց՝ Արևելքի քրիստոնյաներին Վատիկանին միացնելու համար: Առաջին փորձը ձախողվեց 1439 թ. և, Եկեղեցիների միությունն ապահովելու պատրվակով, ավելի մեծ թափ առավ XV դարում: Ֆլորենցիայի ժողովին հրավիրվել էին Արևելքի բոլոր Եկեղեցիները, այսպես ասած, «դավանության թուղթը ստորագրելու և Հռոմի պապական Աթոռին միանալու համար»⁴: Հայ Եկեղեցին, ի պատասխան Կոստանդին Վահկեցի Կաթողիկոսին (1430-1439 թթ.) ուղղված հրավերի, նույնպես ուղարկեց ներկայացուցիչներ այդ ժողովին մասնակցելու համար, սակայն նրանք նիստերին չհասան:

Խաչակրաց հաջորդական արշավանքներից հետո Վատիկանը միշտ էլ ձգտել է իր ենթակայության տակ առնել Մերձավոր Արևելքը: Հռոմի Պապերը մահմեդականների հարձակումներից զերծ պահելու պատրվակով քարոզիչներ էին ուղարկում Արևելք՝ տեղի քրիստոնյաներին իրենց հովանավորության ներքո առնելու համար:

XVI դարում Եվրոպայում Կաթոլիկ Եկեղեցին չափազանց թուլացել էր և ներքին կորուստները փորձում էր լրացնել Արևելքում հաջողությունների հասնելու միջոցով⁵: Մյուս կողմից՝ լուրջ մտահոգություն էին պատճառում Վիքլիֆի և Հուսի եկեղեցական ու ընկերային բարեգործական շարժումները, որոնք վաղուց էին սկսվել Եվրոպայում: Հուսի քաջարի կեցվածքով ողջակիզումը հավատաքննության խարույկի վրա առաջ էր բերել Կենտրոնական Եվրոպայի կաթոլիկության գրաշարությունը: Հռոմի Եկեղեցին ձգտում էր հզորանալ, որի համար անհրաժեշտ ուժը փնտրում էր Արևելքի Եկեղեցիների հետ միության մեջ⁶:

³ Սյուրմեյան, Պատմություն Հալեպի հայոց, Փարիզ, 1950 թ., հ. 3, էջ 21 – 22:

⁴ Բյուզանդ Եղիայան, Հայ հարանվանությունների բաժանումը, 1971, էջ 97 -118: Տե՛ս և Գևորգ Մեսրոպ, Համառոտ պատմություն Հայ Եկեղեցվո, Պեյրուք, 1949, էջ 94:

⁵ Малахия Орманиян, Армянская церковь, Москва, 1913, стр. 55-58.

⁶ Բարգեն Ա Կաթողիկոս, Պատմություն Կաթողիկոսաց Կիլիկիո, էջ 166:

Միության այս ծրագիրը չհաջողվեց իրագործել ոչ IX դարում, երբ այն նոր էր ձեռնարկվել, և ոչ էլ XVI դարում: Այդ շրջանում Հռոմի Եկեղեցին շատ կորուստներ էր կրում, իսկ Լութերական շարժումը տարածվում էր Կաթոլիկ Եվրոպայի վրայով: Հարկավոր էր կասեցնել կամ գոնե մեղմացնել այդ շարժումը և դարմանել այն նոր գործողությունների ծավալումով, որի ամենաբարեհարմար դաշտը հանդիսանում էր Արևելքն իր երկրներով: Ժամանակը թելադրում էր իր պահանջները: Այս պահանջներն ի կատար ածելու համար հանդես եկան Գրիգոր XIII Պապը, որը լրջորեն փորձում էր միացնել Արևելքի Եկեղեցիները Հռոմին, և Հայ Եկեղեցու գործերով Հռոմի կողմից պատասխանատու կարգված Յուլիոս Անտոնիոս Սանսներին՝ կարողնալը, որը պիտի գլուխ բերեր միության գործը:

Հռոմը նպատակ չէր հետապնդում շահել միայն Հայ Եկեղեցին և հայ ժողովրդին: Արևելյան Եկեղեցիների շարքը համալրում էին նաև Հույն, Ասորի, Մարիոնիթ, Քաղդեական, Ղպտի և Եթովպական Եկեղեցիները: Սկսած շարժումը պետք էր միանգամից տարածել այդ բոլոր Եկեղեցիների վրա: Եվ ահա այս նպատակով Գրիգոր պապը միութենական հարաբերություններ մշակելու նպատակով 1583 թ. Միդոնի Լեոնարդո Աբել եպիսկոպոսին կարգադրեց հաջորդաբար հարբերություններ սկսել նրանց հետ: Լեոնարդո Աբել եպիսկոպոսը նախ գնաց Կիլիկիա, Միս և Հալեպ Խաչատուր Բ Զեյթունցու, իսկ նրա մահից հետո Ազարիա Ջուղայեցու և այլ եպիսկոպոսների ու հայ աշխարհիկ երևելիների հետ տեսակցելու համար: Հալեպը որքան հայոց, նույնքան նաև ասորական Եկեղեցու կենտրոն էր, ուստի միություն հաստատելը նրա հետ առանձնակիորեն կարևոր էր: Հայերը և ասորիները այդ ժամանակաշրջանում գտնվում էին միևնույն քաղաքական անբարենպաստ կացության մեջ: Ժամանակի մտայնությամբ՝ Արևելքի քրիստոնյա ժողովուրդների համար Եվրոպան քրիստոնյա հզոր պետությունների մեծ տարածք էր, իսկ Հռոմը ոչ միայն Եվրոպայի կրոնական մայրաքաղաքն էր, այլև Եվրոպական դիվանագիտության հզոր կենտրոն, որը կարող էր օգնության ձեռք մեկնել իրենց: Եկեղեցական միության թեման արևելյան Եկեղեցիներին ներկայացվում էր հենց այս տեսանկյունից: Եվ նույն այս ակնկալությամբ խմբագրված գրությունները Խաչատուր Բ-ի և Ազարիա Ջուղայեցու կողմից ուղարկվեցին Հռոմ⁷:

17-րդ դարի 70-ական թթ. Հալեպում ֆրանսիական ազդեցիկ հյուպատոսարանից բացի գործում էին նաև լատինական կաթոլիկ միաբանություններ՝ իրենց վանքերով և եկեղեցիներով, որոնց վերահսկումն իրականացնող ֆրանսիական հյուպատոս Ֆրանսուա Բիքեն հետադաշնում դարձավ ողջ Միջագետքի և Պարսկաստանի հյուպատոսը: Նա, ինչպես իր ժամանակի բոլոր հյուպատոսները, լինելով քաղաքագետ ու դիվանագետ, միաժամանակ նաև առևտրական էր և մշտական հարաբերությունների մեջ էր գտնվում Հալեպի գլխավոր վաճառականների, այդ թվում՝ հատկապես հարուստ և ազդեցիկ խոջա Պետիկի հետ: Վերջինս ոչ միայն Հալեպ քաղաքի էմինն ու մաքսապետն էր, այլ նաև իրենից կախման մեջ էր պահում ողջ Սիրիան, Տրիպոլին, Ալեքսանդրերը: Իր և ընտանիքի միջոցով հյուպատոսը Հալեպի ազգային կյանքը բավականին շփոթալի վիճակի մեջ էր գցում՝ ընդգծելով կաթոլիկության մեծ ազդեցությունը: Հալեպի լատին կրոնավորները ֆրանսիական հյուպատոսի գլխավորությամբ ազատ մուտք ունեին հույն ու ասորի ընտանիքներ՝

⁷ Александр Аннииский, История Армянской Церкви, Кишинев, 1900, глава 38.

նպատակ ունենալով նրանց կապել Հռոմի Եկեղեցուն և ստանձնել նույն այդ հարուստ ընտանիքների նորահաս սերնդի կրոնական դաստիարակությունը: Այս դրությունը Հալեպում պահպանվեց նաև հաջորդ դարերում:

17-րդ դարի վերջում Հալեպը դարձավ կաթոլիկության տարածման համար շատ նպաստավոր կենտրոն: Հալեպի հայերի և եկեղեցականների հարումը կաթոլիկությանը Վատիկանից Հալեպ ուղղված պրոպագանդայի արդյունքը չէր միայն: Տեղի հայությունը կարծում էր, թե Հռոմը նպատակ է դրել իր հովանու ներքո առնելու Արևելքի ուղղափառ քրիստոնյաներին: Այս հարցում առանձնահատուկ տեղ էր զբաղեցնում հատկապես Հալեպը՝ քրիստոնեական ամենակարևոր և բազմամարդ քաղաքը՝ Կ. Պոլսից հետո:

Այդ շրջանում հայերն իրենց թվով գերազանցում էին օրթոդոքս հույներին, ասորիներին և մարոնիներին, որոնք թեև տարբերվում էին իրենց ծագումով, լեզվով ու բարքերով, սակայն բոլորն էլ վաղուց գտնվում էին Հռոմեական Եկեղեցու հոգևոր իշխանության ներքո: Վատիկանից Հալեպ ուղարկված ունիթոնները, որոնք Հալեպում հաստատվել էին դեռևս նախորդ դարակեսից, ինչպես նաև առևտրական գործակալության անվան տակ եվրոպական մայրաքաղաքներից այստեղ ժամանած հյուպատոսները և նրանց տեղացի ու շահամոլ գործակալները գործում էին կաթոլիկ եկեղեցիներում, վանքերում և դրանցում հաստատված դպրոցներում:

Տեղացի, հույն, ասորի և մարոնի պատանիների հետ այստեղ ուսանելու էին գալիս նաև Հայ Առաքելական Եկեղեցու հետևորդ պատանիներ՝ իրենց ծնողների առաջնորդությամբ, որոնք փոխայցելություններ էին կազմակերպում ֆրանսիացի քահանաների հետ: Սակայն այս ամենն առաջ էր բերում նաև խռովություն մի շարք քահանաների և աշխարհիկ պատասխանատուների շրջանում, որոնք նամակներ էին հղում տարբեր առյուծաներ՝ պատմելով, թե ինչ է կատարվում: Նրանց մեծ մասը ենթարկվեց հետապնդման ու հալածանքի՝ ընդհուպ մինչև սպանություն: Սակայն, ի վերջո, նրանք հասան այն բանին, որ ուրաջյալ Թովմաս վարդապետ Բերիացին (հալեպցին) ձերբակալվեց և շատ շուտով վախճանվեց⁸:

18-րդ դարի սկզբում Լիբանանի լեռներում հիմնվեց կաթոլիկ հայ վանական միաբանություն, որն իր կանոնին համապատասխան կոչվեց Անտոնյան: Միաբանության հիմնադիրներն էին չորս բերիացի (հալեպցի) եղբայրներ՝ Աբրահամը, Հովհաննեսը, Մինասը և Հակոբը՝ վաճառական Մուրադ Հովսեփյանի որդիները, որոնք իրենց կրթությունը ստացել էին Բերիայի (Հալեպի) լատինական դպրոցում: Այսպիսի դաստիարակության արդյունքում ձեռք բերած կրոնական կողմնորոշմամբ նրանք ձեռնամուխ եղան միաբանության ստեղծմանը և 1707 թ. Ավետման տոնին Տիրամոր պատկերի առջև երդվեցին՝ ի կատար ածել իրենց որոշումը: Այդ նույն տարում Հալեպի առաջնորդ Պետրոս եպիսկոպոսը հալածանք սկսեց կաթոլիկ հայերի դեմ, և նրանցից շատերն ստիպված եղան փախչել Հալեպից: Նրանց թվում էին նաև Մուրադյան եղբայրները, որոնք ապաստանեցին Լիբանանում՝ Մարոնիտների մոտ: Մարոնիտները 12-րդ դարից գտնվելով կաթոլիկ Եկեղեցու ազդեցության տակ՝ 16-րդ դարի երկրորդ կեսին արդեն միացել էին նրան, սակայն ունեին իրենց առանձին պատրիարքը, մայրենի լեզվով ժամերգության իրավունք, ամուսնացյալ հոգևորականներ և պահպանել էին արևելյան որոշ ծեսեր: Նրանց հա-

⁸ Զամյան Մ., Պատմություն հայոց, հ. 3, էջ 671 – 677:

մար 1583 թ. Հռոմում բացվեց առաջին դպրոցը: Մարոնիտների պատրիարքը սկզբում չկամեցավ եղբայրներին վանաշինության տեղ հատկացնել Լիբանանում, սակայն շուտով նա տեղի տվեց, և 1709 թ. Մուրադյանները մի փոքր կալվածք ստացան Ընդելիաս գետի մոտ, որտեղ և կառուցեցին Ավքարու կոչվող վանքը: Սակայն ավագանների հարձակումները թույլ չտվեցին եղբայրներին այստեղ հաստատվել: 1716 թ. նրանք ընծա ստացան Քրեյմ կոչվող տեղանքը՝ Ղոստա գյուղաքաղաքի մոտ, և վերջնականապես հաստատվեցին այնտեղ:

Վանական միաբանություն և եկեղեցի կառուցելու հրաման ստանալու նպատակով եղբայրները 1718 թ. հայազգի Դոմինիկյան քահանա Գրիգոր Կիլիկի միջնորդությամբ դիմեցին Կղեմես XI Պապին: Այդ իրավունքը նրանց շնորհվեց 1721 թ. և այդ ժամանակ էլ հիմնադրեցին Ամենափրկիչ վանքը:

17-րդ դարի սկզբում Հալեպում իր գործունեությունն սկսեց հավատափոխ հայ եկեղեցականներից մեկը՝ Աբրահամ եպիսկոպոս Արծիվյանը: Վերջինս բազմիցս բանտարկվել էր և ազատություն ստացել: 1720 թ. գալով Հալեպ՝ Մուրադյան եղբայրներից Հակոբը ձեռնադրվեց կուսակրոն քահանա, իսկ Աբրահամը՝ սարկավագ: Նրանց հաջողվեց մեծ հնարագիտությամբ ազատ արձակել Առուստ կղզում աքսորված Աբրահամ Արծիվյան եպիսկոպոսին և բերել իրենց վանքը: Այս ժամանակներից սկսած վանքի համբավը հետզհետե տարածվեց: Շատերի հետ միասին այս վանք եկան նաև երկու հայ եպիսկոպոսներ՝ Տեր Սարգիս Խաբլանյանը և Ստեփանոս Գունտին:

Մուրադյան եղբայրներից իր կաթոլիկ եռանդով աչքի էր ընկնում հատկապես Հակոբը, որը 1730 թ. քարոզչության նպատակով թողեց վանքը և միառժամանակ հաստատվեց Անկյուրիայում: Սակայն նրա գործունեության առավել նշանակալից էջերը վերաբերում են Հալեպին (Բերիային), ուր նա կարողացավ ոչ միայն հայ կաթոլիկների համար եկեղեցի ձեռք բերել, այլև՝ Արծիվյան Աբրահամ եպիսկոպոսին վերադարձնել Հալեպ (1738 թ. դեկտեմբերի 4), իսկ հետագայում՝ Սսի Ղուկաս Կաթողիկոսի գահընկեցությունից հետո, օգտվելով խռովություններից, նրան դարձնել կաթողիկոս (1740 թ. նոյեմբերի 15): Հայոց կաթոլիկ կաթողիկոս Աբրահամ-Պետրոս Ա-ից հետո (1740 -1749) եպիսկոպոս դարձավ Հակոբ վարդապետը՝ Հակոբ Պետրոս Բ անվամբ (1749 -1753): Նրա օրոք կաթողիկոսարանը փոխադրվեց Քրեյմայից Ջումառ, որտեղ կառուցվեց վանք և կաթողիկոսարան:

Անտոնյանները վանք կառուցեցին նաև Հռոմում՝ Ս. Լուսավորիչ անվամբ (1761 թ.): Որոշ ժամանակ անց, 1865 թ. մարտի 15-ին, նրանք իրենց Քրեյմայի վանքը վաճառեցին Մարիոնիտներին, իսկ Լուսավորիչ վանքը (1871)՝ իտալական կառավարությանը: Այնուհետև Անտոնյանները տեղափոխվեցին Պոլիս: Նրանց գործունեության միակ նպատակն էր «կաթողիկե կրոնի ծավալման համար ոգի ի բոի աշխատել»⁹:

Օսմանյան կառավարությունը չէր խրախուսում կաթոլիկ քարոզիչների գործունեությունը, քանզի քաջ գիտակցում էր, որ դա ուղղված է Թուրքիայի դեմ: Ուստի նա սկսեց անուղղակի ձևով պաշտպանել հայերին՝ միառժամանակ հալածանքի ենթարկելով հայ կաթոլիկներին: Վերջիններս, ունենալով Եվրոպայի պաշտպանությունը, իրենց հերթին կաշառում էին օսմանյան պաշտոնյաներին: Այդպիսով նրանք

⁹ Հայոց Եկեղեցու պատմություն, Նոր Նախիջևան, 1909, էջ 109 -111:

կարողացան ոչ միայն ազատվել հալածանքից, այլև իրենք սկսեցին հալածել Հայ Առաքելական Եկեղեցու հետևորդներին՝ հասնելով ընդհուպ մինչև Պոլսի հայոց Պատրիարքարան¹⁰, որի քսաներկու քահանաներից տասներեքն այդ ժամանակ արդեն ընդունել էին կաթոլիկություն:

17-րդ դարի երկրորդ կեսին Էջմիածնից մինչև Կ. Պոլիս, Հալեպից մինչև Երուսաղեմ և մինչև Լեհաստան Հայոց Եկեղեցում մեծ տագնապ էր տիրում. մոլեռանդ, փառամոլ օտար քարոզիչներն իրենց ազդեցության տակ էին առել մի խումբ հայ հոգևորականների և նրանց հետևորդ աշխարհականներին: Հատկապես Հալեպում շատ եռանդուն գործունեություն ծավալեցին Հռոմից ուղարկված քարոզիչ միաբանները, որոնց հաստատած կաթոլիկ վանքերում և եկեղեցիներում կային գաղտնի ու հայտնի վարժարաններ, ուր ուսում էին ստանում տեղացի քրիստոնյաները: Հայ կաթոլիկ կրոնավորներն ընդունելություն էին կազմակերպում տեղացի հայ քահանաների ու վարդապետների համար՝ հրապուրելով նրանց սուտ խոստումներով: Չի բացառվում նաև նյութական շահագրգռումը: Նրանց խաբում էին՝ հավատացնելով, թե իբրև Հայ Եկեղեցին հնուց ի վեր ընդունել է Հռոմի գերագահությունը, և իրենց սուտը հաստատում էին հնարավոր օրինակներով:

Հերթական եպիսկոպոսի՝ Անդրեա Աիռնյանի անվան հետ կապված են էլ ավելի մերժելի արարքներ Հալեպի հայ համայնքում: Ստանալով եվրոպական կրթություն՝ նա իր առջև նպատակ էր դրել ծառայել Պապին, ստեղծել առանձին Հայ Կաթոլիկ Եկեղեցի, հնարավորինս մեծ թվով հայերի ներգրավել կաթոլիկության մեջ: Եվ նրան հաջողվեց իր պաշտոնավարության ընթացքում տեղի հայերի 2/3-ին դարձնել կաթոլիկ: Հալեպի Ս. Քառասունք եկեղեցում նրա տված քարոզից հետո խաղաղասեր սիրիահայության մեջ ծագեց ծանր ու անդարմանելի խռովություն: Անդրեասը նույնիսկ համարձակվեց նամակ ուղարկել Հռոմ՝ նշելով, որ Սիրիայի քրիստոնյաները պատրաստ են ծառայելու Պապին և կաթոլիկությանը: Հաջորդ նամակն ուղղված էր Լյուդովիկոս 14-րդ թագավորին, որում նա խնդրում էր գործ ուղարկել թուրքերի դեմ և ազատել քրիստոնյա կաթոլիկ աշխարհը տվյալ տարածաշրջանում: Այս ամենը գրգռեց թուրքական իշխանությունների զայրույթը և, բնականաբար, իր բացասական անդրադարձն ունեցավ հայերի հանդեպ թուրքերի վերաբերմունքի վրա: Անդրեասի մահից հետո Սիրիայում սկիզբ առավ նոր շարժում, ժողովրդի մեծ մասը վերադարձավ իր հայրերի հավատին և միայն մի փոքր մասը մնաց կաթոլիկ: Վերոնշյալ երկու համայնքները ցանկանում էին ունենալ առանձին պատրիարքներ, սակայն սուլթանը հաստատում էր այն կողմի պատրիարքին, որն առավել մեծ կաշառք էր տալիս նրան:

17-րդ դարի վերջում և 18-րդ դարում, մասնավորապես՝ 1719 և 1733 թթ. ժանտախտն առանց հաշվի առնելու տարիք, ազգություն և կրոն՝ բնաջնջեց բնակչության մի մասը: Այս տխուր հանգամանքից օգտվեցին եվրոպական միսիոներները: Վտանգվելով իրենց կյանքը՝ նրանք այցելում էին հիվանդ ընտանիքներին, քարոզ էին կարդում, բաժանում էին դեղորայք, խնամում էին հիվանդներին, չքավորներին ապահովում էին հագուստով: Առողջանալով ֆիզիկապես՝ նախկին հիվանդներն այդպիսով փոխում էին իրենց դավանանքը:

¹⁰ **Գևորգ Մեսրոպ**, Համառոտ պատմություն Հայ Եկեղեցու, Պեյրուք, 1949, էջ 100:

17-րդ դարից սկսած մինչև 19-րդ դարի առաջին քառորդը Հռոմից եկած հոգևորականների պատճառով Հալեպում շարունակվում էին ներագգային խռովությունները, պառակտումները՝ իշխանությունների միջամտությամբ, բանտարկությունները, աքսորը և այլ աղետներ: Այդ ընթացքում կաթոլիկ ընտանիքներն ունեին մի շարք առավելություններ. երեխաներին թույլ էր տրվում գրեթե անվճար ձեռք բերել դպրոցական կրթություն, այնուհետև ապահովում էին նրանց աշխատանքով և բարեկեցիկ կյանքով: Շուտով միսիոներները դիմեցին սուլթանին՝ պահանջելով, որ պեսզի վերջինիս հպատակները դառնան կաթոլիկներ: Այս ամենն սկսվեց այն պատճառով, որ հյուպատոսներն ու միսիոներները փոխանակ Հալեպ մուտք գործեին թուրքական կանոնավոր անցագրով և իջևանեին ուղղակի հյուպատոսական կամ եվրոպական գաղութի շրջանակներում, Պատարագներ մատուցեին միայն եվրոպացիների համար՝ եկան և հաստատվեցին Սիրիայի ուղղափառ օրթոդոքս քրիստոնյաներով բնակեցված թաղերում՝ Մարոնիների եկեղեցու մոտ, որը գտնվում էր հայոց գույգ եկեղեցիների բակում, հույների Ս. Գևորգ եկեղեցու հետ մեկտեղ: Այսպիսով, բավականին ընդարձակ բակի մեջ համատեղ գտնվում էին երեք տարբեր ազգերի եկեղեցիներ, իսկ գրեթե ամբողջ թաղը բնակեցված էր Արևելյան Եկեղեցիներին պատկանող ժողովուրդների ներկայացուցիչներով, որոնց համար Եվրոպայից Հալեպ եկած նոր քահանաները ներկայացնում էին մեծ հետաքրքրություն: Այդ քահանաները Պատարագ էին մատուցում կաթոլիկ Մարոնիների փոքրիկ մատռան մեջ: Աստիճանաբար այնտեղ սկսեցին հաճախել նաև հայերը, որը առաջ բերեց նոր պառակտում: Աղոթքի և Պատարագի համար Ս. Քառասնից կամ Ս. Աստվածածին մտնող առաքելական բարեպաշտ հայ երիտասարդները, լսելով, որ կողքի մարոնի եկեղեցում Պատարագ է մատուցում Ֆրանսիայից նոր ժամանած երիտասարդ քահանա, սկզբում մտնում էին այնտեղ՝ զուտ հետաքրքրությունից դրդված, իսկ հաջորդ անգամ գալիս էին արդեն քարոզ լսելու: Եվ իբրև հյուրասեր հայ քրիստոնյա՝ մի օր էլ միսիոներ-քահանային հրավիրում էին տուն՝ ճաշի, դարձնում իրենց խանութի հաճախորդը, նման շահադիտական նկատառումներով փորձում էին մոտեցում ցուցաբերել նաև այլ ֆրանսիացիներին, հետագայում նաև՝ անգլիացիներին, հոլանդացիներին և նրանց թարգմանիչներին:

Յավոք, հայերի անձնական շահը շատ հաճախ գերիշխում էր ազգային, պետական, կրոնական շահին, ինչը շարունակվում է մինչև օրս:

Միսիոներները կաշառք էին մատուցում թուրք պաշտոնյաներին, որպեսզի նրանք աչք փակեն այն ամենի վրա, ինչ տեղի է ունենում: Եվ իսկապես, թուրքերին ձեռնառու էր, որ քրիստոնյաները, հատկապես՝ հայերը, համախմբված չլինեն: Սակայն Հալեպի պատմության մեջ հայտնի են դեպքեր, երբ հայրենասեր հայերը միսիոներ-կաթոլիկներին ուղղակի դուրս են շարտել քաղաքից: Յավոք, այդ հայրենասերների անունները չի հիշատակված որևէ պատմական փաստաթղթում:

Ընդհանուր առմամբ, այդ ժամանակաշրջանում Հալեպում գործում էին չորս միաբանությունների միսիոներներ: Ֆրանսիացի և վենետիկցի չորս մայրապետներ և երկու եղբայրներ (միաբան), Քափուչինյան հինգ հայր ու եղբայր, Կարմեղյան երեք հայր ու եղբայր և, վերջապես, Հիսուսյան երկու հայրեր, որոնց հետ ոչ եղբայրներ կային և ոչ էլ՝ սպասավորներ (վերջիններիս պաշտոնավարությունը շատ համեստ էր): Սակայն այս միսիոներների շրջանում կային և այնպիսիները, որոնք ուրանում էին սեփական կրոնը և ընդունում մահմեդականությունը: Խեղճ հայերը մո-

լորության մեջ էին միսիոներների թե՛ թվից, թե՛ նրանց տարաձայնություններից և թե՛ պահվածքից: Հայկական կաթոլիկ ընտանիքներում չէին խոսում հայերեն, չունեին հայերեն լեզվով գրքեր, չէին կարդում հայկական թերթեր: Հայ Առաքելական Եկեղեցու հետևորդ հայերը ձեռնամուխ եղան Հալեպի կաթոլիկ հայերի ազգային ու մտավոր զարգացմանը՝ հաստատելով Միսիթարյան վարժարանը: Սակայն շատ սակավաթիվ երիտասարդություն էր հաճախում այս դպրոց՝ արաբերենն ու ֆրանսերենը գերադասելով հայերենից:

1690 թվականից Հալեպի կաթողիկոսը մեծ աշխատանք ծավալեց Հռոմի Պապի և ֆրանսիական հյուպատոսության հետ՝ նպատակ ունենալով հիմնել Հայ Կաթոլիկ Եկեղեցու ինքնուրույն թեմ Հալեպում և ստեղծել առանձին հայ կաթոլիկ համայնք: Կրոնական գործիչներն իրենց նամակներում Անտիոքի Պատրիարքին (Միսիթարյան և Լիբանանի ստացված տիտղոսով) ներկայացնում էին որպես հայ ազգի «Կիլիկիո Հայոց Կաթողիկոս», ինչը ճիշտ չէր և ոչ ոք իրավունք չուներ այդպիսի տիտղոս կրելու: Նրանք ճանաչում էին միայն Հռոմեական Եկեղեցին¹¹: Սակայն այսպիսի կրոնական գործիչները երկար չէին մնում Հալեպում, նրանց նամակագրությունը չէր ավարտվում պաշտոնական հայտարարությամբ, և նրանք շուտով մոռացության էին մատնվում:

Առկա տվյալների համաձայն՝ 18-րդ դարի սկզբին շփոթ վիճակ էր տիրում հալեպահայ միջավայրում: Բոլոր եպիսկոպոսները, որոնք գլխավորում էին հայ կաթոլիկներին, փորձում էին շահել Պապի ուշադրությունը՝ հայտարարելով, որ կայաքարեն անհավատների, այսինքն՝ միայն Առաքելական Եկեղեցին ճանաչող հայերի դեմ: Հայտնի է, որ բավական լուրջ ջանքեր են գործադրվել՝ Հալեպում կաթոլիկ հայոց կենտրոն ստեղծելու համար և Ս. Քառասունք կամ Ս. Աստվածածին եկեղեցիները որպես թե վերածել հայոց հոգևոր կենտրոնի: Սակայն Հալեպում բնակվող հայերի մեծամասնությունը մնում էր հավատարիմ Հայոց Եկեղեցու դավանանքին և ավանդույթներին:

1740 թ., բավական երկար դժվարություններից հետո, Աբրահամ եպիսկոպոս Արծիվյանն ընտրվեց և ձեռնադրվեց կաթոլիկ հայերի Կիլիկիո Տան Կաթողիկոս-Պատրիարք, իսկ երկու տարի անց ստացավ քահանայապետական հաստատություն: Այս տարեթիվը համարվում է Հալեպում հայ Կաթոլիկ Եկեղեցու ստեղծման պաշտոնական տարի: Աբրահամը Պապից ստանում է կոնդակ և ձեռնամուխ լինում նոր կարգերի հաստատմանն ու նոր հոգևորականների նշանակմանը: Կոնդակով հաստատում է կրոնավորների ընտրությունները՝ անուշադրության մատնելով ժողովրդի ներկայացուցիչներին: Նա մեկնում է Հռոմ և Բենեդիկտոս 13-ից Պալմուն ու քահանայապետական այլ նշաններ ստանում:

Կ. Պոլսի կաթոլիկ հայերը նրա համար տեղ էին պատրաստել, բայց Արծիվյանը հաստատվեց Լիբանանում և երեք եպիսկոպոսներ նշանակեց Կ. Պոլսում, Հալեպում և Դամասկոսում: 1741 թ. Արծիվյանը նամակով տեղեկացնում է Միսիթարյաններին, որ Միջին Արևելքում հաստատվել է կրոնական միաբանություն՝ խնդրելով, որպեսզի նրանք իրենց միաբանության կանոնադրությունն ուղարկեն նորահաստատ միաբաններին և հոժարակամ միավորվեն վերջիններիս հետ: Նամակը ստորագրում են ութ միաբաններ: Միևնույն ժամանակ Արծիվյանն իր հաստատումն

¹¹ Սյուրմեյան, Պատմություն Հալեպի հայոց, Փարիզ, հ. 3, էջ 635 – 636:

ստանալու ակնկալիքով դիմում է նաև Հռոմ: Սակայն Պապը և կարդինալների ժողովը զգուշանում են առանց վստահելի պայմանների առկայության հապճեպ ճանաչում չնորհել: Արծիվյանը չի հուսահատվում: Նա առանց հրավերի Հալեպից մեկնում է Հռոմ: Բազմաթիվ արկածներից հետո վերջապես հասնում է Հռոմ և միայն գալու 25-րդ օրն արժանանում Պապի ընդունելությանը: Սա մի պարզ քաղաքավարական տեսակցություն էր՝ առանց պաշտոնական պատրիարքության հաստատման մասին խոսակցության: Դրանից հետո Արծիվյանը ծանր հիվանդանում է: Նրան Պապի անունից այցելում են երկու կարդինալներ՝ անկողնում նրանից ապաշխարություն ընդունելու համար: Պապին երկրորդ անգամ այցելելուց և կարդինալների ժողովի կողմից երկար քննություններից և տեղեկագրերից հետո Արծիվյանը հինգ եպիսկոպոսների առջև ընթերցում է կաթոլիկ հավատքի բանաձևը և ստորագրում այն¹²: Արծիվյանը հայ ծեսի բարեփոխության ծրագրերի մշակման նպատակով որոշ ժամանակ մնաց Հռոմում: Վերադառնալով Կ. Պոլիս՝ նա բերեց իր պաշտոնը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաև՝ գրություն Ֆրանսիայի թագավորից այն մասին, որ տվյալ տարածաշրջանի բոլոր եկեղեցական հարցերն այսուհետ լուծելու է ինքը՝ Արծիվյանը:

Արծիվյանի մահից հետո նրան հաջորդող բոլոր մյուս կաթողիկե պատրիարքները շուրջ հարյուր տարի այլևս Պապի կողմից ընդունելություն չստացան և չհաստատվեցին նրա կողմից: Այսպես հաստատվեց Լիբանանի և Սիրիայի հայ կաթոլիկ միաբանությունը, որի հիմնադիրն էր Աբրահամ Արծիվյանը:

Այսպիսով, Հալեպի հայոց պատմության ամենախառը ժամանակաշրջանում էր, երբ տարիներ ի վեր կատարված շարունակական փորձերից հետո, ի վերջո, հաջողվեց ազգային դարավոր Եկեղեցուց առանձնացնել մի մաս և կազմել փառասիրությամբ անջատ համայնք՝ առանձին պատրիարքով, եպիսկոպոսով ու քահանաներով, որոնք ձեռնադրված լինելով Ս. Քառասունք կամ Ս. Աստվածածին եկեղեցում, լքեցին իրենց Մայր եկեղեցին և հեռացան:

1737 թ. Հալեպի Ս. Աստվածածին եկեղեցին հինգ տարի ժամանակով տրամադրվեց հայ կաթոլիկներին: Կաթոլիկներն այս եկեղեցին ձեռք բերեցին կաշառքի միջոցով: Գործը հասավ մինչև դատարան, հայերը գծովեցին իրար հետ: Առաքելական Եկեղեցու հետնորդներն իրենց թվով ավելի շատ էին, սակայն հայ-կաթոլիկներն ավելի հարուստ էին:

Հռոմի Ուրբանյան քոլեջում տարիներ ի վեր պատրաստում էին հատկապես հայ կաթոլիկ վարդապետներ, որպեսզի կարողանան ժամանակի ընթացքում ողջ հայությանը տանել իրենց հետևից և ապահովել կաթոլիկ միությունը: Նույն պատվերն էին տվել նաև Մխիթարյաններն՝ իրենց մտավոր բարձր զարգացմամբ ու պատրաստությամբ ազդել ժողովրդի լայն խավերի վրա և միաձուլվել Հռոմի Եկեղեցուն: Սակայն Մխիթարյանները այդ հարցին վերաբերում էին շատ զգուշությամբ: Հռոմը պահանջում էր, որպեսզի հայերը՝

1. ինչպես հարկն է ընդունեն Քրիստոսի «երկու բնությունը»,
2. դավանեն, որ Սուրբ Հոգին ոչ միայն «Հորից, այլև Որդուց է բխում»,
3. խոստովանեն, որ Պետրոսը «Գլուխ առաքելոց» է, ուստի և՛ Պապը «առաջնորդը և գլուխն է Եկեղեցյաց»,

¹² Բյուզանդ Եղիայան, Հայ Հարանվանությանց բաժանումը, Անթիլիաս, 1971, էջ 157:

4. սրբագրեն իրենց ծիսական արարողությունները ու տոմարի որոշ մասերը,

5. «վերջին օծումն» ընդունեն իբրև խորհուրդ¹³:

19-րդ դարում Հալեպի Սիմեոն արքեպիսկոպոսը փորձում է շտկել իրավիճակը՝ ներշնչելով հայերին փոխադարձ սեր և հանդուրժողություն միմյանց նկատմամբ:

Արծիվյանի ժամանակաշրջանում հայերի մեջ կային երկու դեմքեր, որոնք դեմ էին կաթոլիկության հաստատմանը՝ համարելով այն սխալմունք: Դրանցից առաջինը Մխիթար Աբբահայրն էր: Թեև նրա հիմնած միաբանությունը գտնվում էր Վենետիկում, այնուամենայնիվ, նա բնավ հակված չէր հայերի նվիրապետական անջատման ծրագրի իրականացմանը, այլ ընդհակառակը՝ դա համարում էր վտանգավոր և գոհանում էր միայն այն հանգամանքով, որ իր միաբանությունը Հռոմի հովանու ներքո կարող է շարունակել մատենագրական, կրթական և մշակութային գործունեությունը: Չնայած Մխիթար Աբբայի երբեմնի խոստովանած նպատակն էր հայությանն առաջնորդել «Ս. Պապի Գահին», սակայն նրա համար այսպիսի խոստովանությունն ընդամենը հարկադրական տուրք էր իրեն սատարող ուժին և ամենևին էլ մտադրություն չէր հետապնդում ստեղծելու անջատ պատրիարքություն: Այս բանի ապացույցն է այն փաստը, որ գոյության երկուսուկես դարերի ընթացքում Մխիթարյան Միաբանությունը վարչականորեն չի ենթարկվել ո՛չ Արծիվյանի ստեղծած պատրիարքությանը և ո՛չ էլ դրանից մեկ դար հետո Կ. Պոլսի Նուրիճանի գահակալած փոխանորդությանը, կամ ավելի ուշ սրանց միաձուլումով առաջ եկած Հասունյան Կաթոլիկ հայոց պատրիարքությանը, այլ մնացել է որպես անկախ միաբանություն՝ Հռոմի հսկողության ներքո, և ծառայել հայ մշակույթին:

Հռոմեական իշխանառուների կողմից հայերի հանդեպ որդեգրած մեթոդի նկատմամբ զգուշություն ցուցաբերող մյուս հեռատես անձնավորությունը Պոլսի լատին պատրիարքական փոխանորդ Հերոնիմոս արքեպիսկոպոս Բոնան էր, ըստ որի՝ Հալեպում Արծիվյանի Պատրիարք ընդունվելու և այս պաշտոնը հաստատելու խնդրանքով նրա Հռոմ մեկնելու երկու առիթների նկատմամբ Հռոմը ցուցաբերել է խիստ զգուշություն: Արծիվյանի «հաստատում» և Պալիոն ստանալու բանակցությունների ընթացքում նա, տեսնելով իր նամակագրության ապարդյունությունը, նույնիսկ համարձակվեց անձամբ Կ. Պոլսից Հռոմ գնալ և իր համախոհների հետ ամեն կերպ խափանել այդ հաստատումը: Ու մինչև իսկ երբ այնտեղ նրան լսող չգտնվեց, նա գնաց Վենետիկ և իր համախոհների հետ այնտեղ նամակ գրեց Պապի փոխանորդ կարդինալին: Բոնա արքեպիսկոպոսի զգուշավորությունն ամենևին էլ հոգուտ Հայոց Եկեղեցու նվիրապետությանը չէր: Ընդհակառակը, նա նկատել էր այդ մեթոդի սխալ լինելը և ցանկանում էր, որպեսզի կաթոլիկությունն «ավելի ապահով քայլերով» և նվազագույն ցնցումներով հաստատվի հայության մեջ: Հալեպում Արծիվյանի պատրիարքացման առիթով, օրինակ, նա գրում է, որ «պետք չէ աճապարանքով ձևափոխություններ ներմուծել, այլ հարկ է ժամանակ տալ կայուն դարձնելու ինչ որ ցայժմ ձեռք բերած են»: Հատկապես, երբ լատին արքեպիսկոպոսի միակ ցանկությունն էր՝ հայերին ուղղակի լատին Եկեղեցու իշխանությանը կապված կաթոլիկացնել:

Շատ կարևոր էր ապահովել կաթոլիկության ճանաչումն Օսմանյան պետության կողմից, որը, սակայն, անհնար էր՝ տվյալ ժամանակի ընդհանուր կացության և հո-

¹³ Բյուզանդ Եղիայան, Հայ Հարանանության քաժանումը, Անթիլիաս, 1971, էջ 104:

գեբանության մեջ: Պատմությունն էլ իր հերթին ցույց տվեց, որ այդպիսի թատերական արարքներով, ապօրինի ձեռնադրություններով, բռնի գրավումների կամ կաշառումների միջոցով, գաղտնի ու ծպտյալ երթևեկներով հայերի մեջ դավանափոխություն առաջացնելու մեթոդն իսկապես վտանգավոր էր: Արծիվյանի ստեղծած և Պապի շնորհած Պալիոնագարդ «պատրիարքությունն ավելի քան մեկ դար զուրկ մնաց Օսմանյան պետական ճանաչումից՝ ստիպված լինելով ինքնամիտի ապրել պետության հարավային հեռավոր փոքր նահանգի մի լեռնային վանքում, մինչև որ կաթոլիկությունը Պոլսի շարժման շնորհիվ 1831 թ. ձեռք բերեց պետական ճանաչում: Եվ միայն մի սերունդ հետո Զմմառի վանքի պատրիարքությունը կարողացավ միանալ Պոլսի փոխանորդությանը¹⁴:

Այսպիսով, Բոնա արքեպիսկոպոսի նախատեսած մեթոդով միայն իրագործվեց այն ծրագիրը, որ Արծիվյանի օրոք այնքան աճապարական և անհարկի ցնցումներ պատճառեց հայությանը:

Եվ մինչև այսօր էլ պարզ չէ, թե արժե՞ր արդյոք այնքան տառապանք և հուզում պատճառել ու պառակտել ժողովրդին, արժե՞ր արդյոք ուրանալ ավելի քան տասնվեց դար Հայոց Սուրբ Հայրապետների ուղղափառ դավանությունը և նվիրականացած իշխանապետությունը, արժե՞ր արդյոք տասն օտար դռներ շրջելով միջամտություններ մուրալ և մինչև իսկ Հռոմ հասնել, գետնամած երեք անգամ Պապի ոտքը համբուրել պարզապես Ս. Պապի «աստվածաշուշանի ձեռքի» հպումին արժանանալու և Պատարագի ժամանակ գինուն ջուր խառնելու հնարավորություն ունենալու համար: Արժե՞ր արդյոք հայ ժողովրդին վերից վար ճեղքել երկու մասի:

Ուշագրավ է, որ այդ ժամանակաշրջանում Հալեպի հայ եկեղեցական կյանքը փոթորկող այդ իրադարձությունների նկատմամբ Սսի կաթողիկոսները ցուցաբերում էին բացորոշ անտարբերություն, իսկ նրանց կողմից նշանակված թեմակալ առաջնորդները ոչ միայն չէին հակադրվում կաթոլիկ կղերի արարքներին, այլ նաև հաճախ իրենց ընթացքով նպաստում էին հակակաթոլիկական դիմադրության թուլացմանը: Այս ամենից դժգոհ՝ հալեպահայերը դիմում են Սիմեոն Երևանցի Կաթողիկոսին՝ Հալեպի թեմն էջմիածնի իրավասությանը ենթարկելու խնդրանքով: Սիրիայում հայերը կազմում էին առավել բազմամարդ ազգային փոքրամասնություններից մեկը: Ընդ որում, ավելի քան մեկ տասնյակ կրոնադավան համայնքների ընտանիքում Հայ Առաքելական համայնքն իր թվաքանակով մարոնիտներից և հույն ուղղափառներից հետո գրավում էր առաջին տեղը և, ի տարբերություն մյուս քրիստոնյաների, պահպանում էր մայրենի լեզուն և ազգային մշակույթի այլ հատկանիշներ:

Նահանգային վարչատնտեսական կենտրոն Հալեպ քաղաքի բնակչության ճնշող մեծամասնությունը կազմում էին տարբեր ազգությունների մահմեդականներ: Արաբների համեմատ քրդերի, թուրքերի և մյուս մահմեդականների թիվը զգալիորեն քիչ էր: 19-րդ դարի վերջում Հալեպում ապրում էր 51 հազար մահմեդական, 6500 հրեա և 21235 քրիստոնյա, այդ թվում՝ 7908 հույն (հունադավան արաբներ), 6473 հայ, 3509 ասորի և 3345 քրիստոնյա արաբներ, օտարներ և այլն: Քրիստոնյաներից կաթոլիկներ էին 17739-ը, ուղղափառներ՝ 3370-ը, բողոքականներ՝ 126-ը: Կաթոլիկների 6708-ը արաբացած հույներ էին, 4371-ը՝ հայեր, 3441 ասորիներ, մնացածը՝ ա-

¹⁴ Բյուզանդ Եղիայան, էջ 161-162:

րաբներ և այլն: Հայ առաքելական համայնքն ուներ 2102, հունականը՝ 1200, և ասորականը՝ 68 հետևորդ¹⁵: Այսպիսով, Հալեպում հայ կաթոլիկները թվով ուղիղ երկու անգամ շատ էին: Այսպիսի տարբերության առաջին պատճառն այն էր, որ կաթոլիկական համայնքները տարեկան շուրջ 2 միլիոն ֆրանկ օգնություն էին ստանում Ֆրանսիայից և Սիրիայում առևտրական շահեր ունեցող այլ պետություններից¹⁶:

19-րդ դարում կաթոլիկ միսիոներները Սիրիայի տարբեր քաղաքներում հիմնում են սկզբնական և միջնակարգ դպրոցներ, քոլեջներ, որբանոցներ, մանկամսուրներ և հիվանդանոցներ:

Ֆրանսիայից հետո Սիրիայի կաթոլիկական համայնքների նկատմամբ ակնհայտ շահագրգռություն է սկսում ցուցաբերել Ավստրիան: Ավստրիական կառավարությունը դրամական միջոցներ է տրամադրում դպրոցներին, իսկ Դամասկոսում բացում է հատուկ կուրսեր՝ միսիոներներ պատրաստելու համար: Սակայն քաղաքական ազդեցություն ձեռք բերելու նպատակով Ավստրիայի ձեռնարկած այդ և մյուս փորձերը, հանդիպելով Ֆրանսիայի դիմադրությանը, անհաջողության մատնվեցին: Աստիճանաբար քրիստոնյաների վրա իրենց ուշադրությունն սկսեցին հրավիրել նաև Անգլիան, Պրուսիան և ԱՄՆ-ը: Անգլիան, Ֆրանսիան և մյուս պետությունները միաժամանակ արևմտյան Եկեղեցիների միջոցով ջանք չէին խնայում այնպես անելու, որ թուլացնեն ռուսամետ հակումներ դրսևորող արևելյան Եկեղեցիների դիրքերը: Վերջին հաշվով Օսմանյան կայսրության քրիստոնյաներին հովանավորելու քաղաքականության սուր ծայրն ուղղված էր Մերձավոր Արևելքում ռուսական ազդեցության ծավալման դեմ:

Կաթոլիկներին հովանավորող պետությունների դեսպաններն ու հյուպատոսները պայքարում էին նաև Ռուս Ուղղափառ Եկեղեցու հետ դարավոր կապեր ունեցող Հայ Եկեղեցու դեմ: Ֆրանսիական և ավստրիական դեսպանները միջամտում էին և խնդրում սուլթանին հատուկ վերաբերմունք ցուցաբերել հայ կաթոլիկներին: 1831 թ. սուլթանը նույնիսկ ճանաչեց հայոց պատրիարքարանից անկախ հայ կաթոլիկ համայնքի գոյության իրավունքը: Այդ իսկ պատճառով Սիրիայում հայ կաթոլիկների թիվը կտրուկ աճեց՝ հասնելով 15-20 հազարի¹⁷:

Միսիոներները հայաբնակ գյուղեր էին մտնում զինված բազմերանգ խոստումներով: Դավանափոխության դիմաց նրանք նյութական ծանր կացության մեջ գտնվող հայ գյուղացիներին խոստանում էին դրամական օգնություն և պաշտպանություն, բացում էին արական և իգական դպրոցներ, հայ աղքատ ընտանիքների երեխաներին տրամադրում անվճար հագուստ և սննդամթերք, կառուցում եկեղեցիներ: Դավանափոխները, գտնվելով օտար միսիոներական կազմակերպությունների և, վերջիններիս միջոցով նաև, թուրքական իշխանությունների պաշտպանության ներքո, հաճախ անպատիժ արարքներ էին գործում ազգային Եկեղեցուն հավատարիմ մնացածների դեմ: Սիրիայում հավանաբար չկար մի հայաբնակ գյուղ, որտեղ միսիոներների քարոզչությունը չգուգորդվեր ներքին սուր հակամարտություններով, կռիվներով, դատ ու դատաստանով:

¹⁵ **Թովուդյան Հ. Խ.**, Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն, Երևան, 1986, էջ 47:

¹⁶ Նույն տեղում, էջ 75:

¹⁷ **Բյուզանդ Եղիայան**, էջ 122:

Այսպիսով, եվրոպական պետությունների քրիստոնյաներին հովանավորելու քաղաքականությունը խիստ բացասաբար էր ներգործում Սիրիայի հայության վրա: Միսիոներների ասպատակությունները գալիս էին լրացնելու այն, ինչ պակաս էր թողնում Օսմանյան բռնապետությունը: Մակայն, ամեն դեպքում, հայ կաթոլիկներն ինչ-որ չափով պաշտպանված էին եվրոպական պետությունների կողմից: Մյուս կողմից՝ թուրքերը վարպետորեն շարունակ փորձում էին իրենց հպատակ հայերին գերծ պահել կասկածելի նպատակներով գործող միսիոներներից և պետություններից, ուստի նրանք նախընտրում էին, որպեսզի հայերը եվրոպական-լատինական եկեղեցիներ հաճախելու փոխարեն գնան իրենց ավանդական եկեղեցիները՝ անկախ հայոց պատրիարքարանից, բայց միևնույն ժամանակ՝ նաև անջատ լատինականներից:

Սիրիայում հայերը հիմնականում բնակվում են Հալեպում: Հալեպի առաջնորդարանի իրավասության տակ է գտնվում Սիրիայի հյուսիսարևմտյան շրջանը, որն ընդգրկում է Իտլիպ, Լաթակիա, Թարթուս, Համա, Հոմս և Ռազզա նահանգները: Հալեպում գործում են հինգ կաթոլիկ ժողովրդապետություններ.

- ա) Տիրամայր Օգնության Աթոռանիստ Մայր եկեղեցու ժողովրդապետությունը,
- բ) Ս. Փրկիչ - Սրբուհի Վարվառայի եկեղեցու ժողովրդապետությունը,
- գ) Ս. Երրորդության եկեղեցու ժողովրդապետությունը,
- դ) Ավետման եկեղեցու ժողովրդապետությունը,
- ե) Ս. Խաչ եկեղեցու ժողովրդապետությունը:

- Ռազզայում գտնվում է փոքր ժողովրդապետություն՝ առանց քահանայի, Տիրամայր Նահատակաց եկեղեցով:

- Քեսապի ժողովրդապետությունը հայ կաթոլիկ պատրիարքարանի իրավասության ներքո է:

Հալեպի հայ կաթոլիկ հավատացյալների թիվը մոտավորապես հասնում է 17 հազարի¹⁸: Ինչպես արդեն նշվել է, Հալեպի հայերի պաշտոնական առաջին հայ կաթոլիկ առաջնորդը եղել է Աբրահամ եպիսկոպոս Արծիվյանը (1710-1740 թթ.), որը ծնվել է Այնթափում՝ 12.04.1674 թ.: 1710 թ. Հալեպի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցում եպիսկոպոսն օծվել է Սսի Ղուկաս պատրիարքի ձեռքով և դարձել Հալեպի առաջնորդ: 1740 թ. նա ընտրվել է Ղուկաս պատրիարքի իրավահաջորդ, իսկ 1742 թ. Բենեդիկտոս XIV-ի կողմից հաստատվել որպես Կիլիկիո Տան կաթողիկոս-պատրիարք: Աբրահամ եպիսկոպոս Արծիվյանը վախճանվել է 01.10.1749 թ. և թաղվել Լիբանանի Քրեյմի Ս. Փրկիչ եկեղեցում:

Հայ կաթողիկե թեմի հիմնարկությունն այնուհետև շարունակվեց որպես եպիսկոպոսների հաջորդություն: 1899 թ. փետրվարի 3-ին Հալեպի թեմը քահանայապետական տնօրինումով դարձավ արքեպիսկոպոսական թեմ, որի մեջ գործում են երեք հանձնախմբեր՝ իրենց ամենաբարձր կանոնավոր ժողովներով.

- ա) կալվածոց հանձնախումբ,
- բ) գերեզմանատան հանձնախումբ, որը զբաղվում է գերեզմանատան պահպանմամբ, արձանագրություններով և կառուցողական աշխատանքներով;
- գ) բարեսիրական գործերի հանձնախումբ՝ ճյուղավորումներով և երկու կոմիտեներով:

¹⁸ Բ Համագումարը Հայ Կաթոլիկ Եկեղեցու, Զմմառ, 2003, էջ 195 – 203:

Յուրաքանչյուր շաբաթ օր, կեսօրից առաջ, ժողովը համախմբում է Հալեպի կաթոլիկ եպիսկոպոսներին ու նրանց փոխանորդներին՝ միջհամայնքային ծրագրեր որոշելու և իրագործելու համար:

Հալեպի կաթոլիկ եպիսկոպոսների դասը գլխավորում է բազմաթիվ ընկերություններ և միջհամայնքային շարժումներ, ինչպես նաև միջծիսական, եկեղեցական ատյանը, կազմակերպում է նաև Քահանայապետական Համաշխարհային Մեծ Օրերը: Տարին երկու անգամ Սիրիայի կաթոլիկ եպիսկոպոսները համախմբվում են պատրիարքների նախագահությամբ և ներկայությամբ՝ կազմելով «Սիրիայի Կաթոլիկ Նվիրապետության Համաժողովը»:

ՀԱՅԿԱԶ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՂԱՐԱԲԱՂԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԱՂՔՅՈՒՐՆԵՐՈՒՄ (18-րդ դարի վերջ - 19-րդ դարի սկիզբ)

Ղարաբաղը 18-րդ դարի կեսերը դիմավորեց քաղաքական և տնտեսական ծանր պայմաններում: Նախկինում ձևավորված Ղարաբաղի մելիքությունները որքան էլ փորձում էին պահպանել իրենց նախկին հզորությունը, սակայն ժամանակի ընթացքում արտաքին և ներքին խմորումների հետևանքով բոլորն էլ գնալով թուլացան: Անդրկովկասում տիրապետության հասնելու համար մշտապես ուղեկցվող պարսկա-թուրքական արշավանքները ծանր հարվածներ հասցրեցին նաև Ղարաբաղի տնտեսությանը. ավերված գյուղեր, տեղահանված բնակչություն, ամայացած դաշտեր: Այդպիսին էին այդ հակամարտության հետևանքները Ղարաբաղում: Սակայն, չնայած դրան, ինչպես գրում է ռուս ռազմական պատմաբան Վ. Պոտտոն, «Ղարաբաղի քրիստոնեական բնակչությունը հերոսական կռիվ էր մղում շրջակա մուսուլմանական աշխարհի դեմ»¹: Եվ թեպետ Ղարաբաղի մելիքներից ոմանց հաջողվեց որոշ ժամանակով պահպանել իրենց ինքնուրույնությունը, սակայն պարսկական տիրապետության վերջնական արդյունքում Ղարաբաղում հայկական մելիքությունների տեղում առաջացան պարսկական խանություններ: Այդպես եղավ Շաքիում և Շիրվանում, այդպես եղավ նաև Ղարաբաղում: 1748 թ. Ջևանշիր ցեղից սերված Փանահը իրեն հռչակեց որպես Ղարաբաղի խան. «Եթե հայերը, - գրում է Պոտտոն, - այդ երկրամասի բնիկ ժողովուրդը (ընդգծումը մերն է՝ Ն. Ն.), միասնական լինեին, ապա այդ ամենը երբեք չէր կատարվի... ուստի նրանց բոլոր դժբախտությունները ներքին անհամաձայնությունների արդյունք էին»²: Կարծում ենք, որ ռուս պատմաբանը իր եզրակացության մեջ չի սխալվում:

Նույն հաստատումները կարելի է գտնել նաև Կովկասի հնագրագիտական հանձնաժողովի ակտերի (ԸԽԸԽ) գրքում. «Ղարաբաղի կառավարիչ Իբրահիմ խանը, որն իր հոր՝ Փանահից 1790 թ. որպես ժառանգություն ստացավ Ղարաբաղը, *հնագույն ժամանակներից սկսած կառավարվում էր հայ մելիքների կողմից*, որոնք պահպանել էին իրենց անկախությունը: Սակայն երբ նա սկսեց ուժեղանալ, Ղարաբաղից արտաքսեց *բնիկ կառավարիչներին* (ընդգծումները մերն են՝ Ն. Ն.)»³:

Հավաքածուում զետեղված է նաև ռուսական արքունիքի կողմից Վրաստանի նախարար նշանակված պետական խորհրդական Կովալենսկոյի զեկուցագիրը, ուր Ղարաբաղին վերաբերող մասում ասվում էր. «Ղարաբաղի հայկական մելիքները, որոնք այժմ (զեկուցագիրը ներկայացված է 1802 թ.՝ Ն. Ն.) գտնվում են Վրաստա-

¹ **В. А. Потто**, Первые добровольцы Карабага в эпоху водворения русского владычества, Тифлис, 1902, с. 2.

² Նույն տեղում, էջ 3:

³ АКАК, т. 1, Тифлис, 1866, с. 120-121.

նում, մելիք Ջումշուդը, Շահնագարի որդին, մելիք Աբովը, Հովսեփի որդին, մելիք Ֆրիդոնը, Բեգլարի որդին և մյուսները, որոնք հինգն էին, հայկական թագավորության վերացումից հետո մինչև վերջերս պահպանում էին իրենց անկախությունը: Փանահը սկզբում տեղավորվեց նրանց մոտ, ապա սկսեց նրանց ճնշել»⁴:

Ի դեպ, Ղարաբաղի հայկականությունն ապացուցող այս տեղեկությունները միակը չեն, որ հանդիպում ենք ռուսական աղբյուրներում: Այսպես, Կովկասին քաջատեղյակ ռուս մեկ այլ պատմաբան Պ. Բուտկովը, ներկայացնելով 18-րդ դարի սկզբի արցախահայության մղած ազատագրական պայքարը, իր գրքում մասնավորապես նշում է, որ վերջինիս «*հիմնական բնակիչները հայեր էին, որոնք կառավարվում էին իրենց հինգ մելիքների կողմից... նրանցից յուրաքանչյուրը կարող էր ռազմի դաշտ հանել մինչև հազար զինվոր* (ընդգծումը մերն է՝ Հ. Հ.)»⁵:

Բավականին ուշագրավ է նաև նույն հեղինակի հետևյալ տեղեկությունը. «Նպատակ ունենալով հպատակեցնել պարսկական խանությունները, գրում է Պ. Բուտկովը, նախատեսվում էր (նկատի ունի ռուսական արքունիքի ծրագրերը տարածաշրջանում՝ Հ. Հ.) վրաց թագավոր Հերակլի օժանդակությամբ տապալել Ղարաբաղի Իբրահիմ խանին, *նրանից և Ղարադաղից Ռուսաստանի հովանավորությամբ կազմել Հայկական մարզ*, կառավարումը հանձնելով տեղացի հայրենակցի և որքան կարելի է՝ բարեկեցություն ստեղծել այնտեղի բնակչության համար, քանի որ *Ղարաբաղին ընդօրինակելով, հայկական մյուս հարուստ մարզերը ևս* (ընդգծումները մերն են՝ Հ. Հ.) կհետևեին նրա օրինակին և Ասիայում վերջապես կվերականգնվեր քրիստոնեական պետությունը»⁶:

Հեղինակն իր տեսակետը հիմնավորում է նաև այն իրողությամբ, որ հայ բնակչության թիվն այդ տարածքներում բավականին ստվար էր: Ղարաբաղում հայկական տների թիվը կազմում էր 7000, Դերբենդում՝ 1000, Շիրվանում՝ 2000, Շաքիում՝ 1000, Գանձակում՝ 1500, Երևանում՝ 3000, Նախիջևանում՝ 500, և Մարաղայում՝ 200⁷: Այլ խոսքով, Բուտկովը գտնում էր, որ հայ բնակչության այդպիսի ստվար թիվը Ռուսաստանին լիիրավ իրավունք էր տալիս լրջորեն մտածելու Անդրկովկասի հարավում քրիստոնեական մարզ ստեղծելու մասին:

Պատմագիտական արժեքից զուրկ չէ նաև մի փաստաթուղթ, որի տակ դրված է կայսրուհի Եկատերինայի ստորագրությունը. «*Հայ մելիքներին և նրանց ենթակա Ղարաբաղի բնակչությանը Ռուսաստանից միասնական կախվածության մեջ գցելով* (ընդգծումը մերն է՝ Հ. Հ.), ինչպես նաև հայոց կաթողիկոսին և ընդհանրապես Անդրկովկասի ողջ քրիստոնյա բնակչությանը և պարսկական՝ հատկապես Գյանջայի և Երևանի խաներին դեպի մեզ թեքելով, մենք կարող ենք մեծ ազդեցություն ունենալ Պարսկաստանի և Թուրքիայի գործերի վրա»⁸:

Ղարաբաղին հատկապես ծանր հարվածներ հասցրեցին Աղա-Մահմեդի 1796 թ. ավերիչ արշավանքները. «Բնակիչները հազարներով հեռացան երկրից, բնակչութ-

⁴ Նույն տեղում, էջ 123:

⁵ **П. Г. Бутков**, Материалы для новой истории Кавказа, СПб, 1869, ч. I, с. 385.

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում, էջ 142-143:

⁸ «Военный сборник», 1874, кн. 2, с. 231.

յունը զգալիորեն պակասեց. ինչպես նշում են տեղի տարեցները,- գրում է Պոտտոն,- հայությունը պակասեց 40 հազար ծխով: Ողջ երկիրն իրենից ներկայացնում էր հսկայական մի ավերակ, ամենուրեք կարելի էր տեսնել ամայացած գյուղեր և լքված դաշտեր»⁹:

19-րդ դարի սկիզբը բախտորոշ եղավ Ղարաբաղի համար: 1804 թ. սկսված ռուս-պարսկական պատերազմը իր առաջին անդրադարձումներից մեկը ունեցավ Ղարաբաղում: Ռուսական բանակների հարվածներից սկզբում ընկավ Գյանջայի խանությունը: Հաջորդը Ղարաբաղն էր: Այստեղ ցանկանում ենք մեկ կարևոր մասնավորում կատարել. սկսելով Անդրկովկասը նվաճելու իր քաղաքականության իրագործումը՝ ռուսական կառավարությունը սկզբում նպատակ ուներ խաղաղ միջոցներով գրավել այդ տարածքները: Ռուս նշանավոր պատմաբան Ն. Դուբրովինն, օրինակ, հաստատում է, որ պարսից խաների կողմից ռուսական հպատակության ընդունման պատրաստակամությունը բավականին ողջունվել է ռուսական արքունիքի կողմից. «Երևանի խանի հպատակությունը և մեր կողմից վերջիններիս հովանավորությունը անչափ կարևոր է մեր և Պարսկաստանի քաղաքական հարաբերություններում,- այսպես էր հիմնավորել Կովկասի կառավարչապետ Կոնրինգը թագավորին ուղղված իր զեկուցագրում:- Վրաստանը Երևանի կողմից այն աստիճան բաց է, որ նրա սահմանները ներխուժած թշնամուն հնարավոր չէ կանգնեցնել որևէ բնական արգելքով. պարսիկները մշտապես Թիֆլիս մտել են Երևանի և Գյանջայի կողմից»¹⁰: Կառավարչապետը միաժամանակ տեղեկացրել էր ռուսաց ինքնակալին, որ «Մենք կարող ենք Երևանի խանության հաշվին մեզ զգալիորեն ապահովել ռազմամթերքով և անասնակերով, ինչպես նաև՝ լուծել մեր կենսական պահանջները»¹¹:

Բնականաբար, Ալեքսանդր կայսրն իր համաձայնությունն էր հայտնել Կոնրինգի այս փաստարկներին և պատրաստակամ էր ընդունելու Երևանի խանի հավատարմության երդումը. «Բոլոր դեպքերում՝ այդ տիրակալի հավատարմությունը Վրաստանի համար օգտակար կլինի,- նկատել էր Ալեքսանդր Առաջինը,- իսկ ներկա պայմաններում՝ այն անհրաժեշտ է»¹²: Ուստի, մենք հակված ենք կարծելու, որ Ռուսաստանը պատմական այս իրադրությունում ձգտում էր առավելապես խաղաղ ու անարյուն միջոցներով իրականացնել Կովկասի հպատակեցումը:

Ասվածը հաստատելու համար «ԸԽԸԽ»-ից բերենք ռուս գեներալ Լազարևի 1801 թ. օգոստոսի 14-ի զեկուցագրի հետևյալ հատվածը. «Գյանջայի Ջավադ խանը իր մարդուն ուղարկել է ինձ մոտ և հրամայել՝ բառացի հաղորդել ինձ, որ Գյանջան ու Վրաստանը նույնն են, և եթե Վրաստանն այժմ Ռուսաստանի մի մասն է, ապա այդ բարեկեցությունից նա ևս չի հրաժարվի, և խնդրել է ինձ, որպեսզի մի պաշտոնյա ուղարկեմ, որի հետ նա կարող է անկեղծ լինել, և որից հետո արդեն իր մարդուն կուղարկի արքունիք: Իսկ մինչ այդ, եթե ես հարկ համարեմ, ինձնից խնդրում է մի

⁹ Վ. Ա. Պոտտո, նշված աշխատությունը, էջ 8:

¹⁰ Н. Дубровин, История войны и владения русских на Кавказе, СПб, 1871, т. 1, ч. I, с. 440.

¹¹ Նույն տեղում:

¹² Նույն տեղում:

գումարտակ՝ բերդը հանձնելու համար... *և հաճույքով կհանձնի բերդի բանալիները* (ընդգծումը՝ Հ. Հ.)»¹³:

Նույն Գյանջային է վերաբերում նաև 1802 թ. հուլիսի 29-ին կառավարչապետ Կնոբինգին ուղղած Լազարևի զեկուցագրի հետևյալ տողերը. «Ինչ վերաբերում է այս երկրամասի արտաքին հարցերին, ապա պատիվ ունեմ Ձեզ հաղորդելու, որ... Գյանջայի խանը պատրաստ է մեզ օգնել թշնամու դեմ պայքարում (լեզգիների մասին է խոսքը՝ Հ. Հ.), իսկ Երևանի խանը մեր դեմ ոչինչ չի պատրաստվում ձեռնարկել»¹⁴:

Ինքնին ակնհայտ է, որ հենց այդ ճանապարհով ռուսական հպատակությունն ընդունեցին պարսկական շատ խանություններ, այդ թվում և այնպիսի նշանավորները, ինչպիսին Ղարաբաղն էր, Շաքին, Շիրվանը, Բաքուն, Ղուբան և մյուսները: Եվ եթե փոքր-ինչ խորամուխ լինենք հարցի էության մեջ, ապա պատճառն ինքնին հասկանալի կդառնա. մի կողմից առկա էր Ռուսաստանի ռազմական հզորությունը և նրա անկասելի ջանադրությունն իր սահմանների ընդարձակման համար, մյուս կողմից՝ պարսից արևելյան խանությունների պապենական թշնամությունը Կաջարական տան հետ: Իսկ դրանք, մեր կարծիքով, ոչ էական լինել չէին կարող, ինչպես և չենք բացառում պարսից խաների ընդգծված անբարյացակամությունը ռուսաց արքունիքի հանդեպ: Պարսից խաների համար լավագույն տարբերակն, իհարկե, սեփական ինքնիշխանությունը պահպանելն էր, որը, սակայն, պատմական այդ իրադրությունում ուղղակի անհնար էր: Ուստի, դեպի ռուսներն ունեցած հավատարմության փաստերն ամենից առաջ պետք է բացատրել խաների՝ իրենց ինքնիշխանությունը ինչ-որ ժամանակով երկարաձգելու ցանկությամբ:

Այդուհանդերձ, այդ ուղղությամբ ձեռնարկված քայլերն սպասված արդյունքը չտվեցին, ուստի ռուսական արքունիքը դիմեց կտրուկ միջոցների, որոնց մեջ առավել կարևորություն տրվեց ռազմականին: Մնում էր ընտրել միայն հարմար հրամանատար, որը և շուտով հայտնվեց: Կովկասը հպատակեցնելու համար ռուսական արքունիքն առաջադրեց եռանդուն ու երիտասարդ գեներալ, ազգությամբ վրացի Պավել Ցիցիանովին:

Իրենց ծրագրերի իրագործման ճանապարհին ընկած առաջին լուրջ խոչընդոտն, իհարկե, Ղարաբաղի խանությունն էր: Ռուսական արքունիքը այն համարում էր կարևորագույն հենակետ հարավային Կովկասում ամրապնդվելու համար. «Չեմ զարմանում, որ գտնվելով այստեղ ամսից ավելի ռուսական անհաղթ բանակի հետ, և արդեն վեց օր է անցել ամրոցի գրավումից, - գրում էր գեներալ Ցիցիանովը Գյանջայից Իբրահիմ խանին: - Դուք, որ արդեն մոտ հարևան եք դարձել ինձ, մինչ օրս ինձ մոտ ողջույնով չեք եկել: Ջնադ խանի (Գյանջայի խանի մասին է խոսքը՝ Հ. Հ.) հպարտությունը լվացվեց արյունով, և ես նրան չեմ խղճում... Հուսով եմ, որ թույլը ուժեղին կենթարկվի, այլ ոչ թե կերպով ձևացնել»¹⁵: Իհարկե, ռուսական զորքերի հրամանատար երիտասարդ գեներալ Ցիցիանովը այդպես կտրուկ էր արտահայտ-

¹³ АКАК, т. 1, Тифлис, 1866, с. 368.

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Վ. Ա. Պոստոլ, նշված աշխատությունը, էջ 9:

վում նաև պարսկական մյուս խաների հետ հարաբերություններում, թեպետ պետք է ասել, որ ոչ միշտ էր այդ դիրքը նրան հաջողություն բերում: Այդպես եղավ, օրինակ, Ղարաբաղում, և Իբրահիմ խանի վրա այդ սպառնալիքներն այնքան էլ տպավորություն չգործեցին:

Ռուսական հրամանատարությունն իրավիճակից դուրս գալու ելքն, այնուհանդերձ, գտավ և գտավ այն հայերի շնորհիվ: Փաստն առանձնակի ցանկանում ենք ընդգծել, որովհետև ռուսական հրամանատարությունն այս էլ որերորդ անգամ տարածաշրջանում իր քաղաքական նպատակներին հասնելու համար դիմում էր հայերի օգնությանը: Այդպես եղավ, օրինակ, Վրաստանում՝ վրաց արքայորդի Ալեքսանդրի բարձրացրած խռովության օրերին, երբ լրջորեն վտանգված էին ռուսական տիրապետության հիմքերը: Ռուսական հրամանատարությունը կոչով դիմեց վրացահայությանը և նրանց աջակցության շնորհիվ կանխեց սպառնալիքը:

Ղարաբաղում այդ ամենը կատարվեց այլ ձևով և առաջին հերթին հայ բնակչության հաշվին: «Ղարաբաղի խանության գրավումն արագացնելու համար,- գրում է Պոտտոն,- ձեռներեց մայոր Լիսաննիչը դիմեց փորձված միջոցի: Ելիզավետպոլի տնտեսությունը զարգացնելու նպատակով, Ցիցխանովն այնտեղ բերել տվեց Ղարաբաղի հայերին և այս եղանակով հասավ Իբրահիմ խանի տիրույթներում արտադրողական ուժերի խիստ թուլացմանը... Լիսաննիչը բռնությամբ իր հետ բերեց 250 հայ ընտանիքներ, որոնց նա տեղավորեց Ելիզավետպոլի նահանգում»¹⁶: Ճիշտ է, Ռուսաստանին միանալուց հետո նրանց մեծ մասը վերադարձավ իրենց նախկին բնակավայրերը, սակայն, փաստորեն, կատարվել էր հայերի բռնի գաղթեցում, և այդ մասին լռել չի կարելի: Լիսաննիչը Ղարաբաղից գաղթեցրել է 250 հայկական ընտանիքներ. ամենափոքր հաշվարկի դեպքում նույնիսկ ստացվում է 1500-2000 մարդ: Օրինակ, նույն Վ. Պոտտոյի հաստատումով, գաղթի ենթարկվածների մեջ է եղել նաև Հարություն Աթաբեկովի ընտանիքը՝ կինը և երկու ամուսնացած որդիները՝ Վանին և Հակոբը (հենց նրանց է նվիրված ռուս պատմաբանի «Ղարաբաղի առաջին կամավորները ռուսական տիրապետության շրջանում» նշանավոր գիրքը):

Ավելին, Պոտտոյի պնդումով, գաղթածների վիճակը բավականին ծանր է եղել. «Գնդապետ Կորյագինը, որն այդ ժամանակ Ելիզավետպոլի պարետն էր, աշխատում էր որևէ բան ձեռնարկել գաղթածների դրությունը բարելավելու համար, սակայն դա գրեթե անհնարին էր, քանի որ նրանց ունեցվածքն ու անասունները մնացել էին Իբրահիմ խանի ձեռքում»¹⁷:

Պետք է նշել նաև, որ իրադարձությունների հետագա ընթացքը Ղարաբաղում հոգուտ ռուսների փոխվեց այն բանից հետո, երբ հաջողվեց հպատակեցնել Աջաբիան, Օսեթիան, ճնշվեց վրաց արքայորդի Ալեքսանդրի խռովությունը: Ճիշտ է, այդ ընթացքում ռուսներին չհաջողվեց գրավել Արևելյան Հայաստանի հիմնական հենակետ Երևանի բերդը, սակայն, դրան զուգահեռ, ոչ պակաս կարևոր էր հարևան Շորապյալի խանի հպատակեցումը, իսկ Գյանջան վաղուց արդեն գրավված էր: Ուստի Ղարաբաղի հարցը ռուսների համար դարձել էր սոսկ ժամանակի խնդիր:

¹⁶ Նույն տեղում, էջ 10:

¹⁷ Նույն տեղում:

Ընդ որում, բավականին աննախանձելի վիճակում էր հայտնվել հատկապես Իբրահիմ խանը. ռուսական զորքն արդեն պատրաստվում էր շարժվել Շուշի, իսկ պարսկական սահմանի մոտ կազմ-պատրաստ կանգնած էր պարսկական բանակը: Եվ եթե պարսից զորքը մտներ Շուշի, ապա Իբրահիմին իր հին մեղքերի համար սպասվում էր կա՛մ մահապատիժ, կա՛մ էլ նվազագույնը՝ զրկվելու էր ժառանգական տիրություններից: Այս հանգամանքն էլ հենց Իբրահիմին երկար մտածելու տեղիք չտվեց. խանը ռուսական հրամանատարությանն ուղղված հատուկ նամակով հայտնեց իր հպատակությունը: Մեր կարծիքով, այս հարցում բավականին իրատեսական կարծիք է արտահայտել ռուս պատմաբան Վ. Պոտտոն: Այսպես, նկարագրելով Ղարաբաղի խանության միացումը, հեղինակն իրավացի կերպով նկատում է, որ «Մի կողմից ռուսական զենքի սպառնալիքը և մյուս կողմից Իբրահիմ խանի նկատմամբ Աղա-Մահմեդի ժամանակներից սկսած պարսից շահերի տածած անողորմ թշնամանքը, նրան բառացիորեն դրել էին մուրճի և գնդանի միջև: Նա հասկանում էր, որ իր ինքնիշխանության ժամը ավարտվել է և մնում էր հովանավորություն փնտրել կա՛մ ռուսական կայսեր մոտ, կա՛մ՝ պարսից շահի: Առաջինի մեջ նրա ընտրությունը չէր կարող կասկած հարուցել: Ռուսներն արդեն կանգնած էին նրա հողերի սահմանագլխին և սպառնում էին գրավել Շուշին: Եվ եթե դա կատարվեր, ապա պարսից շահին մնում էր կա՛մ Իբրահիմին իր հին մեղքերի համար մահապատժի ենթարկել, կա՛մ էլ՝ զրկել ժառանգական տիրություններից: Այս ամենը ստիպում էր խանին լռջորեն խորհել իրավիճակի մասին և դիմել Յիցիանովին՝ օգնության ակնկալիքով...»¹⁸:

Գեներալ Յիցիանովն էլ իրեն հատուկ գոռոզամտությամբ չհապաղեց նսեմացնել Իբրահիմի հպարտությունը. սկզբում նույնիսկ ռուս զեներալը ձևացրեց, թե առանձնակի ոգևորությամբ չի ընդունում խանի ընտրությունը. «Թեպետ հաշվի առնելով քո վարքագիծը, - գրում էր նա պատասխան նամակում, - ես չպետք է Քեզ պաշտպանության տակ առնեի պարսիկներից, որոնք իրենց սովորության համաձայն կհանեն Ձեր աչքերը, կամ էլ կկտրեին քիթն ու ականջները... ես պետք է Ձեզ հանձնեի նրանց ձեռքը և ապա հետ վերցնեի նրանցից Շուշին և Ղարաբաղը: Սակայն ենթարկվելով անհաղթ տիրակալի (խոսքն Ալեքսանդր Առաջին կայսեր մասին է՝ Ն. Ն.) գրասրտությանը, հայտնում եմ Ձեզ, որ համայն Ռուսիո Տիրակալը ներում և ընդունում է Ձեր հպատակությունը... տարեկան 8 հազար չերվոնեց վճարելու պարտավորությամբ»¹⁹: Այս ամենի դիմաց, իհարկե, կայսր Ալեքսանդրը խոստանում էր պահպանել Իբրահիմի տիրությունները և խանական իշխանության ժառանգականությունը:

Ռուսական հպատակության ընդունումը, սակայն, Ղարաբաղին խաղաղություն չբերեց: Պարսիկներն էլ իրենց հերթին չէին կարողանում հաշտվել Իբրահիմ խանի «դավաճանության» հետ, ուստի Փիր-Ղուլի խանի առաջավոր ջոկատը, շահի հրամանով անցնելով Արաքսը և շրջանցելով մայրը Լիսաննիսի ջոկատը, մոտեցավ Շուշին: Իրավիճակը գնալով ռուսների համար սպառնալից էր դառնում: Փրկությունը

¹⁸ Նույն տեղում, էջ 11:

¹⁹ Նույն տեղում, էջ 11-12:

կրկին եկավ արցախահայերից: Նույնիսկ գեներալ Յիցիանովը, որն այնքան էլ սիրալիր չէր հայերի հանդեպ, եթե չասենք ավելին, ստիպված եղավ այսպիսի կոչով դիմել Ղարաբաղի հայությանը. «Ղարաբաղի հայեր, արիացեք և պատրաստ եղեք հաղթանակներին և ցույց տվեք, որ դուք այսօր էլ նույն քաջարի հայերն եք, ինչպես առաջներում, երբ պարսկական հեծելազորի ահն ու սարսափն էիք»²⁰:

400 զինվորներից բաղկացած ջոկատը Կորյագինի հրամանատարությամբ Ելիզավետպոլից դուրս եկավ 1805 թ. հունիսի 18-ին: Մինչև Շուշի դեռևս 133 վերստ ճանապարհ կար, սակայն այդ ճանապարհին գտնվող Ասկերանի բերդն արդեն գրավվել էր պարսիկների կողմից: Եվ երբ Կորյագինը փորձեց անցնել Շահ-բուլաղ գետը, անմիջապես շրջապատվեց Փիր-Ղուլի խանի հրոսակների կողմից: Կորյագինի ջոկատի դրությունը գնալով ծանրանում էր. շարունակել ճանապարհը, նշանակում էր հայտնվել ծուղակի մեջ. մայոր Լիսաննիչից էլ օգնություն ստանալը անհնարին էր, քանի որ պաշարման մեջ էր գտնվում Շուշիում: Մնում էր մեկ ելք. հարմար տեղանք գտնել պաշտպանության համար: Սակայն տեղանքին անձանոթ ռուսների համար խնդիրը գրեթե անհնարին էր թվում: Անհնարին կլինեք, եթե, ինչպես գրում է Պոտտոն, «սպասված ելքը չգտնվեր... Կորյագինի ջոկատում էր գտնվում հայազգի երիտասարդ Վանի հարյուրապետը. այս հայը միայնակ Կորյագինին այնքան օգուտ բերեց, որքան կբերեին նրան մի քանի հարյուր հեծյալներ»²¹:

Քաջաձանոթ լինելով տեղանքին՝ Վանին հրամանատարին առաջարկեց դիրքեր գրավել մոտակա բարձունքում՝ մուսուլմանական գերեզմանատան մոտերքում: Զննելով տեղանքը՝ Կորյագինն անմիջապես տալիս է իր համաձայնությունը: Պարսիկները տեղեկանալով, որ իրենց առջև ռուսական փոքրաթիվ մի ջոկատ է, անմիջապես գրոհի են նետվում: Ռուսներին հաջողվում է մեծ զոհողությունների գնով պահել բարձունքը, թեպետ կորցրել էին զինվորների մեծ մասին: Թշնամին տեսնելով, որ չի կարողանում կոտրել ռուսների դիմադրությունը, դիմում է իր ավանդական հնարքին. ծարավի և սովի մատնել վերջիններիս: Այդ ժամանակից ի վեր ռուսների կորուսները կտրուկ աճեցին: Ինքը՝ Կորյագինն արդեն երեք անգամ վիրավորվել էր. ոտքից վիրավորվել էր նաև գումարտակի հրամանատար մայոր Կոտլյարովսկին (հետագայում ռուս նշանավոր գեներալ, Ասլանդուզի և Լենքորանի ճակատամարտերի հերոսը՝ Շ. Շ.): Կորյագինը դիմում է համարձակ քայլի. իր մոտ է կանչում պորուչիկ Լադինսկուն և հրամայում ամեն գնով վերացնել պարսկական մարտկոցները: Հրամանատարի պահանջը կատարվում է. մարտկոցները ոչնչացվում են: Սակայն ռուսները դեռ նոր էին վայելում հաղթանակի ոգևորությունը, երբ նրանց է հասնում նոր տագնապալի լուր՝ պարսից թագաժառանգ Աբբաս-Միրզայի 30 հազարանոց բանակը շարժվում է իրենց ուղղությամբ: Միակ փրկությունը մայոր Լիսաննիչին իրենց դրության մասին տեղեկացնելն էր և նրանից օգնություն ստանալը: Այդ պատասխանատու հանձնարարությունը դրվում է Վանիի վրա՝ որպես տեղանքին ծանոթ մարդու: Բազմիցս վտանգելով իր կյանքը՝ վերջինիս հաջողվում է հասնել Խրամորթ գյուղը և մեկիք Ադամի օգնությամբ նամակը հանձնել Քյաթուկի

²⁰ Նույն տեղում, էջ 13:

²¹ Նույն տեղում, էջ 15:

գյուղապետ Մելքումին՝ խնդրելով այն հասցնել Շուշի, իսկ ինքը կրկին վերադառնում է Կորյագինի մոտ:

Ռուսական ջոկատի վիճակը օրեցօր դառնում է անհուսալի: Նույն գիշերը պորուչիկ Լիսենկոն 50 զինվորների հետ փախչում է պարսիկների մոտ: «Ինչ անենք, եղբայներ,- իր մոտ հավաքված զինվորներին է դիմում Կորյագինը,- սուգով դժբախտությանը չես օգնի,- կանենք մեր գործը և կպաշտպանվենք մինչև արյան վերջին կաթիլը»²²: Այդ ընթացքում Աբաս-Միրզան, չցանկանալով ավելորդ ուժեր ծախսել, համբերությամբ սպասում էր ռուսների հանձնվելուն: Այստեղ է, որ ռուսների փրկության խնդրում կրկին մեծ դեր խաղաց Վանին. «Գնալ թշնամու դեմ չի կարելի,- խորհուրդ է տալիս նա Կորյագինին,- մեզ կոչնչացնեն առանց որևէ օգուտի: Վստահի՛ր ինձ, ես գիտեմ Ղարաբաղը ինչպես իմ հինգ մատը: Ես կտանեմ Ձեզ այն արահետներով, որտեղով դեռևս ոչ ոք չի գնացել»²³:

Կորյագինը և Կոտլարովսկին համաձայնվում են և հուսադրական հայացքով նայում քաջարի արցախցուն: Դուրս գալով գերեզմանոցից՝ ռուսները պարսիկների թալանին են թողնում ողջ գումակը, որպեսզի դրանով շեղեն նրանց և որոշ ժամանակ շահեն: Վանին գնում էր առջևից և ցույց էր տալիս ճանապարհը. ռուս զինվորներն անձայն հետևում էին նրան: Շուտով հեռվում երևում է պարսկական պահակախումբը, որը հսկում էր Ելիզավետպոլի ճանապարհը: Ռուսներին հաջողվում է անձայն անցնել նրանց կողքով, սակայն հանկարծակի հանդիպում են պարսիկ զինվորների: Կրակոցի ձայնից արթնանում է ողջ պարսկական ճամբարը:

Մինչ վերջիններս կիմանային, թե ինչն ինչոց է, ռուսներն արդեն բավականին հեռու էին և հասել էին Շահ-Բուլաղ բերդը: Վերջինս պատկանում էր Աբաս-Միրզայի մտերիմ բարեկամ Իֆիալ խանին, որն իր տրամադրության տակ ուներ 150-ից ավելի զինվոր: Հապաղել չէր կարելի. երբ լուսաբացին բացվում են բերդի դռները, ռուսներն ակնթարթորեն գրավում են այն: Խանը սպանվում է: Սակայն երկու ժամ էլ չէր անցել, երբ ողջ պարսկական բանակն արդեն Շահ-Բուլաղի պատերի տակ էր: Բերդում պատսպարված ռուսական ջոկատը հերոսաբար պաշտպանվում է: Ռուսների պաշարը գնալով վերջանում է: Այստեղ էլ ռուսներին փրկում է Վանին: Նա հասնում է մոտակա հայկական Խասապետ գյուղը, որտեղ գտնվում էր իր հայրը: Հաջողվում է որոշ քանակով հաց ձեռք բերել և կրկին վերադառնալ բերդ: Կոտլարովսկին հավասար բաժանում է այն զինվորների միջև. հրամանատարի մասնաբաժինը նույնն էր, ինչ մյուսներինը:

Պաշարման օդակը գնալով սեղմվում է. հարկավոր էր ելք գտնել: Վանիի առաջարկով 1805 թ. հուլիսի 7-ին ռուսական ջոկատը դուրս է գալիս բերդից: Թշնամուն անակնկալի չբերելու նպատակով բերդի ժամապահներին որոշ ժամանակով թողնում են իրենց տեղում: Գետն անցնելիս չորս զինվորներ իրենց վրայով անցկացնում են հրանոթը: Նրանցից երկուսը մահանում են: Այսպես ռուսները, դժվարությամբ խույս տալով մեծաթիվ հակառակորդից, հասնում են Խասապետ գյուղը, իսկ Կոտլարովսկին, շարունակելով իր երթը դեպի Մոխրաթաղ, հետո Մարտակերտ,

²² Նույն տեղում, էջ 20:

²³ Նույն տեղում, էջ 20-21:

միանում է Ցիցիանովին: Վերջինիս հրամանով զորաջոկատը պատվո շարք է կազմում, և ողջույններով են դիմավորում դաժան շրջապատումից դուրս եկած մարտիկներին: Հուլիսի 27-ին Աբաս-Միրզան Գյանջայի տակ վերջնականապես ջախջախվում և ետ է շարտվում:

Այսպես է ավարտվում 1805 թ. ռազմական արշավանքը ռուս-պարսկական պատերազմում: 1813 թ. Գյուլիստանի ռուս-պարսկական հայտնի պայմանագրով Ղարաբաղը վերջնականապես միացվեց ռուսական կայսրությանը՝ ինչ-որ կերպ թեթևացնելով հերոսական այս ժողովրդի տառապանքներն ու կրած զրկանքները:

Ռուսական հրամանատարությունը արժանիորեն է գնահատում Վանի հարյուրապետի ցուցաբերած քաջությունը և անձնագոհությունը, նրան տրվում է հատուկ վկայական, ուր մեկ առ մեկ նշվում էր նրա ծառայությունները: Վերջինս հետագայում արժանանում է Ս. Աննայի երկրորդ և Ս. Գեորգիի չորրորդ աստիճանի շքանշանների: Վանիի մյուս եղբայր Հակոբը ևս 1815 թ. Կովկասի կառավարչապետ գեներալ Ռտիշևսկի երաշխավորությամբ արժանանում է արծաթյա մեդալի: Շուտով այս իրադարձություններին հետևում է նաև Իբրահիմ խանի վերջը: Երբ Երևանի խանը մոտենում է Շուշիին, Իբրահիմը գաղտնի բանակցությունների մեջ է մտնում Աբաս-Միրզայի հետ՝ բերդը նրան հանձնելու համար: Դավադրությունը սակայն բացվում է, և գնդապետ Լիսանսկիչը, մտնելով խանի վրանը, սպանում է նրան:

Այդ ընթացքում Աբաս-Միրզան մեկ անգամ ևս փորձում է գրավել Ղարաբաղը: Նրան ընդառաջ է շարժվում գեներալ Նեբոլսինի ջոկատը, որտեղ գտնվում էին նաև գնդապետ Կորյագինը և Վանին. ղարաբաղցի զորականը կրկին կամավոր ներկայացել էր ռուսական ջոկատ: Մեջբերվող այս քաղվածքը ևս Վ. Պոտտոյից է. «Ղարաբաղցի այս զորականը,- գրում է նա,- կանգնելով ռուսական դրոշի տակ, մեր ամենահաս ուղեկիցը եղավ և ռուսական զենքի փառքի ջատագովը: Նրա հետ էր նաև եղբայրը՝ Հակոբ Աթաբեկովը»²⁴:

Այսպես են ընթացել իրադարձությունները 19-րդ դարի սկզբին Ղարաբաղում, ինչի արդյունքում հայկական հինավուրց այս երկրամասը միացավ Ռուսաստանին, և զարգացման նոր հորիզոններ բացվեցին նրա առջև:

²⁴ Նույն տեղում, էջ 35:

ԱՆԱՀԻՏ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԶԱՔԱՐԻԱ ՊԱՏՐԻԱՐՔ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

(Հայկական տպագրության սկզբնավորումը Երուսաղեմում)

Խորապես երանելի եմ համարում նրանց, որոնց աստվածների ողորմածությամբ շնորհված է կա՛մ կատարել մի գործ, որն արժանի է գրի առնելու, կա՛մ գրելու մի բան, որն արժանի է կարդալու. ամենաերանելին սակայն նրանք են, որոնց շնորհված է ն՛ մեկը, ն՛ մյուսը:

ՊԼԻՆԻՈՒՍ ԿՐՏՍԵՐ

Գրքի և տպագրության պատմությունը նաև ազգերի հասարակական-մշակութային կայացման պատմությունն է: Հակոբ Մեղապարտի ջանքերով սկիզբ առած հայկական տպագրությունը (1512 թ.) մինչև այսօր կատարում է իր պատմական առաքելությունը, որի արտահայտություններից մեկն է Սրբոց Հակոբյանց վանքում 1833 թ. Զաքարիա պատրիարք Տեր-Պետրոսյանի կողմից հիմնված Երուսաղեմի հայոց տպագրությունը:

Անշուշտ Երուսաղեմի հայկական տպագրության հարցը առնչվում է ավելի հիմնարար մի հարցի՝ Սուրբ Երկրում հայերի ավելի քան 17-դարյա ներկայությանը և գործունեությանը:

Հայ գիրքն առաջին անգամ տպված լինելով հայրենի հողից հեռու, երկար ժամանակ եղել է տպագրության իմաստով օտարների բարյացակամության և օժանդակության կարոտ: Հայկական տպագրությունը հաճախ հալածվել է, տեղից տեղ փոխադրվել: Ուստի Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքում տպարանի հիմնումը նրան պիտի տար համեմատաբար ավելի ապահով վիճակ և գործունեության ավելի մատչելի պայմաններ:

Մինչև տպագրության գյուտը Երուսաղեմի հայոց վանքի միաբանները Սուրբ վայրերի վանական խցերում ընդօրինակել են հազարավոր ձեռագրեր, որոնք այսօր Սուրբ Աթոռի ամենաարժեքավոր և մնայուն գանձն են կազմում:

Եվ այսպես, Երուսաղեմում առաջին տպարանը բացվում է ծայրագույն կառավարիչ Պողոս Ադրիանապոլսեցու հովանավորությամբ, Միաբանական ժողովի որոշմամբ 1832 թ. «ի պարծանս ազգիս հայոց»¹: Իսկ տպագրությունը սկիզբ է առնում մեկ տարի անց: Ինչպես նշեցինք, նախաձեռնողը եղել է Զաքարիա Տեր-Պետրոսյանը:

Նա ծնվել է Հին Հարք գավառի կամ Բուլանուխի (Տարոն) Կոփ գյուղում: Հայրը նրան տասը տարեկանում տանում է Մշո Ս. Առաքելոց վանք՝ կրթություն ստանալու: Այնուհետև Էջմիածնում կարճ ժամանակով աշակերտում է Ներսես Աշտարա-

¹ Մխիթարյան Խ., Համառոտ պատմություն Երուսաղեմի, Երուսաղեմ, 1867, էջ 131:

կեցուն: Հետո մեկնելով Կ. Պոլիս և այնտեղ ծանոթանալով Վենետիկի Մխիթարյան միաբանության ներկայացուցիչների հետ՝ աշակերտելու է ուղարկվում Ս. Ղազարի վանք: Մի քանի տարի անց Պոլիս գալով ներկայանում է Երուսաղեմի փոխանորդին և նրա օգնությամբ ուղարկվում է Երուսաղեմի վանք: Որպես նոր միաբան սկզբում ընդհանուր վանական ծառայության է անցնում, ապա՝ գրագրի պաշտոնով փոխադրվում է պատրիարքարան, այնուհետև ձեռնադրվում կուսակրոն հոգևորական Թեոդորոս պատրիարքի օրոք: 1820 թ. Զաքարիան նվիրակ է եղել Դիարբեքի-րում և Սասունում, հետո՝ Զմյուռնիայում, որտեղից 1826 թ. Կ. Պոլսի փոխանորդ է ընտրվում (1826-1829 թթ.)²: 1831 թ. գալիս է Ս. Էջմիածին և ձեռնադրվում եպիսկոպոս:

Երուսաղեմում տպարանի և կանոնավոր վարժարանի կազմակերպման գաղափարը Զաքարիայի մեջ հասունացել էր Էջմիածնում և հատկապես Վենետիկում աշակերտելիս: Կիպրոսում եղած ժամանակ նա գրում է Տրիեստ (Իտալիա) իր բարեկամ գմյուռնացի երևելի վաճառական Պետրոս աղա Յուսուֆյանին և խնդրում, որ նա տպագրական մի մամուլ նվիրի Երուսաղեմի Սուրբ Աթոռին: Յուսուֆյանը Երուսաղեմ է ուղարկում մի փայտե տպագրական սարք, կապարե տառեր և այլևայլ նյութեր³: Այս ամենով հանդերձ այդ շրջանում հնարավոր չի լինում սկսել տպագրական գործը մի շարք գործիքների բացակայության պատճառով:

Զաքարիան Երուսաղեմում պատրիարքական փոխանորդ նշանակվելուց հետո, 1832-ի վերջերին մեկնում է Եգիպտոս, որտեղ իր բարեկամ ակնցի մահտեսի Ալիքսան Եղիազարյանի օգնությամբ գնում է վիմագրական մի մամուլ: Նախապատրաստական աշխատանքներից հետո տպարանը սկսում է գործել 1832 թվականից:

1833-ի հունվարին տպարանը լույս է ընծայում հայերեն առաջին գրքույկը՝ «Տեսրակ աղօթամատոյց վասն ջերմեռանդ աղօթասիրաց որք կամ անձամբ կամ մտօք ներկայանան ի Սուրբ Տնօրինական տեղիսն Քրիստոսի Աստուծոյ մերոյ» վերնագրով:

Տպագրական գործը դժվարությամբ էր առաջ ընթանում. պատճառը նյութական միջոցների պակասն էր: Այդ հարցը կարգավորելու և դրանից հետո վանական վարժարան հիմնելու նպատակով Զաքարիան 1835 թ. Պողոս պատրիարք Ադրիանապոլսեցու նախագահությամբ Խորհրդականների ժողով է գումարում: Ժողովը լսելով տպարանի և վարժարանի անհրաժեշտության վերաբերյալ Զաքարիայի տված բացատրությունները՝ որոշում է գործը հաստատուն հիմքի վրա դնելու նպատակով մի կայուն դրամագլուխ հատկացնել արդեն գոյություն ունեցող տպարանին և նոր բացվելիք վարժարանին, որի բացումը որոշ ժամանակով դանդաղում էր կառող ուսուցիչների պակասության պատճառով⁴:

Ս. Աթոռի «Բնիկ» միաբան Պողոս Ադրիանապոլսեցին մի քանի այլ անձանց և կտակարարների հետ միասին իր անձնական գումարը հանձնում է տպարանի և ուսումնարանի հաստատման նպատակով «ի պարծանս Սրբոյ Աթոռոյս եւ յօգուտ ազգիս»: Այնուհետև ժողովը արձանագրում է. «Իսկ եթե ոք ի յապագա պատրիար-

² Օրմանյան Մաղաքիա, Ազգապատում, մասն երրորդ (1808-1909). Երուսաղեմ, տպ. Ս. Հակոբյանց, 1927, հ. 2554:

³ «Միոն», 1979, էջ 150:

⁴ Նշանյան Ս., Տպարան առաքելական Աթոռոյն Սրբոց Յակոբեանց Երուսաղեմի. Հարիւրամեա յօբելեանի առթիւ (1833-1933), Երուսաղեմ, 1933, էջ 4-5:

գաց եւ կառավարչաց եւ ի խորհրդականաց եւ այլ ոք եւ իցէ՝ խափանել ջանասցէ զուսումնարանն եւ զտպագրատունն, այնպիսին ինքն պարտաւոր լիցի առաջի ահեղ ատենին Քրիստոսի»։ Կնքված և ստորագրված է՝ 1835 թ. հունիսի 5, Ս. Երուսաղեմ⁵։

1836 թ. լույս է տեսնում Եղիշեի «Մեկնութիւն տէրունական Հայր մերի եւ Խաչելութեան, Թաղման եւ Յարութեան եւ Խրատ միանձանց»-ը։ Ս. Աթոռի տպարանի «վայելույ» տետրակով հրատարակված այս գործի սկզբում գետեղված գեկույցից երևում է, որ գրքում բնագրերը հանված են Ս. Աթոռի Մատենադարանի հնագույն Ճառքնտիրներից⁶։

Զաքարիան լույս է ընծայում նաև միջնադարյան հայ մատենագիրների գործերից Ներսես Լամբրոնացու «Խորհրդածութիւն Սուրբ Պատարագի»-ն (1842 թ. առաջին տպ.) Հովհաննես Կաթողիկոսի «Պատմութիւն Հայոց» (1843 թ. առաջին տպ.)։ Երկու գրքերի նախաբաններում բացատրվում է հրատարակիչ Զաքարիա պատրիարքի նպատակը՝ նոր սերնդին հիշեցնելու Հայոց պատմությունը⁷ և անփոփոխ ու անայլայլ պահելու մեր եկեղեցական պաշտամունքի առաքելադիր արարողությունը⁸։

Այս գրքերը Կ. Պոլիս հասնելով դուր չեն գալիս Աստվածատուր պատրիարքին։ Գրքերը համարվում են հռոմեականության միտված, ազատաբար գրված, գրգռիչ։ Աստվածատուրը արգելում է այդ գրքերի վաճառքը և հրամայում է փակել տպարանը։ Զաքարիան չի փակում այն և հրատարակում է ուրիշ գրքեր, սակայն նոր խնդիրներ չհարուցելու համար իր հրատարակած Հովհաննես Կաթողիկոսի «Պատմության» քննադատության ենթարկված էջը հանում է, իսկ Լամբրոնացու գիրքը թողնում նույնությամբ⁹։

1846 թ. վախճանվում է Զաքարիա պատրիարքը։ Նա այն ստեղծագործ և երախտավոր պատրիարքներից մեկն էր, ովքեր Երուսաղեմի առաքելական Աթոռին նոր շունչ ու եռանդ են հաղորդել։

Զաքարիային հաջորդում է Կիրակոս Երուսաղեմացին (1847 թ.), որը լինելով իր նախորդի գործակիցը և գաղափարակիցը՝ շարունակում է ծավալել տպագրական գործը։

1833 թվականից առ այսօր՝ ավելի քան հարյուր յոթանասուն տարիների ընթացքում այդ տպարանում լույս է տեսել հազարից ավելի անուն հայերեն գիրք՝ նվիրված իմաստասիրությանը, հռետորական արվեստին, պատմությանը, մաթեմատիկային, լեզվաբանությանը, աստվածաբանությանը և այլ հարցերի։ Դրանց հեղինակներն են գիտության և պատմության հայտնի երախտավորներ Գրիգոր Փեշտմալճյանը, Եղիազար Մուրադյանը, Ստեփան Փափագյանը, Մաղաքիա պատրիարք Օրմանյանը, Կյուրեղ Սրապյանը, Եղիշե Զիլինկիրյանը, Եղիշե պատրիարք Դուրյանը և այլք։

⁵ «Միոն», 1933, էջ 375։

⁶ Պատմագրութիւն Յովհաննէս կաթողիկոսի Ամենայն Հայոց. Երուսաղեմ, տպ. Ս. Հակոբյանց, 1843, էջ 1։

⁷ Ներսես Լամբրոնացի. Խորհրդածություն Սրբազան Պատարագի, Երուսաղեմ, տպ. Ս. Հակոբյանց, 1842, էջ 1։

⁸ Օրմանյան Մ., Ազգապատում, Գ մաս, Երուսաղեմ, 1927, հ. 2554։

⁹ «Միոն», 1933, նույններ, էջ 428։

Հատկապես գնահատելի է հայ հին և միջնադարյան մատենագրության ընտիր նմուշների գիտական հրատարակումը բազմաթիվ ձեռագրերի հիման վրա կազմված քննական բնագրերով, բացատրություններով և ծանոթագրություններով: Այդ շարքով հրատարակվել են Եղիշեի, Եփրեմ Ասորու, Հովհաննես Դրասխանակերտցու, Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու երկերը:

Տպարանի և գրապահոցի աշխատանքի զարգացմանը նպաստել են Տիրգրան Մավալանյանը, Մելքիսեդեկ եպս. Մուրադյանը, Սահակ եպս. Խապալայանը, Եղիշե եպս. Դուրյանը:

Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց տպարանի հրատարակած առաջին գրքերը կրոնական էին՝ ժամապաշտական, ծիսական՝ աղոթագրքեր, սաղմոսագրքեր, Ս. Պատարագի խորհրդատետրեր, ուխտավորների համար գրված և տեքստական սրբավայրերը ներկայացնող գովասանաց տետրեր: Տպագրվող գրականությունը ժամանակի ընթացքում դառնում է բազմաբովանդակ: Տպագրվող գրքերի թվում կան հայ միջնադարյան գրականության գանձերից՝ Եղիշե, Կորյուն, Շնորհալի, Նարեկացի, Լամբրոնացի, Շիրակացի, Տաթևացի: Կան Մուրբ Գրքի մի շարք ինքնուրույն և թարգմանական մեկնություններ, ինչպես նաև Հայոց Եկեղեցու դավանանքին նվիրված գործեր:

Երուսաղեմի հայոց միաբանությունը 1933 թ. Ուսումնական խորհրդի որոշմամբ շուրջով նշեց Սրբոց Հակոբյանց միաբանության տպարանի հարյուրամյա հոբելյանը: Պատրիարքարանի Մայր Տաճարում պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոսը օրհնությամբ է հիշում նրա հիմնադիրներին, տպարանի զարգացմանը և բարգավաճմանը նպաստած բարերարներին և նշում, որ սկզբում տպարանի նպատակը եղել է ընդհանրապես ազգի կրոնական և ազգային դաստիարակությանն օժանդակելը, իսկ մասնավորապես՝ Հայ Եկեղեցու պաշտամունքային գրականության և ուխտավորների հոգևոր մխիթարության գործը՝ այդ տեսանկյունից ներկայացնելով Սրբոց Հակոբյանց տպարանի հրատարակությունների ազգային և կրոնական նկարագիրը: Երուսաղեմի երանաշնորհ պատրիարքը աշխարհաբարի վերածելով կարդում է տպարանի հրատարակած առաջին հայերեն գիրքը և գոհություն հայտնում, որ այս տպարանից դուրս եկած գրքերի մեջ երբեք չի եղել որևէ մեկը, որը «հեռվից կամ մոտիկից շոշափած լինե՞ր անմաքուր գրականության իմաստներ»:

Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության տպարանը հաստատվել է ավելի քան 170 տարի առաջ: Զաքարիա Կոփեցին՝ տպարանի բուն հիմնադիրը, Պողոս Ադրիանապոլսցին՝ որպես հովանավոր, և Կիրակոս Երուսաղեմացին՝ իբրև Զաքարիայի գաղափարակից և գործակից, երեքը միասին սկիզբ դրեցին տպարանի գործունեությանը: Արդյունքն իրապես անգնահատելի է, և ավելի քան 170 տարվա ընթացքում Հայ Երուսաղեմի մտավոր կյանքը լուսավորող այդ ձեռնարկի գաղափարի և գործի պատիվը ՆՐԱՆՑ Է ՊԱՏԿԱՆՈՒՄ:

Ռ. Ա. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ԵՂՀ հնագիտության և ազգագրության

ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

XIX դարի առաջին կեսին ազգագրական մեծ աշխատանք է կատարել Խ. Աբովյանը (1809-1848 թթ.): ճակատագրի բերումով, դժբախտաբար, վերջինիս ազգագրական ժառանգությունը մինչև XX դարի կեսերը մնացել է անտիպ: Այն մեր օրերում ունի գիտական կարևոր նշանակություն: Դրանք Աբովյանի թե՛ բուն ազգագրական ու բանագիտական գործերն են, որ նա գրել է հատուկ նպատակադրումով, թե՛ այն ազգագրական նյութը, որը նա օգտագործել է իր գեղարվեստական ստեղծագործություններում: Խ. Աբովյանի կյանքում ազգագրությամբ զբաղվելը պայմանավորված էր նախ՝ նրա Դոբայատյան ուսումնառությամբ, երբ շփվեց ռուսական և եվրոպական ազգագրական գիտության հետ, իսկ մյուս խթանը՝ Պարրոտի և նրա խմբում ընդգրկված եվրոպական այլ գիտնականների այցն էր Արևելյան Հայաստան՝ Արարատի գագաթը բարձրանալու նպատակով: Պարրոտի հորդորանքով և խնդրանքով Աբովյանը սկսեց զբաղվել ազգագրությամբ, ընդ որում՝ նրա բոլոր ազգագրական գործերը գրվել են գերմաներեն և շուրջ մեկ դար մնացել չհրատարակված: Այս պատճառով Խ. Աբովյանի ազգագրական ժառանգությունը մնացել էր անհայտ: Միայն 1940-1950-ական թվականներին, երբ ձեռնարկվեց Աբովյանի երկերի 10 հատորյակի հրատարակումը, ազգագրական աշխատություններն առաջին անգամ թարգմանվեցին հայերեն և հրատարակվեցին:

Աբովյանի ցանկացած գործ ազգագրական անսպառ նյութ է պարունակում: Նշենք, որ, բացի գեղարվեստական արձակից ու չափածո ստեղծագործություններից, Խ. Աբովյանը զբաղվել է զուտ ազգագրական հետազոտություններով՝ անդրադառնալով ազգագրական տարաբնույթ խնդիրների:

Խ. Աբովյանի արժեքավոր գործերից մեկը 1840-ին գրած <<Ակնարկ Թիֆլիսում ապրող հայերի կյանքի և հատկապես նրանց հարսանեկան սովորությունների մասին>> ընդարձակ հոդվածն է: Այստեղ գրողը մանրամասնորեն նկարագրել է Թիֆլիս քաղաքի տոնավաճառներն ու շուկաները, առևտուրը, ներմուծվող և արտահանվող ապրանքների տեսականին, հատկապես մեծ ուշադրություն է դարձրել թիֆլիսահայոց կենցաղին, քաղաքային տարազի եվրոպականացման գործընթացին, երաժշտությանը: Ներկայացրել է Թիֆլիսի վերակառուցումը, շենքերը, շինարարության մեջ եվրոպական ոճի կիրառումը, իջևանատները, հյուրանոցները, կահույքի տեսակները ևն:

Աբովյանը նշել է, որ բավականին զարգացած էին արհեստները, մասնավորապես ստաղձագործությունը, դերձակությունը և ժամագործությունը, որոնց մեջ առանձնակի ներդրում ունեին գերմանացիները: Նա հանգամանորեն անդրադարձել է Թիֆլիսում ընդունված հյուրասիրության կանոններին, խնջույքը վարելու ձևերին, կերակուրներին ու մատուցման եղանակներին, Ներսիսյան դպրոցի ակումբին ու սեղանախա-

ղերին, կրկեսային խաղերին են: Գրողը մատնանշել է բարքերի անկումը Թիֆլիսում, բամբասախությունը կենցաղում, աղջկա ծնունդով վշտանալու սոցիալական պատճառները (մեծ չափի օժիտը) են: Այս համապատկերում Աբովյանը անդրադարձել է ամուսնության սովորություններին: Ըստ այդմ՝ հայ աղջիկը կարող է ամուսնանալ 14 տարեկանից. փեսացուի ով լինելը կարևոր չէր, միայն թե հոգսից ազատվեին: <<Ակնարկ>>-ում ներկայացված ամուսնության կազմակերպման մի քանի սովորություններից էին՝ օրորոցախազը, միայն հոր կամքով տղա և աղջիկ ամուսնացնելը, ընտրության համար առավելությունը ոչ այնքան գեղեցկությանը, որքան աշխատունակությանը տալը, կանանց և տղամարդկանց կողմից միջնորդությունների դիմելը, միջնորդների և աղջկա ծնողների միջև երկար ու բարակ խոսակցությունները՝ որպես մենախոսություն ու երկխոսություն, որոնք Աբովյանը բնորոշել է իբրև հայկական ճարտասանության ձևեր:

Գրողը անդրադարձել է օժիտ-գլխագին երևույթներին՝ ընդունելով գլխագնի գոյությունը հայ իրականության մեջ և չկարողանալով էական տարբերություն գտնել այս երկուսի միջև: Մեր ուսումնասիրություններում մերժվում է գլխագնի գոյությունը հայ իրականության մեջ¹: Այն հանգամանքը, որ հայ ընտանիքներում աղջկա ծնունդը այնպիսի ոգևորություն առաջ չի բերել, ինչպես տղային, ինքնին մերժում է գլխագնի գոյությունը մեզանում: Ինչ վերաբերում է օժիտին, ապա այն եղել է նոր կազմավորվող ընտանիքի հիմքը ապահովող գործոնը: Խ. Աբովյանը անդրադարձել է նաև **աքնեզնին** կամ **սարսիային**. դա այն գումարն էր, որը հարսը ձեռք էր բերում նշանդրեքից մինչև ամուսնություն ընկած փուլում՝ տարբեր առիթներով ստանալով դրամական նվեր և զարդեղեն: Մարմիան պատկանելու էր հարսին, ոչ ոք այն տնօրինելու իրավունք չուներ, բացի հարսից: Աբովյանը անդրադարձել է նաև **նարքոտին**, որ ամուսնական զույգերը կրելու էին պարանոցին մինչև առազաստ մտնելը, դրա կրոնամոգական դերին:

Ծիսակատարությունները ներկայացնելուց հետո հեղինակը նկարագրել է հարսանեկան տոնահանդեսը, որի մեջ կարևոր են դիտվել փեսայի ընկերների մասնակցությունը հարսանիքին և **խնամապագի** սովորության մի տարբերակը՝ փեսայի բացարձակ լուռ մնալը և նրա ընկերների սուր կատակները, որ պատանեկան ընկերակցությունների հնամենի սովորություններից էին պահպանվել: Աբովյանը կարևոր տեղ է հատկացրել փեսայի աներոջ և հարսանիքի քավորի այլաբանական զրույցներին: Այնուհետև դիտարկումներ կան ընտանեկան հարաբերությունների և աղջկա ու կնոջ իրավագուրկ վիճակի վերաբերյալ²:

<<Գյուղական տների կառուցվածքը>> հոդվածում, ելնելով իր հայրական տան օրինակից, նա հայ ազգագրության մեջ առաջին անգամ հետազոտման նյութ է դարձրել հայոց բնակելի տան ու նրա օժանդակ կառույցների ազգագրական ուսումնասիրությունը:

Նշյալ հոդվածում Աբովյանը անդրադարձել է շինականների ընտանեկան հարաբերություններին և ամուսնության հարցերին, ուր առանձնակի ուշադրության են արժանացել չխոսկանության և դրան առնչվող ավելորդ սովորությունները, սեփական

¹ Տե՛ս Ռ. Նահապետյան, Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը, Երևան, 2004, էջ 136-142:

² Տե՛ս Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, 10 հատորով, հատոր 8, Երևան, 1958, էջ 154-190 (այսուհետև՝ Խ. Աբովյան, Երկեր):

նության ժառանգման իրավահարաբերությունները, ծնողների և զավակների փոխհարաբերությունները, ավագության կարգի պահպանվածությունը, նահապետի և նրան փոխարինող ավագ որդու իրավունքները, որից երևում է, որ այրիացած մայրը **մեծ նաև** կոչումը հանձնում էր նահապետ կարգված որդու կնոջը, իսկ ինքը անվանվում էր **փոքր նաև**: Գրողը հավաստում է, որ գերդաստանում, առանց բացառության, բոլոր երեխաները քույրեր ու եղբայրներ էին համարվում: Այնուհետև ներկայացվում են կենցաղավարության ձևերը թոնրատանը և այգիներում, ինչպես նաև հյուրեր ընդունելու, նրանց առանձին սենյակներում հյուրասիրելու կարգը նմ:

Աբովյանն ուշադրություն է դարձրել կանանց ու տղամարդկանց ժամանցները կազմակերպելու եղանակներին: Ըստ այդմ՝ գյուղական համայնքները 19-րդ դ. սկզբներին պահպանում էին սեռահասակային խմբեր կազմելու սովորությունները: Նա գրում է. <<Գյուղի ինչպես մեծերը, այնպես էլ կանայք ու երիտասարդները տարբեր խմբեր են կազմում: Նրանք մեկ այստեղ են, մեկ այնտեղ. մերթ ձորում, մերթ իրենց այգում, տներում, կտուրների վրա և քիչ, աննշան ուտելիքներով՝ մեծ մասամբ միրգ ու գինի, հաճելի ժամանակ են անցկացնում: Միայն առաջինները, որպես ընտանիքի հայրեր, իրավունք ունեն այդ բոլորը հրապարակորեն և հնարավորին չափ հանդիսավոր ձևով կատարել, որին այնուհետև մասնակցում են նաև տան մյուս անդամները՝ առանց տարիքի և սեռի խտրության: Նրանք երգերով ու զվարճություններով և մի փոքր ճաշով հաճախ ամբողջ գիշերներ են անցկացնում>>³:

<<Կանայք իրենց խնջույքներն անում են մրգի մառաններում, հաճախ հենց գինու կարասի մոտ: Դրանց մեծ մասամբ ներկա են լինում նաև իրենց երեխաները>>⁴:

Այնուհետև հեղինակը նկարագրում է ժողովրդական ու կրոնական տոները և ուխտագնացություններին, հարսանեկան ու այլ տոնահանդեսներին երիտասարդների լռակյաց ընտրությունների ձևերը նմ:

Հակառակ թիֆլիսահայոց՝ Աբովյանի հայրենի համայնքներում աղջիկ ունենալը բարեբախտություն էր համարվում, որովհետև փեսա չունենալը տխուր երևույթ էր դիտվում:

Նշված հոդվածի մեջ առանձին տեղ է հատկացված Քանաքեռի բնակիչների շենքերի տեսակներին, որոնք ներկայացված են տնային գույքի ու կահույքի պարագաների բազմազանությամբ:

Ըստ այդմ՝ գրողի օրոք բնակության, մթերքների և անասունների համար կառուցվում էին 3-4 բաժնով շենքեր, որոնք մեծ մասամբ պարսպապատվում էին⁵: Թոնրատունն ամենաբարձր բաժինն էր. այն գտնվում էր շենքերի համալիրի կենտրոնում: Ելնմուտը կատարվում էր մի դռնից: Լինում էին նաև օժանդակ շենքեր, որոնք չեն նկարագրվել: Տան լուսավորությունն ապահովվում էր երդիկից: Թոնրատունն ունենում էր պատուհաններ, որտեղ իրեր էին պահվում:

Գրողը լուսամուտավոր սենյակը հյուրասենյակ է համարել, որի ծագման մասին ոչինչ չի ասել: Լուսամուտները ապակու փոխարեն թղթապատվում էին: Այս հյուրասենյակն ունենում էր օջախ և պատուհաններ: Մրա գաջասվաղը հարուստ ընտանիքներում նախշազարդվում էր: Թոնրատունը մյուս բաժանմունքների հետ կապող դռներ չէր ունենում: Մառանը սառն էր պահվում, որպեսզի բնամթերքները լավ պահ-

³ Խ. Աբովյան, Երկեր, հ. 10, Երևան, 1961, էջ 88:

⁴ Անդ, էջ 89:

⁵ Տե՛ս անդ, էջ 59-96:

պանվեն: Այստեղ երբեմն տեղի էր ունենում հյուրասիրություն, որպեսզի հրավիրյալը ազատ զգալով օգտվեր մրգերից: Աբովյանի հայրը հենց այսպես է հյուրասիրել Ֆրիդրիխ Պարրոտին:

<<Գյուղական տների կառուցվածքը>> հոդվածը, որ գրվել է գերմաներեն, Պ. Հակոբյանի կարծիքով, ընդարձակ աշխատություն է եղել. դրանից կորել են բազմաթիվ ազգագրական նկարագրություններ, որոնք Աբովյանը հանձնած է եղել Հաքստհաուզենին⁶:

Խ. Աբովյանը ազգագրական ուշագրավ տեղեկություններ ունի իր հիշատակարանում և դորպատյան օրագրերում: Հիշատակարանում արծարծված հարցերն են. պարսկական տարազ կրող հայ իշխանի կենցաղավարությունը, հյուրասիրության կարգը, Աբովյան գերդաստանի ավանդական ուխտագնացությունները Ս. Էջմիածին, նրանց և կաթողիկոսի կապերը, նվիրատվությունները վանքին, Աբովյանների այգուց օտարների օգտվելու հանգամանքները, կաթողիկոսական հանդերձավորման նկարագրությունը, հայրապետական ընդունելությունների կարգը, միաբանների ճաշկերույթը, քանաքեռցիների տարազների մասնակի նկարագիրը, պարսիկ դերվիշի և քրդերի կրոնական հայացքները ևն:

Դորպատյան օրագրերը գրվել են 1830-ական թթ.: Գրողի ուսանողական կյանքից և իր ուսուցիչների հետ ունեցած հարաբերություններից զատ ներկայացված են Գերմանիայի մտավորականների ընտանեկան կենցաղը և քաղաքային կյանքը: Աբովյանը, տարիներ շարունակ պարբերաբար այցելելով իր ուսուցիչների տները, ծանոթացել է նրանց կենցաղին, նիստուկացին ու նկարագրել դրանք անմիջական տպավորություններով: Այդ ընդարձակ օրագրի մեջ տեղ են գտել ամուսնության, հարսանիքի ու խնջույքների, ծննդյան տարելիցներին նվիրված կերուխումի, կնոջ և տղամարդու պատշաճ փոխհարաբերությունների, երեխաների դաստիարակության, առատաձեռն հյուրասիրությունների, հուղարկավորության ծեսերի ու սովորությունների, տոների և բազմաթիվ այլ երևույթների նկարագրություններ: Աբովյանը գրառել է նաև իր ճանապարհորդական տպավորությունները: Օրագրում տեղ են գտել եվրոպական ճաշատեսակների և մատուցման ձևերի, քաղաքային տարազների, շենքերի, փոխադրամիջոցների, ժողովրդի զբաղմունքների բնութագրերը ևն:

<<Հայոց եկեղեցական և ժողովրդական երաժշտություն>> հոդվածում⁷ Աբովյանը մեզանում առաջին անգամ քննարկեց հոգևոր և ժողովրդական երաժշտության խնդիրները՝ իրավացիորեն նկատելով, որ դրանք ոչ միայն չեն հակասում իրար, այլև նույն ժողովրդական ստեղծագործությունն են. պարզապես հոգևոր երաժշտությունը հարմարեցված է եկեղեցական ծեսերին ու արարողություններին: Հետագայում Խ. Աբովյանի այս թեզը զարգացրեցին Կարա-Մուրզան և հատկապես Կոմիտասը:

Գրողը համառոտ նկարագրել է ռուսական իջևանատները: 1840-ին դրանք ունեցել են հետևյալ պատկերը. երկթեք կտուրներով շենքերը հենվում էին պուների վրա: Դրանցից յուրաքանչյուրը միանգամից ընդունում էր 50-60 սայլ՝ բեռներով ու ձիերով հանդերձ: Կային նաև երկհարկանի իջևանատներ: Հանգամանորեն նկարագրվել է իջևանատների նիստուկացը, հյուրեր ընդունելու և ճանապարհելու եղանակները, իջևանատների բարքերը, փոխհարաբերությունները, որոնցով հստակ պատկերացում

⁶ Տե՛ս անդ, էջ 404:

⁷ Տե՛ս անդ, էջ 105-113:

է տրվում XIX դարի առաջին կեսի ռուսական իջևանատների մասին: Այսպես՝ անկողին չէին հրամցնում, քնում էին որմնաթախսերին, աթոռներ հազվադեպ էին գտնվում: Ռուսական վառարանի կտուրը ընտանիքի քնելատեղն էր: Իջևանատան տնտեսությունը կանայք էին վարում: Իջևանատունը հյուրերին մատուցում էր կերակուրներ և թեյ: Ուտելու բոլոր ամանները փայտից էին: Մարդիկ ուտում էին ամանից՝ ձեռքով կամ գդալով: Ուտելու պահին ներս մտնողը պետք է արտասաներ՝ <<աղ ու հաց>>, իսկ թեյի ժամանակ՝ <<թեյ ու ջուր>>: Լուսավորելու միջոցը կեչու փայտն էր, որի բարակ ձողիկները վառում էին աշտանակի մեջ⁸:

Խ. Աբովյանի <<Քրդեր և եզդիներ>> աշխատության <<Քրդերը>> հատվածը ներկայացնում է այդ ժողովրդի կյանքը, սովորույթները, կրոնը, զբաղմունքները: Անասնապահությունը նկարագրելիս հեղինակը նշել է, թե քրդերի հոտը ձմռանը հայերն էին պահում: Արևելահայաստանում այդ ձրիակերությանը վերջ տրվեց պետության միջամտությամբ: Քրդերի նստակեցությունն Արևմտահայաստանում, հեղինակի հաղորդմամբ, սկսվել է XIX դ. սկզբին:

Աբովյանը նկարագրել է քրդերի առևանգմամբ ամուսնության սովորությունը, ժողովրդի բարքերը ևն: Իսկ <<Եզդիներ>> բաժնում ներկայացրել է այդ ժողովրդի կենցաղը և կրոնը, որ խառնուրդ է քրիստոնեության, մահմեդականության ու եբրայական հավատալիքների: Նա նշում է, որ եզդիների պատկերացմամբ՝ գողությունը մեղք չէ, որովհետև ծագում է Քրիստոսի՝ մի մեխ գողանալու պատմությունից, որ եզդիներն են կատարել⁹:

Խ. Աբովյանը առաջին անգամ հետազոտման նյութ դարձրեց քրդերի և եզդիների կենցաղի մի շարք ոլորտների ուսումնասիրությունները: Քաջ տիրապետելով քրդերենին և բազմիցս հյուրընկալվելով քրդերի ցեղային առաջնորդների վրաններում՝ նա առատորեն գրառեց ազգագրական ու բանահյուսական նյութեր: Գրողն անդրադարձավ արյան վրեժի սովորույթին, որը չափազանց կայուն պահպանվել էր քրդերի ու եզդիների մեջ XIX դարի առաջին կեսին: Արյան վրեժի սովորույթը իր արմատներով աղերսվում է հանգուցյալների պաշտամունքի հետ, սերում է խոր հնադարից: Խ. Աբովյանը ուսումնասիրեց քրդերի բանահյուսական ժանրերը, երգերը՝ նկատելով, որ դրանց հիմքում ընկած է քրդերի առօրյա կենցաղը: Նրա կարծիքով, յուրաքանչյուր քրդուհի ի ծնե ստեղծագործող է և երաժիշտ: Նա մանրամասնորեն քննարկեց քրդերի և եզդիների մեջ պահպանված տոհմատիրական շրջանի սովորությունները, որոնցից էր կնոջը, հատկապես մեծ մորը հատկացվող տեղն ու դերը, ինչն արմատներով աղերսվում է մայրիշխանության հետ: Աբովյանը փաստորեն վեր հանեց այդ ժողովուրդների ազգագրական ու բանահյուսական նկարագիրը: Նրա հրապարակումները մեծ հետաքրքրություն առաջացրին քրդերի ու եզդիների հանդեպ Եվրոպայում, որով այսօր իրավամբ Աբովյանը համարվում է այդ ժողովուրդների ազգագրության ու բանահյուսության հիմնադիրը:

Խ. Աբովյանի ազգագրական ժառանգության զգալի մասը ցրված է նրա գեղարվեստական երկերում: Այդ տեսակետից առանձին ուշադրության է արժանի <<Թիֆլիզու հայոց հանգստարանը>> պատմվածքը: Այստեղ մանրամասնորեն ներկայացված են հուղարկավորությունը, սգալու ձևերը, սգո հագուստները, ինքնախարազանման, կո-

⁸ Տե՛ս անդ, էջ 323-324:

⁹ Տե՛ս Խ. Աբովյան, Երկեր, հ. 8, էջ 243-278:

ծելու, երեսին հող քսելու, բացականչություններ անելու սովորությունները են: Կարելի է ասել, որ պատմվածքը ազգագրական ամբողջական մի թեմա ընդգրկող գործ է¹⁰:

Հեղինակի գեղարվեստական արձակի մեջ առհասարակ տեղ են գտել հայ ժողովրդի զբաղմունքների՝ երկրագործության, այգեգործության, բերքահավաքի ու կալսելու, անասնապահության, որսորդության վերաբերյալ նկարագրություններ: Կենցաղից ներկայացված են բնակարանները, զգեստը, զարդերը, ասեղնագործությունն ու կահույքը, փոխադրամիջոցների տեսակները, զենքերը, երաժշտական գործիքները, կերակուրները են: <<Վերք>>-ում և այլուր հեղինակն առանձին ուշադրություն է դարձրել ժողովրդի մարզական խաղերին, մասնավորապես ձիով մականախաղերին, գնդակախաղերին: Ժողովրդական տոները նույնպես եղել են Աբովյանի ուշադրության կենտրոնում. լուրջ գործ է Օաղկավանքում Վարդավառի պատկերումը: Հոգևոր մշակույթի առումով նա նյութեր ունի կենդանիների, հողի, ջրի, քարի, արևի, չար ու բարի ոգիների, վիշապների, քաջքերի պաշտամունքների վերաբերյալ:

Ինչպես Բժշկյանը, Խ. Աբովյանն էլ հայ ընթերցողին ծանոթացնելու նպատակով նկարագրել է տարբեր երկրների սովորույթները, որոնք քաղել է իր ժամանակի տպագիր գրականությունից: Դրանք զրույցներ են, որ ներկայացնում են հռոմեացիների, հույների, անգլիացիների, ավստրիացիների, ռուսների, հնդիկների և այլ ժողովուրդների հնագույն ու միջնադարյան պետական վերնախավերի և առանձին անձանց ցոփ բարքերը, շվայտությունները, կերուխումի համար հատկացվող վիթխարի ծախսերը, կաշառակերության ձևերը, խրախճանքներին հագուրդ տալու համար կազմակերպվող մարզական մրցապայքարի ձևերը, սաղիստական սովորությունները, աշխարհահեռակ ժլատների կյանքն ու կենցաղը, խաղամոլությունը, ընտանեկան բարքերը են:

Այս բոլորից պարզ երևում է, որ Խ. Աբովյանը հայ և օտար ժողովուրդների ազգագրությամբ զբաղվել է եվրոպական տիպի գիտնականի մակարդակով ու բարեխղճությամբ: Նա այդ գրառումները կատարել է Հաքստհաուզենի, Պարբոտի, Վագների և այլոց խնդրանքով ու խորհրդով, ինչը հետո դարձել է գրողի զբաղմունքներից մեկը: Վարժվելով բանահավաքի ծանր գործին՝ Աբովյանն ի վերջո հանգել է այն հետևությանը, որ, ճանաչելով իր ժողովրդի կենցաղը, պետք է անդրադառնալ նրա վերափոխմանն ու քաղաքակրթմանը: Այդ բանի առհավատյան <<Հայաստանի և հայ ժողովրդի տնտեսական ու կուլտուրական վիճակը բարելավելու ուղիների մասին>> դիմում-գրությունն է, որը գրել էր Մոսկվայում 1836-ին՝ ռուսական կառավարությանը ներկայացնելու համար: Դա ինքնին մի ծրագիր էր՝ Արևելահայաստանը տնտեսական ու մշակութային առումներով ոտքի հանելու, արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը առաջադիմական հիմքերի վրա դնելու, նոր մասնագետներ պատրաստելու, ինստիտուտ հիմնելու համար են: Ըստ այդմ՝ նա համառոտ նկարագրել է գյուղատնտեսության ճյուղերն ու տեխնիկայի հետամնացությունը: Նա բառացիորեն գրում է. <<Էլ ինչո՞ւ զարմանալ, երբ 30-40 ընտանիքից բաղկացած մի գյուղ ի վիճակի է ամենաշատը միայն 5-6 գութան պահել և դաշտ ուղարկել, և սրանք իրենց հերթին այնքան վատորակ են, որ հարկավոր է լինում ամենաքիչը 10-12 եգ լծել և 5-6 բանվոր (հոտաղ - Ռ. Ն.) բանեցնել, և որովհետև ո՛չ լծկան անասունները, ո՛չ էլ օրավարձը էժան չեն, ապա, կարծում եմ, պարզ է, թե որտեղից է առաջանում այդ չքավորությունը

¹⁰ Տե՛ս Խ. Աբովյան, Երկեր, հ. 4, էջ 40-46:

և որտեղից՝ հաճախակի սովը»¹¹:

Այնուհետև գրողը նկարագրում է վարուցանքի ժամանակ անհրաժեշտաբար կազմակերպվող կոլեկտիվ աշխատանքը. <<Հարկավոր է, որ 6-8 ընտանիքներ միանան միմյանց հետ,- որոնցից մեկը հաճախ կարող է տրամադրել իր միակ բանվորին, իսկ մյուսն՝ իր միակ եզը,- մի լրիվ գութան սարքելու համար: Եվ այսպիսով, մշակում են նրանք իրենց դաշտերը հերթով, որոշ աշխատանքային օրերի: Ով ավելի շատ մարդ կամ անասուն կտրամադրի, նա էլ ավելի մեծ բաժին կստանա բերքից, այնպես որ, եթե մեկին բաժին է հասնում 10 գութանային աշխատանքային օր, ապա նա առաջին կարգի երկրագործ է համարվում: Շատ չքավորներ պետք է բավականանան երկու երեք աշխատանքային օրով և ուրիշ միջոցով իրենց գլխի ճարը տեսնեն»¹²:

Այնուհետև գրողը մանրամասնորեն նկարագրում է շատ ավելի վատ և խղճուկ տեխնիկական միջոցները, շեշտում ծանրաշարժ սայլի օգտագործման աննպատակահարմարությունը, որից գյուղը ունենում էր ամենաշատը 4-5 հատ: Նա ցավով նկատում է, որ շարունակվում է նահապետական եղանակով կալսումը, իսկ գյուղացիները գաղափար անգամ չունեն կալսիչ ու քամհար մեքենաների մասին, որի պատճառով հացահատիկի բերքահավաքն ու զտումը ընթանում են կորուստներով ու շատ երկար¹³:

Գրողը կարևորում է ոչ միայն իրենց դարն ապրած գյուղատնտեսական գործիքներն ու վարման եղանակները առաջնակարգ տեխնիկայով ու մեթոդներով փոխարինելու անհրաժեշտությունը, այլև առաջարկում է գիտականորեն ուսումնասիրել տարբեր հողատեսքերի հատկությունները և ըստ այդմ որոշել, թե դրանց վրա ինչ մշակաբույսեր է նպատակահարմար աճեցնել: Նա կարծիք է հայտնում, որ Հայաստանում կարելի է խրախուսել մետաքսի, բամբակի, կանեփի, կտավատի, ծխախոտի, բուսական ներկերի արտադրությունները¹⁴:

¹¹ Խ. Աբովյան, Երկեր, հ. 8, էջ 82-95:

¹² Անդ, էջ 86-87:

¹³ Տե՛ս անդ, էջ 87:

¹⁴ Տե՛ս անդ, էջ 90-91:

ՌԱՖԱՅԵԼ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՈՍԿԵԴԱՐԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԵԱՆ՝ ՄԱՍԻԿՈՆԷԻՑ ՈՒԽՏԻ ՎԵՐԱԾՆՈՂՆ ՈՒ ՄՇԱԿԸ

1932 թ. Փարիզում կայացած ՀՅԴ 12-րդ Ընդհանուր ժողովին Նժդեհը մասնակցում էր իբրեւ Բուլղարիայից ընտրուած պատգամաւոր, ուր նա առաջարկեց քննարկել երեք հիմնական հարց.

ա) ձգտել, որ գաղութահայութիւնը դառնա զինական գործօն Հայաստանի ինքնապաշտպանութեան գործում,

բ) կազմակերպել հայ երիտասարդ սերունդը ապակուսակցական հողի վրայ,

գ) բոլոր ուժերը կենտրոնացնել հակաթուրքական ճակատում¹:

Համագումարի որոշումով 1932 թ. վերջին, որպէս ՀՅԴ գործիչ, Նժդեհը մեկնեց ԱՄՆ եւ 1933 թ. յունուարի 14-ին հիմնեց Յեղակրօն Ուխտերը, որը նա թէւ ՀՅԴ 12-րդ ժողովի որոշմամբ մտադիր էր կազմակերպել «ապակուսակցական հողի վրայ», բայց կուսակցութեան ղեկավարութեան ջանքերով ստիպուած եղաւ համաձայնել, որ կառոյցը կոչուի «ՀՅԴ Յեղակրօն ուխտեր», որը 1941 թ. յուլիսի 3-ին անուանափոխուեց «Հայ երիտասարդաց դաշնակցութիւն»: Յեղակրօնութիւնը հիմնելու նախագիծը եւ գաղափարական սկզբունքները նա ամփոփ կերպով ներկայացրել էր դեռեւս 1927 թ. Սալոնիկում լոյս ընծայած «Որդիների պայքարը հայրերի դէմ» ծրագրային աշխատութիւնում, ապա Սոֆիայի «Խոռովք» ամսագրում 1932 թ. տպագրուած «Յեղակրօնութիւնն իբրեւ յաղթանակի գորոյթ» յօդուածում, ինչպէս նաեւ՝ «Յեղի ոգու շարժը» գրքոյկում:

Խօսելով Յեղակրօն շարժումը սկզբնաւորելու անհրաժեշտութեան մասին, Գ. Նժդեհը գրում է, որ այդ կազմակերպութիւնը նա ստեղծել էր.

ա. Պարտաւորականութեամբ տառապող գաղութահայութեան՝ յատկապէս երիտասարդ հատուածին հոգեփոխելու, նրան ազգային գիտակցութիւն, ուժ ու վստահութիւն ներարկելու, «որով անհայրենիք հայութիւնը հոգեւոր զրահ կը հագնի՝ օտար միջավայրերի այլասերիչ ազդեցութիւններին յաջողապէս դէմ դնելու համար» («Յեղակրօնութեան Հաւատամքը» աշխատութիւնից):

բ. «Քէմալական իշխանութեան հաստատման առաջին իսկ օրերից... Թուրքիայում կատարուած ցեղասպանութիւնն արդարացնելու կամ ծայրայեղ դէպքում հասկանալի դարձնելու... թուրքերի հակահայկական քարոզչական արշաւի» դէմն առնելու.

գ. «Հայկական սպանդին հետեւող բարոյական եղեռնի՝ հայերի վարկաբեկմանը» դիմակայելու՝ իբրեւ ինքնապաշտպանական քայլ.

¹ ՀՀ ԱԱՆ արխիւ, ԿԳՖ, գ.11278, հտ. 2: Հմմտ. Ռաֆայել Համբարձումեան, Գարեգին Նժդեհ, Կենսագրական յաւելումներ, անտիպ գրութիւններ ու խորհրդածութիւններ., Երեւան, 2005 թ., էջ 264:

դ. Հայկական հին կուսակցությունների կողմից Հայոց դատից հրաժարուելու եւ Թուրքիային մերձենալու մտայնութեանը «ո՛չ» ասելու եւ հայութեանը «Թուրքիայից ունեցած տարածքային պահանջներին տէր դարձնելու» նպատակով²: Ընդ որում, ինչպէս ամերիկեան թերթերից քաղած մեջբերումների վկայակոչումներով Աւօն է գրում, Նժդեհը հայամէտ քարոզչութիւն է իրականացնում նաեւ «Նիւ Եորքի, Փրովիտենսի, Պոսթընի, Պըֆլոյի, Տիթթոյիտի, Սէնթ Լուիզի, Համիլթընի, Կոլտի, Ֆրեզնոյի, Լոս Անճելըսի, Սան Ֆրանցիսկոյի, Թորոնթոյի, Սէնթ Քաթերինսի եւ այլ վայրերու ամերիկեան մամուլի էջերէն»³, որոնք տեղեկատուութիւններ եւ յօդուածներ են հրապարակում նրա բանախօսութիւնների եւ գործունէութեան այլ բնագաւառների մասին:

1933 թ. յուլիսի 16-ին Բոստոնի «Հայրենիք» ամսաթերթի սրահում անցկացուած՝ կազմակերպութեան առաջին ներկայացուցչական ժողովի (ուր 8 շրջաններից հաւաքուած էր մօտ 40 երիտասարդ) որոշումով 1934 թ. յունիսի 1-ից 3-ը, դարձեալ «Հայրենիք» սրահում, Գարեգին Նժդեհի նախագահութեամբ (նաեւ վարում էր ժողովը) անցկացուեց ՀՅԴ Յեղակրօն ուխտերի անդրանիկ համագումարը (ներկայ էին 40 կազմակերպութիւնների («Ուխտերի») ընտրեալ ներկայացուցիչներ): «Յեղակրօն Ուխտերէն առաջ- գրում է «Հայրենիք» ամսագիրը,- Ամերիկայի կարգ մը քաղաքներու մէջ ունէինք «Հայորդիներ», «Ապրիլեան սաներ» եւ զանազան անուններով պատանեկան ու երիտասարդական խումբեր: Յունիսի 1-ի համագումարին գլխաւոր նպատակը եղաւ ցան ու ցրիւ բոլոր այդ երկսեռ խումբերն իրար մօտ բերել... Տեղեկագիրը կ'ըսէ նաեւ, որ մինչեւ այժմ կազմուած են 44 ուխտեր՝ աւելի քան 1500 անդամներով⁴ ...

Ժողովը յունուարի 14-ը հռչակեց ցեղակրօնների օր, օգոստոսի 10-ը՝ «Դրօշակի օր», Բարսեղ Կանաչեանի եւ Ժորժ (Գեորգ) Կառվարենցի «Յառաջ նահատակ» երգը՝ ցեղակրօնների ժամանակաւոր քայլերգ, «Հայրենիք» շաբաթաթերթի անգլերէն տարբերակը (Hairenik Weekly (Հայրենիք Ուիքլի) յայտարարուեց ցեղակրօնների պաշտօնական շաբաթաթերթ: Համաժողովը ընտրեց Յեղակրօն ուխտերի առաջին Կեդրոնական վարչութիւնը: Կեդրոնական վարչութեան անդամներ ընտրուեցին «Արա Անլեան (Եունիըն Սիթի), Խաչիկ Մ. Պոզոյեան (Պրաքթըն), Ասատուր Կիրակոսեան (Ուստը), Յակոբ Յակոբեան (Մալպորո), Նազելի Իսպիրեան (Շիքակո) եւ Տիգրան Մուրատեան (Տիթթոյիթ): Եօթերորդ անդամի մը ընտրութիւնը վերապահուեցաւ Գալիֆոռնիային եւ ընտրուեցաւ Գարեգին Ռոստիկեանը: Կեդրոնական վարչութեան իբրեւ անդրանիկ ատենապետ գործի գլուխ անցաւ... Ասատուր Կիրակոսեան: Կեդրոնական վարչութեան կից իբրեւ խորհրդական նշանակուեցան Համաստեղ եւ Յովի. Տէր-Յովհաննէսեան, իսկ մնայուն գործադիր քարտուղար ընտրուեցաւ Ճէյմս Մանտալեան»⁵:

Այսպիսով՝ ցայսօր գործող Հայ Յեղափոխական Դաշնակցութեան երիտասարդական կազմակերպութիւնը հիմնել է Գարեգին Նժդեհը⁶:

² Գ. Նժդեհ, Ինչո՞ւ ստեղծուեց ցեղակրօն շարժումը, Գարեգին Նժդեհ, Հատընտիր, 2001 թ., էջ 312-315:

³ Աւօ, էջ 240:

⁴ «Հայրենիք» ամսագիր, 1934, թիւ 9, յուլիս, էջ 155:

⁵ Կարօ Գեորգեան, Ամէնուն տարեգիրքը, Պէյրութ, 1963 թ., Ժ տարի, բացառիկ, էջ 417-418:

⁶ Աւելի մանրամասն տե՛ս Կարօ Գեորգեան, Ամէնուն տարեգիրքը, 1963, էջ 413-423:

«Գ. Նժդեհ... իր խօսքին ուժգնությամբ,- գրում է Կարօ Գեորգեանը,- ստեղծեց համատարած ու յեղաշրջող խանդավառություն: Օտարանալու վտանգին ենթակայ իրենց ցեղային արժանաւորութեան անտեղեակ եւ ազգային ոգիի, շունչի ու ինքնասիրութեան կարօտ հազարաւոր երիտասարդներ զանգուածօրէն ենթարկուեցան անօրինակ հոգեփոխութեան մը, որ լոյսի, յոյսի ու հաւատքի նոր հորիզոններ կը բանար իրենց առջեւ: Գ. Նժդեհ, հայ ցեղի ինքնություն մեծութիւնն ու անփոխարինելի հմայքը կը դաւանէր իբրեւ գլխաւոր խարիսխը մեր ժողովուրդի յաւերժական գոյութեան: Իր ցեղաշունչ պատգամները, զորս կը բանաձեւէր միշտ իր ճառերուն իբրեւ առանցք, երբէք չունեցան այլամերժ արտայայտութիւն եւ այլ ցեղերու հանդէպ արհամարհոտ խորք ու բովանդակութիւն... Ինչ որ Հայ Երիտասարդաց Դաշնակցութիւնը կը բնորոշէ այսօր իբրեւ հայադրօշմ, հայաշունչ եւ խանդավառ կազմակերպութիւն, արդիւնքն է երեսուն տարիներ առաջ Գ. Նժդեհի ցանած այդ հարազատ սերմերուն, արդիւնքն է այն գիտակցութեան ու հաւատքին, զորս կրցաւ ան տիրաբար ներշնչել իր հմայիչ խօսքին ունկնդիր հազարաւոր երիտասարդներուն: Երեսուն տարիներ յետոյ, այսօր ալ, Հայ երիտասարդաց Դաշնակցութիւնը երախտապարտ է իր հիմնադիր եւ մեծանուն ուսուցչին՝ Գարեգին Նժդեհին, որ այնքան հիմնական ու հրաշալի գործ տեսաւ Ամերիկայի մէջ 1932-1934 թուականներուն»⁷:

Գ. Մելիտենցու խօսքերով, ազգային, քաղաքական եւ մշակութային գործիչներից շատերն էին այդ ժամանակ այցելում ԱՄՆ, բայց «Նժդեհն էր, որ ցեղաշունչ խօսքով կրցաւ Ամերիկայի մէջ ծնած ու մեծցած նոր սերունդը կազմակերպել ՀՅԴ դրօշին տակ»⁸:

Նժդեհ մէկ տարւում մէջ իրարու մօտ բերաւ, հոգեկան կապով իրարու շողկապեց աւելի քան 2000 երիտասարդներ⁹՝ առանց հասկնալու անոնց լեզուն (*անգլիախօս էին - Ռ. Հ.*), եւ առանց հասկնալի դառնալու անոնցմէ¹⁰...

Յակոբ Սիրունին ՀՀ ԱԱՆ դիւանում պահպանող «Գարեգին Նժդեհի եւ Ցեղակրօնութեան մասին» ցուցմունքի մէջ գրում է, որ ՀՅԴ ԱՄՆ Կենտրոնական կոմիտէի հրաւերով 1933 թ. այդ երկիր է ժամանում Նժդեհը, որը տեղի դաշնակցական կազմակերպութիւնների մէջ մեծ խանդավառութիւն է առաջացնում: Նա սկսում է հիմնել երիտասարդական կազմակերպութիւն, որն անուանում է «ցեղակրօնութիւն»: Ամերիկայի ո՛ր քաղաքում որ լինում էր նա, տեղերում հիմնում էր այդ կազմակերպութեան մասնաճիւղ: Սիրունին նշում է, որ Նժդեհը ԱՄՆ-ում աշխատում էր երեք ուղղութիւններով.

ա. Քարոզում էր դաշնակցութեան գաղափարներ եւ Դաշնակցութիւն, ոգեշնչում էր տեղական կոմիտէները կամ հիմնում էր նորերը:

բ. Դրան զուգահեռ, նա աշխուժացնում-վերակազմաւորում էր թոյլ գործող մասնաճիւղերը:

գ. ԱՄՆ-ի գրեթէ բոլոր հայաշատ քաղաքներում, ուր գործում էին Դաշնակցութեան կոմիտէներ կամ կային որոշ թվով հայ երիտասարդներ, հիմնում էր կազմա-

⁷ Կարօ Գեորգեան, Ամենուն տարեգիրքը, 1963, էջ 414-415:

⁸ Աւօ, Նժդեհ, էջ 465:

⁹ Ս. Քարէնցի վկայությամբ՝ 60 ցեղակրօն կազմակերպութիւններ («ուխտեր»)՝ 2500 անդամներով, Աւօ, էջ 514:

¹⁰ Յովակիմ Խուշպուլեան: Տե՛ս Աւօ, Նժդեհ, էջ 508:

կերպության մասնաճիւղեր¹¹:

Ղ. Զատիկեանը վկայում է. «Երբ կը բանախօսէր, իր աջ ձեռքը սրբտին վրայ կը դնէր»¹²:

...Սակայն իր ճառերի թողած ազդեցութեան եւ ուժի մասին ամենակարճ բնորոշումը տուել է հէնց ինքը՝ գրելով. «Կատարեալ դեկավարը սիրտ է դնում իր ամէն խօսքի մէջ, ահա թէ ինչու էթէ կտրէք նրա խօսքերը՝ նրանից արիւն կը կաթի...»:

1941 թ. յուլիսի 3-ին ՀՅԴ Ցեղակրօն ուխտերի Չիկագոյի պատգամաւորական 8-րդ ժողովը, նկատի առնելով, որ ԱՄՆ-ը Գերմանիայի դէմ պատերազմի մէջ է եւ Դաշնակցութեան հակառակորդները Ամերիկայի պետական ու այլ շրջանակներում ցեղակրօն ուխտերը հռչակել էին նացիստական ցեղամոլութեան դաւանակից կամ գործակից, իսկ «Գերմանիոյ դէմ մղուող պատերազմի այդ օրերուն, նման զրպարտութիւն անախորժ անդրադարձ միայն կրնար ունենալ կազմակերպութեան վարկին եւ անոր գործունէութեան վրայ», աւելի քան հինգ ժամ տեւած վիճաբանութիւններից յետոյ որոշեց անուանափոխուել «Հայ երիտասարդաց դաշնակցութիւն»¹³:

«Գերազանցօրէն հայկական է ցեղակրօնութեան գաղափարը,- գրում էր Նժդեհը,- այդ դաւանանքը որեւէ հանգիստութիւն չունի այլ վարդապետութիւնների հետ»¹⁴:

«Հայը Հայաստանից դուրս, ենթակայ է վատասերումի: Այդ չարիքի դէմ պայքարել հնարաւոր է միայն ցեղային արժէքների, առաքիւնութեանց եւ սրբութիւնների խոր ճանաչումով ու վերապրումով,- մի բան, որ հիմնաւորեցի եւ անուանեցի Ցեղակրօնութիւն: Դրա նպատակն է՝ անհայրենիք հայութեանը հոգեւոր ու քաղաքական անտուն-անտիրութիւնից փրկելով, դարձնել հայրենաստէր: Դա հայրենաստիրական շարժում է, որի մէջ վերանորոգւելով միայն պիտի միանան հայութեան բոլոր հատուածները» (*Ինքնակենսագրութիւն*):

Մէկ այլ առիթով նա գրում է. «Քանի որ գաղութահայութեան ամենամեծ զանգուածն ապրում է ԱՄՆ-ում, որտեղ մեր սերնդին ամենամեծ վտանգն է սպառնում (ի դէմս ամերիկեան միջավայրի ամենակոչ, ձուլող յատկութեան), եւ ցեղակրօն շարժումը սկզբնաւորեցի Ամերիկայում: Ցեղակրօն շարժումը ոչ մի ընդհանուր բան չունի եւ չէր կարող ունենալ օտար վարդապետութիւնների հետ, քանզի այն, նախ եւ առաջ, բարեփոխիչ շարժում-վերածնունդ է, որ հնարաւոր է միայն սեփական, այլ ոչ փոխառուած արժէքներով»¹⁵:

«Մեր մտաւորականութեան հոգեւոր դեղնախտով տառապող մասը... վատաբանեց. «Ցեղակրօնութիւնը հիթլերութիւն կը հոտի»: Նա այսպէս չարամեկնեց, գիտնալով հանդերձ, որ ցեղակրօնութիւնը ծնունդ է առել մեր հայրենի լեռնաշխարհի գլխին կախուած մեծ վտանգի օրերին, երբ մարդկութիւնը լսած չէր հիթլերականութեան մասին: Յանձին մեր Դաւիթբեգեան ցեղապահ ուխտերի՝ 1920-ին գործեց ու

¹¹ Վ. Յովսէփեան, «Նժդեհի ի ԿԳԲ» ռուսերէն գիրքը, Երեւան, 2001 թ., էջ 139-141:

¹² Աւօ, Նժդեհ, էջ 511:

¹³ Կ. Գեղորգեան, Ամէնուն տարեգիրքը, Պէյրութ, 1963, էջ 418-419:

¹⁴ «Ամերիկահայութիւնը» աշխատութեան «Ցեղակրօն ուխտեր» եւ «Ցեղակրօնութեան հաւատամքը» բաժինները:

¹⁵ «Ինչո՞ւ ստեղծուեց ցեղակրօն շարժումը», թարգմանութիւն ռուսերէնից, տե՛ս Գաբրէլին Նժդեհ, Հատընտիր, Երեւան, 2001 թ., էջ 313:

յաղթանակեց ցեղակրոնությունը»¹⁶:

Նժդեհին քննադատողներից էր նաեւ նշանաւոր հայագէտ ու գրող Յակոբ Միրունին, որը վերը մէջբերուած փաստաթղթում նշում է, որ ինքը ժամանակին յօդուածներով հանդէս է եկել մամուլում, արտայայտել իր բացասական վերաբերմունքը ցեղակրոնութեան նկատմամբ, նշել, որ ցեղ կարող են պաշտել միայն յետամնաց ու քոչւոր ժողովուրդները, որ գտարին ազգեր գոյութիւն չունեն եւ որ ցեղակրոնութեան գաղափարը հայ ժողովրդի համար խորթ է, իսկ դրա քարոզչությունը՝ դոնքի-շոտություն¹⁷:

Այստեղ հարկ է շեշտել, որ ցեղակրոնությունը իբրեւ զուտ ազգային ու իւրատիպ գաղափարախօսութիւն, իտալական եւ գերմանական այլամերժ ցեղապաշտութիւնից յատկապէս տարբերում ու առանձնանում է քրիստոնէական դրոշմով՝ տարօնականութեամբ, որը քարոզելով սեփական ժողովրդի ու հայրենիքի հանդէպ պաշտամունք, ուրիշ ժողովուրդներին նսեմացնելու, նրանց անլիարժէք համարելու խտրականութիւնից զերծ է եւ գերազանցապէս ինքնապաշտպանական բնոյթ ունի: Յաւօք, Նժդեհի ցեղակրոնությունը ոմանց կողմից աղաւաղուել ու սխալ մեկնաբանություններով է քարոզուել դեռեւս ստեղծման փուլում: Ցեղակրոնութեան առաջին աղանդը «Մարտկոցական» կոչուած շարժման պառակտումից յետոյ 1933 թ. հոկտեմբերին ստեղծուած «Արեւմտահայ ազատագրական ուխտն» էր, որը ցեղակրոն ուխտերի գաղափարախօսությունը խեղաթիւրելով՝ դարձրեց հեթանոսություն եւ մօտեցրեց նիցշէական աստուածամերժութեանը: (*Տե՛ս նրանց «դաւանանքը», Մ. Լալայեան, Ցեղակրոն ու տարօնական շարժումներն ու Գարեգին Նժդեհի գործունէությունը, Երեւան, 2001 թ., էջ 10-11*):

Քանի որ Նժդեհը տասնամեակներ շարունակ հայրենիքում փակի տակ եղած հեղինակ է եղել, նրա աշխատություններն ու մտքերը նենգափոխել-սխալ են ներկայացրել նաեւ մերօրեայ Հայաստանում: Խօսքը յատկապէս վերաբերում է ցեղակրոնությունը քրիստոնէութեանը հակադրելու անհեթեթութեանը, որին հասան ոմանք՝ նրա մտքերը ամբողջությունից կտրելու, կամայական մեկնաբանելու ճանապարհով: Նշուած խեղաթիւրումների համար «հիմք» են ընդունել նրա երկու աշխատությունները՝ «Ցեղակրոն ուխտեր եւ ցեղակրոնութեան հաւատամքը» (1933 թ.) եւ «Մեր յեղափոխութեան արարիչը» դամբանականը, որ նա խօսել է Քրիստափոր Միքայէլեանի շիրիմին (1924 թ.): Այդ աշխատություններից արուած մէջբերումներով էլ բացայայտենք խեղաթիւրությունն ու թիրիմացությունը:

Առաջին աշխատությունից վկայակոչում են դրա՝ իրենց կողմից խմբագրուած ու մկրատուած տարբերակը (որ տպագրել են մի քանի անգամ) եւ յայտարարում, թէ Նժդեհը քրիստոնէութեան փոխարէն նոր կրօն է ստեղծել:

Մէջբերենք ցեղակրոնութեան անհրաժեշտությունը հիմնաւորող նշուած աշխատութեան այն հատուածները, որոնց միտումնաւոր աղճատումով կատարուեցին վերոյիշեալ հետեւությունները. «Ցեղակրոնի համար չկայ աւելի մեծ վատութիւն, քան հոգեւոր խզումը սերունդների միջեւ: Նորահաս սերունդը կտրուե՞ց անցնող կամ անցած սերունդներէն - նա էապէս կտրուում է մինչ այդ գոյութիւն ունեցող ցեղի

¹⁶ Ցեղի յաւիտենական զենքը, Հատընտիր, 2001 թ., էջ 334:

¹⁷ Վ. Յովսէփեան, նշվ. աշխ., էջ 142:

արժեքներն ու սրբություններն, կրօնն ու բարոյականն»:

Ոչ մեկ կասկած, որ սերունդների միջև հոգեւոր խզումը աշխարհի ամենավատ բանը համարող Նժդեհը, որը ցեղակրօն ուխտերի համար աւելի «մեծ վատություն» չի տեսնում, քան կտրուելը «ցեղի սրբություններն, կրօնն ու բարոյականն», չէր կարող մի նոր կրօն հիմնել: Այնուհետեւ շարունակում է. «Իսկ եթե կրօն է դա (ցեղակրօնությունը- Ռ. Հ.), ապա դա կրօն է ցեղային հպարտության, ուժի եւ արիության, դա քո կրօնն է, նորահաս սերունդ»:

Ցեղակրօնության «Հաւատամքի» մէջ գրում է. «Ես ցեղապաշտ եմ, եւ ահա պաշտում եմ մի այլ աստուածություն- ցեղի արիւնը, որի անարատության մէջ է իմ ցեղի ապագան» (հատուած Դ):

Այս մի քանի նախադասության մէջ Նժդեհը Աստուած - կրօն է համարում.

Ցեղի հպարտությունը, արիությունը, ուժը եւ արիւնը:

Այսքանից եզրակացնենք, որ Նժդեհը քրիստոնէությունից հրաժարուել, դարձել է բազմաստուած կամ առնուազն՝ «արիւնակրօնութիւն» է քարոզում՝ Աստուած հռչակելով ցեղի արիւնը...

Հասկանալի է՝ բերուած մտքերը եւ իր կողմից շեշտող «մի այլ աստուածություն» բառակապակցությունը չեն անտեսում իր մայր դաւանանքը՝ հայոց քրիստոնէականը, ոչ էլ որեւէ հիմք են տալիս՝ նրան նոր կրօնի հիմնադիր համարելու, ինչպէս «չարամեկնեցին» (իր բառն է) մի քանիսը: Նա ամերիկահայ երիտասարդութեանը քարոզում է ցեղակրօնութիւն, «որով անհայրենիք հայությունը հոգեւոր զրահ կը հագնի՝ օտար միջավայրերի այլասերիչ ազդեցություններին յաջողապէս դէմ դնելու համար», քարոզում է մայր կրօնից բացի «պաշտել նաեւ մի այլ աստուածություն - ցեղի արիւնը»: Իսկ «Ցեղակրօնութիւնն իբրեւ յաղթանակի գօրոյթ» աշխատութեան մէջ գրում է, որ ցեղը «Ժամանակների վկան է, յաւիտենական հայր, Աստծոյ գործակիցը»: Այստեղ եւս նա ոչ միայն նոր կրօն, նոր Աստուած չի ստեղծում-յօրինում, այլ ցեղը բարձրացնելով հասցնում է Աստծուն՝ հռչակելով «Աստծոյ գործակիցը»: Պատկերաւոր մտածողութիւն, որով հայերս սովոր ենք շեշտել երեւոյթի գերկարեւորութիւնը, ինչը բնական է մեր լեզուամտածողութեան համար («Քեզ Աստծոյ չափ սիրում եմ», «Դու իմ Աստուածն ես», «Կարօտից մեռնում եմ», «Մեռա սպասելով», «Հազար տարի չեմ տեսել» եւ այլն):

Այժմ քննենք «Մեր յեղափոխութեան արարիչը» յօդուածը:

Քանի որ այն ընդամենը երեք էջ է, խաթարիչները չեն համարձակուել բնագիրը հրատարակել կրճատում-աղաւաղումներով, ուստի ամբողջ խօսքից անջատել են խեղաթիւրելու համար իրենց պէտք եկած մասը, ներկայացրել ու մեկնաբանել իրենց ուզած ձեւով՝ թէ իբր Գարեգին Նժդեհը հայ ժողովրդին ասում է. «Ի՞նչը մղեց քեզ միամտօրէն հաւատալու ցնորապաշտ Նազովրեցու վտանգաւոր խօսքին: Դու խաբուած ես, ժողովուրդ, որ զոհն ես քրիստոնէական բարոյախօսութեան, որ շարունակում է մնալ որպէս ներկ եւ շարք, որպէս քօղ եւ դիմակ՝ ուժեղների հոգու համար»:

Մինչդեռ Նժդեհի խօսքերը ճիշտ մէջբերելու դէպքում ուրիշ բան է պարզուում: Ահա այդ հատուածը՝ բովանդակութեան եւ մտքի վրայ էականօրէն չանդրադարձող որոշ կրճատումներով.

«Գողգոթայէն՝ Արեւմտահայաստանէն կը բարձրանար աղաղակը հաւաքավառ

խաչեցեալի (*հայրութեան - Ռ. Հ.*),- օգնութիւն, փրկութիւն ինձ: Իսկ մարդկութիւնը՝ յանցաւոր ու անտարբեր, կը պատասխանէր.

- Ծարա՞ւ ես, արբ արցունքդ...

- Կոտորու՞մ ես, որովհետեւ թոյլ ես...

... Վաղուց է ինչ եկեղեցիներիդ զանգերի քաղցր դողանքը չես լսում, առանց իտեալի եւ վեհութեան կը սողա՞ս միայն - ստրո՞ւկ ես՝ դո՞ւ ես մեղաւոր, դո՞ւ: Ի՞նչը մղեց քեզ միամտօրէն հաւատալու ցնորապաշտ Նազովրեցու վսեմ, բայց վտանգաւոր խօսքին: Ո՞վ ասաց, որ թոյլը մեղաւոր չէ, որ թոյլ է...

Դու խաբուած ես, ժողովուրդ, որ զոհն ես քրիստոնէական բարոյախօսութեան, որ շարունակում է մնալ որպէս ներկ եւ շպար, որպէս քօղ եւ դիմակ՝ ուժեղների հոգու համար: Թուլութիւնը, ասում է աշխարհը, ծնուած է սնուցանելու ուժը: Ուժն է ծնում իրաւունքը...

Ա՛յս էր աշխարհը հայկական Գողգոթայի հանդէպ...

Այսպէս կը պատասխանէր մարդկութիւնը մահուան դատապարտուած այս ժողովրդին»: (**Պարեգին Նժդեհ**, *Հատընտիր*, *Երեւան, 2001, էջ 306-307*):

Նախ՝ այս խօսքերը քրիստոնէութիւնը մերժող, առաւել եւս «Նոր կրօն» ստեղծելու հիմք հանդիսացող մտքեր չեն, ինչպէս ճգնել են ներկայացնել: Այստեղ ասում է, որ աշխարհը մեզ համարում է քրիստոնէական բարոյախօսութեան զոհը:

Երկրորդ՝ ամենակարեւորը. սրանք Նժդեհի խօսքե՛րը չեն, այլ «աշխարհի» պատասխանը «մահուան դատապարտուած այս ժողովրդին»:

Դրանք ոչ միայն նրա խօսքերը չեն («մարդկութեան», «աշխարհի» խօսքերն են՝ ուղղուած «հաւաքավառ խաչեցեալին»՝ հայ ժողովրդին), այլեւ իր համար անընդունելի, այլանշանի են, քանի որ այդպէս ասողներին նա յայտարարում է «յանցաւոր ու անտարբեր»:

Իրօք, եթէ քրիստոնէութեան բարոյախօսութեան մասին նրա մեջբերած խօսքերը համարենք Նժդեհի մտքերը, ապա նոյն տրամաբանութեամբ նրա խօսքերը պիտի համարենք նաեւ «Ծարա՞ւ ես, արբ արցունքդ» միտքը եւ յայտարարենք, որ Նժդեհը «Մեր յեղափոխութեան արարիչը» դամբանականում հայ ժողովրդին կոչ է անում ծարաւելիս խմել սեփական արցունքը...

Մինչդեռ այդ ամբողջ ճառի միտք բանին հետեւեալն է. Քրիստափորը եկաւ ու հայ իրականութեան մէջ սկսուեց յեղաշրջում: Ապաւինելով սեփական ուժերին, հայ ժողովրդի «որդիները որպէս ապստամբ կը նետուին լեռները, արիաբար կը չափուին բանակների հետ, կ'անգիտանան վտանգը, կ'արհամարհեն մահը, ժպիտը երեսներին կը բարձրանան կախաղանները... Քրիստափորի շնորհիւ քաղաքական մուրացիկը կը դառնա մարտիկ»:

Կարծես նախազգալով, որ մի օր կարող են գտնուել մարդիկ, որ իր խօսքերը պիտի մեկնաբանէին իրենց ուզածի պէս, Նժդեհն իր յիշեալ դամբանականի դիտարկւող հատուածի սկզբում էլ, մեջտեղում էլ, վերջում էլ շեշտում է, որ «յանցաւոր ու անտարբեր» մարդկութիւնն էր մեզ այդպէս ասում, «պատասխանում»:

Նոյնը վերաբերում է նաեւ մեջբերուած հատուածում նրա օգտագործած՝ «Ուժն է ծնում իրաւունքը» ասոյթին: Այդ խօսքերը ազատ թարգմանութիւնն են 1896 թ. Բազելում սիոնականութեան հիմնադիր Հերցելի կարդացած՝ «Միոնի իմաստունների արձանագրութիւնները» դասախօսութեան մէկ արտայայտութեան:

Այդ միտքը, որով սկսում է թիւ առաջին արձանագրութիւնը, բառացի թարգմանում է այսպէս. «Իրաւունքը ուժի մէջ է» (*ռուսերէն թարգմանութեամբ, որով Նժդեհը ծանօթացել է այդ երկին, այսպէս է՝ «Պրավա վ սիլէ»*: Տե՛ս «Արձանագրութիւնների» *ռուսերէն հրատարակութիւնը՝ «Միոնսկիյէ պրօտոկոլը», Մոսկուայ, 2000 թ., պրօտոկոլ թիւ 1, էջ 14*):

Այնպէս որ, Նժդեհին վերագրող եւ բազմիցս որպէս նրա ասոյթ մեջբերուած՝ «Ուժն է ծնում իրաւունքը» խօսքերի հեղինակը եւս Գաբեգին Նժդեհը չէ:

Այժմ նրա տարբեր աշխատութիւններից մեջբերենք Քրիստոսի, քրիստոնէութեան եւ իր պաշտամունքներից մէկի՝ Հայաստանեայց Եկեղեցու մասին արտայայտած նրա բազմաթիւ մտքերից մի փունջ՝ յամոզելու համար, որ վերը մեջբերուած՝ ուրիշի անուղակի խօսքերը նրան վերագրողների արարքը կանխամտածուած զեղծարարութիւն է, քանի որ նրանք բացարձակապէս որեւէ հիմք չունենին Նժդեհին ներկայացնելու իբր թէ քրիստոնէութեան ու Հայ Եկեղեցու դէմ խօսած հեղինակի: Մանաւանդ որ այդպէս մտածող ու ներկայացնողները Գ. Նժդեհի՝ հրապարակի վրայ եղած ամբողջ ժառանգութեան մէջ վերոյիշեալ զեղծուած մտքերից բացի, մի երկրորդ նման միտք չեն կարող վկայակոչել: Եկեղեցուն արուած նրա միակ քննադատութիւնը, որի նպատակը Եկեղեցին է՛լ աւելի զօրացնելն է, հետեւեալն է. սիրոյ մասին Յիսուս Քրիստոսի քարոզած վարդապետութիւնը ճիշտ ըմբռնելու համար Քրիստոսի անձնական կեանքը պիտի դառնա Եկեղեցուն ուղեցոյց...

«Եկեղեցին: Դա վերագնահատումի պիտի ենթարկէ քրիստոնէական սիրոյ իր սխալ ըմբռնումը, որպէսզի դադարի թուլութիւնը առաքինութիւն համարել եւ սպանել մեր ժողովրդի կամքը... Սիրում է նա, ով ուժեղ է. Քրիստոսը սիրում էր, որովհետեւ ուժեղ էր... Նա սիրում էր, որովհետեւ սիրելու եւ ներելու չափ հզօր էր: Նրա անձնական կեանքը պիտի դառնա Եկեղեցուն ուղեցոյց: Նրա մահուան խորհուրդը - հերոսական զոհաբերութիւն: Նա զոհաբերուեց, որովհետեւ գաղափարի հերոս էր: Միայն արին, քաջը, միայն հերոսը կարող է զոհաբերել: Անընդունակ է թոյլը ինչպէս սիրոյ, նոյնպէս եւ զոհաբերութեան...»

Քրիստոնէան նա՛ չէ, ով քրիստոնէական վարդապետութեան տարերքը սխալ է հասկացել, ընկել նախապաշարումների ցանցի մէջ եւ տկարացել կորչելու աստիճան, այլ նա, ում մէջ մի քիչ քրիստոնէութիւն կայ - մի կայծ ամենահզօր Աստուածամարդու հոգուց:

Նա ամենակարողն էր, ամենահզօր - մենք առնուազն կարող եւ հզօր պիտի լինինք, որպէսզի կարողանանք սիրել եւ զոհաբերել»:

(«Բաց նամակներ հայ մտաւորականութեան»):

«Նազովրեցին կուսուցանէր, թէ մարդուս մէջ ապրող հոգին աւելի արժի, քան ողջ աշխարհը:

(«Որդիների պայքարը հայրերի դէմ»):

«Ոգու ժողովուրդ ենք եւ այդ իսկ պատճառով այն բոլոր վարդապետութիւնները, որոնք դիմագուրկ ոգու ծնունդ են,- մնում են անմարսելի եւ անհարազատ հայ հոգու համար: Ոգեշունչ էր քրիստոնէութիւնը եւ հենց այդ է պատճառը, որ նրա գիրկը նետուողներէն առաջինը եղաւ հայրը.

(«Յեղի յաւիտենական զենքը»):

«... Նազովրեցու մեծութիւնը նրա մէջ չէ, որ պատմութեան մէջ մի քանի փաստեր

թողեց, այլ որ զգայապաշտ մարդկության նոր իտեալներ տուաւ եւ մի այլ աշխարհի կարօտով հոգիները վառեց»:

(«Ցեղի ոգու շարժը»)

«Սկզբից ի վեր հայութիւնն ու իր քրիստոնէութիւնը ձուլուած են ի մի բնութիւն... Այս երկուսի ճակատագիրը նոյնացած է»:

(«Ամերիկահայութիւնը»)

«Վերացնելով մահուան ու կեանքի միջեւ գոյութիւն ունեցող անջրպետը, Նազով-բեցին ժխտեց մահը, որովհետեւ հանդիսացաւ յաւիտենական սերմնացանը ոգու հսկաների՝ սուրբերի, նահատակների, հերոսների:

(«Ազատ Հայաստան» թերթ, Բեռլին, 1943 թ., Հատընտիր, էջ 402):

«Մեռնում է բոլշեւիզմը, որովհետեւ ապրել են ուզում եւրոպական քաղաքակրթութիւնը, քրիստոնէութիւնը եւ մարդկային անունը»:

(«Պատմութեան դատաստանը», «Ազատ Հայաստան» թերթ,

Բեռլին, թիւ 2-3, սեպտեմբեր-հոկտեմբեր, 1943 թ., էջ 5-7):

Այս ամէնին անհրաժեշտ է յաւելել նաեւ այն իրողութիւնը, որ Գարեգին Նժդեհը բոլոր ճակատամարտերն ու թշնամու դէմ կռիւները սկսել է եկեղեցուց կամ աղօթքով: Նա եկեղեցիներում է անցկացրել նաեւ Սիւնիքի եւ Լեռնահայաստանի Հանրապետութիւնների հիմնադիր համագումարները: Իր զէնքերը, նոյնիսկ սպարապետական գօտին օծուել են եկեղեցում: Իր զինուորներին յղած գրեթէ բոլոր հրամաններն աւարտում են Աստուած կանչելով. «Մեզ հետ Աստուած եւ Դաւիթ Բեգի վրիժակ հոգին», «Մեզ հետ Աստուած եւ մեր մեծ հայրերի անհանգիստ հոգիները», «Աստուած եւ իմ սերը քեզ հետ» եւ այլն (*Տե՛ս «Խուստուփեան կանչեր»*): 1943 թ. հայ ռազմագերիների հետ հանդիպումների ժամանակ նրանց ասում էր. «Մեր հայրենիքի բախտի համար ես բռնել եմ Աստծու փէշից, դուք էլ բռնէք ինձանից»: (*Տե՛ս Վահան Սարգսեանի յուշերը Նժդեհի մասին, «Նախիջեւան», 2001 թ., թիւ 19, Մահմի (մարտ), էջ 11*):

Վերջապէս «Ինքնակենսագրականում» (1944 թ.) գրում է. «Եղել եմ խորը հաւատքի եւ էտիկայի մարդ... Հաւատքի եւ պաշտամունքի տաճարում միշտ էլ առաջին տեղերը յատկացուցած են եղել Աստծոյ եւ Հայրենիքին: Հայաստանն է եղել երկրաւոր (*յատուկ է շեշտում «երկրաւոր» բառը - Ռ. Հ.*) սրբազնագոյնն ինձ համար»:

Վերոյիշեալ բազմաթիւ այլ իրողութիւնները նկատի առնելով՝ անվարան կարելի է պնդել, որ 20-րդ դարի հայոց պատմութեան այդ անգուգադիր անհատականութեան բարոյա-գաղափարական մեկնակէտը հայոց քրիստոնէականն է:

Նժդեհը ՀՅԴ Ցեղակրօն ուխտերի առաջին համագումարին (1934 թ. յունիսի 1-3) եւ ՀՅԴ Ամերիկայի շրջանի 41-րդ պատգամաւորական ժողովին (օգոստոս, Մասաչուսեթս) մասնակցելուց յետոյ 1934 թ. աշնանը վերադարձաւ Սոֆիա: Հիւսիսային Ամերիկայում նրա գործունէութիւնը այնքան արգասատր էր գաղութի համար, որ Բուլղարիա վերադառնալուց յետոյ նրան 1935 թ. Հարաւային Ամերիկայի հայ համայնքից խնդրում են մէկ տարով այցելել գաղութ, բայց չափազանց զբաղուած լինելով՝ հրաւերը մերժում է¹⁸:

Այդ տարիներին Նժդեհի յարաբերութիւնները ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Ռու-

¹⁸ Գ. Նժդեհի՝ 1935 թ. սեպտեմբերի 3-ի նամակը, «Հայրենիք» ամսագիր, 1963, թիւ 5 (մայիս), էջ 28:

բէնի հետ աւելի լարուեցին: «Բուլղարիայի դաշնակցական կազմակերպութիւնում տեղի ունեցաւ պառակտում: Իմ համախոհներով ես ստեղծեցի նոր հայկական կազմակերպութիւն, որն անուանեցի «Տարօնականութիւն»... Կազմակերպութեան խնդիրն էր... միացեալ Հայաստանի ստեղծումը... Տեղակալս Հայկ Ասատրեանն էր... 1937 թ. Դաշնակցութիւն կուսակցութիւնից դուրս գալուց առաջ ինձ կանչեցին Կահիրէ, ուր փորձեցին հաշտեցնել Ռուբէն Տէր-Մինասեանի հետ: Կահիրէում ես մնացի երկու ամիս»¹⁹:

Թէեւ Նժդեհը դաշնակցութիւնից ինքն է 1937 թ. հեռացել է մերժել է ետ գալու Բիւրոյի բոլոր առաջարկները, բայց Բիւրոյի պատասխանատու Ռուբէնի հրահանգով կուսակցական թերթերը տարածել են այն կեղծ լուրը, թէ իբր Նժդեհը կուսակցութիւնից վտարուել է: Այս խնդրի մասին Գարեգին Նժդեհը 1937 թվականին հարկ է համարել «Ռազմիկ» թերթի 1937 թ. դեկտեմբերի 7-ի համարում «Մատնութիւն թէ՞ պրովոկացիա» յօդուածով հանդէս գալ հետեւեալ պարզաբանումներով ու ճշտումներով. «Որոշ թերթերում կարդացի մի յայտարարութիւն իմ մասին: Որպէս թէ «հակակուսակցական» եւ «հակակարգապահական» ինչ-որ «արարքներու համար» հեռացուած եմ Դաշնակցութիւնից: Անմիջապէս ասեմ, որ այդ բոլորի հեղինակը Ռուբէն Տէր-Մինասեանն է՝ տարիների իմ անձի եւ իմ քարոզած ցեղահոգ (դասակարգ, հատուածականութիւն եւ սուտ սոցիալիզմ ժխտող) դաշնակցութեան թշնամին... Չորրորդ տարին է, ինչ լուր եմ այն մասին, որ այդ մարդը անձնական հաշիւներով դաւեր է նիւթել իմ սկսած ցեղակրօն շարժման դէմ, այդ շարժումը Ամերիկայով սահմանափակելու եւ իր խանձարութի մէջ խեղդելու նպատակով: Այդ եւ ուրիշ աւելի ծանր խնդիրների կապակցութեամբ՝ ես վաղուց նրան մեղադրել եմ որպէս դաւադիր եւ պահանջել մերկացումը նիւթուած դաւերի: Այդ կարելիութիւնը, շատ հասկանալի պատճառներով, ինձ չտրուեց եւ ես ժամանակին նաեւ սոփիստակ երեք անձերի ձեռքով յղած եմ իմ հրաժարականը: Որից յետոյ մի գրութեամբ ինձնից խնդրել են ետ առնել հրաժարականս: Ես այդ խնդրանքին անգամ պատասխանի չեմ արժանացրել: Իսկ այժմ դուրս է գալիս, որ ո՛չ թէ ես եմ հեռացել՝ ներքին դաւադրութեան մէջ մեղադրելով Տէր-Մինասեանին, այլ որպէս թէ «հակակուսակցական» ընթացքի մէջ եմ գտնուել եւ «հեռացուել»... Հասկանալի չէ՞, որ իր ողջ կեանքը նման բանսարկութիւններով, ընկերադատութիւններով լեցնող եւ անձնանպատակ թայֆաներով Դաշնակցութեան ներքին կեանքը թունաւորող մէկի հետ կարելի չէ միեւնոյն յարկի տակ լինել: Վաղուց է, որ այս մարդու ներկայութիւնը ղեկավարութեան մէջ՝ համարել եմ եւ համարում եմ կատարեալ աղէտ Դաշնակցութեան համար, եւ համոզուել, որ քանի նա դեռ կը յաջողի իր գիտցած ճամբաներով իրեն պարտադրել, իրական եւ կարող ղեկավարութիւն չի ունենայ Դաշնակցութիւնը: Չեմ ցաւում, որ դեռ 1921 թուականին Հայաստանի մտաւորականութեան հետ փրկել եմ ե՛ւ սրա կեանքը... Ասում է, որ եւ 1921 թուին էլ «պատժուել» եւ «ներուել եմ 10-րդ ընդհանուր ժողովի կողմից»: Թէ ո՞վ է «ներուել» այդ ժողովից եւ ո՞վ իբրեւ Թաւրիզի դաւադիր ստացել բարոյական իր պատիժը, երեւում է հէնց նոյն այդ ժո-

¹⁹ Նժդեհի՝ 1945 թ. օգոստոսի 9-ի եւ 1944 թ. հոկտեմբերի 12-ի հարցաքննութիւնների արձանագրութիւնները, Ռ. **Համբարձումեան**, Գարեգին Նժդեհ, Կենսագրական յաւելումներ..., Երեւան, 2005 թ., էջ 245-256, 183-184:

դովից, որ ամօթանքով լռել է Տէր-Մինասեանի ստեղծած Կարսի մասին (*նկատի ունի Կարսի աղետալի անկումը 1920 թ., Ռ. Հ.*), իսկ իմ վարած Միւնաց գոյամարտի վերաբերեալ, թողել է հետեւեալ որոշումը... «ՀՅԴ 10-րդ Ընդհանուր Ժողովը, դարձեալ մանրամասն քննութեան առնելով մեղադրանքները, լսելով վկաներին եւ ծանօթանալով Նժդէհի հիմնաւոր բացատրութիւններին, նրան վերականգնեց կուսակցութեան շարքերում՝ ընդունելով հետեւեալ որոշումը.

- Զանգեզուրի ապստամբական շարժումները եւ անոր շարունակութիւնը ունեցած են արտակարգ նշանակութիւն.

1. Մեծամասնականները զգաստացնելու, անոնց բռնութեանց եռանդը չափաւորելու,

2. Փետրուարեան յեղափոխութենէն յետոյ նահանջող ընկերներու, բանակի եւ գաղթականութեան թիկունքը ապահովելու եւ անոնց Պարսկաստան անցքը դիւրացնելու,

3. Զանգեզուրի ամբողջ գաւառը Հայաստանի Հանրապետութեան միացնելու,

4. Արտաքին աշխարհին մէջ մեր հարցի քաղաքական դիրքը ամրացնելու տեսակետէն» (*Տես Գաբեզին Նժդէհ, Հատընտիր, Երեւան, 2006 թ., էջ 677*):

Հայրենասէր եւ բարոյականի տէր ո՞ր հայը դեռ 1921 թուականին Թաւրիզում չը հասկացաւ, որ հենց Կարսի աղետը աննշան թողնելու եւ անպատասխանատու մնալու նկատառումով վայրկեանի պահանջ էր Հայաստանի համար «արտակարգ նշանակութիւն» ունեցող իմ այդ ծառայութեան դէմ դաւել եւ գրել ինձ. «Թո՛ղ Անդրանիկութիւններդ: Անդրանիկն էլ քեզ պէս վարուեց եւ այժմ անտէր թափառում է Եւրոպայում»... Ո՞ր հայը չգիտէ, որ խորապէս տարբեր են իմ եւ Տէր-Մինասեանի ըմբռնումները «կուսակցականութեան» եւ «կարգապահութեան» մասին, եւ ո՞վ չգիտէ, որ իմ հասկացած դաշնակցականութիւնը հայութեան տուել է Զանգեզուրը, մահէն փրկել Հայաստանի դաշնակցութիւնը, իսկ Տէր-Մինասեանի «կուսակցականութիւն»ը եւ «կարգապահութիւն»ը Կարսի ամօթանքը եւ Քան լերան անօրինակ ողբերգութիւնը... Ես, դժգոհ օրուայ կացութիւնից, այսօր չէ, որ հայութեան փրկութիւնը տեսնում եմ վերանորոգումի մէջ: Դժգոհ եւ դաւադրուած՝ ես հեռացայ եւ արիութիւն ունեցայ լռել իմ արած քայլի մասին: Ի՞նչը կարող էր առիթ տալ, որ իմ կողմից դատապարտուածը հրապարակէր իր թշնամանքը՝ խեղաթիւրելով ճշմարտութիւնը»²⁰:

Պետանվտանգութեան մարմինների քննիչներին տուած իրենց ցուցմունքներում Դաշնակցութիւնից Նժդէհի հեռացման ու յատկապէս տարօնականութեան ծագման մասին կարեւոր տեղեկութիւններ են տուել նաեւ Յովհ. Տեւէճեանը, Գուրգէն Սարգսեանը, Սիրունին եւ ուրիշներ: Յովհ. Տեւէճեանը 1947 թ. օգոստոսի 28-ի հարցաքննութեան մէջ նշում է. «Նժդէհը, ինչպէս Բուլղարիայի դաշնակցական կազմակերպութեան Կենտրոնական կոմիտէն, որի անդամներն էին ինքը, իր մերձաւոր զինակից Հայկ Ասատրեանը եւ ազգական Օվանէս Օվանէսովը, այնպէս էլ Բուլղարիայի դաշնակցական կազմակերպութեան մեծ մասը քաշեց դէպի իրեն: Նժդէհի գործունէութիւնը քննելու համար Դաշնակցութեան բիւրոն Ռումինիայից Բուլղարիա գործուղեց բիւրոյի անդամներ Դրոյին եւ Գաբրիէլ Լազեանին: Նրանք Հայկ Ասատրեա-

²⁰ Գաբեզին Նժդէհ, Հատընտիր, Երեւան, 2006 թ., էջ 676-678:

նին կուսակցական տոյժի ենթարկեցին եւ քանի որ «ցեղակրօնի» կողմնակիցներ չենթարկուեցին այդ որոշմանը, բիրտն կուսակցութիւնից հեռացրեց 15-20 հոգու, որոնց մէջ նաեւ Նժդէհին»²¹:

Գործով վկայ հարցաքննող Գուրգէն Սամսոնի Սարգսեանն իր 1947 թ. ապրիլի 16-ի հարցաքննութեան մէջ ասում է, որ Նժդէհը 1937 թ. երկրորդ անգամ է հեռացւում Դաշնակցութիւնից, քանի որ «թուրքերի դէմ տարւող կուսակցութեան աշխատանքին համաձայն չէր»²²:

«1935 թ.,- գրում է Հայկ Ասատրեանը,- ինձ ժամանակաւորապէս հեռացրեցին կուսակցութիւնից: Այդ ժամանակ ես յայտարարեցի, թէ կուսակցութիւն չը պիտի վերադառնամ եւ առանց ՀՅԴ բիրտյի տնօրինութեան, սկսեցի հրատարակել «Յեղ ու Հայրենիք» ամսագիրը..., ուր ես տարածում էի իմ գաղափարները, որի հետեւանքով ձեւաւորուեց մի շարժում, որը կոչուեց «Տարօնականութիւն»: Այդ ամէնում ինձ աջակցում էր Նժդէհը (որի պատճառով էլ «Տարօնականութիւն» շարժման առաջնորդները ես եւ Նժդէհն էին): Դա հիմք դարձաւ, որպէսզի բիրտն իր մամուլում պաշտօնապէս յայտարարի ինձ շարքերից արտաքսելու մասին: Այդ ընթացքում Բուլղարիայի դաշնակցական կազմակերպութեան կառոյցները հիմնականում քայքայւել եւ հարում էին մեր հոսանքին»²³:

Կահիրէից վերադառնալով Սոֆիա՝ Նժդէհը նոյն թուին (1937 թ.) ազդարարում է ՀՅԴ-ից հեռանալու մասին: 1938 թ. Կահիրէում գումարուած ՀՅԴ 13-րդ Ընդհ. ժողովը նրան արտաքսում է Դաշնակցութիւնից: Սակայն Երկրորդ աշխարհամարտի բռնկումից յետոյ Գարեգին Նժդէհը ՀՅԴ Գերագոյն մարմնին յղած նամակով պատրաստականութիւն է յայտնում իր ուժերը դնել Բիրտյի տրամադրութեան տակ: Նամակը նա ուղարկում է Պարսկաստանից Կահիրէ գնալու ճանապարհին Բուխարեստում գտնուող, ՀՅԴ յայտնի անդամ, պարսկահայ դերասան Մ. Մարութեանին, որպէսզի վերջինս անձամբ յանձնի հասցէատերերին: Մ. Մարութեանը գրում է. «Կահիրէ մեկնելուցս երեք օր առաջ, մեր Բուլղարիայի ընկերներից Յակոբը, որ մի մեծ սրճարան ուներ Սոֆիայում, եւ կինն էլ բուլղարուհի էր, եկաւ Բուքրէշ եւ ինձ յանձնեց Նժդէհի մի երկտող..., որպէսզի յանձնեմ Բիրտյին: Բաց արի երկտողը եւ արտագրեցի: Արտագրածս գտնուում է արխիւում: Արտագրեցի եւ արտագրածս յանձնեցի կնոջս, որ եթէ իմ մօտ եղածը բռնի, գոնէ մէկը ազատ կը լինի:

Գրած էր հետեւեալը. «Հ. Յ. Դաշնակցութեան Գերագոյն մարմնին: Ճիշդ է, որ ես հեռացել եմ մեր կուսակցութիւնից: Բայց կուսակցութիւնը չէ հեռացել ինձնից: Նա միւս եւ ոսկոր է, որքան ատեն որ շնչում եմ: Պատերազմ է: Կենաց եւ մահու պայքար կարող է լինել, որից կարող է տուժել կամ շահել մեր ժողովուրդը: Չգիտեմ, թէ ի՞նչ է ձեր որդեգրած ուղին: Ինչ որոշում էլ տւած լինէք, ես իբրեւ հայ եւ հայ սպայ իմ անձը եւ իմ սուրը դնում եմ ձեր տրամադրութեան տակ: Գ. Նժդէհ»²⁴:

Գ. Նժդէհը, որպէս տարօնականութեան խոսափող, ՀՅԴ-ից հեռացած Հայկ Ասատրեանի հետ 1937-ին Սոֆիայում հիմնում է «Ռազմիկ» թերթը, որի ծախսերը հոգացող հրատարակիչն ու պատասխանատու խմբագիրը 1941 թուականից Եղիա

²¹ Վ. Յովսէփեան, նշ. աշխատութիւնը, էջ 18-19):

²² Նոյն տեղը, էջ 98:

²³ Ռ. Համբարձումեան, Գարեգին Նժդէհ, Կենսագրական յաւելումներ, Երեւան, 2005 թ., էջ 196:

²⁴ Մ. Մարութեան, Փակուած վարագոյրի առջեւ, յուշեր, Նիւ Եորք, 1981, էջ 230:

Վարդանովն էր (Կունումեան), իսկ փաստացի գլխավոր խմբագիրը՝ Հայկ Ասատրեանը²⁵:

Մինչ այդ, ինչպես նշուեց, Բալկաններում բիրտյի ներկայացուցիչ Դրոյի ձեռքով Դաշնակցութիւնից ժամանակաւորապէս մեկուսացուած («Կախակայում») Հայկ Ասատրեանը ինքնակամ լքել էր շարքերը եւ առանց բիրտյի թոյլտուութեան 1936 թ. Սոֆիայում հիմնել էր «Յեղ եւ Հայրենիք» ամսագիրը: Գարեգին Նժդեհը 1938 թ. ապրիլին Հ. Ասատրեանի, Ն. Աստուածատուրեանի եւ այլոց հետ սկսում է Տարօնական շարժման պաշտօնաթերթ «Տարօնի արծիւ» ամսագրի հրատարակումը (Պատ. խմբագիր՝ Ներսէս Աստուածատուրեան), ուր տպագրել է բազմաթիւ յօդուածներ:

Տարօնականութիւնը ցեղակրօնութեան շարունակութիւնն էր, որտեղ քրիստոնէական շունչը դառնում է աւելի տիրական՝ յանձին շարժման գաղափարախօսութեան եւ այդ գաղափարախօսութեան հանգանակ հռչակուած «Մամիկոնեան ուխտի»: Եթէ ցեղակրօնութիւնը ստեղծուել էր ազգային արմատներից հեռացող գաղութահայ երիտասարդութեանը հայացնելու եւ նրան՝ մեր «հայրենատիրութեանն» ու մեր կորուսեալ անկախութեանը տէր դարձնելու նպատակով, ապա տարօնականութեան խնդիրն աւելի լայն էր: Այն նպատակ ուներ ոչ թէ միայն երիտասարդութեանը, այլ ամբողջ հայութեանը բոլորել վերոյիշեալ գաղափարների շուրջ, հայութեանը ընդհանրապէս եւ սփիւռքահայութեանը մասնաւորապէս՝ նախապատրաստել ազգերի գոյութեան մեծ գօտեմարտին՝ սպասուող պատերազմին: Մարգարեաբար նախագգալով պատերազմի մօտալուտ բռնկումը, տեսնելով, որ բոլոր ազգերը կազմակերպում են իրենց ուժերը, Գարեգին Նժդեհը, որպէս հայ ժողովրդի քաղաքական ապագայի պատասխանատու եւ հայոց անկախ պետականութիւնը վերականգնող դրօշակիրներից, ձեռնամուխ է լինում Սփիւռքը ուժաւորելու, քաղաքականապէս զրահաւորելու եւ հայրենիքի ինքնապաշտպանութիւնը նախապատրաստելու գործին: Այս մտայոգութեամբ նա բուլղարացի իր բարեկամ Բուրեւի միջնորդութեամբ 1937 թ. կապ է հաստատում գերմանացիների հետ՝ տենդօրէն պատերազմի պատրաստուող այդ երկրի ղեկավարութեանը ձգտելով ներշնչել, որ «եթէ Գերմանիան պատերազմ սկսի, ապա առաջին հերթին յարձակուի Թուրքիայի վրայ... Հայերը [գերմանացիներին] կօգնեն, Բուլղարիայում կկատարեն զօրահաւաք: «Միայն այդպէս (*եթէ Գերմանիան յարձակուի Թուրքիայի վրայ - Ռ. Հ.*) մենք՝ հայերս եւ մակեդոնացիները ազատութիւն կստանանք», - ասաց Նժդեհը²⁶: «Գերազանցօրէն յեղափոխական են մեր օրերը, ճակատագրական՝ մերօրեայ անցքերը: Վաղուց է, ինչ մարդկութիւնն իրեն զգում է նստած հրաբուխի վրայ: Ականուած է հին աշխարհը... Ճգնաժամ են անցկացնում՝ պետութիւն, տնտեսութիւն, կրօն, փիլիսոփայութիւն... Ժողովուրդները յեղափոխական չտեսնուած ցասումով ջախջախում են կեղծ արժէքների, գաղափարների ու ճշմարտութիւնների տախտակները, եւ նրանց փոխարէն նորերը գրում...

²⁵ Գ. Նժդեհի 1945 թ. օգոստոսի 9-ի հարցաքննութեան արձանագրութիւնը, Ռ. Համբարձումեան, Գարեգին Նժդեհ, Կենսագրական յաւելումներ, էջ 245:

²⁶ Բուրեւի՝ 1944 թ. հոկտեմբերի 12-ի հարցաքննութեան արձանագրութիւնը, որը ներառուած է Գ. Նժդեհի՝ 1944 թ. նոյեմբերի 2-ի հարցաքննութեան արձանագրութեան մէջ: Տե՛ս ՀՀ ԱԱՆ, Նժդեհի դիւան, հայերէն թարգմանութիւնը՝ «Նախիջեւան», 2000 թ. սահմի (մարտ), թիւ 12, էջ 8, նաեւ Գարեգին Նժդեհ, Կենսագրական յաւելումներ..., էջ 193:

Ամենուրեք - Արեւելքում թէ Արեւմուտքում, հին թէ նոր աշխարհում գալիք ահա-տորութիւնից խթանուած՝ վերածնունդ, հոգեպէս երիտասարդանում են հին ժողովուրդները. ակտիւանում՝ երիտասարդները: Ամէն մէկն աշխատում է ոտքի հանել իր թաքուն ուժերը, յաղթահարել իր ներքին տկարութիւնները... Տիրող տագնապը աւելի եւս շեշտում է եռագլխանի վտանգը. բոլշեւիզմ, պատերազմ, ցեղային վատասերում, որի դէմ յաջող պայքարելու համար ժողովուրդները ապաւինել են իրենց ցեղային բնագոյի ուժին եւ... իրենց կենսաբանական բարոյականին... Բոլոր ժողովուրդների համար - մասնաւորապէս նրանց, որոնք պատերազմէն ծանրօրէն վիրաւոր ու պարտուած դուրս եկան - բոլորի համար, այլեւս ցեղային դաւանանքի բնոյթ է ստացել իրենց ուժերի կենտրոնացման, կազմակերպման ու ակտիւացման անհրաժեշտութեան գործը: Նրանք գերմարդկային ճիգեր են թափում մի կողմից ներցեղային բարոյականի ուժով դարմանելու միջազգային դաժան պայմանագրութիւններից ստացած վերքերը, միւս կողմից պատրաստում են դիմագրաւելու վաղուայ վտանգը... Հասկանալի է, որ տիրող ընդհանուր տագնապի կապակցութեամբ - մի տագնապ, որ զգալիօրէն շոշափում է մեր հաւաքական ճակատագիրը - վաղուց դրուած պիտի լինէր եւ հայ ապագայի խնդիրը - ի՞նչ է լինելու հայ մտաւորականութեան այսօրուայ եւ վաղուայ անելիքը իր ժողովրդի եւ հայրենիքի ինքնապաշտպանութեան համար»²⁷:

Այսպիսով՝ Գարեգին Նժդեհը Հայկ Ասատրեանի մտայղացումով ու նախաձեռնութեամբ, նրա հետ միասին 1937 թ. հիմնեց հայոց ինքնապաշտպանութեան յաւերժական գաղափարախօսութիւնը՝ տարօնականութիւնը, որի հիմքերը Դ-Ե դարերում գցել էին հայոց Ոսկեդարի անբաղդատելի մշակները եւ Մամիկոնեանները: Այն «խմորուեցաւ եւ շարժումի ձեւ ու բովանդակութիւն ստացաւ 1932-36 թւականներուն... Ան կեանքի կոչուեցաւ հատուածականացած եւ իբր բարոյական-հասարակական-քաղաքական ոյժ՝ փոշիացած հայութիւնը հոգեբանական ամբողջացումի վերածելու պահանջէն... Մենք նայեցինք հայի մոայլ դէմքին, տեսանք, որ տարագրութիւնը ո՛չ միայն քաղաքական ճակատագիր է, այլեւ ներքին տկարութեան նախապաշարում: Մենք տեսանք գաղութի բարոյական զարհուրանքը եւ հայրենագուրկ մարդու հոգիի չարչարանքով դիմեցինք մեր հայրերու աստուածներու խորհուրդին եւ գտանք տարօնականութիւնը... Գիտենք, համոզուած ենք, որ դարմանելի է ամէն ճակատագիր, եթէ կայ բարոյական վերանորոգում... Կա՛յ մէկ ուղի եւ այդ՝ Հայաստանի ուղին է: Կա՛յ մէկ առաջնորդ եւ այդ՝ Մամիկոնեան ոգին է: Կայ մէկ երջանկութիւն եւ այդ՝ ցեղի ու հայրենիքի համար մեռնելու վճռականութիւնն է»²⁸:

Տարօն-Տուրուբերան հայրենակցական միութեան 14-րդ պատգամաւորական ժողովը (գումարուել է 1938 թ. սեպտեմբերի 3-5-ը՝ Օհայո, Էքքըն) իր յատուկ յայտարարութեան մէջ նշում է. «Մեր միակ փափագն է, հայրենանուէր հայերն անխտիր տարօնական ոգով վարակել եւ Մամիկոնեան ուխտը բոլորի սեփականութիւնը դարձնել»²⁹:

²⁷ «Ցեղի յաւիտենական զենքը», «Տարօնի Արծիւ», ամսագիր, Սոֆիա, 1938, թիւ 1-2, արտատպութիւնը՝ Գ. Նժդեհ, Հատընտիր, Երեւան, 2001 թ., էջ 330-332:

²⁸ «Տարօնի Արծիւ», Սոֆիա, 1938 թ. օգոստոս-սեպտեմբեր, թիւ 5-6, էջ 7-8:

²⁹ «Տարօնի Արծիւ», Սոֆիա, 1938, թիւ 5-6, էջ 2:

Նոյն ամսագրում զետեղուած առաջնորդողում շեշտուում է. «Որեւէ կազմակերպութիւն, որու մէջ տարօնական ոգի, մեսրոպներու եւ վարդաններու պաշտամունք չկայ, հայկական կազմակերպութիւն չէ... Տարօնի պատմական բոլոր գործերն ու արժէքները եղած են համահայկական, որով՝ «անկուսակցական»: Այս ընդհանուր կանոնէն չէր կրնար եւ չի կրնար շեղիլ եւ տարօնականութիւնը, որ այդ արժէքներու վերարժարծումի եւ ընդհանուր պաշտամունքի շարժում է»³⁰:

«Տարօնականութիւնը,- գրում է «Ռազմիկ» թերթն իր խմբագրականում,- հայ ցեղի հոգեբարոյական այն ոյժն է, որով դիմագծուած է մեր պատմական անցեալը... Վերցուցէք հայոց քրիստոնէացումի բարոյա-քաղաքական խորհուրդը, Մեսրոպի գործի իմաստը, Մամիկոնեանների գերմարդկային հայրենասիրութիւնը, անգամ հոգեգիտօրէն դեռ չվերծանուած «Մշոյ սուլթան Ս. Կարապետ» որակում-ըմբռնումի հոգեբանականը...»³¹:

Տարօնականութեան քրիստոնէական էութեան բացայայտումն է նոյն առաջնորդողի հետեւեալ հատուածը. «Կրօնականութիւն դնել ազգի ճակատագիրը շօշափող հարցերու եւ այդ ճակատագիրը վարող ոյժերու մէջ - տարօնական ոգիի յայտնութեան մէկ կերպն է, յաւիտենական եւ ընդհանրարժէք մեր ցեղի համար... սկիզբէն մինչեւ այժմ այդպիսին է տարօնական հայը - ցեղի գոյութեան պայքարի մէջ զուտ հայկական կրօնական խանդ դնող»: Հայկ Ասատրեանը այդ առիթով գրում է. «Իբրեւ աշխարհային ցաւի փիլիսոփայութիւն՝ քրիստոնէական վարդապետութիւնը պատշաճում է հայկական տառապապաշտ ոգուն, որով նոր կրօնը մեր ցեղի հոգեկան կեդրոնացման ընդունակութեան շնորհիւ, կարճ ժամանակում կարող էր դառնալ ժողովրդական հոգեբանութիւն: Այդպէս էլ եղաւ»³²:

Կրօնական այդ «խանդը» հետեւեալ կերպ է բացում Գարեգին Նժդեհը: «Մամիկոնեանները - որոնց բարոյականը այնքա՛ն պահանջկոտ էր մարտնչող հայ անհատի հանդէպ, որոնց համար աշխարհը շուկայ չէր, այլ քաջագործութիւնների ասպարէզ, որոնք գիտէին կեանքին արժէք չտալ - գիտցան համադրել քրիստոնէութիւնն ու ազգութիւնը» (*«Ինչո՞ւ տարօնականութիւն»*): Նժդեհը տարօնականութիւնը համարում էր «ցեղի յաւիտենական զենքը», որով սպառագինուած՝ հայերս կարող ենք դիմանալ համաշխարհային մրցակցութեանը:

Ո՞րն է ցեղի այդ զենքը:

Ոգին, քանի որ «ոգու ժողովուրդ է հայը»:

Քանի որ ոգու ժողովուրդ ենք, «այդ իսկ պատճառով այն բոլոր վարդապետութիւնները, որոնք դիմագուրկ ոգու ծնունդ են, օրինակ՝ ... բոլշեւիզմ, կոսմոպոլիտիզմ - մնում են անմարսելի ու անհարազատ հայ հոգու համար: Ոգեշունչ էր քրիստոնէութիւնը եւ հենց այդ է պատճառը, որ նրա գիրկը նետուողներէն առաջինը եղաւ հայը: Հասկանանք - մեր ժողովրդի ամենագորաւոր զենքը միշտ էլ եղել է ոգին...

Օր առաջ պէտք է ճշդել մեր ցեղի նկարագրի այն գիծը, որ յաղթական հանդիսացաւ անցեալ դարերի եւ փոթորիկների դէմ, ու պարբերաբար կարելի դարձրեց մեր ազգային վերածնունդներն ու յեղափոխութիւնները. ժամ առաջ պէտք է ճշդել մեր

³⁰ «Տարօնի Արծիւ», Սոփիա, 1938, թիւ 5-6, էջ 6:

³¹ «Տարօնի Արծիւ», Սոփիա, 1938, թիւ 5-6, էջ 51:

³² **Հայկ Ասատրեան**, Արթնացի՝ ի, հայ մարդ, Երեւան, 1998, էջ 68, 74:

ցեղի այն յաղթական գիծը, եւ յետայսու նրա վրայ, միայն նրա վրայ կառուցել մեր հայաշէն ու հայրենաշէն գործը, ու վերստին նրան, միայն նրան կոթնել՝ գոյ եւ գալիք վտանգների դէմ յաջողաբար ճակատել կարողանալու համար:

Տարօնականութիւնն է մեր ցեղային նկարագրի յաղթական գիծը...

Տարօնականութեան - ցեղի յաւիտենական այդ զենքին ենք դիմում...

Պարտականութեան, հզօրանքի եւ քաջութեան կրօն - ահա՛ թէ ինչ է նշանակում տարօնականութիւն...

Հայրենիքը պաշտպանել վաղը կարող են նրանք միայն, որոնք մինչեւ այդ վաղը հոգեպէս կզինուեն տարօնականութեամբ, այսինքն՝ Մամիկոնեան մեր հրաշունչ ռազմիկներէն կը սովորեն ապրել ու գործել միայն այն բանի համար, որի համար արժէ մեռնել, եւ մեռնել այն բանի համար, որի համար արժէ ապրել...

Ցեղի եւ հայրենիքի համար Մամիկոնեանների պէս մեռնել ուզել եւ մեռնել գիտենալ - ահա թէ ինչն ենք մենք անւանում տարօնականութիւն»³³:

Գարեգին Նժդեհը Հայկ Ասատրեանի, Ներսէս Աստուածատուրեանի եւ իր միւս խոհակիցների հետ նոր գաղափարախօսութիւն չի ստեղծել:

Յանձին դաւիթբեկեան ուխտերի, ցեղակրօնութեան ու յատկապէս տարօնականութեան, նա վերականգնեց, լրացրեց ու արդիացրեց մեր ոսկեդարում մշակուած եւ Մամիկոնեանների ջանքերով ու շնորհիւ բիրեղացած հայոց ազգային գաղափարախօսութեան՝ հայոց քրիստոնէականի ռազմաինքնապաշտպանական վարպետութիւնն ու հայեցակարգը՝ «Ուխտ Մամիկոնեից»-ը:

Մամիկոնեան ուխտը հայ ցեղի հրաշակերտած ինքնապաշտպանական անառիկ ամբողջ՝ հայոց Ոսկեդարի յենասիւններից է, որի ճարտարապետներն էին բազմաստուածութեան ու կռապաշտութեան դէմ առաջինը մարտի ելած Հայկ Նահապետին քրիստոնէութեանն ագուցած Ս. Սահակ-Մեսրոպը՝ իրենց հարիւր աշակերտներով:

«Ինչո՞ւ տարօնականութիւն» յօդուածում Նժդեհը գրում է. «Գիտակցական իմ ամբողջ կեանքում, ինչպէս եւ իմ վարած բոլոր ճակատամարտերում - Բալկաններում, Ղարաբիլիստում թէ Լեռնահայաստանում - ինձ վարել է այն ոգին, որը անուանում եմ տարօնականութիւն... Էաբանօրէն առնուած... տարօնականութիւնն ու ցեղակրօնութիւնը տարբեր բաներ չեն ու չեն կարող լինել հայ ցեղի ճակատագիրը խորքով ու իմաստասիրօրէն ապրող ամէն հայու համար... Ժամանակների հոլովոյթի հետ, այդ բոլորին ծնունդ է տուել մի ոգի, որի գծերէն մէկը - հայրենիքի համար քաջաբար կուելու եւ մեռնելու ուխտաւածութիւնը մենք անուանում ենք տարօնականութիւն»³⁴:

Հէնց այս նկատառումներով էլ տարօնականութեան բնաբանը Ղեւոնդ պատմիչի մատենանից առնուած Մամիկոնեանների ուխտն էր. «Քաջութեամբ մեռցուք ի վերայ աշխարհիս մեր եւ ի վերայ ազգիս մեր: Եւ մի՛ տեսցեն աչք մեր կոխան ոտից պղծալից լեալ զարբարանս մեր»:

Այն հարցին, թէ ինչու Մեծ Հայքի աշխարհներից հէնց Տարօնը վերցուեց որպէս համահայկականի խորհրդանիշ, Գ. Նժդեհը պատասխանում է. «Հայոց պատմութեան փիլիսոփայութեան ծանօթ ու հայրենազգաց ամէն մտաւորական հայ կխոս-

³³ Գ. Նժդեհ, Ցեղի յաւիտենական զենքը, Հատընտիր, 2001 թ., էջ 332-333, 337-338:

³⁴ «Տարօնի Արծիւ», Սոփիա, 1938, թիւ 5-6, էջ 16, արտատպութիւնը՝ Գ. Նժդեհ, Հատընտիր, էջ 339:

տովանի, որ Մամիկոնեանների Հայաստանը - թեկուզ յաճախ կիսուած, կիսանկախ, կիսակործան - աւելի՛ հայկական է, աւելի՛ հայրենիք, եւ աւելի՛ պաշտամունք պարտադրող, քան է՛ր նոյնը՝ Տիգրան Աշխարհակալի կամ Արտաշէսի օրով: Ո՞ր փնտրել սրա գաղտնիքը:

Հոգեբանական այդ իրողութեան պատճառներէն առաջինը նրանում է, որ Տարօնի ստեղծած արժէքներէն շատերը կրում են համահայկական կնիք, երկրորդը՝ նրանք վաւերական են, անմեռ, երրորդ պատճառը - դա Մամիկոնեանների՝ հայու եւ Հայաստանի յաւիտենականով ապրելու, նրանց համար անշահասիրաբար գործելու ու արիաբար մեռնելու ուխտն է: Այո՛, մեր ցեղի յաւիտենականը նուաճող գրեթէ բոլոր հոգեւոր զէնքերը - Լուսեղէն այբուբէն, քաջաքաջ արիւթիւն, անցաւորը յաւիտենականին գոհաբերելու տենչ, կենսաբանական բարոյական, հայրենակրօնութիւն - այդ բոլորը, գրեթէ բոլորը, մեզ տուել է Տարօնը: Ճիշդ է, սուրբ է հայրենի երկրի ամէն մի բուռ հողը, սակայն ճիշդ է եւ այն, որ հայրենիքներն ունեն իրենց պատմառազմագիտական տեսակէտից ամենանուիրական ու ամենակարեւոր երկրամասը,- ա՛յն երկրամասը, ուր ցեղը ամենէն շա՛տ է արիւն թափել, կուտորական ջանքեր դիզել, հերոսական ու պատմութիւն ստեղծել... Ամէն երկիր իր «Տարօնը» ունի: Հարցրէք ազգերին - նրանք սրբազան սարսուռով կարտասանեն իրենց «Տարօնի» անունը»³⁵:

Իրեն ուղղուած այն մեղադրանքին, թէ իբր «տարօնական ոգիի առաջնորդները կը պահանջեն, որ ամբողջական Հայաստանի ոգիին փոխարինէ անոր մէկ գաւառին անունը», Գ. Նժդեհը պատասխանում է, որ ինքը ոչ թէ «Տարօն» է քարոզում, այլ «տարօնականութիւն», որը հոգեւոր բովանդակութիւն ունի: «Իմ յօդուածի (Ցեղի յաւիտենական զէնքը - Ռ. Հ.) առաջին տողերը բաւական չէի՞ն ցանկութեան դէպքում հասկանալու, որ տարօնականութիւնը եւ համարել եմ մեր ցեղի ոգու (դուք ասէք - «Հայաստանի ոգու») զոյգ զծերը - յաւիտենական արժէքներ ստեղծելու խանդ, եւ այդ արժէքների համար քաջաբար մեռնելու ուխտաւորութիւն... Ո՞ր հայ գրողը, ո՞ր ճշմարիտ հայրենասէրը եւ մասնաւորապէս ո՞ր ռազմիկը Հայաստանին սպառնացող վտանգի վայրկեաններին չի ոգեկոչել հայրենիքի համար մեռնել ուխտած Մամիկոնեանների օրինակը: Ե՞րբ է հայ սուրբ գործել առանց Վարդանի եւ գրիչը շարժուել առանց Մեսրոպի անունը տալու... Մեր Եկեղեցին ամենայն երկիւղածութեամբ ու պաշտամունքով, դարեր ու դարեր տօնում է տարօնականութեան երկու մեծափառ գործերը - գրերի գիտը եւ Աւարայրը... Ի՞նչ է նշանակում, երբ Հայ Եկեղեցին սրբացնում է Մամիկոնեան ոգին, այդ ոգու կրողներին - արդեօք դա միայն երախտագիտութեան տո՞ւրք է, թէ՞ նաեւ խորագոյն մտահոգութիւն հայրենիքի ապագայի հանդէպ: Սրբացնելով ու յաւերժացնելով Մամիկոնեանների ուխտը՝ Եկեղեցին մեր ժողովրդին տուած է ինքնապաշտպանութեան զէնքերից ամենահատուն ու յաղթականը - «Մահ գիտացեալը...»: Տարօնականութիւնը եւ անուանել եմ «ցեղի առաջին հոգեւոր զէնքը», քանզի ծանօթ եմ այն դժնդակ պայմաններին, որոնց մէջ մեր ժողովուրդը վարեց իր անհաւասար գոյամարտը եւ հարկադրաբար պիտի վարէ եւ վաղը: Իսկ վտանգի ժամանակ - լաւ հասկանանք այդ - «սուրբ վարձու չեն

³⁵ «Ցեղի յաւիտենական զէնքը», «Տարօնի Արծիւ», ամսագիր, Սոֆիա, 1938 թ., թիւ 1-2, Գ. Նժդեհ, Հատընտիր, Երեւան, 2001 թ., էջ 328-329:

առնում»: Այդ ասե՛լ է, որ մենք պայքարի մեր հոգեւոր զենքերն ու մտքի մեր ղեկավար սկզբունքները պիտի առնենք ոչ թէ մեր ցեղի էութեան անհարազատ օտարոտի վարդապետութիւններէն, այլ մեր պատմութեան յաւիտենական շարժը վարող ոգուց: Այդ ոգին... տարօնականութիւնն է մեզ համար»³⁶:

Հայկ Ասատրեանի հարցաքննութեան արձանագրութիւնից հնարաւորութիւն ենք ստանում որոշակի պատկերացում կազմել տարօնական շարժման աշխարհագրութեան, ընդգրկումների ու ազդեցութեան մասին:

Նա հարցաքննութեան մէջ նշում է, որ տարօնական կազմակերպութիւններ կային ԱՄՆ-ի Աքրուն քաղաքում (ղեկավարներ՝ Արիս Տէր-Իսրայէլեան, Հայկ Մելոյեան, Սեմերուշեան), Նիւ Եորքում (Գեղակ Գեղամեան, Արաքսիա Խանիկեան), Ման Ֆրանցիսկոյում (Մարգարեան, Աջմարեան, Մամիկոնեան), Սիրիայում (Արտաշէս Յարութիւնեան), Մարսելում (Սմբատ Բորեան, Ներսիսեան, Խոռեան, Փոլոյեան), Սոֆիայում (Աստուածատուրեան), Պլովդիւում (Նշան Դաւիդեան, Մարտիկ Դոդրամաճեան, Մկրտիչ Թումասեան, Պետրոս Բանդլեան, Բոստանջեան)³⁷:

Տարբեր աղբիւրներից յայտնի է նաեւ, որ տարօնականութեան կառոյց կար նաեւ Ռումինիայում:

³⁶ «Ինչո՞ւ տարօնականութիւն», Հատընտիր, էջ 341-343:

Հ. Ասատրեանի հաւանաբար 1945 թ. հարցաքննութեան արձանագրութիւնը:

³⁷ Ռ. Համբարձումեան, Գարեգին Նժդեհ, Կենսագրական յաւելումներ..., էջ 196-200, 458:

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՖՐԵՂԵՐԻԿ ՖԵՅԴԻԻ ԲԱՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿԱՐԴԱՑՎԱԾ 1965-ԻՆ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 50-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

1965 թվականի նոյեմբերի 7-ին Բյուսելի Թագավորական Ակադեմիայում կազմակերպվել և անց է կացվել Հայոց ցեղասպանության 50-ամյա տարեդարձին նվիրված հիշատակի արարողություն: Հանդես են եկել տարբեր մտավորականներ՝ արժեվորելով հայ ժողովրդի հոգևոր արժեքները տարբեր տեսանկյուններից: Մորիս Լեռոյը խոսել է հայերի, հայոց լեզվի և հայ գրականության («Les Arméniens, leurs langue et leurs littérature»), Արբակ Մկրտչյանը՝ Հայաստանի համաշխարհային արվեստի մեջ ունեցած տեղի («La place de l'Arménie dans l'histoire générale de l'art»), Ֆրեդերիկ Ֆեյդին՝ հայերի ավանդույթների գլխավոր նկարագրի մասին («Sur les caractères dominants de la tradition arménienne»)¹:

Ֆրեդերիկ Ֆեյդի վերոհիշյալ բանախոսությունը սեղմ է, սակայն խիստ տարողունակ: Հայագետը, ի պաշտպանություն հայ ժողովրդի շահերի, հանդես է գալիս իր հիմնավոր խոր գիտելիքներով, հայ ժողովրդի պատմության, գրականության, մշակույթի, ժողովրդական բանահյուսության, կրոնական ու աշխարհիկ ավանդույթների քաջիմացությամբ: Որպես մեծ մարդասեր՝ նա կամենում է բացատրել քաղաքակիրթ երկրներին, թե թուրքերի կազմակերպած այդ հրեշավոր եղեռնը ինչպիսի կորուստ է եղել ոչ միայն մարդկային ահռելի թիվ կազմող կյանքերի դաժան ոչնչացմամբ, այլև մի լուսավոր քաղաքակրթության կործանմամբ: Հայագետը մտածում է, որ գուցե հայոց ստեղծած քաղաքակրթության ճանաչումը արգելք կլիներ ցեղասպանությանը: Նա խոսում է միայն փաստերով: Նրա կարծիքով, թեպետ հայերի պատմությունը շատ հաճախ աչքի է ընկնում ողբերգական նշանավոր տարբեր իրադարձություններով, սակայն Հայաստանը շարունակել է անեղծ պահել իր սերը դեպի ազգային ավանդույթները: Որքան էլ պատմական պահի մթնոլորտը դժնդակ է եղել, հայերը իրենց մեջ պահել են անաղարտ մի լույս, որը, դժբախտաբար, գաղտնի թաքնված է եղել: Հայերենը երբեք չի եղել միջազգային լեզու, սակայն այն իր հարազատությունն ու պայծառությունն է ունեցել՝ թեպետ չի եղել կայսրության լեզու, Հայաստանը չի ունեցել ծովեր ու նավահանգիստներ, որպեսզի ազատորեն զարգացներ առևտուրը, դրա հետ միասին արտահաներ իր գաղափարները: Ֆեյդին ցավով նշում է, որ հայկական քաղաքակրթությունը երբեք դուրս չի բերվել երկրի սահմաններից: Միշտ եղել է մի արգելք, որը թույլ չի տվել, որ հայ մտքի լուսավոր

¹ Տե՛ս «Annuaire de l'Institut de Philologie et d'Histoire Orientales et Slaves» - Tom XVII (1963-1965), Bruxelles, 1966, p. 5-29.

ճառագայթը փայլատակի և նշմարելի լինի արտաքին աշխարհի համար: Եվ թվում է, թե այդ արգելքի պատճառով հայոց քաղաքակրթության վրա նետվել է մի սև քող:

Ֆրեդերիկ Ֆեյդի կարծիքով՝ աշխարհի այդ հատվածը ցավալիորեն չափազանց քիչ է ծանոթ Արևմուտքին: 17-րդ դարի դասական պատկերացումները ավելացան եգիպտագիտության, ասորագիտության և ավելի նորագյուտ հիթթիթագիտության շնորհիվ: Սակայն բավականին հաճախ, երբ խոսում են «Վանի արձանագրությունների», ինչպես նաև «ուրարտական թագավորության» մասին, կարելի է ասել, որ հնագետներն ու արևելագետները, ովքեր քաջածանոթ են այդ երկրի քաղաքակրթությանը, դեռևս շատ փոքր թիվ են կազմում: Հայաստանը կցված է Իրան-Միջագետք արևելյան շրջանին: Եթե քաղաքականապես հայկական լեռնաշխարհի բնակիչները չեն ձևավորել մեծ կայսրություն, սակայն քաղաքակրթության առումով նրանք խաղացել են բավականին կարևոր դեր՝ որպես տարանցիկ ճանապարհ դառնալով Արևմուտքի և Արևելքի համար՝ ազգային հանճարի իրենց հայտնագործումները հաղորդելով երկու կողմերին էլ: Ֆրեդերիկ Ֆեյդին անդրադառնում է հայ ժողովրդի զարգացման բոլոր ժամանակահատվածներին՝ սկսած քարե դարից մինչև 20-րդ դար: Քարե դարում երկիրը հարուստ էր օբսիդիանի (կայծքարի) առատությամբ: Բրոնզե դարում երկրի օգտակար հանածոները նպաստում են ինքնուրույն ձևով զարգացնելու արդյունաբերությունը: Մյուս կողմից՝ քարերով հարուստ երկիրը, որն ուներ թեթև տուֆը, ամուր բազալտը և մարմարը, զարկ է տալիս ճարտարապետության զարգացմանը:

Ֆրեդերիկ Ֆեյդին նշում է, որ լայնածավալ Հայաստան երկրից մնացել է մի փոքրիկ նեղուց՝ Խորհրդային Հայաստանը, որտեղ գիտությունը ծաղկում է իր բոլոր ճյուղերով: Հայաստանի ճշմարիտ պատմությունը, ըստ պահպանված արձանագրությունների և հուշարձանների, սկսում է ստեղծվել միայն երկրորդ հազարամյակի կեսերից: Հայագետը նկատում է, որ ոչ մեկի մտքով չէր անցնի այդ լեռնոտ ու քարքարոտ երկրում Քրիստոսի ծննդից դեռևս 13 դար առաջ չորս ակներ ունեցող կառքերի գոյության մասին: Ուրարտական պետությունը հասել էր քաղաքակրթության բարձր աստիճանին և՛ նյութական, և՛ սոցիալական, և՛ հոգևոր առումով: Սոցիալական կազմակերպվածությունը հաստատում են այդ շրջանից մնացած ամրոցների ավերակները, կարասները, որոնք իրենց վրա ունեն չափ ու կշռի նշումներ, ջրմուղների առկայությունը, որոնցից մի մասը դեռևս օգտագործվում են: Այդ շրջանի արվեստից պահպանվել են հոյակապ արձանիկներ, բրոնզե սաղավարտներ, ափսեներ, ականջօղեր, մեծաշուք որմնանկարներ, որոնք մնացել են հողի տակ և երևան եկան 1950 և 1959 թվականներին Արին Բերդում: Այդ ամենը փաստերով հաստատում են, որ Հին Հայաստանում արվեստը նույնքան զարգացած էր, որքան Միջերկրականի ավազանի կայսրություններում:

Ֆրեդերիկ Ֆեյդին հարում է այն գիտնականներին, ովքեր հայերին համարում են եկվորներ շատ հնագույն ժամանակներից²: Նա նշում է, թե ինչպես բալկանյան և

² Հայ ժողովրդի ծագման, Հայասա երկրի էթնիկական կազմի և լեզվի խնդիրների վերաբերյալ ՀՀ ԳԱԱ հրատարակած «Հայ ժողովրդի պատմություն» աշխատության I հատորում կարդում ենք. «Մեզ հասած տվյալները Հայասա երկրի էթնիկական կազմի և լեզվի մասին այնքան կցկտուր են, որ առայժմ դժվար է

փոյուզիական մշակույթի կրողները ստեղծեցին արևմտյանի իրենց տեսակը: Պատմության որոշակի ժամանակահատվածում հայերը կրել են հելլենիզմի ազդեցությունը, որի վկայությունները պահպանվում են հանձինս Գառնիի տաճարի և նույն վայրում գտնվող բաղնիքի հատակի խճանկարների:

Այնուհետև եկել է քրիստոնեությունը, որը չորրորդ դարի սկզբում ընդունվել է պետականորեն: Հինգերորդ դարի առաջին տարիներին Մեսրոպ Մաշտոցը ստեղծում է իր այբուբենը՝ ազգային լեզվով գրելու համար: Դա անմիջապես սկիզբ է դնում մի ծաղկուն մատենագրության, որում գրականությունը, աստվածաբանությունը, պատմագրությունը միակ տեսակները չէին: Նրանում շուտով տեղ են գտնում գիտության տարբեր ճյուղերը՝ բնական գիտություններն՝ ինչպես տիեզերագիտությունն ու մաթեմատիկան, հասարակական գիտությունները՝ ինչպես քերականությունը³ արդարադատությունն ու իրավունքը:

Քրիստոնեության շնորհիվ զարգացավ հայկական ազգային ճարտարապետությունը, որն իր կամարների ձևով կանխեց գոթական ոճը: Հանդես եկավ հայկական մանրանկարչությունը, որն իր երփներանգ մագաղաթներով նմանը չունի ուրիշ երկրներում: 20-րդ դարակեսի Երևանը, ըստ հայագետի, իր ճարտարապետական ձևերով կրկնում է հայ միջնադարյան տաճարների՝ Էջմիածնի, Հռիփսիմեի, Զվարթնոցի, Հաղպատի ու Սանահինի, Աղթամարի և, վերջապես, Անիի շինությունների ոճերը: Ասում են, թե Անիի ճարտարապետն է վերակառուցել Կոստանդնուպոլսի նշանավորագույն կառույցի՝ Սուրբ Սոֆիայի գմբեթը: Ֆեյդին գուգահեռներ է անցկացնում 20-րդ դարի երկրորդ կեսի նշանավոր ու աշխարհահռչակ գիտնական, աստղագետ Վիկտոր Համբարձումյանի և յոթերորդ դարի հայ գիտնական, մաթեմատիկոս ու աստղագետ Անանիա Շիրակացու միջև: Ի դեպ, չի մոռանում հիշեցնել Վիկտոր Համբարձումյանի երազանքը՝ տեսնել Անանիա Շիրակացու գրվածքների ամբողջական թարգմանությունը որևէ եվրոպական լեզվով⁴: Նա նշում

որոշակի կարծիք կազմել այդ մասին: Գերիշխող կարծիքն այն է, որ Հայաստան-Ազգի երկրի բնակիչները պատկանում էին խուրիական ցեղերին: Սակայն բացահայտվում են այնպիսի փաստեր, որոնք կարող են մեկնաբանվել հոգուտ հայաստացիների լեզվի հնդեվրոպական ծագման: Իր ժամանակին իբրև վարկած հայտնված այս տեսակետը հետագայում զարգացվեց Գ. Զահուկյանի կողմից: Հայաստայի լեզվից մեզ հասած սակավաթիվ տվյալների (հայասական անձնանունների ու տեղանունների) վերլուծությունը բերեց նրան այն եզրակացության, որ հայասական լեզուն պատկանում է հնդեվրոպական հին անատոլիական լեզուների խթական-նեսիական (ավելի ճիշտ՝ խթական-լուվիական) խմբին, կամ որ այն թերևս ինքնուրույն հին անատոլիական լեզու է: Այս տվյալների լույսի տակ փորձ է արվում պարզելու հայասական բաղադրատարրի բնույթը հայոց լեզվի մեջ: Նա նույնիսկ ենթադրում է «հայաստ-իշուվական բարբառների մնացորդների» առկայությունը ուրարտեներում և հայերենում:

Այնուհանդերձ, անհրաժեշտ է նշել, որ եթե Hayasa անունը հիմք է դարձել հայ ժողովրդի ինքնանվան և նրա կողմից զբաղեցրած երկրի անվան, ապա այդ նույնը չի կարելի ասել հայերենի մասին: Հայաստայի լեզուն կարող է դիտվել թերևս որպես ձևավորվող հայերեն լեզվի հնագույն շերտերից մեկը, բայց ոչ նրա հիմքը, որովհետև, ինչպես կտեսնենք, հայոց լեզվի հիմքը դարձավ Ն.Ք. XII դարից Հայկական լեռնաշխարհ թափանցած թրակա-փոյուզիական լեզվախմբին պատկանող արիմ-արմենների լեզուն» (տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, Երևան, 1971, էջ 194):

³ Հին ժամանակներում փիլիսոփայությունը մաս էր կազմում քերականությանը - Ա.Դ.:

⁴ Անգլիացի նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Կոնիֆերը Անանիա Շիրակացու գործերից թարգմանել է

է նաև Հայաստանում ոսկերչության, խեցեգործության և գորգագործության շատ զարգացած լինելու մասին:

Երկար ժամանակ, երբ Հայաստանը պարբերաբար չի կողոպտվել ու ավերվել հարևան ժողովուրդների կողմից, կամ տարածքով հեռու տերերի զինվորական լծի տակ չի դրվել, կարողացել է առաջադիմել իր մշակութային կյանքում: Մա շատ հետաքրքիր երևույթ է, որովհետև նրա ազգային տարածքը գրավված էր մի ժողովրդից, որն իր անխառն մշակույթն ու գիտությունը չուներ:

Ֆեյդին նշում է, որ 14-րդ դարավերջին, երբ Կիլիկիայի հայկական թագավորության անկմամբ վերջ տրվեց հայոց պետականությանը, հայկական մշակույթն ավերվեց ու ոչնչացվեց հայրենիքում, և հայ ժողովրդի ստեղծած արժեքները արդեն տարածվեցին աշխարհի տարբեր ծայրերում ապաստանած հայերի միջոցով, նման ճիշտ այն ծառերին, որոնք ճեղքում են պատը և, հակառակ ամեն արգելքի, աճում:

Ստեղծագործելու և կառուցելու, մշակույթ արարելու ծարավը երբեք չի լքել հայերին, որի վառ ապացույցն է այն փաստը, որ հայերն աշխարհի այն առաջին ժողովուրդներից էին, որ ունեցան իրենց տպագրությունը: Հայերեն առաջին տպագիր գիրքը լույս է տեսել Վենետիկում 1512 թվականին⁵: Ֆեյդին նշում է, որ այդ գրքում կան մի շարք միջնադարյան բնագրեր⁶:

Ֆեյդին հատուկ ուշադրություն է հրավիրում 1907 թվականին Մխիթարյան Հայրերից Աթանաս Տիրոյանի գրքին «criture universelle», որով նա առաջարկում է ստեղծել էլեկտրոնիկ մի մեքենա՝ տարբեր լեզուներից ավտոմատ թարգմանություն կատարելու համար⁷:

Ստեղծագործական ծրագրերի իրականացման համար հայրենի հողի վրա ստեղծված էին անտանելի պայմաններ, և հայ գրի ու գրականության օրրան դար-

«Ինքնակենսագրությունը», «Զատիկի» և «Յայտնութեան» ճառերը:

⁵ Հայ առաջին տպագիր գիրքն է «Ուրբաթագիրքը», որի անվանաթերթի վրա գրված է. «Անուն գրոցս է սուրբ Ուրբաթագիրք»: Տպագրել է Հակոբ Մեղապարտը: Այս գրքի և նրանից հետո լույս տեսած հնատիպ գրքերի մանրամասն նկարագիրը տե՛ս Ն. Ա. Ոսկանյան, Զ. Ա. Կորկոտյան, Ա. Մ. Մավալյան, Հայ գիրքը 1512-1800 թվականներին, Հայ հնատիպ գրքի մատենագիտություն, Առաջաբանը՝ Ն. Ա. Ոսկանյանի, Խմբագրությամբ՝ Ռ. Ա. Իշխանյանի, Երևան, 1988:

⁶ «Ուրբաթագրքի» նյութերից են՝ «Երդումն և բժշկութիւն յոգոյ և մարմնոյ», «Աւետարան Մատթէոսի», «Աղալթք Սրբոյն Գիպրիանոսի, զոր ասացեալ է վասն դիւաց և կախարդաց, և աղանդաց», «Պատմութիւն Յուստիանէ կուսին», «Մաղթանք առ ամենասուրբն Աստուծոյ», «Աղօթք Սրբոյն Գրիգորի Նարեկացոյն», «Աղալթք պահպանութեան», «Աւետարան ըստ Մատթէոսի», «Աւետարան ըստ Մարկոսի», «Աւետարան ըստ Դուկասոս», «Աւետարան ըստ Յօհաննոս» և էլի մի շարք այլ բնագրեր:

⁷ Տարբեր ազգերի գրերի մասին ծավալուն աշխատություն է գրել դոկտոր Արմենակ Եղիայանը (տե՛ս **Տոքթ. Արմենակ Եղիայան**, Մեսրոպեան տառերու ակունքները, Անթիլիաս, 2005, 267 էջ): Օտար երկրներում հիմնված հայկական հին տպարանների մասին Ստեփանոս Նազարյանը նշում է. «Мы встречаем некогда процветавшие типографии армянские в Голландии, Саксонии, Англии, Польше, Константинополе, Смирне, в разных русских городах, Мадрасе, Новой Джульфе и Марселе; а в новейшие времена, на волнах Адриатического моря, близ Венеции, и на острове Мальте. Это, можно сказать, единственный пример в летописях истории, что народ, испытавший на себе столь печальную судьбу, без средоточия для своих сил, среди многообразной борьбы, обладает языком ученым и утонченным во всех возможных направлениях» և տե՛ս **Ստ. Նազարյան**, Երկերի ժողովածու, Երևան, 1996, էջ 10):

ձավ Վենետիկը, ուր 18-րդ դարասկզբին հիմնվեց Մխիթարյան միաբանությունը: Այդտեղից գիտական ու մտավոր զարգացումը ուղղվեց դեպի Կոստանդնուպոլիս, ուր խեղդվեց 1915 թվականի արյան մեջ: Մեծ եղեռնի զոհերի թվում Ֆեյդին առանձնացնում է այս շրջանի համաշխարհային նշանավոր բանաստեղծներից մեկին՝ Դանիել Վարուժանին, որը փայլուն շրջանավարտն է Գանտի համալսարանի, և նրա նկարը զետեղված է այդ ուսումնական հաստատության կենտրոնական գրադարանի ընթերցասրահում:

Հայագետը նշում է, որ հայերի մտավոր զարգացման մեկ ուրիշ կենտրոն ձևավորվեց 19-րդ դարի կեսերին՝ Արևելյան Հայաստանում: Եվ Խորհրդային Հայաստանում է, որ 1965-ին արդեն գործում են Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիան, Երևանի պետական համալսարանը, բազմաթիվ գիտահետազոտական ինստիտուտներ: Ֆեյդին նշում է, որ Երևանի Մատենադարանում պահպանվում են տասը հազար ձեռագրեր՝ մեր օրերը հասած քսանհինգ հազար ձեռագիր մատյաններից: Զարմանալի է, որ դարերի ընթացքում քաղաքական անկայուն վիճակում հայտնված Հայաստանում պահպանվել են քսանհինգ հազար ձեռագրեր և հասել մեր օրերը⁸:

Ֆեյդին նշում է, որ ձեռագրերի այդ թվով կարելի է դատել հայ ժողովրդի՝ դեպի իր մշակույթն ունեցած բացառիկ նվիրման մասին. «Զգարմանանք այսքան, թվական կարևորության համեմատ հայ ժողովուրդը մեր օրերում քայլում է նրանց հետ, ովքեր ունեն աշխարհի հռչակավորներին»⁹:

Ֆեյդիի կարծիքով՝ յուրաքանչյուր մարդու գնահատում են ոչ միայն նրա մտավոր արժեքով: Բարոյական արժեքը ևս մեծ հարգանքի է արժանի: Հայագետի համոզմամբ՝ հայերին չպետք է գնահատել մեկ առանձին անհատի խառնվածքով. մանավանդ երբ գաղափար չունեն այդ ժողովրդի ազգային բնավորության մասին: Ֆեյդին նկատում է, թե ոմանք անվանարկում են հայերին 1915 թվականի ջարդերի առանձին դրվագներում՝ ասելով, թե նրանք նահատակվեցին ու մահ գտան, որովհետև չուրացան ո՛չ իրենց հայրենասիրական գաղափարները և ո՛չ էլ կրոնը: Մի՞ թե

⁸ «Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ-Մատենադարանը» աշխարհի հնագույն և ամենահարուստ մատենադարաններից մեկն է: Նրա միայն հայերեն ձեռագրերի հավաքածուն այսօր պարունակում է 10171 ամբողջական ձեռագրեր և 1683 ձեռագիր պատառիկներ: ...Ինչպես հայտնի է, մեր Մատենադարանի հայերեն ձեռագրերի հավաքածուի հիմքում ընկած է Էջմիածնի նախկին գրատան հավաքածուն, որի պատմությունը գրեթե սկսվում է դարաշրջան կազմող այն օրվանից, երբ հայ ժողովրդի բազմերախտ գավակ Մեսրոպ Մաշտոցը ստեղծեց հայկական գիրը և հիմք դրեց ազգային մատենագրության:

Լինելով հայ պետականության ու հոգևոր կյանքի կենտրոն՝ քաղաքամայր Վաղարշապատը հինգերորդ դարի վաղ արշալույսին հանդիսացավ այն մտավոր կենտրոնը, որի դպրոցներից դուրս եկած սաները մեսրոպյան անմարելի լույսով ողողեցին ողջ Հայաստանը՝ սերունդներին ավանդելով դասական այնպիսի մի մատենագրություն, որը հայ ժողովրդի ելևէջներով հարուստ պատմության ամբողջ ժամանակաշրջանում միշտ հույսի ու ոգևորության անսպառ աղբյուր հանդիսացավ» (տե՛ս Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատոր Ա, Կազմեցին՝ Օ. Եզանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաթյան, Ներածությունը՝ Օ. Եզանյանի, Խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Երևան, 1965, էջ 14):

⁹ F. Feydit, Les caractères dominants de la tradition arménienne, p. 19.

նրանք՝ այդպես ասողները, չեզրակացրին, որ այդ ժողովուրդը գերագույն նվիրվածություն ունի իր ազգային գաղափարներին ու բնավորությանը:

Այս երկու գծերն են, որ մարդուն դարձնում են մարդ, և ժողովրդին՝ ազգ: Ֆեյդիի կարծիքով՝ հայ մարդկանց ճանաչելու համար կարիք չկա հանդիպել ու խոսել նրանց հետ, ավելի լավ է լսել նրանց անկաշկանդ զրույցը միմյանց հետ, և հենց դրանից կերևա, թե ինչի մասին են նախընտրում խոսել, ինչպես են իրենց մտքերը հայտնում. «Ես վերջապես կարողացա այդ ձևով լսել ոչ թե հայերի, այլ հայ ժողովրդի խոսակցությունը»¹⁰: Նրա կարծիքով՝ հայ ժողովրդի բարոյական կերպարը արտացոլված է «Մասունցի Դավիթ» էպոսում, որը նա հյուսել է դարերի ընթացքում՝ նրանում դնելով իր մտածելակերպն ու զգացմունքները:

«Մասունցի Դավիթ» էպոսն առավել կատարյալ ձևով հասկանալու համար Ֆեյդիին կարդացել է նաև այլ ժողովուրդների էպոսները: Նա չի տալիս մի էպոսի վերնագիրը, որն իրեն ցնցել է: Այն ստեղծված է կենդանի և աշխույժ ոճով, սակայն իր բովանդակությամբ իսկական հակապատկերն է «Մասունցի Դավիթ» էպոսի, որովհետև այդ ստեղծագործության մեջ գործողությունների շարժիչ ուժը վայրենությունն ու խորամանկությունն է՝ ի սպաս դրված կողոպուտին¹¹:

Ֆեյդին տեսնում է չափազանց մեծ տարբերություն այդ էպոսի հերոսների և Մասնա դյուցազունների վարքագծի միջև: Հայագետն ասում է, որ ինքը ծանոթ է ոչ միայն «Մասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագրին, այլև տարբեր պատումներին: Ուշադիր քննելով ողջ էպոսը՝ ինքը եկել է այն համոզման, որ երրորդ ճյուղը ստեղծվել է միջնադարում, սակայն նրա հիմքում ընկած են առավել հին ժամանակների դեպքեր: Դավիթն իսկական ասպետ է, որը կատարում է գեղեցիկ ու նշանավոր գործեր. նա իր հակառակորդի նենգության դիմաց, որն իրեն նետել էր խոր փոսի մեջ, վրան քաշել յոթ ջրաղացքար և յոթ գոմշի կաշի, զիջում է երեք զարկերից երկուսը: Մեն-մենակ կռվելով թշնամու բանակի դեմ՝ նախապես նրան զգուշացնում է իր հարձակման մասին, որ թշնամին անակնկալի չգա, և անմիջապես դադարեցնում է կոտորածը, երբ իմանում է, որ Մելիքը կռվողների մեջ չէ:

Ինչպես Դավիթը, այնպես էլ մյուս ճյուղերի հերոսները քիչ նման են ասպետական վեպերի իդեալ-հերոսներին. նրանք իրենց էությամբ վիթխարի դեմքեր են, և նրանց մեծագործությունները բնական են: Ֆեյդին նկատում է, որ հայկական էպոսի հերոսները երբեք կռիվ ու պատերազմ չեն սանձազերծում: Նրանք նախընտրում են վտանգի մեջ նետվել մեծ տազնապի դեպքում, նույնիսկ զգալով վախը, նրանց եզակի նպատակն է պաշտպանել իրենց ժողովրդի կյանքն ու ազատությունը: Նրանք բռնակալների լծից ազատում են նաև ուրիշ ժողովուրդների: Երբ օտար ժողովուրդը, ելնելով երախտագիտությունից, նրանց թագավորություն է առաջարկում, Մասնա դյուցազունները մերժում են, որովհետև ոչ մի ժողովուրդ չպետք է ունենա իրենից չձնված թագավոր: Նրանց բարությունը տարածվում է ոչ միայն մարդկանց, այլև կենդանիների վրա: Որսի գնալով՝ Դավիթը քանդում է որսատեղի պարիսպները, քաջ գիտակցելով, որ բռնվածին չի կարելի խփել: Ֆեյդին Դավթից բացի բերում է

¹⁰ F. Feydit, նույն տեղում է

¹¹ Նույն տեղում է

Մեծ Մհերի օրինակը, երբ վերջինս գնում է կովեղու Սասուն բերվող հացի ճանապարհը փակող առյուծի հետ: Երբ քաղաքի բնակիչները զինված գնում են նրա հետ, նա առյուծի դեմ կովում է մեն-մենակ և առանց զենքի:

Սասնա դյուցազունները սոցիալական տարբերություն չեն դնում իրենց և ժողովրդի միջև, նրանք չունեն ո՛չ թագավորական, ո՛չ իշխանական տիտղոսներ, տիրապետում են պարզ արհեստների, հովիվ ու հոտաղ են, չեն զլանում օգնության ձեռք մեկնել շինականներին՝ նրանց փոխարեն վարելով արոթը:

Ֆեյդին հատուկ հիացմունքով է խոսում հայ կանանց մասին: Նրանց մեջ բացառություն է վավաշոտ Սարիեն, որն, ինչպես ինքն է ասում, այլազգի է և չի էլ ուզում նմանվել հայուհու:

Էպոսի բոլոր հայ կանայք և նրանք, ովքեր հայ են դառնում ամուսնության հետևանքով, առաքինության տիպար են: Նրանցից մեկն իր ամուսնու մահից հետո, որպես սգո նշան, փակվում է առանձին սենյակում և դուրս չի գալիս մինչև այն պահը, երբ իմանում է, որ իր թոռը պատրաստ է ծառայելու հայրենիքին, մեկ ուրիշը հանուն պետական շահի ուխտագանգ է լինում և մեռնում, մի երրորդը չի կամենում ապրել ամուսնու մահից հետո և ինքնասպան է լինում:

Ֆրեդերիկ Ֆեյդին մեծապես գնահատում է «Սասունցի Դավիթ» էպոսի բարոյական դասերը և բոլոր հոգեշահ խրատները: Նա ասում է, որ այդ էպոսը չի ստեղծվել ընտրյալ խավի համար և նման չէ միջնադարյան խորհրդավոր գաղտնիություն ունեցող գրականությանը:

«Սասունցի Դավիթ» էպոսը բխում է հայ ժողովրդի ոգուց, դա այն բարոյական բարձր հատկանիշներ ունեցող ժողովուրդն է, որը մարտիրոսացավ 1915-ին:

Մեծ հայասեր ու մարդասեր գիտնականի այս բանախոսությունը չի կորցրել և չի կորցնելու իր նշանակությունը. այն հիմնավոր ձևով դատապարտում է մարդու և որևէ ժողովրդի դեմ ուղղված ամեն մի ոճրագործություն:

ԼՈՒՄԻՆԵ ԲԱԼՅԱՆ

ԵՊՀ Ռադիոհեռուստատիվային հաղորդումների
ամբիոնի հայցորդ

ՀՈԳԵՎՈՐ-ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԼԵԶՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԵԹԵՐՈՒՄ

Ռադիոհեռուստատեսային լրագրության սկզբունքային առանձնահատկություններից մեկը լեզվի խնդիրն է: Հայտնի է, որ ռադիոն և հեռուստատեսությունն, իբրև բանավոր խոսքի կրողներ, ունեն տեքստերի կազմության իրենց հիմնարար սկզբունքները, որոնցից գլխավորն ու առաջնայինը մատուցվող նյութի պարզությունն ու հստակությունն է, այսինքն՝ լսողին կամ դիտողին խոսքի միանգամից ընկալելի լինելը: Ժուռնալիստիկայի այս ոլորտները պահանջում են՝

- ա) նախադասությունների կազմության պարզ տեսակներ
- բ) տվյալ լեզվում բառերի առավել գործածելի և հայտնի տարբերակներ
- գ) խոսքի մասերի պարզ ձևերի օգտագործում և այլն:

Ռադիոհեռուստատեսային նյութերի խոսքի կազմության սկզբունքների մասին բազմիցս տարբեր տեսաբաններ են գրել: Վերջիններիս ելակետային սկզբունքը հեռուստառադիոյի լեզվի խնդրում նույնն է. «Ռադիոհեռուստատեսային լրատվության հիմնական և գլխավոր նպատակը հսկայական լսարանին լուրերի պարզ և հստակ մատուցումն է առանց լեզվական արգելքների»¹:

Հայաստանյան հեռուստառադիոյի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ խոսքի կազմության վերը նշված դրույթներից զգալիորեն տարբերվում են հոգևոր-կրոնական թեմաներով պատրաստվող նյութերը: Համեմատությունների ժամանակ աչքի են ընկնում մի շարք առանձնահատկություններ ու շեղումներ, որոնք ունեն իրենց տարաբնույթ պատճառները: Հոգևոր-կրոնական ուղղվածության ռադիոհեռուստատեսային հաղորդումների լեզվառական առանձնահատկության հիմնական պատճառը այդ նյութերի համար աղբյուր հանդիսացող գրականությունն է, որը գրաբար է: Լեզուն մտածողություն է, իսկ մեր կրոնը ձևավորվել է գրաբարյան մտածողությամբ, այդ պատճառով, որքան էլ փորձ է արվում տեքստը շարադրել ժամանակակից հայերենով, միննույն է, տեքստում պահպանվում է գրաբարյան մտածողությունը: Ավելին, ամերիկացի լեզվաբան Բենջիամին Լի Ուորֆը լեզուն դիտարկում է որպես մարդկանց հոգեկան, մտավոր ու պրակտիկ գործունեության փոխհարաբերության արդյունք: Նա այդ փոխհարաբերությունը հասկանում է մարդկանց մտածողության, աշխարհայեցողության և վարվեցողության կախվածությունը բառագործածության ընդունված ձևերից:

«Մեր մտածողական աշխարհը պատճառակցված է լեզվով և այդ լեզվականորեն պատճառակցված աշխարհը ոչ միայն հարաբերակցվում է մեր մշակութային իդեալների ու դրվածքների հետ, այլև մեր բուն ենթագիտակցական գործողությունները ներառում է իր ազդեցության ոլորտի մեջ ու դրանց տալիս որոշ տիպական

¹ Քուիլեր Ղ. Ք., Ռադիոհեռուստատեսային լրագրության բառապաշարը, «Ռադիոհեռուստատեսային ժուռնալիստիկա», Եր., 2001 թ., էջ 8:

գծեր»²:

Այդ պատճառով մեր օրերում իրար ետևից թարգմանվող հոգևոր-կրոնական գրականության ու նյութերի մեծ մասի մեջ պահպանվում է գրաբարյան լեզվամտածողությունը: Ուստի հոգևոր-կրոնական թեմաներով ռադիոհեռուստատեսային մի շարք նյութեր ստեղծվում են գրաբարյան բառակազմական ձևերով ու բառապաշարով: Ռադիոյով և հեռուստատեսությամբ հնչած հոգևոր-կրոնական թեմաներով նյութերը թեպետ կազմված են ժամանակակից հայերենի կանոններին համապատասխան, սակայն այդ նախադասություններն իրենց մեջ կրում են բազմաթիվ գրաբարյան բառեր, բառակապակցություններ: Բնարկե, լրագրողի մասնագիտական պարտքն է ռադիոհեռուստատեսային լսարանին պարզ նյութ մատուցել: Սակայն այս դեպքում լրագրողը գործ ունի Եկեղեցու ավանդական մշակույթի հետ: Դարերով ամրագրված արտահայտությունների ու ձևակերպումների խախտումը կարող է հանգեցնել դավանաբանական սխալի: Այդ պատճառով լրագրողը խուսափում է բառակազմական և շարահյուսական ինքնուրույն ձևեր կիրառել և նյութը գրելիս օգտագործում է հենց այն ավանդական արտահայտություններն ու ձևակերպումները, որոնք ընդունվել են մեր Եկեղեցու հայրերի կողմից հազարամյակների ընթացքում:

Այսօր ռադիոհեռուստատեսությամբ հնչող առավել հաճախ հանդիպող եկեղեցական քարացած արտահայտություններից կարող ենք հիշել «հոգևորականաց դաս»³, «դպրաց դաս»⁴, «հայրորդյաց տուն»⁵, «իջման վայր»⁶, «երիտասարդաց միութուն»⁷, «ամուսնացյալ քահանա»⁸ և բազմաթիվ այլ գրաբարյան վերջավորություններով բառակապակցություններ, որոնց ժամանակակից տարբերակները գտնված չեն կամ էլ կիրառության մեջ դեռևս չկան:

Եկեղեցական նյութերում հաճախ կարելի է հանդիպել ոչ միայն քարացած բառակապակցությունների ու արտահայտությունների, այլև ամբողջական նախադասությունների, որոնց շարահյուսությունը քարացած է: Օրինակ՝

«Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդության ժամանակ ձևավորվեցին հայորդյաց տները»⁹:

Այս և նման նախադասություններն անհնար է շարահյուսական փոփոխության ենթարկել: Եվ նմանատիպ միտք արտահայտելու համար լրագրողը ստիպված նախադասություններում կիրառում է շարահյուսական անհարթություններ:

Հայտնի է, որ հեռուստառադիոյի լեզուն բանավոր խոսքն է գրավոր տարբերակով, այսինքն՝ «Գրավոր նախադասության բարդ կառուցվածքին հետևում է բանավոր խոսքի պարզ, հստակ և ռիթմիկ արտահայտումը»¹⁰:

² WHORF B. L., <ENGLUAG, THOUGHT, AND REALITY>, p. 134.

³ «Եկեղեցական կյանք», հաղորդաշար, «Շողակաթ», Երևան, 2005 թ.:

⁴ «Մրբադասման կարգ», հաղորդում, «Շողակաթ», Երևան, 2006 թ.:

⁵ «Ներուծ», հաղորդում, «Շողակաթ», Երևան, 2006 թ.:

⁶ «Էջմիածին», ֆիլմ, «Շողակաթ», Երևան, 2004 թ.:

⁷ «Եկեղեցական կյանք», հաղորդաշար, «Շողակաթ», Երևան, 2006 թ.:

⁸ «Մրբադասման կարգ», հաղորդում, «Շողակաթ», Երևան, 2006 թ.:

⁹ «Եկեղեցական կյանք», հաղորդաշար, «Շողակաթ», Երևան, 2006 թ.:

¹⁰ Քոլիլեր Դ. Ք., «Գրել ունիկ համար», «Ռադիոհեռուստատեսային ժուռնալիստիկա», Եր., 2001 թ. էջ 6:

Պետք է նշել, որ ռադիոյի ու հեռուստատեսության համար այս առանցքային սկզբունքից տարբերվում են հոգևոր-կրոնական թեմաներով պատրաստվող նյութերը:

«Հայոց հոգևոր-կրոնական մշակույթը, շատ քաղաքակիրթ ազգերի մշակույթների նման, բաժանվում է տիպաժամանակագրական երկու մեծ շրջանների. 1. անգիր կամ նախագրային շրջանի հեթանոսական մշակույթի և 2. գրավոր շրջանի կամ քրիստոնեական մշակույթի, որոնք թեպետ իրարից զգալի տարբեր, բայց բնավ իրարից կտրված չեն, և երկրորդ շրջանը կազմում է առաջինի օրգանական զարգացման շարունակությունը»¹¹:

Պետք է նշել նաև, որ քրիստոնեական մշակույթը իր հետագա զարգացման ընթացքում անշուշտ ունեցավ նաև բանավոր տարբերակ, սակայն մեզ գրավոր տարբերակն է միայն ժառանգություն հասել: Թեև լեզվաբանական հատուկ ուսումնասիրությունները կարող են պարզել, թե գրաբարն իր գործածության ժամանակաշրջանում բանավոր ինչ գործառնություններ է ունեցել, սակայն հոգևոր-կրոնական թեմաներ լուսաբանողները առաջնորդվում են միայն գրաբարյան գրավոր գրականությամբ: Ինչ է ստացվում, որ հոգևոր-կրոնական թեմաներ լուսաբանող լրագրողները պետք է հաղթահարեն ոչ միայն գրաբարյան հոգևոր-կրոնական բառապաշարը, գտնեն դրանց համարժեքը ժամանակակից հայերենում, այլև կարողանան գրավոր լեզվամտածողությունը դարձնել բանավոր: Շատ դեպքերում գրավորից բանավորին անցնելու անհնարինությունն էլ հոգևոր-կրոնական թեմաներով նյութերին հաղորդում է խրթինություն, վերամբարձություն և լսարանի համար դառնում դժվարըմբռնելի:

Հոգևոր-կրոնական, եկեղեցական թեմաներով նյութերին հատուկ է լեզվառճական մի առանձնահատկություն ևս: Տեքստերում գործածվող գոյականներն ունեն իրենց անփոփոխ մակդիրներն ու ածականները, այսինքն՝ գոյականներից շատերը դարերի ընթացքում ստացել են մակդիրներ ու ածականներ, որոնք մշակվել և դարձել են ավանդական: Ուսումնասիրելով հոգևոր-կրոնական, եկեղեցական բնույթի հաղորդումների, պուժների տեքստերը՝ կարող ենք առանձնացնել հետևյալ գոյականներն իրենց անփոփոխ կամ քարացած մակդիրներով ու ածականներով: Օրինակ՝ «Սրբալույս Մյուռն», «սրբազան արարողություն», «Սրբազան Պատարագ», «Սուրբ և Անմահ Պատարագ», «Հոգեշնորհ հայրեր», «Սրբատառ կոնդակ», «երջանկահիշատակ Սրբազան Հայր», «Հրաշափառ Հարություն», «Միաձնաեջ Տաճար», «նորընծա սարկավագ», «Սրբազան Աջ», «սրբազան մատուք», «ճշմարիտ հավատք»¹² և այլն:

Կրոնական և աստվածաբանական գրականության, ինչպես նաև հոգևոր-կրոնական ռադիոհեռուստատեսային հաղորդումների տեքստերում «Աստված» և «Հիսուս» բառերը որոշյալ առումով չեն օգտագործվում: Սա ևս շեղում է ժամանակակից հայերենի ուղղագրական կանոնից, այն գրաբարյան ուղղագրական կանոններից մեկն է: Գրաբարում բոլոր հատուկ անունները, որոնք նախադասության մեջ ենթակայական գործածություն ունեն, որոշյալ առումով չեն կիրառվում: Ուղղագրական այս կանոնը ժառանգել էր նաև արևմտահայերենը և կիրառության մեջ էր

¹¹ Մարգիս Հարությունյան, Հայ հոգևոր-կրոնական մշակույթի միասնականության հարցի շուրջ, Պատմա-բանասիրական հանդես, Եր., 2002 թ., համար 2, էջ 3:

¹² Այս օրինակները ևս «Շողակաթ» ՀՀ նախորդ էջում նշված հաղորդումներից են:

մինչև քսաներորդ դարի քառասուն-հիսունական թվականները:

Հոգևոր-կրոնական, եկեղեցական թեմաներով նյութերի տեքստաբանական ուսումնասիրությունից հետո կարելի է ասել, որ, ի տարբերություն ռադիոհեռուստատեսային մյուս նյութերի, սրանք ծանրացած են ածականներով, մակդիրներով: Նման բառակապակցությունների ու արտահայտությունների առկայությամբ հոգևոր-կրոնական, եկեղեցական նյութերի տեքստերը պաթետիկ և վերամբարձ են: Մա կարելի է համարել հոգևոր-կրոնական, եկեղեցական նյութերի լեզվառձական առանձնահատկություններից մեկը:

Վերը նշված լեզվառձական առանձնահատկություններից պարզ է դառնում, որ հոգևոր-կրոնական, եկեղեցական նյութերն ունեն լեզվառձական հստակ շարադրանք՝ արդեն հայտնի բառերով ու բառակապակցություններով: Շատ ձևակերպումներ, անընդհատ կրկնվելով տեքստերում և փոխանցվելով մի տեքստից մյուսը, ուղղակի կարծրացել են: Եթե կազմելու լինենք տեքստերի լեզվառձական կմախքը, ապա կտեսնենք, որ դրանք շատ նման են իրար:

Այս կառույցներում ոչ միայն հայտնի են գոյականական մակդիրները, այլև որոշ ստորոգյալներ: Քանի որ Պատարագը «մատուցվում է», օրհնությունը՝ «բաշխվում», հոգևորականները՝ «ձեռնադրվում»¹³ և այլն:

Կարող ենք ասել, որ հոգևոր թեմաներ կամ եկեղեցական տոներ լուսաբանող լրագրողը նյութը գրելիս բառերի գործածության, շարադրանքի սահմանափակ հնարավորություններ ունի: Բացի այս, եթե սոցիալական, տնտեսական, քաղաքական, մշակութային և այլ թեմաներով գրելիս կարելի է տարբերել այս կամ այն լրագրողի ձեռագիրը, ապա հոգևոր-կրոնական թեմաներով գրող լրագրողների պարագայում այդ ձեռագիրը դժվար է զատորոշել: Նման եզրահանգման կարելի է հանգել՝ անգամ ամենափոքր համեմատությունն իսկ կատարելով: Օրինակ՝ համեմատենք տարբեր լրագրողների տարբեր ժամանակներում նույն թեմայով գրված նյութերի տեքստերը: Ասենք, համեմատենք Հիսուսի Հարության կամ եկեղեցական որևէ այլ տոնի թեմայով գրված սյուժեների տեքստերը: Կտեսնենք շատ աննշան տարբերություն: Ասվածից չպետք է ենթադրել, որ հոգևոր-կրոնական, եկեղեցական թեմաներով նյութերն ավելի դյուրին է լուսաբանել, քան քաղաքական կամ այլ թեմայով նյութերը: Կա իմացության մի աստիճան, առանց որի իմացության եկեղեցական որևէ նյութի նկարահանման գնալն անգամ անհնար է: Պատկերացրեք՝ եկեղեցական տոն լուսաբանող լրագրողը չիմանա այդ տոնի խորհուրդը, ով է պատարագիչը, չիմանա նրան՝ ըստ հոգևոր աստիճանի դիմելու ձևը և այլն:

Անհնար է առանց վերը նշված գիտելիքների, որն է՝ «եկեղեցական անունների ու անվանումների բառաֆոնի» իմացության, նկարահանման գնալ կամ, առավել ևս, տեքստ գրել: Սակայն այս բնագավառում երկար տարիների փորձ ունեցող լրագրողները կփաստեն, որ որոշ ժամանակ հետո, երբ յուրացվում են այդ գիտելիքները, եկեղեցական նույն տոներն ու արարողությունները լուսաբանելիս անխուսափելի է դառնում տեքստերի, նախադասությունների, դրանցում գործածվող բառերի, արտահայտությունների կրկնությունը: Մա ոչ թե լրագրողի ինֆորմացիային կամ նյութին վատ տիրապետելուց է, այլ Հայ Առաքելական Եկեղեցու ավանդապահությունից: Իհարկե, սա հարցի միայն մի կողմն է: Որովհետև դժվար է հավատալ, որ 21-րդ դարում ապրող և ստեղծագործող լրագրողին կարող է Հայ Առաքելական Եկեղե-

¹³ «Շողակաթ» ՀԸ (այս արտահայտությունները կրկնվում են տարբեր հաղորդումներում):

ցու ավանդապաշտությունն այնքան խանգարել, որ վերջինս տեքստը ազատորեն, ինքնուրույն և յուրովի չկարողանա շարադրել: Դիտարկումները ցույց են տալիս, որ այս գործընթացում խնդիրն ավելի շատ լեզվական է, քան եկեղեցական կամ կրոնական:

Հայտնի է, որ լեզվի զարգացումը պայմանավորված է տվյալ հասարակությամբ: Եվ երրորդ հազարամյակի մարդը լեզվի հարցերում, ինչպես ասում են, իրեն տանտիրոջ կարգավիճակում է զգում և լեզվի հետ վարվում սեփականատիրոջ իրավունքով: Այս երևույթը, որն է՝ լեզուն գործնականացնել, հարմարեցնել սեփական եսին, խոսակցական զանազան երանգավորումների ենթարկել և այլն, հատուկ է ոչ միայն ժամանակակից հայերենով խոսողներին, այլև ժամանակակից մյուս լեզուներին նույնպես: Սակայն ժամանակակից գրական հայերենն աղավաղման տեսակետից այսօր վատթարագույնների շարքում է: Ներկայիս հասարակությունը գրական հայերենի «համարժեքը» գտել է կյանքի գրեթե բոլոր ոլորտներում: Հասարակությանը անմատչելի է մնացել միայն հոգևոր, կրոնական լեզուն: Ինչու՞:

Ըստ Գերմանացի հոգեբան, փիլիսոփա, ֆիզիոլոգ, լեզվաբան Վիլհելմ Վունդտի (1832-1920)՝ լեզուն հարաշարժ պրոցես է: Այն «կոլեկտիվ կամքի»¹⁴ կամ «Ժողովրդական ոգու» դրսևորման ձևերից մեկն է: Վունդտը կարծում է, որ «լեզուն հիմնված է հոգեկան բարձր ձևերի վրա. մտածողություն, կամք, ընկալում, հիշողություն և այլն»¹⁵:

Դիտարկումները ցույց են տալիս, որ բացի հոգևոր, կրոնական ոլորտից, կյանքի գրեթե բոլոր ոլորտներում հասարակությունը լեզվական իր «նպատակին» հասնելու համար դրսևորում է «կոլեկտիվ կամք»: Եթե առաջնորդվենք Վունդտյան հոգեբանությամբ, ապա կարելի է հասկանալ, որ լրագրողը, որպես հասարակության մեկ միավոր, չի կարող միայնակ ինքնուրույն քայլ կատարել, եթե չունի հասարակության հավանությունը (խոսքը լեզվական խնդրի մասին է):

Հասարակությունն ինքը հոգևոր-կրոնական ոլորտում չի կարողանում լեզվական արգելքները հաղթահարել ոչ միայն այն պատճառով, որ չի կարողանում «կոլեկտիվ կամք» դրսևորել, այլև այդ կամքով հանդերձ այսօրվա հասարակությունը չի կարող հոգևոր, կրոնական լեզուն փոփոխել, դարձնել ավելի մատչելի, որովհետև համապատասխան հոգևոր գիտելիքներ չունի:

Օբյեկտիվ իդեալիզմի տեսաբաններ Հեգելն ու Հումբոլտը համարում էին, որ «լեզուն հոգու ինքնազարգացումն է»¹⁶: Եթե ներկայիս հասարակությունը, որի կեսից ավելին խորհրդային գաղափարախոսության կրողն է, ունի սահմանափակ հոգևոր-կրոնական գիտելիքներ, չի կարող այսօր լեզվի հարցում իր դիրքորոշումը հայտնել:

Ստացվում է հետևյալ պատկերը. խորհրդային հասարակարգի գաղափարախոսությունից ազատվել ցանկացողների համար այսօր հոգևոր-կրոնական ինֆորմացիայի հիմնական աղբյուրը ՋԼՄ-ներն են՝ հատկապես հեռուստատեսությունն ու ռադիոն: Այստեղից հնչող հոգևոր-կրոնական հաղորդումների սյուժեների լեզուն հիմնականում գրաբարյան վերջավորություններով ու արտահայտություններով է, երբեմն նաև գրաբարյան շարահյուսությամբ: Նմանատիպ եղանակով է կազմված ոչ միայն լրագրողի խոսքը, այլև այս թեմաներով սյուժեներում հանդես եկողների, հարցազրույցներին մասնակից հոգևորականների խոսքը: Ի դեպ, հոգևոր դասը ևս

¹⁴ А. А. Леонтьев, «Что такое психологизм», «Языкознание и психология», М., 1966, ст. 8-9.

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Նույն տեղում, էջ 5:

այսօր հանդիսանում է հոգևոր, կրոնական ինֆորմացիայի աղբյուրներից մեկը ոչ միայն հեռուստառադիոէթերում, այլև ծեսի ու քարոզի ժամանակ: Եթե քնենք նաև հասարակության համար հոգևոր-կրոնական գիտելիքի աղբյուր հանդիսացող ինֆորմացիայի մյուս ձևերը, զանազան տոնացույցներ, քրիստոնեական մամուլ և այլն, որոնք թեև հեռուստառադիոլսարանի համեմատությամբ ավելի փոքր լսարան ունեն, սակայն նույնպես գրաբար են և, ինչպես վերը նշեցինք արդեն, հասարակությանը հոգևոր-կրոնական գիտելիքը ընկալելու համար խոչընդոտներից մեկը:

Հասարակությունը, սակայն, եթե ինքը չի կարողանում հոգևոր-կրոնական լեզվի խնդրում «կոլեկտիվ կամք» դրսևորել արդեն նշված պատճառներով, արդյո՞ք լրագրողը, որպես հասարակության ինֆորմացիայի հիմնական սպասարկող, կարող է կամ «իրավունք» ունի հոգևոր-կրոնական լեզուն գոնե իր տեքստերում դարձնել դյուրըմբռնելի: Ասենք, այս թեմաներով պատրաստվող հեռուստառադիոհաղորդումների տեքստերը լրագրողը կազմի ժամանակակից հայերենի կանոնների համաձայն, գրաբարյան բառերի ու բառակապակցությունների փոխարեն օգտագործի ժամանակակից հայերենում առավել գործածելի տարբերակներ: Օրինակ՝ «Աստված» բառը նախադասության մեջ օգտագործի որոշյալ առումով, ոչ թե անորոշ, որն ընդունված է աստվածաբանական գրականության մեջ: Լեզվաբանական այս հարցերը, որոնք նաև աստվածաբանական ու եկեղեցական են, պետք է քննության առնվեն որպես կարևոր ու հրատապ խնդիր: Լեզվական այս խնդիրների լուծումից է կախված նաև հոգևոր-կրոնական ռադիոհեռուստատեսային հաղորդումների նկատմամբ լսարանի հետաքրքրությունն ու աճը: Ավելացնենք նաև, որ վերը նշված լեզվական այս խնդիրները հարթեցնելուց հետո միայն հոգևոր-կրոնական հեռուստառադիոհաղորդումները կհամապատասխանեն լրագրության ընդհանուր հիմունքներին ու կդառնան օրինաչափ:

Հոգևոր-կրոնական հեռուստառադիոհաղորդումների համար խիստ կարևոր լեզվական այս խնդիրները մինչև կգտնեն իրենց լուծումը, մեր կարծիքով, լրագրողը պետք է ինքնուրույն քայլեր անի՝ հնարավորինս տեքստն ազատելով գրաբարյան կաղապարված մտքերից ու արտահայտություններից՝ թեկուզ միայն լսարանին ծառայելու լրագրողական իր պարտավորությունից ելնելով:

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

ԳՈՀԱՐ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հայկական Հանրագիտարանի պատասխանատու քարտուղար

ՀԱՄԱՍՏԵՂ. «ՄՈՌԱՑՎԱԾ ԷՋԵՐ»

«Ինչ ալ ըլլայ, հոն է մեր յոյսը և մեր կորիզը: Հայաստանէն պիտի գան մեր ազգային տաղանդները: Հոն՝ ժողովուրդին և հողին մէջ է սաղմը մեր ազգային երազներուն»:

Սփիւռքը, արդէն կտրուած մայր հողէն, ինքն իր մէջ բաժան-բաժան եղած է իր եկեղեցիով, իր դպրոցով, քաղաքական ու բարեգործական գործունէութիւններով: Նոյն գրականութիւնով, նոյն մշակոյթով, նոյն լեզուով, նոյն տառապանքներով ու խանդավառութիւններով ժողովուրդ մը այսօր բաժնուած է հոգեպէս: Հայ գրողը կարևոր և շինարար դեր ունի կատարելիք Սփիւռքի այս կացութեան մէջ: Ան պիտի մօտենայ գրականութեան գծով: Գիծ մը, որ, միշտ ալ պիտի մնա անկեղծ ու ազնուական»:

ՀԱՄԱՍՏԵՂ

Ամեն անգամ, երբ Հայրենիքում հրատարակվում է սփյուռքահայ որևէ գրողի գործ, կարծես հնարավորություն է տրվում ստեղծագործողին «անկեղծ ու ազնուական» ճանապարհով վերադառնալ Հայրենիք: Հատկապես, երբ իր գրականությամբ հայրենիք է վերադարձնում հայ մարդուն, հայ գավառն ու հայ գյուղացուն: Հայրենիք է վերադարձնում «Հայու ոգին», որ հեղինակի կորցրած «Երազ Հայրենիքի» լեռների, դաշտերի ու առվի կանչի հետ է, որ թոնիրներից աղոթքի ու խունկի պէս երկինք բարձրացող կապույտ ծովին է, որ գալիս է Դավթի թուր կեծակիից, բազինների բոց կրակից, Ավարայրի հաղթական պարտությունից... և որ ամենակարևորն է՝ օգնում է մեր հոգիների մէջ գտնելու «Հայու ոգին» և «սնելու սաղմը մեր ազգային երազներուն»:

Անշուշտ, ընթերցողն արդէն կարող է կռահել, որ խոսքը սփյուռքահայ գրականության երախտավորներից մեկի՝ Համաստեղի մասին է: Մեզ մնում է արձանագրել, որ այս անգամ Համաստեղը հայրենիք է վերադարձել իր «Մոռացված էջեր»-ով: Գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր Մարգարիտա Խաչատրյանը կազմել և ընթերցողների սեղանին է դրել Համաստեղի ստեղծագործությունների եռափաստոր ժողովածուն՝ «Մոռացված էջերը» (հատոր Ա, Բ, Գ, 2005): Եռափաստորում ընդգրկված գործերը մի կարևոր ընդհանրություն ունեն՝ տպագրված լինելով մամուլում («Փյունիկ», «Հայրենիք», «Բազին», «Էջմիածին», «Հանդես ամսօրյա» և այլն)՝ հիմնականում գրողի որևէ ժողովածուում ներառված չեն եղել:

Մեծ գրողն ընթերցողին է ներկայանում իր բազմաժանր ստեղծագործության տարաբնույթ շերտերով: Յուրաքանչյուր հատորում տեղ են գտել թե՛ արձակ, թե՛

չափածո գործեր, ինչպես նաև հոգովածներ, թարգմանություններ, հուշեր, ելույթներ ու զեկուցումներ: Երեք հատորն էլ սկսվում է բանաստեղծություններով, սակայն, ի տարբերություն Բ և Գ հատորների (որտեղ ավելի ուշ շրջանի բանաստեղծություններն են ներկայացված), Ա հատորում տիրապետող են Համաստեղի վաղ շրջանի բանաստեղծությունները (1917-18 թթ.): Եվ զարմանալի չէ, որ 1913-ին հայրենիքից Ամերիկա մեկնած Համբարձում Կելենյանը, որ Մեծ եղեռնի սարսափներին թերևս ականատես չեղավ, իր հոգում կրեց փոթորիկը մղձավանջային տառապանքի («Երթանք մեհեանն հաւատքին», «Մահուան տեսիլներ», «Ստուերներ»): Կործանվում ու արյան մեջ խեղդվում էր հայրենիքը, որտեղից Համաստեղը հեռացել էր, երբ դեռ ընդամենը տասնութ տարեկան էր: Եվ կարծես հայրենիքը կորցնելու ցավի դեմ պայքարելու է գալիս հիշողության համառությունը: Հայրենի լեռնաշխարհը՝ իր գյուղերով, իր լեռներով ու դաշտերով, իր ավանդույթներով ու բարքերով, իր բառ ու բանով, այդ լեռնաշխարհին իր ուսերին պահող հայ գյուղացիով ամբողջացնում են այն իրական աշխարհը, որտեղ ապրում և արարում է Համաստեղը: Ամերիկյան իրականությունը, որքան էլ այն շքեղ էր ու ճոխ, և որքան էլ երկար ապրեց գրողն այնտեղ, օտար էր և երազային: Համաստեղի համար ամենաիրականն իր Երազ-Հայրենիքն էր: Նրա ոգեղեն դաշտն այդ գյուղաշխարհից էր սնվում: Համաստեղի արձակը միտված է պատկերավորման միջոցով կորստից ու մոռացությունից փրկել կորցրած հայրենիքը: Նա կարծես մեկիկ-մեկիկ փրկելով հայ գյուղացիներին՝ փորձում է գրականության մեջ ապրեցնել նրանց (Մնուշ, Հարո, Կարո, Հայկանուշ, Վահան): «Ամեն մեկ գիւղացի ինքնություն տիպ մըն է, իրարմէ տարբեր և պատրաստի նիւթ գրականութեան: Գիւղացիի հոգին անմիջապէս կ'երևի իր դէմքին վրայ, իր խօսած բառերուն մէջ կամ իր շարժումներուն մէջ» («Գաւառը և Թղկատինցին»):

Մեր գրողներից շատերն են գրել քաջնազարյան թեմայով: Համաստեղը կերպարին յուրահատուկ մեկնաբանություն է տալիս: Այստեղ Չորթանենց Նազարը ծուլ գյուղացի է: Իր «պեխերուն պատիվը» փրկել փորձող անբան Նազարը կնոջից՝ Օդտիկից հեռանալով՝ ճամփա է ընկնում դեպի այն լեռը, որտեղից բախտը պիտի գար: «Բախտը որ ըլլայ, խելքն ու աշխատանքը օգուտ չընեն»: Սուր ու դիպուկ, երբեմն զավեշտի հասնող է Համաստեղի հումորը: Նազարն այստեղ աշխարհի վրա ծիծաղող ծուլ ու բախտախնդիր մարդու տեսակ է. «Էն մեր Նազարը որ թագաւոր եղաւ, ալ հասկցէք աշխարհի բաները»:

Չար ու բարու հավերժական պայքարում փոխվել է որևէ բան: Աշխարհաքաղաքական չափաձևումները նոր որակ են ստանում, նույնն է մնում մարդու բնույթը: Համաստեղը երկրորդ անգամ է Քրիստոսին աշխարհ բերում («Քրիստոսի երկրորդ գալուստը»): Ո՞վ է նա՝ սևամո՞րթ, թե՞ սպիտակամորթ, մեղավո՞ր, թե՞ հրաշագործ... Անփոփոխ է մնացել մարդկային չարությունը: Քիչ բան է փոխվել աշխարհում այս առումով: Երկրորդ անգամ աշխարհ է գալիս և երկրորդ անգամ մարդու ձեռքով սպանվում է Քրիստոսը: Մարդու մեջ դեռ պահպանվում է գազանային բնույթը: Ճշմարտությունը միայն հավատի մեջ է: Հավատի մեջ է մարդկային հոգու փրկությունը: Այս համոզումը հետագայում իր կատարելությանն է հասնում «Աղոթարանում»: Այն Աստծո հետ զրույցի միջոցով ինքնամաքրումի, մարդ-Աստված երկխոսության և ներդաշնակության հաստատման փորձ է. «Իմ գոյութեան մէջ է, Տէր, որ կ'ամբողջանա Քու կերպարանքը, ու իմ հաւատքին մէջ՝ Քու յաւիտենականութիւնը»:

Աստվածաշնչյան կյանքի ու մահվան թեմաներին Համաստեղն անդրադառնում է նաև մանրապատումներում, բայց այստեղ տիրապետողը կյանքի նկատմամբ նրա ունեցած մեծ սերն է, աշխարհն ու բնությունը ընկալելու համաստեղյան նրբանկատությունը: Գեղարվեստական պատկերավորումն այստեղ հասնում է կատարե-

լուրջան. «Երկինքը ոսկեգոյն ցորեաններու դաշտ մըն է հնձած: Որաներու պէս դի-
զուած ամպեր... Հնձուորի պէս մանգաղն ուսին՝ ամպի տեղ մը կը քալէ», «Ծովն իր
մերկ լանջքին արև է հագեր. ծովուն եզերքին՝ գիշերին չափ մերկ, գիշերին չափ սև
աղջիկ մը խափշիկ, թները վեր, արևուն դէմ խեցի մէ բռներ...» («Նկարներ»), «Դաշ-
տի ծաղիկներուն հետ ես զգացի գերագոյն գեղեցկութիւնը արևին, ոսկորներս խայ-
տացին, գինով մըն էի, արևէն հարբած» (Խելագարի մը բուպայաթը):


Համաստեղն ականատես չեղավ իր ժողովրդի եղեռնին: Հայրենիքը, որ փորձում
էին ջնջել երկրի երեսից, մեծ գրողը փորձեց ամենայն մանրամասնությամբ իրա-
կան պահել իր գրականության մէջ: Նա չտեսավ նաև իր այնքան փափագած հայրե-
նիքը՝ Խորհրդային Հայաստանը, որ անկախ իր քաղաքական ածականից՝ հայ ժո-
ղովրդի գոյատևման ու ապագայի երաշխավորն է: 1929-ին, սակայն, Համաստեղը
մեկնում է Տեր-Ջոր՝ մեր ժողովրդի տխրության հետ ավելի մտերմանալու («Գանկի
մը հետ»): Եվ ահա այստեղ է, որ «Գանկը կը մտածէր, գանկը կ'ապրէր, կը շնչէր
կարծես ու կը խօսէր իմաստուն լռութիւնով: Անոր մէջ դեռ երազը կար, ինչքան ալ
թշնամին ուզէր զայն աւազով լեցնել»: Այդ երազն է, որ օտար ամբարում հային դեռ
հայ է պահում:

Համաստեղի գեղագիտական հայացքները հասկանալու համար անչափ կարևոր
են նրա գեղուցումները (հատկապես «Գաւառը և Թլկատինցին»), հողվածներն ու ե-
լույթները:

«Մոռացված էջերում» ներկայացված են նաև հուշեր, ինչպես նաև հողվածներ
Համաստեղի երկերի վերաբերյալ:

Այո, Համաստեղը վերածնված հայրենիքն իր աչքով չտեսավ, բայց նա իր ժո-
ղովրդի հավերժությունը, ինչպես նաև հայ գրականության ապագան կապում էր
միայն ու միայն հայրենի այն հողակտորի հետ, որ դեռ Հայաստան անունն էր
կրում: Այս հրատարակությամբ Համաստեղը կրկին վերադառնում է հայրենիք, վե-
րադառնում է հայրենիք՝ իր հետ բերելով մեր կորուսյալ լեռնաշխարհի իրական
պատկերները, արևմտահայ հոգևոր դաշտի ուժն ու զորությունը, մեր մամիկների
ու պապիկների հավատն ու երազանքը, գրականություն դարձած մեր ինքնություն-
նը:

Յուրաքանչյուր շփում Համաստեղի ստեղծագործության հետ մեզ ինքնաճանաչ-
ման հնարավորություն է տալիս, մեր պապենական արմատներից եկող գորութ-
յամբ դեպի առաջ հաստատական քայլ անելու ուժ ու կորով պարգևում:



ԼՈՒՐԵՐ ԿԱԼ ԿԱԹԱՅԻ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻՑ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ՈՒՒՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ՉԻՆՍՈՒՐԱՅԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Հունվարի 14-ին, Ս. Հովհաննես Կարապետի ծննդյան տոնին հաջորդող կիրակի օրը, ընդունված ավանդույթով ուխտի Ս. Պատարագ մատուցվեց Չինսուրայի Ս. Հովհաննես հայկական եկեղեցում, որն Արևմտյան Բենգալիա նահանգի երկրորդ ամենահին քրիստոնեական եկեղեցին է և Ծայրագույն Արևելքի առաջին հայկական եկեղեցին՝ կառուցված 1695 թվականին:

Օրվա պատարագիչն էր հնդկահայոց հոգևոր հովիվ և Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգույանը: Հայր Սուրբին ընկերակցում էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Տիգրան սրկ. Բաղումյանը: Ս. Պատարագի ընթացքում Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ հայցելով Ս. Հովհաննես Մկրտչի բարեխոսությունը հնդկահայոց գաղութի համար:

«Այսօր պատմական օր է հնդկահայ գաղութի համար, քանզի մեր նախնյաց օրինակով կրկին ուխտի ենք եկել Ս. Հովհաննես հայկական եկեղեցի՝ աղոթելու և վերստին Տիրոջով նորոգվելու համար: Ուստի եկեք միասնաբար աղոթենք և ուխտենք, որ ամեն ինչ պետք է անենք՝ տեր կանգնելու համար հյուրընկալ այս հողի վրա սփռված մեր արժեքներին՝ ամենուր ազդարարելով հայ քրիստոնյայի բարի անվան մասին», - նշեց Օշական վարդապետը:

Ուրախալի այս առիթով Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցուց դուրս էր բերվել նաև Ս. Հովհաննես Մկրտչի մասունքով Ս. Աջը, որով և Ս. Պատարագի ընթացքում կատարվեց անդաստան: Հավարտ սրբազան արարողության բոլոր մասնակիցներն իրենց խոնարհումը բերեցին սրբի մասունքներին՝ համբուրելով ատյանում դրված Ս. Ավետարանն ու Ս. Աջը:

Ուխտագնացությանը մասնակցում էին Կալկաթայի Եկեղեցական խորհրդի անդամները, հնդկահայեր և Մարդասիրական ճեմարանի սաները:

ՎԵՑ ԻՐԱՔԱՀԱՅ ԵՐԵՒԱՆԵՐ ՀԱՄԱԼՐԵՑԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՇԱՐՔԵՐԸ

Հունվարի 14-21-ը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը մեկնեց Հորդանան և Իրաք՝ վեց իրաքահայ երեխաների Կալկաթա բերելու նպատակով:

Մինչև մեկնելը բոլոր երեխաների ծնողները տեղեկացվել էին ճեմարանի պայմանների, արդի վիճակի և ապագա ծրագրերի մասին: Իրաքի հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Ավագ արքեպս. Ասատուրյանի, ծնողների և Հայր Սուրբի ջանքերով երեխաներին հաջողվեց մեկնել Հորդանան, իսկ այնտեղից էլ՝ Կալկաթա: Բոլոր ծնողները հեռախոսազրույցներում իրենց խորին շնորհակալությունը հայտնեցին ճեմարանի ղեկավարությանը՝ իրաքահայության համար այս դժվարին պայմաններում օգտակար լինելու և աջակցելու համար՝ խնդրելով իրենց որդիական խոնարհությունը փոխանցել նաև Նորին Սրբությանը, ով իր Հայրական հոգածության ներքո է պահում Մարդասիրական ճեմարանը:

Այսպիսով՝ Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանը համալրվեց իրաքահայ վեց նոր աշակերտներով:

ԴԻՎԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ

ԴԱՄԱՍԿՈՍԻ ՀԱՅՈՑ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ ՉՈՐՏ ԴՊԻՐՆԵՐ ԵՒ ՀԻՆՔ ՍԱՐԿԱԽԱԳՆԵՐ ՁԵՌՆԱԴՐՈՒԵՑԱՆ

Ուրբաթ, 22 Դեկտեմբերին, Դամասկոսի Առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ տեղի ունցաւ չորս պատանիներու դպրութեան ձեռնադրութիւն: Երկար տարիներ իրենց ծառայութիւնը բերած պատանիներ՝ Հրայր Դանիէլեան, Արա Քահքէճեան, Յարութիւն Դանիէլեան եւ Արման Խորոզեան, որոնք պարտաճանաչութեամբ կը յաճախէին կիրակնօրեայ Պատարագներուն եւ մումակրութեամբ ու իրենց մանկական զուլալ ձայնով կը ձոխացնէին Ս. Պատարագի երգեցողութիւնը, Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Արմաշ եպս. Նալպանտեանի ձեռամբ արժանացան դպրութեան չորս աստիճաններուն: Նոյն օրը հինգ ուրարակիրներ ստացան կիսասարկաւագութեան աստիճան:

Կիրակի, 24 դեկտեմբերին, հանդիսաւոր կերպով կատարուեցաւ Ս. Ստեփաննոսի եւ սարկաւագներու տօնը: Այս առթիւ Ս. Պատարագ մատուցեց Տ. Արմաշ Եպս. Նալպանտեանը: Յընթաց Ս. Պատարագի հինգ կիսասարկաւագներ՝ Դաւիթ Բարսեղեան, Կարօ Մէսճեան, Յարութիւն Աթոքանեան, Շանթ Մէսճեան եւ Գաբրիէլ Թանաշեան, ձեռամբ Սրբազան Հօր, ձեռնադրուեցան սարկաւագ: Արմաշ Սրբազան իր օրուայ պատգամին մէջ շնորհաւորեց նորընծայ սարկաւագները՝ իրենց տօնին համար, եւ ապա ըսաւ. «Սիրելի սարկաւագ եղբայրներ: Այսօր տօն է, ցնծութիւն եւ ուրախութիւն մեզ բոլորիս համար, քանզի ձեր սարկաւագական ձեռնադրութեամբ նոր ոգի մուտք կը գործէ մեր Ս. Սարգիս եկեղեցիէն ներս, եւ մեր թեմը Ձեր միջոցաւ կերիտասարդանայ ու երիտասարդ աւիւնով, ոյժով ու կորովով պիտի շարունակէ ծառայել ժողովուրդին»:

Այնուհետեւ Սրբազան Հայրը յորդորեց նորընծայները լաւագոյնս արժեւորել այն մեծագոյն առաքելութիւնը, որ ստանձնեցին իրենք՝ դառնալով Քրիստոսի լուծի կրողներ: Ապա Առաջնորդ Հայրը հրաւիրեց նորընծայները առաւել նախանձախնդրութեամբ ու ջանասիրութեամբ լծուիլ իրենց պարտականութիւններու իրականցմանը՝ ուղեցոյց ունենալով Ս. Ստեփաննոսի հաւատքի ամրութիւնն ու արիասիրտ ոգին: Սրբազան Հայրը իր յատուկ շնորհաւորանքները ուղղեց նաեւ երկարամեայ տարիներու ծառայութիւն ունեցող Բրշ. Մորիս սրկ. Տէմիրճեանին՝ մաղթելով քաջատոյժութիւն, արեւշատութիւն եւ դէռ երկար տարիներու ծառայութիւն:

Յաւարտ Ս. Պատարագի կազմակերպուեցաւ սիրոյ սեղանի պատիւ նորընծայ սարկաւագներուն, որուն մասնակցեցան նաեւ դպրաց դասի անդամները:

ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ ԻՐԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ ԱՅՅԵԼԵՑ ԴԱՄԱՍԿՈՍԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Հինգշաբթի, 4 Յունուարին, Դամասկոսի մէջ Իրանի Իսլամական Հանրապետութեան դեսպան Շէյխ Հասան Ախթարին այցելութիւն տուաւ Դամասկոսի հայոց Ազգ. Առաջնորդարան: Բարձրաստիճան հիւրին կ'ընկերանային դեսպանութեան առաջին քարտուղարն ու խորհրդականը: Շէյխ Ախթարին ընդունեց Դամասկոսի հայոց առաջնորդ Գերաշնորհ Տ. Արմաշ եպս. Նալպանտեանը:

Այս այցելութեամբ Շէյխ Ախթարին շնորհաւորեց Սրբազան Հայրը Ամանորեայ եւ Սուրբ Ծննդեան տօներուն առթիւ՝ փոխանցելով նաեւ Իրանի Իսլամական Հանրապետութեան նախագահի բարեմաղթութիւնները: Այցելութեան ընթացքին Դեսպանն ու Առաջնորդ Հայրը զրուցեցին տարածաշրջանի խնդիրներու, Սուրիոյ եւ Իրանի հայ համայնքներու գործունէութեան եւ անոնց ներդրումներուն, ինչպէս նաեւ Սուրիա-Պարսկաստան-Հայաստան յարաբերութիւններու մասին:

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՊԱՇՏՕՆ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԷՋ ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻ ՀՈԳԻՈՅ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

19 Յունուարին, անմարդկային ոճիւրի մը հետեւանքով, Թուրքիոյ մէջ հայկական «Ակօս» շաբաթաթերթի գլխաւոր խմբագիր Հրանդ Տինքի սպանութիւնը ցնցեց դամասկահայութիւնը: Ողբերգական այս տխուր առիթով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինութեամբ Հայց. Եկեղեցւոյ բոլոր թեմերուն մէջ նոյն օրը կատարուեցան հոգեհանգստեան արարողութիւններ եւ աղօթքներ: Դամասկոսի մէջ ՀՀ դեսպանութեան եւ Դամասկոսի հայոց Առաջնորդութեան խնդրանքով Դամասկոսի հայոց Սուրբ Սարգիս եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն: Արարողութեանը, զոր նախագահեց Դամասկոսի հայոց առաջնորդ Գերշ. Տ. Արմաշ եպս. Նալպանտեանը, ներկայ էին ՀՀ դեսպանութեան առաջին քարտուղար տիար Կարէն Գրիգորեանը եւ դամասկահայ հաւատացեալներ:

Առաջնորդ Սրբազան Հայրը յաւուր պատշաճի իր պատգամին մէջ անդրադարձաւ Հրանդ Տինքի կենսագրականին, անոր տարած կարեւոր աշխատանքին, քննադատելով ոճրագործն ու անոր ետին պատասխանատուները: Սրբազան Հայրը խօսքը աւարտեց ըսելով. «Ճշմարտութեան ձայնը ոչ ոք կրնայ լռեցնել»:

Յաւարտ Սուրբ Պատարագի հաւատացեալներ իրենց ցաւակցութիւնները յայտնեցին Սրբազան Հօր: Առաջնորդ Հայրը իր հերթին յատուկ զրուցեամբ ցաւակցական նամակ ղրկեց Հրանդ Տինքի այրիին, հարազատներուն եւ «Ակօս» թերթի խմբագրութեան:

«Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի»:

ԴԻԻԱՆ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ԵԹՈՎՊԻՈՅ ՀԱՅՈՑ ՀՈԳԵԻՈՐ ՀՈՎՈՒՈՒԹԻՒՆՈՒՄ

Կիրակի 24 Դեկտեմբեր 2006, Ատտիս Ապապայի հայոց Ս. Գեորգ եկեղեցույ մէջ տեղի ունեցաւ Խաղաղութեան աղօթք՝ մասնակցութեամբ Յոյն եւ Եթովպիոյ Ուղղափառ Եկեղեցիներու արքեպիսկոպոսներու, ինչպէս նաեւ Հնդիկ-Մալաբար Եկեղեցույ եւ Եթովպիոյ Աւետարանական Եկեղեցույ հոգեւորականներու: Յաւարտ Սուրբ Պատարագի Տէր Միւռն քինյ. Սարգիսեան շնորհակալութեան խօսք ուղղեց հոգեւոր ներկայացուցիչներուն՝ կոչ ուղղելով միասնական աղօթքի վասն Խաղաղութեան աշխարհի: Տէր Հայրը իր խօսքին մէջ շեշտեց վերջին շրջանի Եթովպիոյ Ուղղափառ Եկեղեցիներու միասնական աղօթքի օրերը Հայ Եկեղեցիէն ներս, հրաւիրելով բոլորին Եթովպիոյ Ուղղափառ Եկեղեցիներու երկխօսութեան որպէս սկիզբ Եթովպիոյ Միջեկեղեցական խորհուրդի կազմաւորման, նախագահութեամբ Եթովպիոյ Ուղղափառ Եկեղեցույ հովուապետ Ն. Ս. Ապունա Փաուլոս Պատրիարքի: Տէր Հօր խօսքէն ետք ներկայ հոգեւորականները միասնաբար կարդացին Խաղաղութեան աղօթքը՝ պատրաստուած Տ. Միւռն Քինյ.ի կողմէ անգլերէն լեզուով :

Կիրակի 14 Յունուարի Ս. Պատարագի ընթացքին եթովպահայութիւնը իր համայնքէն ներս դիմաւորեց արտերկրէն ժամանած հայ բարերարներ՝ ուղեկցութեամբ Ամերիկայի Իյօնա Քօլէճի Միջին Արեւելքի եւ Արեւելեան Եւրոպայի պատմութեան բաժնի Փրօֆէսօր Ճօրճ Բուրնութեանի: Հիւրերն էին՝ տէր եւ տիկին Տիգրան Հատճէթեան (Հայաստանի Նորավանք վանական համալիրի բարերարներ, Գանատա), տէր եւ տիկին Հայկ Տիտիգեան (Նիւ Յօրքի Ս. Ներսէս Աստուածաբանական Ճեմարանի մէջ ԳԱՐԵԳԻՆ Ա. Աստուածաբանական բաժնի հիմնադիր եւ բարերար), ինչպէս նաեւ տէր եւ տիկին տոքթ. Ռաֆֆի Յովհաննէսեան (Ամերիկայի Արեւելեան թեմի թեմական խորհուրդի անդամ եւ բարերար): Վեցօրեայ այցելութեան ընթացքին անոնք այցելեցին Եթովպիոյ պատմական վայրերը, ինչպէս նաեւ հանդիպումներ ունեցան եթովպահայութեան հետ: Ուրբաթ 19 Յունուարին Ատտիս Ապապայի Արարատ Մարմնամարզական ակումբէն ներս հիւրընկալուեցան համայնքի վարչութեան եւ հոգեւոր հովիւի կողմէ: Ընթրիքի ընթացքին Տէր Հայրը բարի երթի խօսք ուղղեց բարերարներուն՝ աղօթելով առ Աստուած, որ նման նուիրեալ անձինք բազում ըլլան մեր Սփիւրքի հայութեան մէջ, որոնք իրենց գործնական աղօթքով հաստատուն կը պահեն հայութեան ոգին եւ եկեղեցասիրութիւնը: Յանուն հիւրերուն տիկ. Շողակ Յովհաննէսեան շնորհակալութիւն յայտնեց համայնքի անդամներուն՝ գլխաւորութեամբ ատենապետին՝ Վարդգես սրկ. Նալպանտեանին, եւ հայմայնքի հոգեւոր հովիւ Տ. Միւռն քինյ. Սարգիսեանին, եւ իր հիացմունքի եւ գնահատանքի խօսքը ուղղեց եկեղեցույ երգչախումբին եւ ծառայողաց: Տէր Միւռն յիշատակի համեստ նուէրներ փոխանցեց հիւրերուն:

Կիրակի 21 Յունուարին եթովպահայութիւնը սգաց «Ակօս» թերթի խմբագիր Հրանդ Տինքը: Յաւուր պատշաճի քարոզի ընթացքին Տէր Միւռն ըսաւ. «Արդարութիւնը չեն կրնար լռեցնել... Հայոց Եղեռնի արդար եւ անմեղ նահատակներուն թիւը կաւելնայ այսօր Հրանդ Տինքով... 92 տարիներ կանցնին, բայց կարծես յաթաղանը տակաւին կուշտ չէ... Բայց որովհետեւ ճշմարիտ արդարութիւնը Աստուծոյ խօսքն է, եւ արդարութեան ջատագովը եղած է նաեւ Հրանդ Տինք, ուստի կը հաւատանք, որ Աստուծոյ օգնութեամբ Հրանդ Տինքի արդարութեան խօսքը պիտի իրականանայ եւ անմեղ հոգին լուսաւորուի երկնային արքայութեան մէջ»: Նահատակ Հրանդ Տինքի Հոգեհանգստեան պաշտօնը եթովպահայութիւնը կատարեց Հայոց Եղեռնի յուշարձանի առջեւ՝ ներկայութեամբ Ռուս Ուղղափառ Եկեղեցւոյ ներկայացուցիչներու, գլխաւորութեամբ Ուքրաինոյ Լվովի եւ Կալիչինիայի առաջնորդ Օգոստինոս Արքեպիսկոպոսին:

Հիւր Արքեպիսկոպոսն իր կարգին խօսք ուղղեց ներկաներուն՝ շեշտելով, որ հայ ազգի հանդէպ կատարուած անարդար ոճիրները պէտք է ճանչնան եւ մեղադրեն բոլոր երկիրները: Ռուս Ուղղափառ Եկեղեցւոյ հոգեւոր ներկայացուցիչները եւս հոգեհանգստեան աղօթք կարդացին Եղեռնի յուշարձանի առջեւ: Յաւարտ Յուդարկաւորութեան Տ. Միւռն շնորհակալութեան խօսք ուղղեց Արքեպիսկոպոս Օգոստինոսի այցելութեան եւ ըսաւ. «Ուղղափառ Եկեղեցիները հիմնուած են նահատակութեամբ սուրբերու եւ այլ արդարներու, յիշելով նաեւ 20-րդ դարը, երբ Խորհրդային կառավարութեան ձեռքով նահատակուեցան աւելի քան 130 Ռուս Ուղղափառ եպիսկոպոսներ եւ հազարաւոր վանականներ եւ քահանաներ: Նահատակութեամբ մենք մեր առաքելադաւան հիմունքները կը վերանորոգենք եւ հաստատուն կը մնանք Քրիստոսի սիրոյ քարոզութեան»:

Օգոստինոս Արքեպիսկոպոս իր շնորհակալութեան խօսքը ուղղեց Տէր Հօր եւ հայ համայնքին եւ անդրադարձաւ Ուքրաինոյ հայ գաղութի հետ սերտ յարաբերութեանը, ինչպէս նաեւ ըսաւ. «Եթէ մենք չայցելէինք Հայ եկեղեցին Եթովպիոյ մէջ, կարծես մեր առաքելութիւնը կատարեալ պիտի չըլլար»:

**ԿԱՏԱՐՎԵՑ ՍՈՖԻԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ
Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՔԱՐԵՐԻ
ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ**

Վերջապես իրականություն է դառնում բուլղարահայության և հատկապես սոփիահայության տասնամյակների երազանքը: Սոփիայի կենտրոնական պուրակներից մեկում սկսվեց Հայց. Առաքելական Ս. Եկեղեցու Բուլղարիայի թեմի Սոփիայի Առաջնորդանիստ Ս. Աստվածածին եկեղեցու շինարարությունը:

Սոփիայում դեռևս 17-րդ դարի կեսերից, պատմական վկայությունների համաձայն, եղել է հայկական եկեղեցի: Այն գործել է մինչև 1934 թ.: Քաղաքային իշխանությունների որոշմամբ, դեռևս 1909 թ. հայկական եկեղեցուն պատկանող հարակից տարածքում կառուցվում են Սոփիայի Մետրոպոլիայի և Աստվածաբանության ֆակուլտետի շենքերը: Եկեղեցին հայտնվում է Մետրոպոլիայի տարածքում: Քաղաքային իշխանությունները հին եկեղեցին քանդելու և հայկական նոր եկեղեցի կառուցելու համար դրամական փոխհատուցում են տալիս: Երկարատև բանակցություններից հետո տրամադրվում է նոր հողատարածք: 1934 թ., Ս. Էջմիածնի տոնին, կատարվում է 4 հարկանի հայկական տան հիմքերի օրհնությունը, իսկ 1936 թ.՝ պաշտոնական բացումը: Շենքի 2-րդ հարկի մեծ սրահը ժամանակավորապես վերածում են եկեղեցու՝ այն պայմանով, որ հնարավորության պարագային կառուցվի նոր եկեղեցի: Շենքը պետք է ծառայեր և՛ որպես եկեղեցի, և՛ հայկական դպրոց, և՛ ալկումբ:

Միայն համայնավարական կարգերի փլուզումից հետո հնարավոր դարձավ ձեռնամուխ լինել Սոփիայում նոր եկեղեցու կառուցմանը. 1990-ականների կեսերին, Թեմական, Եկեղեցական վարչությունների ակտիվ գործունեության, ինչպես նաև քաղաքային իշխանությունների բարեհաճ վերաբերմունքի շնորհիվ, քաղաքի կենտրոնական պուրակներից մեկում հնարավորություն ընձեռվեց կառուցելու առաջնորդանիստ Մայր եկեղեցի: Ճարտարապետների միությունը, հայազգի ճանաչված ճարտարապետ Հակոբ Կարազաշյանի գլխավորությամբ, անմիջապես ձեռնամուխ է լինում հայկական ճարտարապետության համապատասխան եկեղեցու գծագրական աշխատանքներին: Եկեղեցու ճարտարապետական հորինվածքը արժանանում է նաև Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հավանությանը: Եկեղեցին լինելու է կենտրոնագմբեթ, ունենալու է 25 մ երկարություն, 12,5 մ լայնություն, 24 մ բարձրություն, նկուղային հարկ՝ գրասենյակների, ինչպես նաև սրահ-հավաքատեղիի համար:

Սակայն երկար տարիներ հնարավոր չէր լինում կառուցումը՝ նյութական միջոցների բացակայության պատճառով: Վերջապես այս տարի նորընտիր եկեղեցական վարչության անդամ, գործարար Մարգար Շիրինյանը և իր բուլղար ու հույն գործակիցները հանձն առան եկեղեցաշեն նվիրական աշխատանքների կատարումը:

Հոկտեմբերի 7-ին, Բուլղարիայի և Ռումինիայի հայոց թեմերի Առաջնորդ Գերշ. Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանը կատարեց հողի օրհնությունը: Ներկա էին

նան առաջնորդական փոխանորդ Տ. Արշեն վարդապետ Մանուսյանը, Սոֆիայի Ս. Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Գուսան քահանա Հատավյանը, Բուլղարիայի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան պրն Սերգեյ Մանասարյանը, Թեմական խորհուրդի ատենապետ դոկտ. Ռուբեն Գրիգորյանը, Սոֆիայի Եկեղեցական վարչության ատենապետ Գրիգոր Ասլանյանը, կառուցվելիք եկեղեցու ճարտարապետ Հակոբ Կարազաշյանը, թեմական, եկեղեցական վարչությանց ներկայացուցիչներ, հարյուրավոր սոֆիահայեր, հայկական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Սրբազան Հայրը իր խոսքում կարևորեց առաջնորդանիստ եկեղեցի ունենալու գաղափարը և հորդորեց բոլորին՝ իրենց լուսման ներդնել աստվածահաճո գործի մեջ. «Քար առ քար, շաղախ առ շաղախ կառուցենք մեր Տաճարը՝ մեր ուժերով, մեր կարողություններով, մեր աշխատանքով»:

Այնուհետև դեկտեմբերի 12-ին կատարվեց եկեղեցու հիմնարկեքի արարողությունը:

Առաջնորդ Սրբազան Հայրը՝ ընկերակցությամբ Առաջնորդական փոխանորդի, թեմի քահանա հայրերի, կատարեց եկեղեցու տասնվեց հիմնաքարերի օրհնությունը: Ներկա էին Բուլղարիայի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Մանասարյանը, Թեմական խորհրդի ատենապետ, Ժողովրդական Ժողովի պատգամավոր Ռուբեն Գրիգորյանը, ճարտարապետ Հակոբ Կարազաշյանը, բարերար Մարգար Շիրինյանը, Սոֆիայի և հայաշատ քաղաքների եկեղեցական վարչությունների ատենապետերը, Թեմական, Թաղական խորհուրդների անդամներ, լրագրողներ, տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ, հարյուրավոր հայորդիներ:

Նախ ջրով և ապա գինով լվացվեցին Հայաստանից բերված քարերը, այնուհետև սկուտեղի վրա դրված տրվեցին քարակիրներին, որից հետո Սրբազան Հայրը, մոտենալով յուրաքանչյուրին, օծեց քարերը Սրբալույս Սյուռնոնով և օրհնեց սրբերի անուններով: Քարակրության պատիվ էր տրված բարերարներին (6 քար), ՀՀ դեսպանին, Թեմական խորհուրդի ատենապետին, ճարտարապետին, Սոֆիայի, Պլովդիվի, Վառնայի, Բուզասի, Ռուսեի և Շումենի եկեղեցական վարչությունների ատենապետերին և գործարար, նվիրատու պրն Զենոբ Գազազյանին:

Այնուհետև Սրբազան Հայրը, խնկարկելով և համբուրելով օծված քարերը, գետեղեց համապատասխան տեղերում:

Արարողության վերջում Սրբազան Հայրը իր օրհնությունները բաշխեց ներկաներին՝ մասնավորապես նշելով.

«Կրթեն, եթե շենքի մը հատակը հաւատք չկա, այդ շենքը չի բարձրանայ: Այս շենքին, որ աղօթքի տունն է մեր հայութեան, հաւատքը ոչ միայն հիմքին մէջ է, այլ ինքը՝ հաւատքը ամբողջ տաճարն է: Սպասենք մեր բարերարներուն, ժամանակ անցնի, քար առ քար, շաղախ առ շաղախ բարձրանայ մեր տաճարը, զարդարանք եւ պաճուճանք ըլլայ այս հրաշալի Սոֆիա քաղաքին: Շատ մայրաքաղաքներու մէջ ունինք

փառաւոր հայադրոշմ տաճարներ, միայն մենք որք մնացած էինք տաճարով մը՝ առանց խաչի ու զանգակի:

Շնորհիւ մեր ծոցէն ծնուած սոփիացի Մարգար Շիրինեանին, իր բուլղար եւ յոյն ընկերներուն՝ հաւատացեալ ուղղափառ, ձեռք ձեռքի տուած եկան մեզի օգնության:

Աստուած ժպտաց մեզի, մեզի ուրախացուց եւ տուաւ Մարգար Շիրինյանը: Եթէ երեկ անձանօթ էր, այսօր մեզի կը ներկայանա իր գեղեցիկ անունով:

Կ'օրհնեմ երեքիդ ալ, ձեր հարազատներուն, ճարտարապետ Հակոբ Կարազաշեանին եւ բոլորին:

100 կմ ճանապարհը կ'սկսի առաջին քայլէն: Արդէն առաջին քայլը առնուած է եւ լաւ է առնուած: Եթէ սկիզբը լաւ է դրուած, վերջն էլ լավ կը լինի»:

Խոսքի վերջում Սրբազան Հայրը իր գոհունակությունը հայտնեց նաև քաղաքային իշխանություններին, որ Հայաստանում Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի առիթով Հայ Եկեղեցուն էին նվիրել այս հողատարածքը:

Դեկտեմբերի 16-ին Սրբազան Հայրը Սոփիայից մեկնեց Յամբոլ, ուր և կատարեց Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու հողի օրհնությունը:

ՂԻՎԱՆ ԲՈՒԼՂԱԸՐԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎՎՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Սույն թվականի հունվարի 25-ին, Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու կողմից կազմակերպվող արդեն ավանդական դարձած Քրիստոնյաների միության համար աղոթքի շաբաթվա փակման առթիվ, Հռոմի Ս. Պետրոս Մայր Տաճարում տեղի ունեցավ էկումենիկ հանդիսավոր արարողություն՝ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու Հովվապետ Նորին Սրբություն Բենեդիկտոս XVI-ի հանդիսապետությամբ:

Արարողությանը, ի թիվս կաթոլիկ, ուղղափառ, արևելյան ուղղափառ, անգլիկան Եկեղեցիների բազմաթիվ հոգևորականների ու աշխարհականների, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ներկայացնում էր Իտալիո հայոց հոգևոր հովիվ Ս. Առեն վարդապետ Շահինյանը՝ ուղեկցությամբ Հռոմում ուսանող Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններ Ս. Գեղարդ աբեղա Վահունու, Ս. Մուշեղ աբեղա Բաբայանի և Ս. Ռուբեն աբեղա Զարգարյանի: Հավարտ արարողության Իտալիո հայոց հոգևոր հովիվ Ս. Առեն վարդապետ Շահինյանը Նորին Սրբություն Բենեդիկտոս XVI-ին փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթոլիկոսի եղբայրական ջերմ ողջույններն ու բարեմաղթանքները:

Նույն օրը էկումենիկ արարողություն տեղի ունեցավ նաև Միլանում, որտեղ Հայ Եկեղեցին ներկայացրեցին Միլանի հայ համայնքի ներկայացուցիչները, Սրբոց Քառասուն Մանկանց եկեղեցու «Նորահրաշ» երգչախումբն ու սարկավազաց դասը: Հրնթացս արարողության ներկաները մեկ րոպե լռությամբ հարգանքի տուրք մատուցեցին «Ակօս» շաբաթաթերթի խմբագիր Հրանդ Դինքի հիշատակին:

Հունվարի 26-ին Հռոմի քաղաքապետարանի առջև «Ակօս» շաբաթաթերթի խմբագիր Հրանդ Դինքի սպանությունը դատապարտող քայլերթ կատարվեց: Ներկա էին Իտալիո հայոց հոգևոր հովիվ Ս. Առեն վարդապետ Շահինյանը, Իտալիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան տիար Ռուբեն Շուգարյանը, Իտալիայի սենատի ներկայացուցիչներ, Լևոնյան վարժարանի ընդհանուր տեսուչն ու սաները, Իտալիայում հայկական տարբեր համայնքների ներկայացուցիչներ և բազում հայորդիներ:

Նախաձեռնությանը միացել էին նաև Իտալիայում քրդական և թուրքական համայնքի տասնյակ ներկայացուցիչներ: Ներկա էր նաև Իտալիայում Թուրքիայի արտակարգ և լիազոր դեսպանը:

ԳԵՐՄԱՆԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵ ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

19 Յունուար 2007-ին Կ. Պոլսոյ մէջ Հրանդ Տինքի նենգ ու դաւադիր սպանութիւնը ցնցեց նաեւ գերմանահայութիւնը: Հայ լրագրողին սպանութիւնը պաշտօնական յայտարարութիւններով դատապարտեցին գերմանական պետական, հասարակական, եկեղեցական շրջանակները, ինչպէս նաեւ այլեայլ հայկական, յունական, ասորական, թրքական, քրտական կազմակերպութիւններ, միութիւններ ու համայնքներ: Այս անարգ սպանութիւնը յանուն Եւրոպական Միութեան նախագահութեան անմիջապէս դատապարտեց նաեւ Գերմանիոյ վարչապետուհի տիկ. Անկէլա Մերքելի գրասենեակը:

Սպանութեան յաջորդ օրն իսկ բողոքի երթեր տեղի ունեցան Քեօլն, Ֆրանքֆուրթ, Պեռլին քաղաքներու մէջ, որոնք կազմակերպուեցան հայ եւ օտար հաստատութիւններու կողմէ: Առաջնորդական կարգ մը համայնքներու մէջ տեղի ունեցան հոգեհանգստեան արարողութիւններ:

23 Յունուարին Ֆրանքֆուրթի թրքական հիւպատոսարան յանձնուեցաւ շուրջ երկու տասնեակ հայ եւ օտար կազմակերպութիւններու ստորագրութեամբ ոճրագործութիւնը դատապարտող բողոք-նամակ մը՝ պահանջելով անյապաղ ձեռնարկել բոլոր միջոցները՝ բացայայտելու անմարդկային այս արարքի իրական մեղաւորները: Այնուհետեւ Ֆրանքֆուրթ քաղաքի կեդրոնական եւ խորհրդանշական մէկ վայրի մը մէջ տեղի ունեցաւ հանրահաւաք, որուն յանուն Առաջնորդարանի իր մասնակցութիւնը բերաւ Սերովքէ վրդ. Իսախանեան:

Նոյն օրը հոգեհանգստեան եւ ոգեկոչման արարողութիւններ տեղի ունեցան նաեւ Համպուրկ, Շթոթկարթ, Միւնխէն քաղաքներու մէջ:

Հրանդ Տինքը ոգեկոչող, ինչպէս նաեւ անարգ սպանութիւնը դատապարտող կեդրոնական ձեռնարկները տեղի ունեցան Քեօլնի մէջ՝ կազմակերպութեամբ Գերմանիոյ հայոց Առաջնորդութեան, Գերմանահայոց Կեդրոնական Խորհուրդի, Հայ-Գերմանական Ընկերակցութեան, ինչպէս նաեւ Քեօլնի հայ համայնքի եւ երկու մշակութային միութիւններու:

27 Յունուարին տեղի ունեցաւ ոճրագործութիւնը դատապարտող սգոյ երթ, որուն մասնակցեցան Գերմանիոյ զանազան քաղաքներէն ժամանած շուրջ 1500 հայեր եւ օտարներ: Սգոյ երթը իր աւարտին հասաւ Քեօլնի Կաթողիկէ Մայր Տաճարի առջեւ, ուր հոգեհանգստեան աղօթքէն ետք յանուն կազմակերպիչներուն յիշատակի ահաւոր ոճիրը դատապարտող խօսքով հանդէս եկաւ պրն Թորոս Սարեան:

Նոյն օրը բողոքի հանրահաւաք տեղի ունեցաւ նաեւ Պեռլինի թրքական գլխաւոր հիւպատոսարանին առջեւ՝ կազմակերպութեամբ «Յեղասպանութեան Ճանաչման Աշխատախումբի» եւ հայ, յոյն եւ ասորական քանի մը միութիւններու եւ կազմակերպութիւններու:

28 Յունուարին Քեօլնի Առաջնորդանիստ Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ եկեղեցիին մէջ, որը բերնեբերան լեցուն էր հայ եւ օտար ներկաներով, տեղի ունեցաւ ոգեկոչման ձեռնարկ մը, որուն ընթացքին յանուն Գերմանիոյ հայոց Առաջնորդութեան խօսք առաւ Թեմական Խորհուրդի անդամ պրն Իլիաս Գեորգ Ույեար, իսկ Գերմանահայոց Կեդրոնական Խորհուրդի եւ այլ կազմակերպութիւններու անունով՝ պրն Թորոս Սարեան: Երկու խօսնակներն ալ ոճիրը խստօրէն դատապարտելէ ետք համառօտ անդրադարձան Հրանդ Տինք մարդու, հայու, լրագրողի անձին ու գործունէութեան եւ մատնանշեցին թրքական պետութեան ու հասարակութեան այն ժխտական երեւոյթները, որոնք պատճառ դարձան Հրանդին սպանութեան: Հրանդ եղաւ եւ մնաց այն եզակի լրագրողը Թուրքիոյ մէջ, որ քաջաբար ու անձնդիր պայքար տարաւ ի նպաստ հայութեան արդար իրաւունքներու վերահաստատման, թուրք եւ հայ ժողովուրդներու անկեղծ երկխօսութեան՝ միշտ հաւատալով, որ երկխօսութիւն կարելի է հաստատել միայն պատմական ճշմարտութիւնը ճանաչելով: Ան հաւատաց, որ անցեալի մահասարսուռ եղելութիւններու բացայայտումն ու հրապարակումը ի վերջոյ պիտի նպաստէ թուրք հանրութեան մտածելակերպի փոփոխութեան լայնախոհութեան, որոնք ալ առիթ պիտի տան բացօրէն խօսելու Հայոց Ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման մասին:

Ոգեկոչման ձեռնարկի աւարտին հանդիսապետութեամբ թեմակալ առաջնորդ Տ. Գարեգին արքեպս. Պեքճեանի տեղի ունեցաւ հոգեհանգստեան մասնաւոր արարողութիւն, որ եզրափակուեցաւ առաջնորդ Սրբազանի՝ Հրանդ Տինքին նուիրուած յիշատակի խօսքով: Գարեգին Սրբազան յոյս յայտնեց, որ մանաւանդ Թուրքիոյ մէջ կը գտնուին անձեր, որոնք կը շարունակեն Հրանդին գործն ու առաքելութիւնը:

Ի յիշատակ Հրանդ Տինքի ձեռնարկներ եւ հոգեհանգստեան արարողութիւններ տեղի ունեցան նաեւ Կէօփինկէն, Հանաու, Վուփերտալ, Պրաունշվայլ, Մայնց եւ այլ հայաբնակ քաղաքներուն մէջ:

ԴԻԻԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ՀԱՅՈՑ ԳՐԵՐՈՒՆ ԳԻՒՏԻՆ ԵՒ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱԶԲՆԱԴՈՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմը, հրամանաւ թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեանի, հրատարակած է Հոգշ. Տ. Գրիգոր Ծ. վրդ. Մագսուտեանի կողմէ անգլերէն լեզուով երկասիրուած նոր ուսումնասիրութիւն մը՝ նուիրուած Հայոց գրերու գիտին եւ հայ գրականութեան սկզբնաւորութեան:

Այս գիրքին մասին արտայայտուելով առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան ըսած է. «Մեր պատմութեան եւ մշակոյթին մասին շատ կարեւոր գիրք մըն է այս: Շնորհակալութիւն կը յայտնեմ Հոգշ. Տ. Գրիգոր Ծ. վրդ. Մագսուտեանին՝ այսպիսի աշխատասիրութիւն մը պատրաստելուն համար»:

Հայր Գրիգոր գիրքի նախաբանը կը սկսի հետեւեալ տողերով. «Հայոց տառերու գիտին 1600-ամեակին առիթով պարտականութիւն տրուեցաւ ինծի պատրաստելու հանրամատչելի գիրք մը՝ ընթերցողներու լայն հասարակութեան ընդհանուր գաղափար մը տալու համար, թէ ի՛նչ պարագաներու տակ Հայոց գիրերը ստեղծուեցան, գրաճանաչումը տարածուեցաւ Հայոց աշխարհին մէջ եւ հայ գրականութիւնը ծնունդ առաւ»:

Ճիշդ է, որ գիրքը պատրաստուած է «ընթերցողներու լայն հասարակութեան գաղափար մը տալու համար», սակայն ունի նաեւ գիտական մօտեցում եւ այս կարեւոր նիւթին մասին ցարդ յայտնուած տեսակէտներու համադրութիւն:

Գիրքի նախաբանին մէջ հեղինակ Հայր Սուրբը կը ծանրանայ Հայոց տառերու գիտին մասին երկու գլխաւոր մօտեցումներուն վրայ՝ կրօնական եւ մշակութային-քաղաքական, եւ անոնց մասին կը յայտնէ իր տեսակէտները:

Գիրքը, որուն սկիզբը տրուած է 350-450 տարիներուն պատահած դէպքերու ժամանակագրութիւնը, ունի հետեւեալ բովանդակութիւնը.

- Ծ Տեղեկութիւններու աղբիւրներ՝ *պատմագիրներ Կորիւն, Ղազար Փարպեցի, Մովսէս Խորենացի եւ այլք*
- Ծ Հայոց տառերու ստեղծման պատմութիւնը՝ համաձայն հին աղբիւրներու
- Ծ Հինգերորդ դարու սկզբնաւորութեան քաղաքական կացութիւնը
- Ծ Հայաստանեայց Եկեղեցին՝ Դ. դարու կէսէն մինչեւ Ե. դարու կէսը
- Ծ Լուսանկարներ եւ պատմական քարտէս
- Ծ Գլխաւոր անձնաւորութիւնները՝ *Վռամշապուհ եւ Խոսրով Դ. թագաւորներ, Արտաշէս թագաւոր, Ս. Սահակ Կաթողիկոս եւ Ս. Մեսրոպ Մաշտոց*
- Ծ Հայոց գրականութեան սկզբնաւորութիւնը
- Ծ Յաւելլուած 1՝ *Ս. Սահակի եւ Ս. Մեսրոպի աշակերտներն ու աշխատակիցները, թիւով 43*

Ծ Յաւելուած 2՝ *օգտագործուած աղբիւրներ*

«The Origins of the Armenian Alphabet and Literature» գիրքը պատրաստուած է անգլիախօսներու, գլխաւորաբար նոր սերունդին համար՝ անոնց ծանօթացնելու պատմութիւնը Հայոց տառերու գիտին եւ գրականութեան, ինչպէս նաեւ անոնց մէջ արթնցնելու ազգային ինքնագիտակցութեան ոգին ու հպարտութիւնը:

Հայր Սուրբը նախաբանի վերջաւորութեան կը գրէ. «Ներկայ աշխատասիրութիւնը ընթերցող լայն հասարակութեան համար ծրագրուած ըլլալով, բանասիրական ծանօթութիւններ եւ յոյսեր չի բովանդակէր: Հատորին մէջ ներկայացուած են կրօնական, մշակութային, եկեղեցական, քաղաքական եւ ընկերային ա՛յն գործօնները, որոնք խորունկ ներգործութիւն ունեցան քրիստոնէայ հայ ժողովուրդին վրայ եւ մղեցին անոր դեկավարները հիմնելու գրական աւանդութիւնը մը, որ դարեր շարունակ սնուցաներ է մտաւորական սերունդներ՝ որպէս զի անոնք իմացական, հոգեւոր, ազգային եւ քաղաքական մակարդակներու վրայ օգտակար հանդիսանային իրենց ծնունդ տուող ժողովուրդին»:

«The Origins of the Armenian Alphabet and Literature» գիրքը հրատարակուած է Ս. Վարդան Սատենաշարի Զգօն եպս. Տէր Յակոբեան Հիմնադրամին կողմէ:

ԴԻԻԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ



ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՀՌՈՄՈՒՄ

Կաթոլիկ Եկեղեցու և Հին Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների աստվածաբանական երկխոսության միջազգային համատեղ հանձնախմբի չորրորդ հանդիպումը տեղի ունեցավ 2007 թ. հունվարի 28-ից փետրվարի 3-ը Հռոմում: Ժողովը նախագահում էին Քրիստոնեական միությունը խրախուսող պապական խորհրդի նախագահ Նորին Սրբազնություն Կարդինալ Վալտեր Կասպերը և Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Սրբազան Սինոդի նախագահ Նորին Սրբազնություն մետրոպոլիտ Բիշոյը:

Նախնական ծրագրի համաձայն, Մարոնիտ Եկեղեցու պետ Նորին Ամենապատվություն Նասրալլահ Պատրիարքի հրավերով ժողովը պետք է տեղի ունենար Լիբանանում, սակայն այդ երկրի քաղաքական կացության պատճառով հնարավոր չեղավ ժողովն անցկացնել այնտեղ: Փոխարենը հանդիպումը տեղի ունեցավ Հռոմում: Հանդիպմանը մասնակցում էին հետևյալ Եկեղեցիների ներկայացուցիչները՝ Կաթոլիկ Եկեղեցի, Ղպտի Ուղղափառ Եկեղեցի, Ասորի Ուղղափառ Եկեղեցի, Հայ Առաքելական Եկեղեցի, Հնդկ Մալաբար Եկեղեցի, Ասորի Ուղղափառ Եկեղեցի, Եթովպիայի Ուղղափառ Եկեղեցի և Էրիթրեայի Ուղղափառ Եկեղեցի:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ այս հանդիպմանը Հայ Եկեղեցին ներկայացնում էին Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական Պատվիրակ Գերաշնորհ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանը և ԱՄՆ Արևելյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը:

Հին Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների ներկայացուցիչները հունվարի 29-ին և 30-ին ունեցան առանձին հանդիպում և ծանոթացան այն եկեղեցաբանական հարցերին, որոնք պետք է քննարկվեին Կաթոլիկ Եկեղեցու և Հին Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների աստվածաբանական երկխոսության միջազգային համատեղ հանձնախմբի չորրորդ հանդիպման ընթացքում, որտեղ Հին Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների ներկայացուցիչները կազմեցին նախնական ծրագիր, որը փոխանցեցին Կաթոլիկ Եկեղեցու ներկայացուցիչներին: Վերջիններս առանձին հանդիպում ունեցան հունվարի 30-ին: Կաթոլիկ Եկեղեցու և Հին Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների աստվածաբանական երկխոսության միջազգային համատեղ հանձնախմբի ամբողջական կազմի հանդիպումը տեղի ունեցավ հունվարի 31-ից փետրվարի 2-ը: Ողջ ժողովի ընթացքում հանձնախումբն իր հանդիպումները սկսում էր քրիստոնեական միությանը նվիրված հատուկ աղոթքով:

Փետրվարի 1-ին միջազգային հանձնախմբի ներկայացուցիչներին ընդունեց Նորին Սրբություն Բենեդիկտոս ԺԶ Պապը: Հանձնախմբի անունից Պապին ողջունեց և Հին Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների հետ երկխոսության գործում ներդրման համար շնորհակալություն հայտնեց Նորին Սրբազնություն Բիշոյը և Բենեդիկտոս ԺԶ Պապին նվիրեց Ղպտի Եկեղեցու կույսերից մեկի ձեռքով նկարված մի սրբապատկեր: Այնուհետև Հռոմի Սրբազան Քահանայապետն իր խոսքն ուղղեց ներկաներին՝ ասելով. «Ձեր ժողովը վերաբերում է Եկեղեցու կառուցվածքին և առաքելությանը ու մեծ կարևորություն ունի մեր ընդհանուր նպատակի համար, որն է՝ ամբողջական հաղորդության վերականգնումը: Կաթոլիկ և Հին Արևելյան Ուղղափառ Եկեղեցիներն ունեն հարուստ եկեղեցական ժառանգություն, որը գալիս է առաքելական ժամանակներից և քրիստոնեության առաջին դարերից: Այս ժառանգության փորձառությունը կկառուցի մեր ապագան՝ մեր ընդհանուր ճանապարհն ուղղելով դեպի հաղորդության նախկին վիճակի ամբողջական վերականգնում»: Նորին Սրբություն Բենեդիկտոս ԺԶ Պապն իր խոսքում անդրադարձավ նաև Միջին Արևելքի քրիստոնյաների վիճակին՝ նրանց կոչ անելով լինել քաջ և հաստատուն՝ իրենց հավատքում:

Հունվարի 30-ին, երեկոյան, հանձնախմբի անդամները մասնակցեցին երեկոյան ժամերգության Պայծառակերպության եկեղեցում: Այնուհետև հանձնախմբի անդամները հանդիպեցին եկեղեցու հավատացյալների հետ, որոնք հյուրասիրություն էին կազմակերպել ժողովի մասնակիցների համար: Հանդիպումն անցավ ուրախ տոնական տրամադրությամբ: Փետրվարի 1-ին Նորին Սրբազնություն Կարդինալ Վալտեր Կասպերը Վատիկանի Domus Sanctae Marthae կոչվող սրահում բարիգալստյան ճաշկերույթ տվեց հանձնախմբի անդամներին: Կարդինալ Կասպերիին մասնակիցների անունից շնորհակալական խոսք ասաց Նորին Սրբազնություն մետրոպոլիտ Բիշոյը:

Որոշվեց, որ Կաթոլիկ Եկեղեցու և Հին Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների աստվածաբանական երկխոսության միջազգային համատեղ հանձնախմբի հինգերորդ հանդիպումը պետք է տեղի ունենա 2008 թ. հունվարի 27-ից փետրվարի 2-ը Դամասկոսի մոտ գտնվող Ս. Եփրեմ Ասորու անունը կրող վանքում՝ Ասորի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Իգնատիոս Զաքարյա Ա-ի հրավերով:

ԷԴՈՒԱՐԴ ՄՐԿ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Միջեկեղեցական հարաբերությունների բաժին

ԿՅԱՆՔԻՑ ՀԵՌԱՑԱՎ ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐ ԵՐԳԻ ՄԵՐՕՐՅԱ ՄԵՐՄՆԱՑԱՆԸ



2007 թ. հունվարի 20-ին, կյանքի 72-րդ տարում, ի Տեր հանգյալ հայ հոգևոր մշակույթի ու երգարվեստի անխոնջ սպասավոր և նվիրյալ Խորեն Պալյանը:

Ծնվել է 1935 թ. մարտի 10-ին Լիբանանի Տրիպոլի քաղաքում, սփյուռքահայ մտավորական և ուսուցիչ Հարություն Պալյանի ընտանիքում:

1946 թ. ընտանիքով ներգաղթել են Հայաստան:

Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ուսանել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանում:

1955 թ. դեկտեմբերին ձեռնադրվել է սարկավագ:

1956 թ. կուսակրոն արեղա է ձեռնադրվել ձեռամբ երջանկահիշատակ Վազգեն Առաքինի:

1962 թ. ստացել է վարդապետական աստիճան:

1960-ական թվականներին, ազգային զարթոնքի և վերելքի տարիներին, երիտասարդ վարդապետի համար բախտորոշ է լինում ծանոթությունը Լուսինե Զաքարյանի հետ, ով կարճ ժամանակ անց դառնալու էր հայ հոգևոր երգի երկնակամարի ամենապայծառ աստղերից մեկը:

1965 թ. սկսած Խորեն Պալյանի հոգևոր-մշակութային և գիտա-մանկավարժական գործունեությունը արդեն հիմնականում կապվում է Երևանի պետական համալսարանի հետ, թեև իր ողջ կյանքում նա միաժամանակ կապված մնաց Մայր Աթոռի հետ՝ 1978-2004 թթ. ժամակարգություն, տեսական շարականագիտություն և հայ հոգևոր երաժշտություն դասավանդելով Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանում, ապա՝ Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

1965-1968 թթ. ուսանել է Երևանի պետական համալսարանի Բանասիրական ֆակուլտետում, որն ավարտելուց հետո դասախոսական աշխատանքի է անցել հայոց լեզվի պատմության ամբիոնում՝ դասավանդելով հայոց լեզվի պատմություն և գրաբար:

1995-2005 թթ. համատեղության կարգով ծիսագիտություն և վարքաբանություն է դասավանդել ԵՊՀ Աստվածաբանական ֆակուլտետում:

Խորեն Պալյանը հայ հոգևոր երգարվեստի կենդանի կրողներից էր: Սկսած ընտանեկան միջավայրից, ապա և Ս. Էջմիածնի վանական փորձառությամբ հոգևոր երգը դարձել էր նրա էության մի մասը, որին գումարվելու էին նաև կատարողական եզակի բարձր վարպետությունը, ապա նաև տեսական խորին իմացությունը՝

ստեղծելով անկրկնելի այն համաձուլվածքը, որը ավելի քան երեք տասնամյակ Հայաստանի և Սփյուռքի բեմերում հնչեց որպես պալլանական կատարումներ և բարեխառնաբար այսօր ևս շարունակում է հնչել շնորհիվ պահպանված և հավաքված ձայնագրությունների:

Խորեն Պալյանը նաև եզակիորեն շքեղ անձնավորություն էր: Շոայլ էր ոչ միայն որպես մարդ, այլև որպես արվեստագետ: Նա կուտակում էր՝ բաժանելու և տարածելու համար, որի լավագույն արտահայտությունը դարձավ իր գիտամշակութային գործունեությունը: 15 տարի շարունակ անհոգնաբեկ նվիրումով դեկավարեց Երևանի պետական համալսարանի Բանասիրական ֆակուլտետի «Հայ տոհմիկ երգի» երգչախումբը, որի փորձերը տեղի էին ունենում ֆակուլտետի ամենամեծ՝ № 220 լսարանում ամեն չորեքշաբթի, և այսպես 15 տարի շարունակ, և այս տասնհինգ տարիների ընթացքում համալսարանական բազմահարյուր շրջանավարտներ հայաշխարհի և Սփյուռքի տարբեր անկյուններ հայ խոսքի հետ տարան և հայ երգը:

Նույն այս նվիրումով նա հեռուստատեսությամբ և ռադիոյով տարիներ շարունակ վարեց «Խորհուրդ խորին», «Զրույցներ գրաբարի մասին» և «Արևագալ» հաղորդաշարերը:

Թեև իր տարերքը հայ երգի կատարումն ու տարածումն էր, սակայն նա մի շարք կարևոր հրապարակումներով, տեսական որոշակի համակարգմամբ ներկայացրեց հայ ծիսական երաժշտությունը «Ժամակարգութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ» ուսումնական ձեռնարկով, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանի, ինչպես նաև տարբեր պարբերականներում սփռված հոդվածներով: Նա համահեղինակն է նաև «Դասական գրաբարի հատընտիր» գրքի:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ի գնահատություն հայոց հոգևոր մշակութային Խ. Պալյանի բերած երկարամյա սպասավորության, 2004 թ. նրան պարգևատրեց «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով:

Խորեն Պալյանի գործունեության հայրապետական արժեվորումն է բազմավաստակ մտավորականի վախճանման առիթով Հայոց Հայրապետի ցավակցական գիրքը, որում ասվում է.

«Խոր ցավով տեղեկացանք մեր ժողովրդի արժանավոր զավակ տիար Խորեն Պալյանի անժամանակ մահվան մասին:

Հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության՝ բերում ենք Մեր ցավակցությունը հանգուցյալի սգակիր եղբայրներին՝ տիարք Երկաթ և Արտաշես Պալյաններին, իրենց զավակներին և վշտացյալ բոլոր հարազատներին ու մտերիմներին:

Շուտ ավարտվեց հոգելույս Խորեն Պալյանի երկրային կյանքը: Երջանկահիշատակ Վազգեն Ա Հայրապետի խնամքի և հոգածության ներքո նա կրթվեց Հոգևոր Ճեմարանում, ջանասեր ուսումնառությամբ օգտաշատ գիտելիքներ ամբարեց և մոտք գործեց եկեղեցական ասպարեզ: Այնուհետ՝ որպես աշխարհական, Խորեն Պալյանն առանձնակի նվիրումով և նախանձախնդրությամբ լծվեց իր գովելի գործունեությանը՝ երկար տարիներ դասախոսական աշխատանքով նոր սերնդին հո-

գեմտավոր սնունդ ջամբելով Երևանի պետական համալսարանում, Գեորգյան Հոգևոր Ճեմարանում և Կոմիտասի անվան պետական երաժշտանոցում: Նա իր սաների հոգիներում սեր էր արթնացնում առ հայրենին և Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին՝ նրանց հաղորդ դարձնելով Եկեղեցու հոգեպարար մեղեդիների ու շարականների խորհրդին և գեղեցկությանը: Լուսահոգի Խորեն Պալյանը երկար տարիներ ղեկավարել է նաև Վաղարշապատի Սուրբ Շողակաթ եկեղեցու դպրաց դասը՝ հոգեգմայլ երգեցողությամբ հոգևոր մխիթարություն պարգևելով հավատավոր հայորդիներին:

Աղոթում ենք առ Ողորմածն Աստված, որ երկնից երանավետ հանգրվաններում խաղաղության մեջ ընդունի հանգուցյալի հոգին և Իր Սուրբ Հոգու մխիթարությունն ու սփռվածքը պարգևի ձեզ և բոլոր վշտացյալներին:

«Զննջեցեալս մեր արժանի արա, Տէր, ընդունիլ ի կեանսդ յաւիտենից»:

Խորեն Պալյանը մեր այն եզակի մտավորականներից էր, ով ճշմարիտ մտավորականին միայն բնորոշ նկարագրով միշտ բարձր մնաց իր ապրած ժամանակից: Բնականաբար նա չէր կարող իր ապրած ժամանակը բարձրացնել իր ունեցած չափանիշների աստիճանին, բայց և ինքը երբեք չիջավ իր ապրած ժամանակի աստիճանին և երբեք չդարձավ իր ապրած ժամանակի մարդկանցից մեկը, որի համար էլ մնաց իր ժամանակի եզակի մարդկանցից մեկը:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունվարի 1-ին, երկուշաբթի. - Գ. օր Ծննդեան պահոց: Կաղանդ, Տարեմուտ:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Վագ-գեն վարդապետ Նանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հունվարի 5-ին, ուրբաթ. - Ճրագալոյց Ծննդեան եւ Աստուածայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ներսէս արքեպիսկոպոս Պողոպայանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հավարտ Սուրբ և Անմահ Պատարագի Մայրականքի ողջ միաբանությունը, հանդիսապետությամբ Վեհափառ Հոր, Ս. Ծննդյան շարականների երգեցողությամբ ուղղվեց դեպի Վեհարան, որտեղ Տնօրինների արարողություն կատարելուց հետո շարժվեց սեղանատուն՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Ծննդյան ավետիսը խնդությամբ տոնելու:

Հունվարի 6-ին, շաբաթ. - ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏԵԱՐՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «Հայր մեր»-ից առաջ Նորին Սրբությունը Սուրբ Ծննդյան Հայրապետական իր պատգամն ուղղեց համայն հայ ժողովրդին (տես էջ 3):

Հրնթացս Ս. Պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ, կատարվեց Ջրօրհնների արարողություն:

Հունվարի 7-ին, կիրակի. - Բ. օր Ծննդեան: Մեռելոց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գաբրիել աբեղա Մարգարյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հունվարի 13-ին, շաբաթ. - Ը. օր Ծննդեան: Տոն անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Թադէոս վարդապետ Զիրեկյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հունվարի 14-ին, կիրակի. - Ա. կիր. զկնի Ծննդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովհաննես արեղա Մայիլյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հունվարի 21-ին, կիրակի. - Բ. կիր. զկնի Ծննդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հունվարի 28-ին, կիրակի. - Գ. կիր. զկնի Ծննդեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը ԾՏԵր, եթե զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցե զօրհնութիւնս Քո (Մաղմ. Ծ 17) բնաբանով քարոզ խոսեց (տես էջ 28):

Հավարտ Սուրբ և Անմահ Պատարագի Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց «Հանրապետական մաղթանք»:

**“ЭЧМИАДЗИН”
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ
ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(Январь 2007)**

1. Послание Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю праздника Святого Рождества и Богоявления, 6 января 2007 г. (с.3-5).
2. Новогоднее поздравление Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, 31 декабря 2006 г. (с.6-7).
3. Празднества по случаю праздника Святого Рождества и Богоявления в Первопрестольном Святом Эчмиадзине, 6 января 2007 г. (с. 8).
4. Поздравительные письма и телеграммы, которыми обменялись Его Святейшество Гарегин II, Католикос всех армян, с главами церквей сестер, с иерархами Патриарших престолов Армянской Церкви и с официальными лицами по случаю Святого и Чудесного Рождества Спасителя (с. 9-12).

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И БЛАГОСЛОВЕНИЯ

5. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю 80-летия установления Восточной Епархии Армянской Церкви США, 25 января 2007 г., № 715 (с. 13-15).
6. Благословение Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, Его Высокопреосвященству архиепископу Ваче Овсепяну по случаю 40-летия его возведения в сан епископа, 24 января 2007 г., № 685 (с. 16-17).
7. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян Аруту Сасуняну по случаю его награждения орденом «Святой Саак – Святой Месроп», 11 января 2007 г., № 380 (с. 18-19).
8. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, Арутюну Арменяну по случаю его награждения орденом «Святой Саак – Святой Месроп», 15 января 2007 г., № 399 (с. 20-21).
9. Патриаршие награды (пожалование в течение января 2007 г. энциклик, орденов «Св. Нерсес Шнорали» и благословений Его Святейшеством Гарегиниом II, Католикосом всех армян группе духовных и светских лиц, оказавших большие услуги Армянской Церкви) – (с. 22).
10. Благословение Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю Дня Армии РА и 15-летия Армянской армии, 27 января 2007 г. (с. 23).
11. Соболезнование Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю убийства Гранта Динка (с. 24).
12. Иеромонах Хорен Закарян был лишен сана (с. 25).

13. Панихида в Первопрестольном Св. Эчмиадзине за упокой души главного редактора еженедельника «Акос» Гранта Динка, 21 января 2007 г. (с. 26).
14. Святая Литургия и Молебен в Первопрестольном св. Эчмиадзине по случаю 15-летия Армянской армии, 28 января 2007 г. (с. 27).

ПРОПОВЕДЬ

15. Проповедь Его Преосвященства епископа Арарата Галтакчяна в Кафедральном соборе Святого Эчмиадзина, 28 января 2007 г. (с.28-30).

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

16. **ЖОРЕС ХАЧАТРЯН** – Новые монументальные строения, недавно обнаруженные в Арташате (археологическое исследование) – (с. 31-43).
17. **ГАЙК БАЛАСАНЯН** – Князья Пахлавуни как преемники князей Камсараканов (историковедческое исследование) – (с. 44-52).
18. **ГРИГОР БРУТЯН** – Некоторые календарные параметры в «Харнахоране» Оганеса Саркавага (исследование теории календаря) – (с. 53-60).
19. **СЕДА МУРАДЯН** – Армянская Католическая Церковь Сирии (историческое исследование) – (с. 61-74).
20. **АЙКАЗ ОГАНИСЯН** – Карабах в русских источниках (историковедческое исследование) – (с. 75-83).
21. **АНАИТ МУРАДЯН** – Патриарх Закария Тер-Петросян (историковедческое исследование) – (с. 84-87).
22. **Р. А. НААПЕТЯН** – О вопросе литературного наследия Хачатура Абовяна (этнографическое исследование) – (с. 88-94).
23. **РАФАЭЛЬ АМБАРЦУМЯН** – Гарегин Нжде возродил и развил мамиконянское кредо армянской национальной идеологии Золотого века (историковедческое исследование) – (с. 95-112).
24. **АЭЛИТА ДОЛУХАНИЯН** – Выступление Фредерика Фейди в 1965 г. в Брюсселе по случаю 50-летия геноцида армян (историковедческое исследование) – (с. 113-119).
25. **ЛУСИНЭ БАЛЯН** – Язык духовно-религиозных передач Армянского радио и телевидения (лингвистическое исследование) – (с. 120-125).
26. **ГОАР АЛЕКСАНИЯН** – Амастег: «Забытые страницы» (с. 126-128).

В СВЯТОМ ПЕРВОПРЕСТОЛЕ И В ЕПАРХИЯХ

Новости из Филантропической Духовной семинарии Калькутты

27. Традиционное паломничество в армянскую церковь Св. Оганеса в Чинсуре, 14 января 2007 г. (с. 129).
28. Шестеро армянских детей Иракаполнили ряды Филантропической

Духовной семинарии (с. 130).

29. Возведение в сан четырех чтецов и пяти дьяконов в армянской церкви Св. Саркиса в Дамаске, 22 декабря 2006 г. (с. 131).
30. Посол Ирана в Сирии посетил Армянскую епархию Дамаска (с. 132).
31. Панихида в Дамаске за упокой души Гранта Динка, 19 января 2007 г. (с. 132).
32. В армянской общине Эфиопии (с. 133-134).
33. Закладка первого камня епархиальной церкви Св. Богоматери г. Софии, 12 декабря 2006 г. (с. 135-137).
34. В армянской общине Италии (с. 138).
35. Армяне Германии осуждают убийство Гранта Динка (с. 139-140).
36. Новая публикация о создании армянских писем и зарождении армянской литературы (о новом исследовании, изданном на английском языке, преподобным протоархимандритом Григором Магсудяном) - (с. 141-142).

МЕЖЦЕРКОВНЫЕ СВЯЗИ

37. **ДЪЯКОН ЭДУАРД ХАЧАТРЯН** - Теологический диалог в Риме, 28 января- 3 февраля 2007 г. (с. 143-144).
38. **ВАРДАН ДЕВРИКЯН** – Скончался сеятель армянской песни наших дней (в память о Хорене Паляне, скончавшегося 20 января 2007 г.) – (с. 145-147).
39. Краткие церковные новости. Информация о Святых Литургиях, проповедях и других церемониях в Кафедральном соборе и Первопрестольном Святом Эчмиадзине в течение января 2007 г. (с.148-149).

“ETCHMIADZIN”
OFFICIAL MONTHLY REVIEW OF
HOLY ETCHMIADZIN
(January 2007)

1. Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the Feast of Nativity and Theophany of our Lord Jesus Christ, January 6, 2007 (p. 3-5).
2. New Year’s Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, December 31, 2006 (p. 6-7).
3. Festivities in the Mother See on the occasion of Holy Christmas, January 6, 2007 (p. 8).
4. Letters of Greeting and Telegrams on the Holy and Miraculous Nativity of the Savior exchanged between His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, and the Heads of Sister Churches, the Incumbents of the Hierarchal Sees of the Armenian Church and State officials (p. 9-12).

PONTIFICAL ENCYCLICALS AND LETTERS OF BLESSING

5. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the 80th Anniversary of the establishment of the Western Diocese of the Armenian Church of North America, January 25, 2007, no. 715 (p. 13-15).
6. Message of Blessing of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to His Eminence Archbishop Vatche Hovsepian on the occasion of the 40th anniversary of his ordination as Bishop, January 24, 2007, no. 685 (p. 16-17).
7. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Harout Sassounian on the occasion of his decoration with the Order “Saint Sahak – Saint Mesrop”, January 11, 2007, no. 380 (p. 18-19).
8. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Haroutiun Armenian on the occasion of his decoration with the Order “Saint Sahak – Saint Mesrop”, January 15, 2007, no. 399 (p. 20-21).
9. Pontifical Awards (Encyclicals, Orders of “Saint Nerses Shnorhali”, Letters of Blessing granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, during January 2007 to clergymen and laymen having been of great service to the Armenian Church) – (p. 22).
10. Message of Blessing of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on Armed Forces Day and the 15th anniversary of the establishment of the Armenian Army, January 27, 2007 (p. 23).
11. Message of Condolences of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the assassination of journalist and human rights activist Hrant Dink (p. 24).
12. Father Khoren Zakarian has been defrocked (p. 25).

13. Requiem Service in the Mother See of Holy Etchmiadzin for the Repose of the Soul of Hrant Dink, Chief Editor of the weekly magazine “Agos”, January 21, 2007 (p. 26).
14. Divine Liturgy and Service in the Mother See of Holy Etchmiadzin on the occasion of the 15th anniversary of the Armenian Army, January 28, 2007 (p. 27).

SERMON

15. Sermon delivered by His Eminence Archbishop Ararat Galtaghian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of the Divine Liturgy, January 28, 2007 (p. 28-30).

HISTORICAL AND PHILOLOGICAL STUDIES

16. **JAURES KHACHATRIAN** – Newly Found Monumental Buildings in Artashat (archeological research) – (p.31-43).
17. **HAYK BALASANIAN** – The Pahlavunis as successors of the Kamsarakans (historical research) – (p. 44-52).
18. **GRIGOR BRUTIAN** – Some Parameters of the Calendar in the “Kharnokhoran” of Hovhannes Sarkavag (research on the theory of calendar) – (p. 53-60).
19. **SEDA MURADIAN** – The Armenian Catholic Church of Syria (historical research) – (p. 61-74).
20. **HAYKAZ HOVHANNISIAN** – Karabagh in the Russian Sources (historical research) – (p. 75-83).
21. **ANAHIT MURADIAN** – The Patriarch Zakaria Ter-Petrosian (historical research) – (p. 84-87).
22. **R. A. NAHAPETIAN** – The Literary Heritage of Khachatur Abovian – (ethnological research) – (p. 88-94).
23. **RAPHAEL HAMBARTSOUMIAN** – Karekin Nzhdeh Revived and Developed the Mamikonian Credo of the Armenian National Ideology of the Golden Age – (historical research) – (p. 95-112).
24. **AELITA DOLUKHANIAN** – The Verse of Frederic Feydit, read in 1965 in Brussels on the occasion of the 50th Anniversary of the Armenian Genocide – (historical research) – (p. 113-119).
25. **LUSINE BALIAN** – The Language of Religious Emissions on the Armenian Radio and Television (linguistic research) – (p. 120-125).
26. **GOHAR ALEXANIAN** – Hamastegh: “Forgotten Pages” (literary research) – (p. 126-128).

IN THE MOTHER SEE AND THE DIOCESES

News from the Philanthropic Seminary of Calcutta

27. Traditional Pilgrimage to the Armenian Church of St. Hovhannes of Chinsura, January

-
- 14, 2007 (p. 129).
28. Six Armenian children of Iraq were enlisted in the Philanthropic Seminary (p. 130).
29. Four acolytes and five deacons ordained in the St. Sarkis Church of Damascus, December 22, 2006 (p. 131).
30. Visit of the Ambassador of Iran to Syria to the Armenian Diocese See of Damascus, January 4, 2007 (p. 132).
31. Death Office in Damascus for the repose of the soul of Hrant Dink, January 19, 2007 (p. 132).
32. In the Armenian Flock of Ethiopia (p. 133-134).
33. Benediction of the first stone of the Saint Virgin Diocesan Cathedral of Sofia, December 12, 2006 (p. 135-137).
34. In the Armenian Flock of Italy (p. 138).
35. Armenians of Germany condemn the murder of Hrant Dink (p. 139-140).
36. A new publication about the creation of Armenian letters and the origin of Armenian literature (about the new investigation published in English by Reverend Proto-Archimandrite Grigor Maksudian) – (p. 141-142).

INTER-ECCLESIASTIC CONNECTIONS

37. **DEACON EDUARD KHACHATRIAN** – Theological Dialogue in Rome, January 28 – February 3, 2007 (p. 143-144).
38. **VARDAN DEVRIKIAN** – Passing away of a great Armenian singer of our times (In memory of Khoren Palian, passed away on January 20, 2007) – (p 145-147).
39. Brief Church News. Information about the Divine Liturgies, sermons and other services held at the Mother See and the Cathedral of Holy Etchmiadzin during January 2007 (p. 148-149).

“ETCHMIADZINE”
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE
D’ETCHMIADZINE
(Janvier 2007)

1. Message de Sa Sainteté Garéguin II, Catholikos de tous les Arméniens, à l’occasion de la Nativité et de la Fête de la Théophanie de Notre Seigneur Jésus-Christ, 6 janvier 2007 (p. 3-5).
2. Félicitations de Sa Sainteté Garéguin II, Catholikos de tous les Arméniens, à l’occasion du Nouvel An, 31 décembre 2006 (p. 6-7).
3. Fêtes de Noël et de la Théophanie au Saint-Siège d’Etchmiadzine, 6 janvier 2007 (p. 8).
4. Lettres et télégrammes de félicitations échangés entre Sa Sainteté Garéguin II, Catholikos de tous les Arméniens, et les Primats des Eglises sœurs, les chefs des Patriarcats de l’Eglise Arménienne et les personnalités officielles à l’occasion de la fête de la Sainte et Miraculeuse Nativité du Sauveur (p. 9-12).

ENCYCLIQUES PONTIFICALES ET MESSAGES DE BENEDICTION

5. Encyclique de Sa Sainteté Garéguin II, Catholikos de tous les Arméniens, à l’occasion du 80e anniversaire de l’établissement du Diocèse Oriental de l’Eglise arménienne des Etats-Unis, 25 janvier 2007, n° 715 (p. 13-15).
6. Message de bénédiction de Sa Sainteté Garéguin II, Catholikos de tous les Arméniens, à Son Eminence l’archevêque Vatché Hovsépian à l’occasion du 40e anniversaire de son ordination épiscopale, 24 janvier 2007, n° 685 (p. 16-17).
7. Encyclique de Sa Sainteté Garéguin II, Catholikos de tous les Arméniens, à M. Harout Sassounian, à l’occasion de sa distinction de l’Ordre «Saint Sahak –Saint Mesrop», 11 janvier 2007, n° 380 (p. 18-19).
8. Encyclique de Sa Sainteté Garéguin II, Catholikos de tous les Arméniens, à M. Haroutiun Arménian, à l’occasion de sa distinction de l’Ordre «Saint Sahak –Saint Mesrop», 15 janvier 2007, n° 399 (p. 20-21).
9. Distinctions pontificales (Encycliques pontificales, Ordres «Saint Nerses Chnorhali» et messages de bénédiction) accordées par Sa Sainteté Garéguin II, Catholikos de tous les Arméniens, à des personnalités religieuses et laïques ayant rendu d’éminents services à l’Eglise arménienne au mois de janvier 2007) – (p. 22).
10. Message de bénédiction de Sa Sainteté Garéguin II, Catholikos de tous les Arméniens, à l’occasion du Jour de l’Armée et du 15e anniversaire de l’Armée arménienne, 27 janvier 2007 (p. 23).
11. Message de condoléances de Sa Sainteté Garéguin II, Catholikos de tous les Arméniens, à l’occasion du meurtre de Hrant Dink (p. 24).
12. Le Père Khoren Zakarian a été défroqué (p. 25).
13. Office des Morts à la Cathédrale du Saint-Siège d’Etchmiadzine (pour le repos de l’âme de Hrant Dink, rédacteur en chef de l’hebdomadaire «Akos»), 21 janvier 2007 (p. 26).
14. Sainte Messe et Te Deum au Saint-Siège d’Etchmiadzine à l’occasion du 15e

anniversaire de l'Armée arménienne, 28 janvier 2007 (p. 27).

SERMON

15. Sermon prononcé par Son Eminence l'évêque Ararat Galtagdjian à la Cathédrale de Saint-Etchmiadzine pendant la Sainte Messe, 28 janvier 2007 (p. 28-30).

ETUDES HISTORIQUES ET PHILOLOGIQUES

16. **JAURES KHATCHATRIAN** – Edifices monumentaux nouvellement découverts à Artachat (recherche archéologique) – (p. 31-43).
17. **HAYK BALASSANIAN** – Les Pahlavounis comme successeurs des Kamsarakans (recherche historique) – (p. 44-52).
18. **GRIGOR BROUTIAN** – Sur quelques paramètres du calendrier existant dans le «Kharnakhoran» de Hovhannes Sarkavag (recherche sur la théorie du calendrier) – (p. 53-60).
19. **SEDA MOURADIAN** – L'Eglise catholique arménienne de Syrie – (recherche historique) – (p. 61-74).
20. **HAYKAZ HOVHANNISSIAN** – Le Karabagh dans les sources russes (recherche historique) – (p. 75-83).
21. **ANAHITE MOURADIAN** – Le Patriarche Zakaria Ter-Pétrossian – (recherche historique) – (p. 84-87).
22. **R. A. NAHAPETIAN** – Sur l'héritage littéraire de Khatchatour Abovian – (recherche ethnologique) – (p. 88-94).
23. **RAPHAEL HAMBARTSOUMIAN** – Garéguin Njdeh a restauré et développé le credo des Mamikonian de l'idéologie nationale arménienne de l'Age d'or (recherche historique) – (p. 95-112).
24. **AELITA DOLOUKHANIAN** – La poésie de Frédéric Feydit, lue en 1965 à Bruxelles à l'occasion du 50e anniversaire du génocide arménien (recherche historique) – (p. 113-119).
25. **LOUSSINE BALIAN** – La langue des émissions religieuses de la Radio et de la Télévision arméniennes (recherche linguistique) – (p. 120-125).
26. **GOHAR ALEXANIAN** – Hamastegh, «Pages oubliées» (recherche littéraire) – (p. 126-128).

AU SAINT-SIEGE ET DANS LES DIOCESES

Nouvelles du Séminaire Philanthropique de Calcutta

27. Pèlerinage traditionnel à l'église arménienne Saint-Hovhannes de Tchinsoura, 14 janvier 2007 (p. 129).
28. Six enfants arméniens d'Iraq admis au Séminaire Philanthropique (p. 130).
29. Ordination de quatre acolytes et de cinq diacres à l'église arménienne Saint-Sarkis de Damas, 22 décembre 2006 (p. 131).
30. Visite de l'Ambassadeur d'Iran en Syrie au Siège du Diocèse arménien de Damas, 4 janvier 2007 (p. 132).
31. Office des Morts à Damas pour le repos de l'âme de Hrant Dink, 19 janvier 2007 (p. 132).
32. Parmi les ouailles de l'Eglise arménienne d'Ethiopie (p. 133-134).

33. Pose et bénédiction de la première pierre de la cathédrale diocésaine de la Sainte-Vierge de Sofia, 12 décembre 2006 (p. 135-137).
34. Parmi les ouailles de l'Eglise arménienne d'Italie (p. 138).
35. Les Arméniens d'Allemagne condamnent le meurtre de Hrant Dink (p. 139-140).
36. Une nouvelle publication sur la création des lettres arméniennes et l'origine de la littérature arménienne (Sur la nouvelle recherche publiée en anglais par le proto-archimandrite Grigor Maksoudian) – (p. 141-142).

RELATIONS INTERECCLESIASTIQUES

37. **DIACRE EDOUARD KHATCHATRIAN** – Dialogue théologique à Rome, 28 janvier – 3 février 2007 (p. 143-144).
38. **VARDAN DEVRIKIAN** – Décès d'un grand chanteur arménien contemporain (Dédié à la mémoire de Khoren Palian, décédé ce 20 janvier 2007) – (p. 145-147).
39. Brèves nouvelles ecclésiastiques. Information sur les Saintes Messes, les sermons et les autres services accomplis au Saint-Siège et à la Cathédrale de Saint-Etchmiadzine au mois de janvier 2007 (p. 148-149).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական պատգամը Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնի առիթով	3
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Ամանորի առիթով	6
Ս. Ծննդյան և Աստվածհայտնության տոնը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ...	8
Փրկչի Հրաշափառ և Սուրբ Ծննդյան տոնի առթիվ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի և քույր Եկեղեցիների պետերի ու Հայ Եկեղեցու նվիրապետական Աթոռների գահակալների, պետական պաշտոնական անձանց միջև փոխանակված ողջույնի և բարեմաղթանքների նամակներն ու հեռագրերը	9

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի հաստատման ութսունամյակի առիթով	13
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Օրհնության գիրը Տ. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանին եպիսկոպոսական ձեռնադրության 40-ամյակի առիթով	16
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Հարութ Սասունյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին	18
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը Հարություն Արմենյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրելու մասին	20
Հայրապետական գնահատություն	22
Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքը Բանակի օրվա և Հայոց բանակի 15-ամյակի առիթով	23
Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցական գիրը Հրանտ Դինքի սպանության առիթով	24
Կարգալույծ է հռչակվել Տ. Խորեն արեղա Զաքարյանը	25
Հոգեհանգստյան արարողություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում	26
Սուրբ Պատարագ և Հանրապետական մաղթանք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ Հայոց բանակի 15-րդ տարեդարձի առիթով	27

ՔԱՐՈՋԽՈՍԱԿԱՆ

S. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին	28
--	----

ՊԱՏՄԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԺՈՐԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ - Նորահայտ մոնումենտալ շինություններ Արտաշատից	31
ՀԱՅԿ ԲԱԼԱՍՄԱՆՅԱՆ - Պահլավունիները որպես Կամսարականների հետնորդներ	44
ԳՐԻԳՈՐ ԲՐՈՒՏԵԱՆ - Յովհաննես Սարկաւագի Խառնախորանում առկա օրացուցային որոշ մակաչափերի մասին	53
ՍԵՂԱ ՍՈՒՐԱԴՅԱՆ - Սիրիայի հայ կաթոլիկ Եկեղեցին	61
ՀԱՅԿԱԶ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - Ղարաբաղը ռուսական աղբյուրներում	75
ԱՆԱՀԻՏ ՍՈՒՐԱԴՅԱՆ - Զաքարիա Պատրիարք Տեր-Պետրոսյան	84
Ռ. Ա. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ - Խաչատուր Արովյանի գրական ժառանգության հարցի շուրջ	88
ՌԱՖԱՅԵԼ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ - Հայոց ազգային ոսկեդարեան գաղափարախօսութեան՝ Մամիկոնէից ուխտի վերծանողն ու մշակը	95
ԱՆԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ - Ֆրեդերիկ Ֆեյդիի բանախոսությունը՝ կարդացված 1965-ին Բրյուսելում Հայոց ցեղասպանության 50-ամյակի առթիվ	113
ԼՈՒՍԻՆԵ ԲԱԼՅԱՆ - Հոգևոր-կրոնական հաղորդումների լեզուն Հայաստանյան հեռուստառադիոէթերում	120
ԳՈՀԱՐ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ - Համաստեղ. «Մոռացված էջեր»	126

ՄԱՅՐ ԱԹՈՒՌԻՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ**Լուրեր Կալկաթայի Մարդասիրական ճեմարանից**

Ավանդական ուխտագնացություն Չինսուրայի Ս. Հովհաննես հայկական եկեղեցի	129
Վեց իրաքահայ երեխաներ համալրեցին Մարդասիրական ճեմարանի շարքերը	130
Դամասկոսի հայոց Ս. Մարգիս եկեղեցույ մէջ չորս դպիրներ եւ հինգ սարկաւագներ ձեռնադրուեցան	131
Սուրիոյ մէջ Իրանի դեսպանը այցելեց Դամասկոսի Ազգային Առաջնորդարան	132

Հոգեհանգստեան մասնաւոր պաշտօն Դամասկոսի մէջ Հրանդ Տինքի հոգւոյ խաղաղութեան համար	132
Եթովպիոյ հայոց հոգեւոր հովուութիւնում	133
Կատարվեց Սոֆիայի առաջնորդանիստ Ս. Աստվածածին Մայր եկեղեցու հիմնաքարերի օրհնությունը	135
Իտալիայի հայոց հոգեւոր հովվությունում	138
Գերմանահայութիւնը կը դատապարտէ Հրանդ Տինքի սպանութիւնը	139
Հայոց գրերու գիտին եւ հայ գրականութեան սկզբնաւորութեան մասին նոր հրատարակութիւն մը	141

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԷԴՈՒԱՐԴ ՍՐԿ. ԽԱՉԱՏՐՅԱՆ - Աստվածաբանական երկխոսություն Հոռմում	143
ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ – Կյանքից հեռացավ հայ հոգևոր երգի մերօրյա սերմնացանը	145
Եկեղեցական բեմ. լուրեր	148
“Эчмиадзин” официальный журнал Эчмиадзинского Католикосата.....	150
“Etchmiadzin” official monthly of Holy Etchmiadzin	153
“Etchmiadzine” organe officiel du Saint-siège d’Etchmiadzine	156